ԳՐՈՖ. Դ-Ր
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՆՖՈՒԿՆԵՐ



ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՓՈՔՐ ՅԵՐԳԵՐ
ԻՐԵՆՑ ՓՈՓՈԽԱԿՆԵՐՈՎ

Խմբագրեց
ՊՐՈՖ. Դ-Ր
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻ ԱՆԴԱՄԻ
ԿՈՄԻՏԱՍ

Հայպետհրատ
1940

www.naregatsi.org

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐ

1. ԽԱՂ ՈՒ ՏԱՂ

Ժողովրդական յերգը, հատկապես սիրո յերգը, գրեթե ամեն ազգի մեջ ունի մի գլխավոր հիմնական տիպ, վորից իրրև մի սաղմից զարդացել և ժողովրդական ընդարձակ յերգը:

Սիրո յերգի այս հիմնական տիպն է այն փոքրիկ տեսակը, վարի բուն ձևն է քառատողը գլխավորապես, և յերկրորդարար յեռատողը և նույն իսկ յերկատողը: Ցերկու, յերեք կամ չորս տողը միայն կազմում են մի ամբողջ բանաստեղծություն: Դրանից ավելի փոքր յերգ յերևակայել կարելի չէ հարկավ: Դա ժողովրդական յերգի տարերքն է: Ցեվ ժողովուրդը, կարելի յե ասել, ամեն տեղ,— Իտալիայում լինի թե Գերմանիայում, հույների թե հայերի մեջ, մեր գրացի թուրքերի թե տաբրինների և նույնիսկ հեռավոր Աբևելքում՝ հնդիկների ու չինացիների մեջ,— մեծ սիրով բանեցնում է այս փոքրիկ յերգերը նույն և նման մոտիվներով: Մի քանի պարզ բառեր, յերկու կամ յերեք, շատ շատ՝ չորս խոսք բավական են ժողովրդի մարդուն իր սրտի զգացմունքը դնդելու և սիրելու համար: Այս շատ հասկանալի յե: Վորքան արտադրական հարաբերությունները հետամնաց են, կուլտուրան ցածր է և մարդկային միտքը «պարզ է», չկիսե վերլուծել իր զգացումները, մարդ վոչ շատ բան ունի ասելու, վոչ էլ շատ պահանջ: Զգացմունքի մի խազ, հոդևական մի շարժում, կյանքի մի կամ յերկու դիծ՝ ըմբռնած և խոսքով ու յեղանակով արտահայտած՝ հերիք են նրան:

Մեր այս փոքրիկ յերգերը, սակայն, գրեթե բոլորն ունին դարձ կամ կրկնակ (հանդերձ), այսինքն՝ բառեր ու խոսքեր, յերբեմն և տողեր ու յերկատողեր և նույնիսկ քառատողեր, վորոնց դառնում են, ժողովրդական բառով, «դարձ են դալիս», կամ վորոնք կրկնվում են ամեն տողի սկզբում կամ վերջում, կամ յերկու տողից հետո և այլն. ինչպես են՝ «Ջան դյուլում ջան, ջան. ջան ծաղիկ ջան, ջան». «Երնեկ են որեր, վոր կ'ելնենք սարեր», «Ռխի լուրիկ, լուրիկ, լուրիկ, Գարնան քարեր վարդ արիր, լուրիկ». «Արի՛, յա՛ր, արի՛, խռով մի՛ կենա. Աստվորիս բան մեղի չի մնա»: Հաճախ կրկնակները լոկ ձայնարկություններ են. ինչպես են՝ ա՛խ. վա՛յ. կամ վա՛յ լե, լե, լե՛, վայ լո, լո՛, լո, լո՛. կամ տողի վերջի մեկ յերկու բառն են կրկնվում և այլն:

www.naregatsi.org

Կրկնակները պարզում են բանաստեղծության միտքը, բայց անհրաժեշտ են զվարճալի երաժշտական տեսակետից: Վորովհետև վոտանավորը շատ կարճ է, թույլ չի տալիս երկու անհրաժեշտ երաժշտական նախադասություն կազմելու, ուստի և ավելանում են կրկնակները, վորոնց մեջ եղանակը փոխվում է և վարիացիաներ կազմելով՝ առաջ բերում երաժշտական երկրորդ, վոր է՝ բացատրական նախադասությունը:

Կրկնակներով են սովորաբար վորոշվում և կոչվում եղանակները. որինակ՝ Ջան դյուլում. Ջան իման Ջան. դհհե ըընդ ըընդ. հայ նարե. դյուլում Ջան. իմ չինարի յարը. ախ մարալ Ջան և այլն: Իսկ բուն երգը կամ քառատողը, ինչպես և երկատողն ու յեռատողը, չունի և չի էլ կարող ունենալ առանձին անուն: Դա ընդհանուր անունով կոչվում է խաղ: Այս բառը, սակայն, ավելի ընդարձակ դործածություն ունի. նշանակում է աշխարհիկ երգ, լինի աշուղական*) թե ժողովրդական, նկատմամբ հին սիրու և ուրախության և այլ դրական ու կրոնական երգերի, վոր կոչվում են տաղ: Այս ընդարձակ իմաստով դործածված ենք դանում «խաղ» բառը հենց այս ժողովրդական մանր երգերի մեջ.

Աշուղի պես խաղ ասա,
Բլբուլի պես տաղ ասա.
Վորքան վոր դովես՝ արժեմ,
Իմ նանի ազիզ փեսա:

Վոմը դանի բուլկաբին,
Վոմը դանի քամանչին,
Վոմն ասի խաղ, վոմը տաղ,—
Վո՞վ կըմնա տաղ:

Բուսել ես բաղի միջին,
Շամամի թաղի միջին.
Գիշեր ցերեկ միալար
Դու յես իմ խաղի միջին:

Ղուշ մի դառնա թևավոր,
Դու խաղ կանչի ճևավոր.
(վարիանտ՝ ձենավոր).
Ցարաթ կլնի են որը,
Վոր դաս մեր տուն թագավոր:

Խաղ ասեմ խաղի գլխին,
Իմ հերանց բաղի գլխին.
Ֆաչալն իրին դեղ կ'անի,
Հողս տամ կաղի գլխին:

Վարդ եմ քաղել մաղերով,
Վեր եմ դրել չաղերով,
Տևանեմ՝ յարս գալիս ե,
Առաջ դնամ խաղերով:
(Վարիանտ՝ տաղերով):

---

*) Աշուղներն իրենց երգերը «խաղ» են կոչում: Այսպես, որինակ, Սայաթ-Նովայի Ի-ր. երգի ծանոթության մեջ. «Ճես չորի յարսուն տարին գլուխ դրի ամենուն խաղին. ամա Սուրբ Կարապետի կարողությենով սովրեցա քամանչին»... Նույնի ԽԲ. մեջ «Բարիթաղուր խաղն». ԼԲ... վուրտեղ տաղ և ըլում». ԼԴ. «Խաղերումն բեզա բիլ իմ». ԼՉ. «Վանքերումն տաղն դուն իս»: Այսպես, որինակ, Սայաթ-Նովայի Ա-ր. երգի ծանոթության մեջ. «Ճես մըղըբսու վուրթի Աբուբինս պատուց լինելին. ամա Սուրբ Կարապետի կարողությենով սովրեցա «խաղ կանչինք հանդուզ». ԽԳ. (վերջի տան մեջ) «Բարիթաղուր խաղն». ԼԲ... վուրտեղ տաղ և ըլում... վուր տիղ սիրով խաղ և ըլում». ԼԴ. «Խաղերումն բեզա բիլ իմ». ԼՉ. «Վանքերումն տաղն դուն իս»:

www.naregatsi.org

Բայց պիտի նկատել և հետևյալը: Աբղարև այդ վոքր յերգերի մեջ նույն այդ յերգերի համար դործածվում է հաճախ խաղ (բարբառային ձևով՝ նաև հաղ) բառը, բայց դրանց մեջ, ինչպես վերջին քառյակից կըերևի յեթե իմանալ, «խաղ» և «տաղ» բառերը վարիանտների մեջ փոխանակում են իրար: Այսպես և հետևյալների մեջ:

Ման կը դամ բաղի միջին,
Վառներս չաղի միջին.
Թող տղերքն ինձ գովեն
Իրանց լավ հաղի միջին:

Այս քառյակի վերջին տողի մի վարիանտն է՝

Սրատաչարժ տաղի միջին:

Կան քառյակներ եվ, վորոնց մեջ խաղ ու տաղ յերկուսն եվ դործածվում են իբրև համանիշներ:

Հաղ կ'ասեմ հաղի դլխին,
Զորնիվերա բաղի դլխին.
Ցես են հաղը վաղ եմ ասել,
Գիշեր ցերեկ տաղ եմ ասել:

Բլրուլ ես, մի խաղ կանչի,
Մարալի պես տաղ կանչի.
Նաղանի յար, քեզ մեռնեմ,
Թող աչխարքը ամանչի:

Կան քառյակներ եվ, վորոնց համար «խաղ» բառը չի դործածվում, այլ միայն «տաղ»:

Ինձոր ես ծառի վրա,
Ծաղիկ ես սարի վրա.
Անուշ տաղ տասղ բլբուլ,
Կայնել ես քարի վրա:

Ա՛յ բալա Շողեր,
Կ'առնեմ քեզ ողեր,
Կանչեմ կը տաղեր.
Գյուլ Շողեր չան:

Ցերկինքն ամպել է, պետին չաղերով,
Ցես քեզ սիրել եմ անուշ տաղերով:

Կայնել ես բաղը,
Ցերդում ես տաղը:

«Ծաղ» բառի հին դործածությունը հայտնի չե: Բայց «խաղ» բառն եվ աչխարհիկ յերգի նշանակությամբ դանում ենք հենց մեր դրականության սկիզբներում: Շահապիվանի ժողովի*) ԺԵ. կանոնը մենակեցների համար իբրև արդելք դնում է. «... Մի՛ չարակամ, մի՛ ամբարտաւան, մի՛ ի խաղս երգոց, մի յերգս լկտեաց...»:— «Խաղք երգոց» կապակցության մեջ համանիշ բառերից յերկրորդը դրված է սեռական հոլովով, ինչպես սովորական է մեր հին մատենադրության մեջ:

«Խաղ» բառը միաժամանակ նշանակում է և պար: Այս ցույց է տալիս, վոր «խաղ» կամ «խաղք երգոց» սկզբնապես կոչվել են պարերգերը, իսկապես այն փոքրիկ յերգերը, վորոնց մասին է խոսքս, վորովհետև քառատողերն ու յեռատողերը, մանավանդ յերկատողերը, դրեթե բոլորը սկզբնա-

*) Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1913, յեր. 75. «Կանոնք Շահապիվանի ժողովոյն. ԺԵ.»:

www.naregatsi.org

պես պարերգ են: Այժմ էս, սակավ բացառությամբ, իրրև պարերգ բանում են միայն այս փոքրիկ յերգերը· այնպես վոր յեթե խաղ բառն իր սկզբնական նշանակությամբ գործածելու լինենք, այս բառով միայն կարելի յեր կոչել ժողովրդական յերգի այս տարբրական տեսակը: Բայց վորովհետև բառի իմաստն ընդարձակված է, աշուղական յերգն էս խաղ է կոչվում, ուստի յերգերի այս փոքրիկ տեսակը կոչում ենք ժողովրդական խաղեր: Սակայն այս կոչումն էս ճիշտ չէ, վորովհետև դա իսկապես հավասար է ժողովրդական յերգ բառին: Ինչպես ել լինի, ամենից հարմար այս «խաղ», ավելի էս «խաղիկ» անունն ենք դանում, մանավանդ վոր արևելյան հայերը դրեթե ուրիշ տեսակի ժողովրդական խաղեր չեն ճանաչեն, բացի այս փոքրիկ յերգերից, և վոր գլխավորն է՝ «խաղ» բառի սկզբնական նշանակությունն է այդ:

Ի՞նչ են մեր ժողովրդական խաղիկները, վորոնք իրենց յեղանակների համար հաճախ սիրված են, իսկ իրենց բառերի համար՝ բանաստեղծական տեսակետից՝ շատ անգամ ծաղրված և անմտություն են համարված, կամ թե, ընդհակառակն, անմտություններն էս մեծ դեղեցկություններ են կարծված, մի միայն նրա համար, վոր ժողովրդական անունն են կրում:

2· ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՑԵՎ ԴԵՂԶՈՒԿ ԽԱՂԱՍԱՅՆԵՐ

Այս ժողովածուի մեջ տպագրված հազարավոր փոքրիկ յերգերը դերազանցորեն գյուղական բանաստեղծություններ են, սիրու յերգեր, մեր գյուղացության արտադրությունը մինչև 1914 թվականը:

Մինչդեռ մեր հին մուսանական յերգերի, հայրենների մեջ գյուղի հիշատակություն անգամ չկա,— վորովհետև դրանք այլ դասերի, աղնվականության ու քաղաքացության, ստեղծագործություն են,— այս խաղիկների մեջ, ընդհակառակն, հաճախ հանդես և գալիս գյուղը:

Ահա մի յերգ, վորի հորինողը հիշում է իրենց գյուղը·

Աղջի, ես ըզովն արի,
Մեր դեղի ղըզովն արի···

Ուրիշ յերգիչներ նկարագրում են իրենց գյուղը, կամ պատմում են գյուղ գնալու մասին:

Դեղին վերեվ ծառ սալորի···
Դեղին վերեվ հերկեր-մերկեր···
Եամար ելեր կ'երթա ի դեղ···
Երթամ Պաղ դեղ···

Եկանք, հասանք դիմաց դեղին···
Դիլբար ելավ, գնաց ողին,
Գնաց, կայնավ վերեվ դեղին···

Ահա և մի յերգ, վորով ծաղրում է աղջիկն իրենց գյուղի տղաներին·

Ծաղիկն եր ծաղիկ դեղին,
Շատ ախմախ կա մեր դեղին·

Մենակ բարակրոյ գյաղեն
Ելի, կայնե վեր թեղին:

www.naregatsi.org

Կան խաղեր, վորոնց մեջ յերգվում և միասին ծաղիկ քաղելն ու վինջելը և խաղ ասելով դյուղը տանելը։

Ման գալով ամեն լավ տեղ՝
Քաղենք ծաղիկ միասեղ.
Փնջեր կապենք միասին,
Խաղ ասելով տանենք դեղ։

Մի ուրիշ խաղի մեջ յերգիչն ամաչում և դեղը դնալուց.

Իմ դոշին ա ֆիշանըղդ,
Ցես ի՞նչ երսով ելնեմ դեղ.
Սաբիք, քու քալեն մեռնի,
Կարավ իմ երեսաոեղ։

Ահա և մի գեղջկուհու դիմումն իր ամուսնուն, նրա տենչն ու յերդվեցումը.

Հանդեն գաս, դեղը մտնես,
Իմ գյաճ տեղը մտնես.
Ինձնից այրի յար քունես,
Բեմուրաղ հողը մտնես։

Մի ուրիշ գեղջկուհի, վորի ամուսինը քացակա յե, փափաքում և նրա գալուն.

Գեղով ըսին՝ քու յար իրի,
Թաղով ըսին՝ քու յար իրի.
Խազար իրի, լա՛, մեր տուն չիրի,
Գարնան գիշեր դի քուն չիրի։

Լսենք և մի դժբախտ գեղջկուհու, վոր ունեցել և անհամապատասխան ամուսին.

Առակ ելար մեջ գեղին,
Սիրտդ ընկավ ոճուն լեղին.
Քու հորն ու մորն ի՞նչ ասեմ,
Վոր քե տվին տախ տղին։

Ահա և մի գյուղական խաղ, վորի յերգիչն ուրախանում և իր յեռակի աջողության համար.

Գալամ եմ ցանե ճամբեն,
Գտեր եմ գեղի համբեն.
Ինձ մի նազան յար ունեմ,
Կըցգալա կժան կանթեն։

Լսենք և մի ուրիշ գյուղացու, մի բախտավոր սիրահար տղայի խոսքն իր ընկերին.

... Մեր դռան առաջ սրտ գարնցան,
Ջուխտ ըմ ջեյրան մեջով անցան.
Գեղով թափան, չճանչըցան,
Մեկն ի՛մ յարն եր, մեկ քո՛ յարն եր։

Գեղացի աղջիկն ու տղան ուրախ են, վոր իրենց սիրածն իրենց գյուղից և.

Աղջի, դու մեր գեղեցի,
... Ազատ տղին դեղնցիր։—
Ա՛յ, տղա, դու մեր գեղացի,
Ոտար տղին դեղնցի։
Ծաղիկ ունեմ, դեղին ա,
Իմ ուզածը գեղին ա.
Ելն ել գիտի, ալամն ել,
Են երեցի տղեն ա։

Սրա փոփոխակն է.

Կ'ուզեք՝ հարցրեք, իմացեք,
Մեր գրկըցանց տղեն է։

www.naregatsi.org

Գովվում է «գեղի վեսան»։

... Քեզի կ'ըսեն գեղի վեսա...

Ահա՛ և իր յարով պարծեցող գեղջկուհու յերգը։

Հայց եմ թվել գաթայու,
Իմ յարն է մելիքայու։

Գեղումն սխտը սղա կա,
Իմ յարի նոքարայու։

Կան խաղեր, վորոնց մեջ աղջիկ յարն ուրիշ գյուղացի յե։

Ծաղիկ ունեմ գեղին ա,
Իմ յարը ձեր գեղին ա։

Հիլ ու մեխակ չատ ունեմ,
Հրեն յարիս ձեռին ա։

Մի քանի յերգերի մեջ հիշվում են՝ քաղաք, քաղաքացի, բայց այդ յերգերն էլ պարզապես գյուղական են։ Այդպես են հետևյալները։

Ես յանը պոպոք,
Են յանը պոպոք։

Քաղքցուն կ'առնեմ,
Հաղինն է սապոկ։

Տեսեք, թե գեղ մարդու դնացած այդ քաղաքացին ինչպես ցավում և իր աղքատ վիճակի համար և ինչպես իրեն բարձր է դասում, միայն նրա համար, վոր ինքը քաղաքացի յե։

Քամին եկավ, հով բերեց,
Կարկուտ եկավ, սով բերեց։

Քաղաքցի աղջիկ եմ,
Ինձ ես գեղ տեղն ո՞վ բերեց։

Այդպես չի մտածում ուրիշ գյուղ մարդու դնացած գյուղացի աղջիկը։ Նա սիրում է իր յարի գյուղը։

Ցես ղուշ եմ, թևըս գեղին,
Ման կու գամ յարիս գեղին։

Գլուխըս ղուրբան կուտամ
Իմ յարիս նստած տեղին։

Կան, հարկավ, նաև դժբախտներ, վորոնք չեն սիրում իրենց այդ նոր գյուղը։ Ահա՛ մի մանկամարդ կին, վոր ատելացած վերադառնում է իր ամուսնու գյուղը։

Ցես ղուշ եմ, թևըս գեղին,
Ման կը գամ նանիս գեղին։

Նանըս ինձ տեղակ չտրավ,
Ցետ դառնամ քամբախ գեղին։

Կան ուրիշ խաղեր էլ, վորոնց մեջ յերգվում է գյուղը։

Քաղաքը չափազանց քիչ խաղերի մեջ է հիշվում։ Այսպես որինակ՝ մի յերգի բազմաթիվ վոտիոխակներից հետևյալի մեջ, վոր դրվի յե առնված Թբիլիսում (Թիֆլիսում)։

Միր բաղումը բազմընչի,
Շըվին չըվի նման չի։

Քաղքումը տըղերք չատ կան,
Մեկն իմ յարի նըման չի։

Քաղաքացու յերգ է և հետևյալ խաղը, վորի վոտիոխակը նույնպես դրված է Թբիլիսում (Թիֆլիսում)։

www.naregatsi.org

Մի բարձ եմ արել, քմն ա.
Միհն էլ եմ արել, քմն ա.
Դյանջու քարվանն գալիս ա,
Միջի թավադն էլ քմն ա.
Վարխանա՝ միջի մեծ խոջեն քմն է:

Ջաղաքացու յերգ է և՛ այս.

Իմ յարը բազարբաշի,
Ջաքմեքը բարակ կաշի.

Եկավ, դրռնումն անց կացավ,
Ցես ասի՝ բարով մաշի:

Այսպես ուրեմն գյուղական բանաստեղծություններ են մեր այս փոքրիկ յերգերը, և դրանց հեղինակներն ու յերգիչները, խաղասացները, գյուղացի պատանիներն ու յերիտասարդներն են: Ինչպես հենց այդ յերգերից իմանում ենք, խաղ ասել են և ասում են վոչ միայն տղաները, այլև, և ավելի հս, աղջիկները.

Աչըդ չեմ, աչըդի ճուտ եմ...
Աղջիկ չեմ, վոր ամաչեմ.
Տղա յեմ, խաղ կըկանչեմ:

Այսպես և ասում տղան: Բայց աղջիկը, հենց նույն յերգի փոփոխակով, պատասխանում է տղային՝ ասելով.

Տղա չեմ, վոր ամաչեմ,
Աղջիկ եմ, խաղ կըկանչեմ:

Ցեվ խաղալս: Մեր գյուղերում յեթե նորահարսները մի ժամանակ չխոսկան եյին մեծերի մոտ, աղջիկները, ընդհակառակն, ազատ եյին միշտ և յերգում եյին տղաներին հավասար: Այս պատճառով և շատ խաղեր, նայելով իրենց փոփոխակներին, թե՛ տղայի և թե՛ աղջկա յերգեր են: Աղջիկները յերգում եյին և ցերեկը և պիշերները: Ներանք իրենց խաղերն ասում եյին և այգիներում, և ուխտերի ժամանակ, և պարելիս:

Ներանք ասում եյին և վիճակի յերգերը վիճակահանության ժամանակ՝ Համբարձման կամ Վարդավառի տոնին:

Համբարձումը գալիս ա,
Մոպիկը ցնծալիս ա.

Համբարձում կանչող աղջիկ,
Ձենըդ ծըվըլալիս ա:

Փոփոխակների մեջ է.

Ա՛յ դյուլում ասող աղջիկ...
Վարթևվոր ասող աղջիկ...

Մի ուրիշ յերգի մեջ լսում ենք.

... Լավ դյուլում ասող աղջիկ,
Անուշ կենա բերանըդ:

www.naregatsi.org

Ցեվ վերջապես տղան ասում է.

... են խաղ ասող աղջիկը,
Բռնել եմ ինձի բուքա:

Խախ էլին ասում տղաները, հարկավ, նաև ուրախությունն անելիս:

Խաղ ասելը պատանիների համար մի պահանջ էր: Տղան խաղով զովում էր իր սիրած աղջկան, աղջիկը՝ տղային:

... են չոլիվեր գնացող ալին՝
Բերանի յես խաղը պիտի:

Այսպես է ասում յերգող պատանուհին իր խաղի մեջ: Մի ուրիշ բախտավորը յերգում է.

Ա՛յ տղա, դու բաղի մեջին,
Վոտներդ չաղի մեջին.

Կանչե՛, կանչելուց մեռնեմ,
Ցես եմ քո հաղի մեջին:

Իսկ տղան էլ ասում է.

... Մի գովելի յար ունեմ
Իմ բոլոր խաղի մեջին:

Յերիտասարդները հաճախ խաղերի միջոցով մեկմեկից հայտնում էին իրենց միտքը:

Վանքի ձորում խաղ ասի,
Խաղի մեջ քեզ բան ասի.

Ինձի եղուց տանում են,
Սուրբ Սարգսի պես հասի:

Այսպես է յերգում աղջիկը, վորին չուտով պիտի ամուսնացնեն վոչ իր ուզածի հետ:

Տղաներն էլ խաղով կանչում են աղջիկներին:

... Խաղ ասեմ, յարս իմանա,
Գլուխ գնանն հանա դուս,
Բալքի իմ աչքեր դա լուս:

Մի ուրիշը յերգում է այսպես.

Բլբուլ, արի մեր բաղը,
Ասա իմ յարի խաղը.

Խաղիդ միջով բարեվրա
Հասցըրու յարիս թաղը:

Աղջիկն էլ խաղով զգուշացնում է տղային, ասելով.

Ա՛յ տըղա, խաղով արի,
Վոտներըդ չաղով արի.
Մեր թաղը զալմաղալ ա,
Դու վերին թաղով արի:

Այսպես և ուրիշ խաղերի մեջ: Խաղերի այսպիսի կիրառությունից են ծագել «խաղով մի բան ասել մեկին», «խաղով հասկացնել» դարձվածները, վոր նշանակում են՝ ակնարկելով հայտնել մեկին մի բան:

www.naregatsi.org

3. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍԻՐՈ ՅԵՐԳԸ

Այդ փոքրիկ յերգերի նյութը չատ պարզ բան է։ Ամենից առաջ դրանք, ինչպես ասվեց վերեվում, սիրո յերգեր են, գյուղացի նորահաս ու նորատի մարդկանց, սիրահար պատանիների ու պատանուհիների, մասամբ և յերիտասարդ ամուսինների յերգերը, վորոնց մեջ մեծ պարզամտությամբ յերևան է գալիս նրանց սիրո զգացմունքն իր անվերջ բազմազանությամբ, իր պեսպես վիճակներով։

Սակավաթիվ խաղիկներ միայն կան, վորոնց նյութը չի վերաբերում սիրուն, կամ առհասարակ ամուսնության և ամուսիններին, այլ վորևե գյուղական հասարակական խնդիրների։ Այս վերջինները, վորոնցով չատ հարուստ են մեր գյուղական աշխատանքի յերգերը, չեն հետաքրքրում այդ խաղիկների պատանի հեղինակներին։ Բայց դրա փոխանակ այդ յերգերը բազմակողմանի կերպով հարուստ են սիրո հետ կապված իրական կյանքի զանազան դրություններով ու զորձողություններով, լի են ժողովրդական սովորություններով, գյուղական կենցաղային դծերով ու բարքերով, վորովհետև դրանք, ինչպես մեր հին դուսանական յերգերը, բանաստեղծություններ են պատահած, ապրած դեպքերի։

*Այստեղ կարիք չկա մանրամասն խոսելու այդ ամենի մասին։ Խաղերի մեջ յերևան յեկած կենցաղային դծերն ու մոտիվները, համեմատությամբ մեր հին հայրենների, մասամբ ուսումնասիրված են արա Հեղինակի մի աշխատության մեջ**)։ *Այսպես, որինակ՝ սիրուց հիվանդանալն ու յարին հիվանդության բժիշկ համարելը, պատանուհու «թելիկ-մելիկ դալը» տալին զրավելու համար, լվացք անելը, ջուր բերելը, ծնողների արդելք լինելը տալի և աղջկա սիրուն, թաքուն սիրելը, բամբասանք, աղջկա համարձակություններ ու բամբասանքից չվախենալը, նշանածի դիշերային այցելությունը, նույնպես և վարճանքը (գլխապին), բանի ամուսնացումը, աղջիկների չենթարկվելը ծնողների կամքին, աղջիկ փախցնելը, այլ և հարևաններին սիրելը, աչքերին դեղ դնելը, սիրականի հետ այգում զբոսնելը, յարին սպասելը, սուտ բանի դնալը՝ յարին տեսնելու համար, և բազմաթիվ նման մանր բաներ, վորոնք սիրահար պատանության սրտի համար արժեքավոր են հանդիսանում։*

Բացի դրանից՝ խաղերի մեջ չատ կան և ուրիշ այսպիսի մանր սիրային մոտիվներ, ինչպես որինակ՝ ժամադրություն, դիմավորում յարին, հանդիպում, տեսակցություն դիշերով։

---

*) Մ. Աբեղյան, Հին դուսանական ժողովրդական յերգեր. (Արատատության ՀՍՀՀ Գիտ. Համալսարանի «Տեղեկագիր» №№ 2—3, 4 և 6-ից), Յերևան 1931. յեր. 142—160։

www.naregatsi.org

Տո՛ տղա, բաղով արի,
Դուն վերի թաղով արի։

Իմ մեր քեզ աղջիկ չի տա,
Լուսնակ գիշերով արի։

Սիրված մոտիվներից և վորևե ցանկության արտահայտությունը, ինչպես՝ ցանկություն յարի գալու, նրա հետ խոսելու, նրա մոտ լինելու, նրա համար զոհվելու, նրա վրայի զարդարանքը դառնալու և այլն։ Հաճախ յերգվում է՝ լուր ուղարկելը մորը կամ յարին լուսնի կամ թռչունի միջոցով, ծաղիկ ուղարկելը յարին, այցելության գնալը, ամոթին ուրիշներից, աղջկա վախը թե յարն իր թարիկը ավել է, վախ քնած յարի համար, վախ մոռացված լինելու, զեչ խոսքից վիրավորվելը, հոգացողության ճանապարհ դրած յարի համար և շատ նմանները։ Այսպես և սիրու վիշտն ու տանջանքն ընդհանրապես՝ յարի համար դարդով լցվելը, լալը, բախտավոր ու դժբախտ սերը, սիրված լինելու ատելը, յերդում հավատարմության, յերազում յարին տեսնելը, վիշտ յարի հեռանալու մասին, և այլն և այլն։

Կայնել եմ, գալ չեմ կարող,
Լցվել եմ, լալ չեմ կարող։
Քանի վոք գնացել ես,
Անունդ տալ չեմ կարող։

Ձեր բաղի դուռը բաց ա,
Վառնեբս չաղալ թաց ա։
Ինձանից հեռացել ես,
Աչքերս լիքը լաց ա։

Սովորական մոտիվներից և նաև խաղերի մեջ հաճախ կրկնվող անեծքը՝ մերթ իր սիրած յարին առնադին, մերթ չսիրողին, կամ երեն չսիրողին, կամ թշնամուն ու խանդարողներին։

Հագել ես կարմիր կապա,
Մինթանեղ խաս զարբար ա։
Թե չսիրես ինձ սրտով,
Ձեր աունն բլնի խարաբա։

Ախեվն ա՛ռի փավել ե,
Ալ ֆաս գլխին ծռվել ե։
Ով վոր առնի իմ սիրած,
Թաղը գլխին չվելե։

Կան բազմաթիվ քառյակներ, վորոնց մեջ յերևում է աղջկա արհամարհանքը տղայի նկատմամբ, կամ ընդհակառակն.

Սարի տակը աուն ունեմ,
Մեջը վոսկե աուն ունենամ։
Քաշվի, կորի, չան տղա,
Քեզ պես տասը չառն ունեմ։
Ձես մորս միննուճար եմ,
Լավ աղջկանց համար եմ։
Ամ մազս սպասակ կանեմ,
Քանց քեզ լավը կը ճարեմ։

Ա՛յ տղա, եղ ես—մեղ ես,
Խանչալը մեջդ նեռես,
Դու գիտես՝ տղամա՞րդ ես,
Ծմակի փքուկ փետ ես։

Տղան էլ այդպիսի աղջկան դարձնում է.

Ժամի դուռը սաչ կ՚անեմ,
Մահուդ չուխա քաչ կ՚անեմ։

Ճան աղջիկ, չատ մի՛ հաչի,
Քեզի հալ ու մաչ կ՚անեմ։

Առանձնապես աչքի յե ընկնում այն, վոր յերիտասարդները, բնականաբար, միշտ ազատ սիրո և ազատ ընտրության կողմնակիցն են, հաճախ

www.naregatsi.org

դժգոհ են խանգարող ծնողներից, հատկապես աղջկա մորից, և բողոքում են ծնողների և ընդհանրապես ուրիշների ճնշման դեմ:

Կարմիր վարդը ճամով ա,
Սիրած յարը համով ա.
Եստեղ զոռի բան չկա,
Սերըն իրեն կամով ա:

Ճրադը վառա, վառա,
Հոր հետ վատամարդ դառա.
Մեր ու աղբեր Թող տվի,
Ես իմ սիրածին առա,

Բալի բոլորը պատ ա,
Հերն ու մերըն ինչ զատ ա.
Ես սիրել եմ, յես կ'առնեմ,
Վերեվ ասողած չհատ ա:

Բայց չպիտի կարծել, թե ամուսնությունը յերիտասարդների կամքով և կատարվել ընդհանրապես: Ընդհակառակն, հին կենցաղի, հետեվաբար և դրա արտահայտիչ խաղերի մեջ ևս աղջիկներին սովորաբար ամուսնացնում են ծնողները:

Մա'րս, մանա մանածս,
Գնա, քաղա ցանածս.

Պապս հարսնիք ա բռներ,
Ջեմ ճանչնար նշանածս:

Ահա հին ամուսնության մի այլանդակ տիպը: Ամուսնացողները նույն իսկ չեն ճանաչում միմյանց:

Հին ամուսնության այլանդակություններից մեկն ել յեղել և անհամեմատ տարբերներ ունեցողների ամուսնացումը— տղան շատ մեծ, աղջիկը փոքր, կամ ընդհակառակն: Այս յերգիկների մեջ հաճախ ծաղրվում և այդպիսի ամուսնությունը:

... Ճարըս մին քիրճ ա գառել,
Ես հլա մի պիծի խոխա:

... Եդ իմ սիրած ալ յարը,
Դրել եմ ծծիս ծալին:

Աղջիկները և հարսները համարձակ բողոքում են այդպիսի ամուսնությունների դեմ.

... Ես բոյավոր մեծ աղջիկ,
Են երեխու Թայը չեմ:

Տեններն եղնեմ, ինչ ընեմ,—
Վարդի տերեվ չորցընեմ.
Ես պըղտուտիկ (վար. պըլպլուկ) հարսնուկ եմ,
Մորվոջ (միրուքով) երիկն ինչ ընեմ:

Ծնողներն այսպիսի ամուսնությունները կատարում են հաշիվներով.

Թամահ արին հարըրնոցին,
Ինձի տվին դրկանոցին...

www.naregatsi.org

Թեպետ և խաղերի մեջ հաճախ կրկնվում է այս տողը՝

Սիրել ենք, իրար կ'առնենք.

Բայց ավելի ևս հաճախ յերգվում է.

Սիրած սիրածի չեն տա:

Սիրում են իրենց դրկիցին, իրենց համագյուղացուն: Աղջկա համար մեծ դժբախտություն է համարվում ուրար տեղ մարդու գնալը:

Ջարչին ծախում ա քաթան,
Աղջկան չկա վաթան.
Աղջիկն են վախտը մեռնի,
Վոր բոլ ա մի դաղ պատան:

Քախանի մարգը փուչ ա,
Սրտով սիրածն անուշ ա.
Ալամ աչխարհն ել դինա՝
Աղջիկն անվաթան դուշ ա:

Մեր խաղերն ամենամեծ մասով գալիս են շատ հին ժամանակներից. դրանց մոտիվներն ավանդական են: Նման բաներ, նման կենցաղային դեպքեր միշտ կրկնվել են կյանքի մեջ, քանի իշխել են նույն բարքերը. ուստի և հին խաղերը չարունակել են ապրել: Բայց դրանք, հարկավ, նորոգվել են՝ ժամանակի նորույթներն ընդունելով իրենց մեջ: Այդպիսի մի նորույթ, մի նոր մոտիվ և մտնում մեր սիրու խաղերի մեջ 1887 թվից իվեր, յերբ Անդրկովկասում սկսվում է հայերի զինվորագրությունը: Ցերկար դարերի ընթացքում զինվորական ծառայություն չիատարած ժողովրդի համար՝ դա համարվում եր մի աղետ, վոր և անդրադարձել է գյուղական սիրո յերգի մեջ:

Երկանքը դոդում ա,
Մարերը սարսռում ա.

Եկան սալդաթ չափելու,
Իմ սիրած մրմռում ա:

Մինչդեռ այժմ մեր աղջիկներն ևս զինվորական վարժություններ են անում մեծ սիրով և ուրախությամբ, այս հին յերգերի մեջ վոչ մի մայր չի ուզում, վոր իր տղան զինվոր դնա: Մայրը նախապաշարված նվերներ և տալիս՝ վորդուն ազատելու համար.

Սալդաթի մեր լվացք կ'անե,
Շուշպեն ալետրընին տանե,
Սալդաթ տղեն ազատ անե:

Իսկ ի՞նչ և ասում սիրող աղջիկը.

Հանդուվը սել (հեղել) ա եթում,
Մարգուվը ջուր ա եթում.
Գացեք ասեք սալդաթին՝
Ինձ թողե՝ ո՞ւր ա եթում:

Կորեա քամին բոլորավ,
Ցարիս բեխերն ոլորավ.
Ցարիս գրեցին սալդաթ,
Սիրտս փորիս մոլորավ:

Ծիրանի ծառ ծավել ա,
Ցարս սալդաթ գրվել ա.
Ցար չան, սալդաթ մի՛ դնա,
Ջո եղնիկը կը մնա:

Եկավ սալդաթի թուղթը...
... Բադրնու տեղն արան,
Վեց տղա չոկին, տարան,
Ցերերը կապին վարամ:

www.naregatsi.org

Հարուստների վորդինները կաշառով ազատվում էին. նրանց փոխանակ աղքատներն էին զնում ծառայելու: Դրան է ակնարկում հետեվյալը.

... Նաչալնիկը մեզ կըկանչէ,
Ջյասիբ տըղին հեչ չի ճանչէ:

Զինվորի վիճակը նկարագրվում է դժվար, և յերիտասարդն ինքն էլ չի ցանկանում զինվորական ծառայությունը.

Բալաբաննեըը զարկին,
Կազարմեն սալդաթ լցին.
Սալդաթ զոմի տուն չուներ,
Դիշեր անուշ քուն չուներ:

Խաբար տարեք, տարե՛ք, ձորե՛ք,
Հալել եմ սալդըտի չորեր,
Լաց եղնելին ընցում որեր:

Անցնենք խաղերի այլ կողմերին:

Մեր այս սիրո յերգերի մոտիվների մեջ մեծ տեղ է բռնում նաև յարի գովքը, տղայի թե աղջկա կողմից ասած: Ցերբեմն նաև խաղի ամբողջ բովանդակությունն ինքնագովք է: Գովքի յեղանակները բազմազան են. բայց դա ընդհանուր առմամբ մարմնի և հագուստի նկարագրերն են վորևե նմանությամբ: Նույն պատկերները կինոջ մարմնի համար՝ չարունակ կրկնվում են, ինչպես և մեր հին դուստանների սիրու յերգերի մեջ*):

Խաղերի մեջ վոչ միայն կինն է նկարագրվում, այլ և սիրված տղան:

Թե տղայի և թե աղջկա գովվում է հավասար չափով և թուխը և չեկը. «չեկ աղջիկ», «չեկ տղա», «թուխ աղջիկ», «թուխ տղա», «չեկ աղքեր», «չեկլիկ աղքեր» (=չեկ յար): Ցերբեմն տղայի համար հիշվում է սև գույնը, իսկ աղջկա համար՝ սպիտակ:

... Բաղի մեջի չեկ աղջիկ
Ուշքս-միտքս տարել ա:
Եդ չեկ մազավոր աղջիկ...
Շեկ աղջկա առնողն եմ:
Կորցրել եմ չեկլիկ յարս...
Շեկլիկ յարս տուն եկավ...
Շորո՛ր, դու չեկլիկ յար...

... Շեկ տղեն քեզի մեռնի...
Շեկ տղա, սպիտակ աղջիկ...
Շեկ մազավոր լավ տղեն...
Եդ թուխ ու խումար տղեն...
Բեհեն ոլորած, ճակիը թուխ:
Բուկը սպիտակ, բեխը թուխ:
Սեվ տղա, կարմիր աղջիկ...
Սեվ տղա, գուլգազ աղջիկ...
Երես կարմիր, աչքեր թուխ:

Շատ գովվում են աղջկա մազերը, ծամերը— ոսկի, արմա, չեկ, չեկլիկ, չեկլիկ, սեվ, աբրշում, չաղ տված, ուսերին փռված, թե-թել արած, ոսկի թելերով հյուսած, սղալած, համբա-համբա: Մազերից ավելի յերեսների նյութ է դառնում կինոջ աչք-ունքը. աչքերը— սեվ, թուխ, թուխ-թուխ, խաժուժ, չալ-չալ, բալակ, խումար, ֆինջան, կլոր, ծով-

*) Մանրամասն բացատրություն այս մասին կարելի յե դտնել Մ. Աբեղյանի «Հին Գուսան. ժողովրդ. յերգերի» մեջ, յեր. 122—142:

www.naregatsi.org

Ծով· ունքերը— սեվ, թուխ, կամար, կեռ, կեռ ու մեռ, կալամքաշ· թար–թափները՝ կալամով քաշած։

Թուխ աչքեր դեղ դրեր ես։
Աչքերդ բոլորել ես·
Իրեք որ ա տեսել չեմ,
Իմ սիրտը մոլորել ես։

Դինուն կարմիրը սիրե՛,
Աչխընին (աղջիկների) թուխը սիրե·
Սեվ աչվին մորանց պետք ե,
Սիւրմե քաշելն ի՞նչ անե։

Բայց և այնպես մի քանի խաղի մեջ հիշվում ե աչքերի դեղը, և մա–զերին ու ճեռներին հինա դնելը·

Ջուխտակ աչքեր քաշեր ա դեղ։
Թուխ աչքեր դեղ դրեր ես։
Աչվին ծարուր քաշեր, ընքուներ թուխ եր։

Եպիչում մազերդ դրեր ես հինա։
Ձեռներդ դրել ես հինեն։

Մատները, ինչպես գուսանական յերգերի մեջ, բաշխակ են, յերեսը՝ կարմիր, նռան հատիկ, շարմատ, բոլոր, դուլդաղ, լուսնակ, թչերը՝ կարմիր, կակուղ, «կլոր թչիկ ճերմըկուկ», բերանը՝ պստիկ, «պստկաբե–րան», ճակատն ապխտակ, բունկն՝ ապխտակ, «կուլ–բոխաչ ապխտակ»։ Ցեվ վերջապես յերգվում ե կնոջ ապխտակ ծոցը,— ծծերը՝ բամբակի քուլա, շամամ, ոսկի ջամ,— և նույնիսկ յերեսի խալը, վոր դեղեցկություն ե համարվել։

Տեղ եմ գցել ալվալա,
Երկու թչերիս խալ ա։
Կայնել ես աղբերակին,
Շող կը տաս արեգակին·

Քո շող երեսին մեռնեմ,
Ունքերիդ աղեղնակին։
Փեչքդ կը տա արեգական,
Կարմիր երեսք արունկաթան։

Կան մի քանի խաղեր, վորոնց մեջ դուխում ե «կոլոտ» ու «խորոտ» աղջիկը· բայց նորատի աղջիկը պատկերացվում ե ընդհանրապես բարձր հասակով և բարակ, նազուկ մեջքով։

Ջինար բոյիդ յես դուբրան։
Թևերդ չինի բիլազուկ,
Բոյըդ երկար, մեջքդ նազուկ։
Մեջքդ բարակ, խանչալի բուռ...

Բոյ մը ունի քյալաչ նման։
Բոյըդ ղարղու ղամիչ։
Թառ բոյիդ մատաղ, նշանլու աղջիկ։
Բոյը բարակ չիմչատ ա։

Այս ե խաղերի մեջ յերգված կնոջ նկարագիրն ընդհանուր առմամբ։ Նրա չարժվածքը «չորոր–մորոր» ե· նա չորորում ե կաքավի նման և աղա–ների խելքը տանում։

Քեչքդ կաքավի նման
Ինձ անում ե հոգեհան։

Ինքն այդ աղջիկը «խելքուվ» ե·

Քեչե՛, քեչե՛, քելքով աղջիկ,
Քանց քու մերը խելքով աղջիկ։

www.naregatsi.org

Տղան էլ «բոյով» է և չենք ու չնորհքով: Աղջկան առանձնապես դրա-վում են տղայի բեղերը, նոր ծլած, ոլորած:

Թուխ բեղավոր տղեն...
Են չեկ բեղավոր տղեն
Մելքս գլխես տարել ա:
Ես բոյ-բուսաթին մեռնեմ,
Նոր ծլած բեխիդ մեռնեմ...

Իմ յարիս չեկլիկ բեղերը
Դյուլաբաթինու նման ա:
... Նոր ծլած բեղիդ մեռնեմ,
Ոսկեթելի նման ա:
Սիրել եմ յես ջահիլ տղին,
Մեռնեմ յես նոր ծլած բեղին...

Ցեվ վերջապես առանձնապես աչքի յե ընկնում տղայի քաքուլը (ցցուն-քը), վոր շատ հին սովորութիյամբ պահում եյին յերիտասարդները դեռ մինչև մեր որերը, մինչև 1870-ական թվականները:

Առանց քաքուլ յար չիլնի...

Այսպես է ասվում մի խաղի մեջ: Ցեվ այդ քաքուլը— սեվ, թուխ, չեկ, դաստա, ղալին, վոր տղամարդության նշան է, հաճախ յերգել են աղ-ջիկները իրենց խաղերի մեջ.

... Մեռնեմ բոլոր քաքուլին,
Մեջեն վարդահոտ կը գա:
Իմ յարին մին քաքուլ ունի,
Ոսկի թելի նման ա...

Գալով հագուստներին՝ պետք է դիտել հետևյալը: Այս փոքրիկ բա-նաստեղծությունները շատ ժամանակների և շատ կողմերի յերգեր են. դրա հետևանքով այդտեղ գտնում ենք հիշատակված բազմաթիվ հագուստներ, փոփոխակների մեջ հաճախ տարբեր հագուստներ, կամ միևնույնը տար-բեր անուններով:

Հին կենցաղի հագուստ ու կապուտի մի նկարագիր է հետևյալը, վոր ամուսնացած կնոջ յերգ է.

Քթիկալը քիթս եմ քցել,
Իմ յարը միտս եմ քցել.
Եսոր եր'կոր չեմ տեսել,
Կրակը սիրտս եմ լցել:

Դրա փոփոխակների մեջ գտնում ենք՝

Ցայլուխը ճիտս եմ քցել...
Սեվ փուչին ճիտս եմ քցել...
Ուսկալըն ուսս եմ քցել...
Լաչակը բուկս (վ. ճիտս) եմ քցել...

Մեկ խաղի փոփոխակի մեջ՝ «քու խեղճ յարըդ (վ. սիրածդ տանն) անտեր ա» տողի վարիանտն է՝

Քիթը կալածն անտեր ա:

Մի ուրիշ յերգի մեջ,— վորի ասողը տղա յե,— սիրականը, յարը (վարիանտների մեջ՝ քույրը) նկարագրվում է այսպես՝

Քիթը կալած, (վ.վ. վարսը, ծամը) թուխ:

«Քթիկալը» ուրիշ յերգերի մեջ չի հիշվում, դի խաղասացները «քթիկա-լավորներ» չեն: Մյուս զգեստները— աղլուխ, փուչի, լաչակ կամ լաչիկ—

www.naregatsi.org

հաճախ նյութ են դարձած յերգերի: Նոր ամուսնացած կնոջ «փուչին» հիշվում է այլ և իբրև «գլխի փուչի», մահրամա, վալա, յաղմա, մեւտակ: Կա նաև լաչիկի տակի «կոտիկը», և նույնիսկ «բաղալինդը», այլ և գլխի չարղաթը:

Գլխիս քցին կարմիր փուչին,
Քարով զարկին սրտիս չուչին·
Սարդարը ձեռքես խլեցին,
Ինձի ավին ես բայղուչին:

Բարակ ճամբեն մտել ես,
Կորցրածդ դաել ես·
Նոր վալեդ վոչ վայելես,
Ինձ քու մտից քցել ես:

Սրանք նորահարսի յերգերը են, կամ յերգեր են նորահարսի մասին: Աղջիկները շատ անգամ յերգում են իրենց աղլուխը, բկի աղլուխը:

Ջաղացիս դուռը տաշած,
Աղլեխս դյուլը (վ. վարդը) նախշած·

Կեռ կեռ ունքերիդ՝ մեռնեմ,
Ոսկե զալամով քաշած:

Աղջկա բկի աղլուխը— մոլ, թուխ, կարմիր, ալ— հիշվում է և իբրև բկի բաղդատի, մանդիլ, դաստմալ, բկի կապ և այլն: Կա նաև ձեռի յայլուխ (թաշկինակ):

Աղջիկները զլուխները կապում էին թաշկինակ, աղլուխ, կամ դնում էին, ինչպես և տղայքը, փաս, վոր շատ հաճախ հիշվում է— ալ փաս, փեսակուլ փաս, ֆինո փաս: Ահա թե ինչպես է յերգում մանկամարդ կինն իր սիրած յերիտասարդին·

Նախշուն էլակ կաբեր ես,
կոճկներդ շարեր ես·
Մեռնիմ դաստա քյաքուլիդ,
Ալ փասը ծուռ դրեր ես:

Ֆասդ գլխիդ դրել ես,
Փյուսքյուլ վրեն ծռել ես·
Ինչ արավ՝ փյուսքյուլն արավ,
Ջոռով սավդի տեր արավ:

Աղջիկների փասը — թասակը — սովորաբար զարդարված եր լինում դրամների շարով·

Աղջի, արի քե փաս առնեմ,
Ֆասի բոլոր վոսկի շարեմ...

... են ալ փասով աղջիկը
Ինձի ավել են բութա:

Ահա մի զարդարված աղջիկ·

Գլուխն եղիր ֆինո փաս,
Փուսկուլն ի կախ, չորեր խաս,

Կարմիր մարջան վեր բկին,—
Շանորդիք Թող ծկակին:

Հաճախ դուվվում է կնոջ չրջազգեստը — մինթանա, չիթ մինթանա, դեյրա — շալ, կարմիրը,— ճուպա, ջուբա:

Մինթանեդ բութա-բութա,
Մեջքիդ ա բալաք ֆութա·
Սիրել ենք, իրար կառնենք,—
Թող գեղով ասեն՝ ասա ա:

Աղջի, անունդ Շուշան,
Դեյրե մ'ունիս խշխշան·
Աբի երթանք Սուրբ Նշան,
Վոսկի մատնիք քեզ Նշան:

Նազ մի' անի, նազ մի' անի, նազ աղջիկ,
Մինթանովդ Թող մի' անի, ջան աղջիկ:

www.naregatsi.org

Մի քանի խաղերի մեջ յերգվում է քաթիպան, վոր հարուստ կանանց վերնազգեստն ե, թևվերի ու լանջի զարդարանքներով։

Ալ քաթիպես կարել եմ,
Ոտս կոճակը չարել եմ։

Դե՛ գնա կորի՛, գնչ տղա,
Քանց քեզ լավը ճարել եմ։

Փոփոխակների մեջ քաթիպայի տեղ են՝ ապիտակ գեյրա նախշուն կոճակներով, քաթան հալավ և այլն։ տղայի համար՝ արխալուղ։— Հարուստ աղջկա յերգ է և հետևյալը։

Ցես աղջիկ եմ, ալ կ'ուզեմ,
Բողչաս ծալածալ կ'ուզեմ։

Ցերբոր յարիս տուն երթամ,
Գոտիկս թիրմա չալ կ'ուզեմ։

Շապիկն ել շատ անգամ յերգվում է։ Ահա մի հարուստ աղջկա գովք։

Աղջիկ կուգեր կալենը խետ,
Կը զընդղընդեր չուչենը խետ։

Շապիկն եր չարե, կոճակն արծըթե,
Մէջաց քամարն ակնունք, գոհար է։

Այսպես և՝ մի թ'ել շապիկ դեղին կոճակներով, քաթան շապիկ, կարմիր շապիկ, կապուտ շապիկ, շիլա շապիկ, նույնպես՝ մոլ հալավ (= շապիկ), քաթան հալավ և այլն։

Ինչպես հին հայրենների մեջ՝ այս խաղերի բանաստեղծների համար ել կարեվոր տեղ է բռնում կապան,— թե տղայի և թե աղջկա,— կանաչ կապա, կարմիր կապա, դուբնի կապա, հարուստ տղայի համար՝ նաև սամույր կապա։ Կա նաև «աբա» կոչված անթեվ վերարկուն։

Մեր տուն, ձեր տուն մեկ գառաբով,
Ելնենք իջնենք կանանչ կապով։
Ղբար իտանք, ղբար առնենք,
Զիբար սիրենք աստվածն ապով։

Ծո՛ տղա, տղա, դու ալ կապով,
Ներիք կան դա մեր պատով...
Աղջիկ, կապեդ ալ պիտի,
Բողչեդ՝ ծալածալ պիտի...

Աղջկա զգեստների մեջ աչքի յե ընկնում նաև դոլնոցը, մեզարը— գեղին, նախշուն, կարմիր, կապույտ։

կարմիր մեզարով աղջիկ,
Շիլա չագկավոր աղջիկ,
Ինդիր ունիմ ասելու,
Ջո մորն ասա՝ քեզ տա ձիկ։

Նախշուն մեզար, ալ քնդեր,
Ձիս է վառեց քո գնդեր (=ականջի ողեր)։

Հիշվում են նաև՝ բլուղ, տղայի և աղջկա համար, ալ դոշամա և «կապուտ խրխան, կարմիր վալեն» աղջկա համար։ Ցերգի առարկա յեն դառնում նաև կնոջ կռիվները՝ սոլեր — կարմիր, սաղրի, մաշիկները— կարմիր, սաղրի, «մաս բաբուճ» և այլն։ Ջի մոռացվում նույնիսկ սոլերի նալչեն։

Դու ելեր ես, կ'երթաս բաղչեն,
Կը չընկչընկա սոլի նալչեն,
Արեվ գարկեր ճակտիդ թախչեն։

www.naregatsi.org

Վարիանտը՝

Կը փղփղա ճակտի մաղէն,
Կը չընկչընկա կոնդուռի նալէն։

Տղայի հագուստներից հաճախ հիշվում է՝ չուխա— թուխ, կարմիր, սեվ, յերկայն, «Թուխ չուխա, կարմիր յախա», կարմիր մահուդի, «Թուխ յախավոր, բոզ չուխավոր»· ղըղ, արխալուղ — բավթեքով, ալ, չիթ, լաստիկ· ելակ, ջուլդա, գոտիկ դոշլուկ, կարմիր շալվար, յափնջի· գլխին՝ արախչին, քոլոզ, փափախ· վոտնամաններըը՝ քոշ, չաքմա, սապոգ, տրեխ, չարուխ, պաճուճներ, խետ գուլպեք և այլն։

Ալ ազա սեվ չուխավոր...
Երնեկ կըտամ են որը,
Մեր տունը գաս Թագավոր։

4· ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽԱՂԵՐԻ ՄԵՋ

Ինչպես տեսանք, գյուղի բնակիչը, պատանի կամ յերիտասարդ գյուղացին ու գեղջկուհին են խաղերի յերգիչները։ Նրանք յերգում են իրենց ապրած տենչանքների, իրենց սիրո մասին։ Բայց բազմազան ձևերով արտահայտված սիրո հետ՝ այդ խաղերի մեջ միաժամանակ շատ կարևոր տեղ և բռնում նաև գյուղական աշխատանքն իր բոլոր տեսակներով, այնպես վոր կարելի յե ասել, վոր այդ սիրո խաղերը հաճախ մի կողմով նաև աշխատանքի յերգեր են։ Ցեվ այլապես էլ չեր կարող լինել, քանի վոր դրանք գյուղացու արտադրությունն են. իսկ գյուղերում մարդիկ մանուկ հասակից արդեն մասնակից են գյուղական աշխատանքներին։ Այս և պատճառը, վոր խաղերի մեջ գտնում ենք ընդհանրապես մեր գյուղը, հին հայկական գյուղն իր բոլոր չինական պարապմունքներով։

Գյուղական աշխատանքի մեջ առաջին տեղը բռնում է հողագործությունը, վոր ընդարձակ չափերով յերգվում է սիրո խաղերի մեջ։ Գարունը բացվում է Թե չէ, գյուղացին դաշտում է. նա տան յերես չի տեսնում.

Կը գնամ չոլը վաստակ...
Թուխպըն առալս կտրեց,
Մնացի բոյիդ հասրաթ։

Իսկ տանը մնացած կինը յերգում է.

Շեկո՛ ջան, տուն արի արտեն,
Դու ինձ ազատե՛ ես գարդեն։

Վարը լինում է դուքանով. «դուքանը վարի հողը»։ Մի յերգի մեջ միայն դուքանի հետ հիշվում է նախնական արտորը— «չուքը».

www.naregatsi.org

Ցես ի՞նչ անեմ կով ու կթան,
Վոր մենք չունենք չութ ու դութան:

Մի ուրիշ յերգի վարիանտներից մեկի մեջ դութանի փոխանակ անցել է «չութ»: «Դութանը վարափոսին» տողի փոխանակ է՝

Չութն են վարում ես փոսին...

Ցեվ վերջապես մի ուրիշի մեջ էլ հիշվում է «հարորվար».

Բոլոլիկ վերեվ դար եր,
Ջորս բոլոր հարորվար եր,
Ըմենց քաղցր իմ յար եր:

Դութանի աշխատանքն, ընդհակառակն, շատ հաճախ յերգվում է խաղերի մեջ: Կան մի քանի փոքրիկ յերգեր— յերկյակ, յեռյակ ու քառյակ, վորոնք աշխատանքի խաղեր են լոկ, բայց վոչ դութանի յերգեր իրենց հոռովելներով.

Ցես դութանն եմ, անդին քար եմ,
Հերկերըս կը վարեմ:—

Իրիկվե դեմ աղոթքան,
Դաշտ կու բանի ձեր դութան...
Քընց զըմեն քաղցր է վաթան:

Բերեմ և հետեվյալը.

Դութանը հանդին լարած,
Մշակնին մեջին չարած.

Մղափուն դութ, ա՛ մշակնի,
Սեվ հողին դերի դառած:

Այս քառյակի յերգիչը խղճում է մշակներին, վորովհետև դութանավորի, մանավանդ մաճկալի աշխատանքը շատ ծանր է: Ահա՛ թե ինչ է յերգում ինքը մաճկալը:

Քրտինք մեջքիս սառել ա,
Մաճը բուռս տարել ա.

Են չեկ ծամերով աղջիկ
Ուչ ու մխաքս առել ա:

Աշխատավորներին նեղում է արեգակը, չոգը. ուստի դութանի վարն առավոտը վաղ, հովով է սկսվում.

Վեր կացած հավախոսին,
Դութանն ա վարում փոսին.

Բարի արևը յերկնքում,
Շողն ա դիպել ակոսին:

Հենց այդ ծանր աշխատանքի համար դեղջկուհին առանձին հոգացողությամբ և վերաբերում իր սիրածին:

Դութանս վարի հողերումը,
Իմ յարս չոլերումը.
Գլուխս ղուրբան կը տամ,
Մի՛ ման գա չոգերումը:

Դութանս աքերումը,
Իմ յարս ցելքերումը.
Քեզ ղուրբան, իմ սիրուն յար,
Ման մի՛ գա չոգերումը:

Սիրահար աղջիկա յարն էլ մասնակից է այդ ծանր աշխատանքին.

www.naregatsi.org

Եսոր դուքթանը մերն ա,
Մամ բռնողն իմ հերն ա.

Ցեղնաբաժ հեկլիկ տղեն,
Աչխաբհ դիտի, իմ տեբն ա:

Նա իր սիրած հոտաղին վարդ կամ սիրո խնձոր ե ուղարկում.

Դուքթանը վարափոսին,
Շողքն ա դիպել ակոսին.
Կարմիր խնձոր եմ քաղել,
(վ. Մի ազուխ վարդ եմ քաղել),
Տարեք իմ Նանի փեսին:

... Կարմիր խնձոր քոլ անեմ,
Ղրկեմ իմ Նանի փեսին:

Բայց նա, այդ սիրող աղջիկը, ցավեր ել ունի: Նա հիշեցնում ե տղային իրենց պայմանաժամը.

Իմ աղբերն (= յարը) են անցումը,
Դուքթանի եզնանցումը.
Գիր եմ դրել, ուղարկել,—
Վաղաս ա Համբարձումը:

... Նհախ մարդի երեսից՝
Իլլաջ չկա իմ ջանուն:

Դուքթանը դաշտն ա բանում,
Ջեզ մտահան չեմ անում.
Թե սիրում ես, ինչի չես՝
Դարդը սրտից հանում:

Դուքթանի ենկեն ծերը (ծիրը),
Սիրել ա սիրու տերը (վ. սիրատերը),
Սիրունի տերն ի՞նչ անի,
Արհնատեր ա հերն ու մերը:

Դուքթան վարենք պտերով,
Ջեզ թռցնեմ ճաերով.
Ինձ քեզանից չոկողին՝
Ամանչալն ընկնի կողերով:

Ցերգվում ե նաև դուքթանավորին հաց տանելը, վոր կանանց, աղջիկների դործն ե:

Մանկալն և կայնե մանին,
Հաց և բերել խանքաջին.
Ցարս աչքով–ունքով արավ,
Ոսկի ողերն անկաջին:

Շարմաղ երես աղջիկը
Սիրտս բացեց, վարդ արավ:

Դուքթան վարենց, արտ արավ,
Դուշմանի սիրտ դարդ արավ.

Գուքթանը ման եմ ավել,
Սիրել եմ, չան եմ ավել.
Ոխտը տարի սերուքյուն,
Մեկ որ պայման եմ ավել:

Այս փոքրիկ յերգերի մեջ, առանց դուքթան հիշելու ել, հաճախ հիշատակվում են՝ արտ հերկել, արտ վարել, վարած արտ, վար անել, հերկ, ցել և այլն:

Կաքավն եկավ, արտս մնաց հերկելու,
Ջունս տարավ, յարս մնաց դրկելու.
Բերդի տակին ցել ունեմ...
Ջեր տան տակին վար կանեմ...

Ես դիշեր երազ տեսա,
Հերկերս վարած տեսա...

www.naregatsi.org

Ցեվ շատ ուրիշները թե դուքանի և թե ընդհանրապես վարի մասին։ Վոչ միայն վարը, այլ և հողագործական աշխատանքի մնացած բոլոր կողմերն էլ անդրադառնում են խաղերի մեջ։ Վարից հետո գալիս է ցանքը։ Ցանում են՝ ցորեն, գարի, բրինձ, բամբակ, կանեփ, կորնկան, յոնջա և այլն։

Արտումս ցանել եմ գարի...
Արտ եմ ցանե, հըմեն բրինձ...

Ցորեն եմ ցանե դուքնի ական,
Ելե, ճող տվե խետ արեգական.
Ելավ քաղելու, ձի կամաք չելավ,—
Են նազու յարիկս ինձնից խռովավ։

Գարունը բամբակ ցանեմ,
Ամառը քախան անեմ,
Աշունքը չանաք անեմ,
Ցար Ջան, մաջալն ընկի, քեզ կ'առնեմ։
Մեր տան եսեվ արտ կորնկան...

Ցերգվում է արտի կանաչելը կամ կանաչ արտը, ցանած արտի լավ չբուսնելը, արտի չորանալը, խորշակահար լինելը, մեջը կամ չորս բոլորը յեղեգ, փուշ բուսնելը և այլն, և ուրիշ պատուհասներ՝ կարկուտ, մկներ, անժամանակ ձյուն և այլն։ Լեռնային արտերն անջրդի յեն, իսկ դաշտերում՝ ջրովի։ Արտ ջրելը դժվար աշխատանքներից է. պետք է ջրի բանդը կապել ու պահել։

Մեր հանդերը ջրով ա...
Իմ յարը հանդին տեսա,
Ջրերի բանդին տեսա...

Իմ աղբերս հանդումն ա,
Սոված, ջրի բանդումն ա։
Թազա յոնջեք ջրեցի...

Հասնում է արտը և հնձում են, տեղը մնում է խոզան։

Արտը հասել ա դռտիկ...
Արտին գարին ա հասել...
Մեր տան յետեվ գարի խոզան...

Բայց հունձը ավելի ևս ծանր և հոգնեցնող է, քան դուքան անելը։ Պետք է չտապել, թե չե հացահատիկը կըկծդի։ Շատ խաղերի մեջ յերգվում է հունձը և նույնիսկ մանդաղն ու մանդաղ սրելու եսանը։

Գեղի բոլոր կծդել է,
Մեջը վարդով լցվել է...

Ցար, յար, յարս քննել ա,
Հով ծառի տակ քրտնել ա.
Հով, հով, հովը քներ ա,
Հունճ ա անում բեղրեր ա։

Հունճին մասնակցում են նաև աղջիկները։ Հնձից հետո գալիս է խուրձ կրելը։

Իմ յարս խուրձ եր տանում...
Խուրձը ծուռն եր տանում...

www.naregatsi.org

Ցուրտը, որանը (քյուլաչ) կրելու համար առանձնապես կարեվոր և սայլը, վոր նույնպես յերգվում և այս սիրո խաղերի մեջ.

Մեղի չըլնի արաբա,
Մեր բանները խարաբ ա...

Ելել ես, կ'երթաս որանը,
Կոտրեցրավ սելի մատանը...

Ցուրտը կրելով՝ մի տեղ դեղ են դնում.

Դեղ եմ դրել, հավան չեմ,
Ինձ ու գլխու դիվան չեմ.

Ինձ դանակամորթի արևք,
Ցես են տղին հավան չեմ:

Ցեվ վերջապես գալիս և կալը, վոր առանձնապես կարեվոր տեղ և բռնում աշխատանքի յերգերի մեջ, նույնպես նաև բազմաթիվ խաղերի մեջ: Կալսելուց առաջ հաշան են անում.

Արել եմ ցորենի աշան,
Բոլըս բոյիդ փերուշան...

Կալն էլ, ինչպես կանաչ արտը, պատանիների սիրած տեղն և:

... երեկ կուտամ են ավուր,
Ցես, դու կ'երթանք մեր կալը:
Ցես քեզ վո՞րտեղ սիրեցի,—
Քու հերանց կալին, աղչիկ:

Կալ եմ գցել, կալսել եմ,
Ալ արբշում դարսել եմ.
Սրտումս ինչ խորհուրդ կա,
Են քաֆուրին ասել եմ:

Հաճախ յերգվում և կալը իբրեվ կալատեղ, ուր ժողովում են, ինչպես հետեվյալների մեջ.

Կաքավ եմ հազար դունով,
Իմ կալերն երամով.
Ախեցիր, խելքս առար...

Ըռևսի կալ բոլորպար,
Սավկուլս ի մեջ կու խաղար.
Ծամեր թալուկ իր յետեվ,
Կու թալըռեր չատ թեթեվ:

Կալսելուց հետո թեղ են անում, երնում, քամում, ապա չեղջը մաղում են: Հիշվում և նույնիսկ կալատակը:

Թեղ կ'անես, թեղիդ մեռնեմ,
Նոր դալած բեղիդ մեռնեմ...
Ջամին գալիս հով ու հալին,
Նանը ղուրբան երնած կալին...

Կալը ցորեն ես մաղում,
Սարը բանջար ես քաղում...
Ախալը ման եմ ածել,
Բոյիդ նման եմ ածել...

Ցեվ վերջապես սրսուռ ցորենը լցվում և հորը, և աշխատավորը պարծենում և իր վաստակի արդյունքով.

Բոսատան եմ դրել ձորում,
Ցորենը լիքն ա հորում...

Ցորեն ունեմ հորերով,
Ջենս ա ընկել ձորերով.
Ասում դուվաթ ա տվել,
Ախալը մնաց պատռելով:

Այնուհետև գալիս և ցորեն աղալը, ջաղացը, վոր խաղերի սիրած մոտիվներից մեկն և.

www.naregatsi.org

Ջաղացս բանի, բանի,
Դարդու քունս չի տանի։
Ջաղացս ման եմ տվել,
Սիրել եմ, ջան եմ տվել...

Ջաղացս կ'աներ ալուր,
Դուշմանիս աչքը մալուլ։
Սիրել ենք, իրար կ'առնենք,
Թող հետը բերի բալուլ։

Այսպես՝ հողագործությունը— վար անելուց մինչև ջաղացում ալյուր աղալն— անդրադարձած է սիրո խաղերի մեջ, այն էլ նույնը բազմաթիվ խաղերի մեջ։ Վերեվում բերված են միայն սակավաթիվ օրինակները։ Պետք է ասել և հետևյալը։ Կան առանձին «քաղհանի» յերգեր, որոնք մեր աշխատանքի յերգերի մի տեսակն են։ Բայց սիրո խաղերի մեջ էլ յերգվում է քաղհանը, կամ քաղհանի յերգերը միաժամանակ նաև սիրո խաղեր են։

Քախանի մարգը փուշ ա,
Սրտով սիրածն անուշ ա...
Քախանում եմ կնկիթը,
Հագած եմ լավ չիթը։

Երնեկ կըտամ են որին,
Վոր կ'ընկնեմ յարիս ճիրը։
Քաղհան եմ անում, ընկել եմ հավես.
Են տղեն կառնեմ, անունը Հանես։

Անցնենք դյուղացու պարապմունքների ուրիշ կողմերին։

Հայաստանի շատ կողմերում զարդացած է յեղել խաղողի մշակությունը— այգեգործությունը, ինչպես և պարտիզգործությունը (horticultur)։ Պարտեզը լինում է պտղատու ծառերի պարտեզ, ծաղկանոց պարտեզ, բուրաստան պարտեզ կամ բուրաստան— բոստան, բանջարանոց, որ մշակում են բանջարեղեններ և մարդկանց սննդի համար կարևոր այլ բույսեր—կանաչի, վարունկ, ձմերուկ և այլն։ Մեղնում, ինչպես որինակ՝ Ցերեվանում, այդիներում սովորաբար նաև պտղատու ծառեր են տնկում, հաճախ նաև ցանում են բանջարեղեններ ու ծաղիկները, այնպես վոր այդիներն խակապես այդի ու պարտեզ են։ Այդին ու պարտեզը, բաղ ու բաղչան և բոստանը, այդեգործությունն ու պարտիզգործությունը,— վոր միայն դյուղացիների պարապմունքը չեն յեղել, այլ նաև քաղաքացիների,— հաճախ յերեվան են գալիս խաղերի մեջ։

Ղուշը կըծըվիվ բաղումը,
Կանաչ խիարը թաղումը.
Ցես մին սարքած սուրաճի պիսի
Իմ յարի ոթաղումը։

Բուլբուլը կանչեց բաղումը,
Գունս տարավ վոչ՝ տեղումը.
Կանչի՛, բուլբուլ իմ, կանչի՛,
Թեկուզ քու տերը տան չի։

Մեռա բաղում բանելեն,
Մի կողմեն ջուր անելեն...

Բաղչե մ'եմ տնկի դարին...
Մեր տան յետնեն բաղչա կա,
Բաղչի միջին ուհան կա...
Բաղչի միջին կա համեմ...

Սրի՛ երթանք մեր տան բաղչեն,
Ցես վարդ քաղեմ, դու՝ ալուչեն...

Այսպես յերգվում է նոր տնկած այդին, այդում զբոսնելը, այգու ցողը, պարտեզի կարմիր խնճորը, այդու հնձանը, այդի գնալը, այգու

www.naregatsi.org

դուռը, պարտեզի պատերը, գինու կարասը, և այլն. նույնպես հաճախ՝ բոստանը, բոստանի քալամը, դազարը, տաքտեղը, սոխ ու սխտորը, դդումը, բաղդուկը, յեմիշը, դուան, կանաչին, չամամը, բոստան ջրելը, և նույնիսկ բահը:

Մարդիս մէջ ռեհան ցանեմ,
Հատերը մին մին հանեմ.
Տեսնեմ՝ աղբերս (=յարս) գալիս ա,
Ռեհանը փեշքես տանեմ:

Բոստան եմ դրել վերեվ են դարին...
Շամամ մի չեղավ, ուղարկեմ յարին:

Կան բազմաթիվ խաղեր ևս, վորոնց մէջ այս ամենը մտնում են բանաստեղծական պատկերավոր արտահայտության համար:

Ցես աղջիկ եմ բաղի պես,
Շամամների թաղի պես...
Բաղչան յես եմ, բաղը՝ դու,
Իմ սիրելի յարը դու:

Վո՞նց բաղչա յես, բար չունես,
Վո՞նց ջահիլ ես, յար չունես,
Ցերկնքի դուշ ես դառել,
Վեր գալու հնար չունես:

Բուն գյուղական պարապմունքի մէջ կարեվոր տեղ է բռնում և անպատճապահությունը: Հողագործություն չէր կարող լինել առանց լծկանների:

Գութանիս լուծը պիտի,
Դուշմանիս ոճը պիտի...

Մարա դոմեշ լծի տակ,
Քոզ դլորի պղտի ակ:

Այսպես և խաղ ասում հողագործ գյուղացին. իսկ նրա լնկերը, սիրահար հոտաղը, յերգում է.

Հելե՛լ, վելե՛լ, Մարո՛ւ դոմեշ,
Իմ ձեռ Թալեմ Ջյալալի բեշ,
Ջուլոն եղնի ինձի փեշքեշ:

Վոչ մի գյուղ չկա առանց նախրի. նախրատուն ու նախրագնան, տավար արածացնելը, յեղները, հորթեր ու կով, տանը պահած հորթ, խոտի գնալ, հորթի համար խոտ քաղել, նախրաթող ու հորթաթող, տավարի հիվանդություն, մարագ, դոմ ու մսուր, ուր պահվում է հոտաղը, նույնիսկ դռանը դրած աղաքարը՝ անասուններին լիզելու համար— այս ամենը դառնում են խաղի նյութ:

Նախրատափին ուռի ծառ,
Ինձոր գյեմ, արի տար...

Մեր տուն, ձեր տուն մոտիկ մոտիկ,
Երթանք քաղենք հորթիկա խոտիկ,
Բերենք, դնենք մսրա մոտիկ,
Տեսնենք՝ վի՞ր յարն ա խորոտիկ:

Ահա և յեզան կորչելու մասին մի խաղ.

Եռոր նորը նորել ե,
Ցարիս յեզը կորել ե.

Ով վոր գտել ե՝ Քոզ տա,
Ջամարս կը տամ մուժաա:

www.naregatsi.org

Գյուղերում արջառի հետ պահում են և խաչները, ուստի վոչ միայն յեզնաարածն ու տավարածն է յերդվում, այլ և հովիվը, խաչնարածությունն իր զանազան կողմերով— վոչխար արածացնելը, մակաղատեղը, գառներ պահելը և այլն.

Զուլոն կային մեջ գառներուն,
Երես կարմիր աղբրանց արուն...
Վոչխարն արել եմ բակը,
Դեմ տվել սելի ակը...

Հովիվ խռովավ,
Ոչխար մոլորավ,
Բերվոր չիվարավ,
Կթոց գլորավ...

Խաչնապահությունը պահանջում է տմտաններից խաչնը սար, մարմանդ (յեյլաղ) տանել.

Մեր դռնովը քոչ ա գնում,
Ջոչ քոչի մեջ ա գնում.
Երնեկ են քվոր աչքին,
Որտն աղբոր մեջ ա գնում:

Իմ աղբերը սարումն ա,
Շլին գոտկածալումն ա...

Ցարխ տեղը յայլաղ ա,
Մաղկով բաղչա ու բաղ ա...

Ձադը եմ զարկել սարին...

Ամպահով և ուրիշ շատ խաղերի մեջ, նույնիսկ վոչխար խուզելը և կթելը:

Ես սարը ծաղկոտել ա,
Ոչխարը բզդոտել ա...
Ցայլեն գառներ կը խուզեն,
Ջեզ ուրիշները կ'ուզեն...

Ոչխարն եկել ա բերը,
Գառներն արել են մերը.

Խաղերի մեջ զորեղ կերպով անդրադարձած են և մեր գեղջկուհիների աշխատանքները: Կինը գործում է գլխավորապես տանը. նա պատրաստում է կերակուրներ, յեփում, թխում է. մանում, գործում է. կարում, կարկատում է: Մի խոսքով նրա ձեռին է ամբողջ տնարարությունը: Բացի այդ՝ նա գնում է սարը բանջարի, մասնակից է տղամարդի գաշտային աշխատանքներին՝ բանվորներին հաց ու ջուր տանելով, խուրձ կրելով, կալսելով, մաղելով և այլն:

Դուքանը հաց եմ բերել...
Կուժն առա, ելա սարը...

Կինն է զբաղվում կաթնատնտեսությամբ, վոր կապված է անասնապահության հետ: Նա կթում է կովեր, մաքիներ. բերի ժամանակ էս կթողները կանայք են.

Ելել էս, կ'երթաս կը բերը,
Ոչով չիյտեր սրտիդ սերը...

Կաթ տաքացնել, մածուն մերել, խնոցի հարել, յուղ հալել և այլն, այս բոլորն էլ դարձած են խաղի նյութ:

www.naregatsi.org

Կաթնա տաքացնեմ, վեր դնեմ...
Ցեթիմ բեխին հեր անենք,
Կաթն ու մածնին մերան ենք.

Մերս մածուն ա մերել,
Լավ դյուլում ասող աղջիկ,
Փեսեքին տուն ա բերել.
Մինչեվ լուսը սեր անենք:
Անտեր մնա դող կատուն,
Փեսեքի փայն ա կերել:

Տապկած հավի ճուտ բերեմ,
Վոչխարի մածուն մերեմ...

Հաճախ հիշվում են՝ սեր, մածուն, թան, խնոցի հարել, նույնիսկ խնոցու բերանի սերեկը և մածնի քսակը, վորով մածունը քամում են:

Խնոցին նոր եմ հարել,
Թազա կարագ եմ արել.
Զառ մինթանիս ղրաղին
Ղանավուղ քոքա կարել:

Կինն է զբաղվում հացաթարուբյամբ: Նա մաղում է ալյուրը.

Ալուր մաղեմ, թեփ կու գա,
Շեկլիկ աղբեր յ՛ոբը կուգա...
Սիրուն հարսը ալիք մաղեր,
Ջուխտ չամամը ծոցին խաղեր...

Ցանի ղնալ, թոնիր ու բոխարիկ վառել, հաց թխել, գաթա, բոքոն թխել, ինչպես և ցան, ցանի ամբոց, վառ թոնիր, ծխացող թոնիր, թազա հաց, առաջին հաց, մինչև անդամ հացահանն ու կուտը, վոր ընկնում է թոնիրը,— այս ամենը շատ անդամ յերգվում են խաղերի մեջ.

Հաց եմ թխի մշակին,
Ցետ եմ նստի դռշակին.
Ցարիս հենց կարոտել եմ,
Վոնց որ վարդ—մանիշակին:

Գյուղական կերակուրներից յերգվում են՝ ապուր (եփել), սպաս (անել), կաթնով, կաթն ու բրինձ, կորկոտ (դնել), խորովուք, քուֆթա, տոլմա (փաթաթել), նոր ճուկ, ճվածեղ, տապկած ճուտ և այլն, այլև ճու խաչել, ճու նախչել և այլն: Զի մոռացվում նույնիսկ «մեծ ղազանի քափը դալը»:

Մածուն եմ մերել, սեր չունի.
Ջուկն եմ եփել, փոր չունի...
Գալիս հետդ խոսք բեր,
Բեղ պահել եմ կաթի սեր.
Ղաբլու փլավ եմ եփել,
Աբի ինձ հետ միասեղ կեր:

Կերակուրների հետ կապված է սանդ ծեծելը (թակելը) ճավարի համար, վոր կարևոր տեղ է բռնում գյուղական ուտեստի մեջ:

Սանդ կը թակեմ՝ հախ ա...
Երկանքս կ՛աղա ճավար,
Դուշման, քու աչքը խավար.
Ցես սիրել եմ, յես կ՛առնեմ,
Ջայնամ թե չունի տավար:

Երկանքով աղ աղալն էլ կանանց գործ է.

Երկանքս աղի վրա,
Շամամը թաղի վրա.
Ցես մի պստլիկ ղուշ եմ,
Իմ հերանց բաղի վրա:

www.naregatsi.org

Կնոջ աշխատանքների մեջ մեծ տեղ է բռնում նաև տնային սպասակալությունը, որը մեծ չափերով արտահայտված է խաղերի մեջ: Մանկամարդ հարսների ու նորատի աղջիկների գործն է ջրի գնալը, աղբյուրից կամ այլ ջրատեղից ջուր բերելը, ջրհորից ջուր քաշելը, լվացք ու սրբոտ անելը, ավելելը, սենյակ սրբել և այլն:

Ջրի ճամբեն աչ կ'անեմ,
Ձեռքակ դնչրեն քաշ կ'անեմ.
Կորի՛, գնա՛, չան աղա,
Գեղի հալ ու մաշ կ'անեմ:

Ջրհորից ջուր ես քաշում,
Ցակնըհան ինձ ես աշում.
Հեռվից ուրիշներին
Մոտիկից ինձ ես խաշում:

Իմ յար նստե բակն է լվաց,
Մարմար ծծվեր, գոչեր է բաց...

Կանանց սպասակալության մեջ է նաև թափ տալը (թաղիք), խալիչեք փռել, անկողին քցել (դոշակ գցել, լէհը բանալ), բարձ դնել (ըմբուլ կոպինք, ատլաս լէհը, զարբաթ դոշակ):

Խալիչեքը փռել եմ,
Նախշուն բարձեր դրել եմ...

Տեղ եմ քցել, փոթ կը դա,
Բարձ եմ դրել, սոթ կը տա...

Հիշվում է նուշնիկակ հավաքած անկողնի ծալքը.

Ծալք եմ տարքել, հավան չեմ...

Ցեղ վերջապես ամեն տեսակի ամենօրյա մանր-մունր գործերն էլ անարժեք չեն համարվում յերգված լինելու համար, ինչպես են՝ մառան գնալ, գինի բերել, կրակի գնալ, կավի գնալ, վոտները թաղիքը կախել, ճրագը լուս տալ, ճրագ դնել, ուլունք չարել, և նույնիսկ հավեր քշել, հավի թառը, հավանոցն ու հավարունը և նման բաներ:

Կանանց աշխատանքի մեջ կարևոր տեղ են գրավում և նրանց կարն ու մանածները և գործվածքները, վորոնք իրենց դանազան տեսակներով հաճախ յերևան են գալիս խաղերի մեջ, ինչպես են՝ բուրդ գզել ու մանել, ճախարակ մանել, արշկան մանել, կազ մանել, կար անել, գուլպա գործել կամ գուլպա անել, թաթ անել, դանազան ասեղնագործություններ՝ աղլուխ անել, նախշ անել, բարձ անել, արախչի անել, քողոզ գործել. խալա գործյալ՝ քարգահ անել, անոռակ (դայթան) գործել, քուղ գործել, խալչու խուրջին գործել և այլն:

Ժամի դռան հինած ա,
Հինածը հատհրատած ա...
Ջրի ուղին սառել է,
Մատս ասեղ տարել է.
Են քաքլիկ (քաքլավոր) պուճիկ ագան
Ուշ ու միտքս առել է:

Ասեղ մատնց կը բանցեմ,
Գուլպա, պաճուճ կը գործեմ.
Թանկ ու եժան կը ծախեմ,
Քե շատ ուրախ կը պահեմ:

Մինչդեռ կանանց այսպիսի աշխատանքները հանախված են խաղերի

www.naregatsi.org

մեջ, միայն մի քանի արհեստներ են հիշվում, այն էլ ամեն մեկը մի կամ յերկու անգամ: Դրա պատճառն այն է, վոր մեր գյուղերում արհեստավորներ շատ չկային: Ներանք քաղաքի բնակիչներ են յեղել: Մեկ ընդարձակված խաղի մեջ միայն աղջիկը չի ուզում, վոր իրեն տան նախրորդի, մաճկալի, կարդացվորի, սոլկարի, բ-յուջարի— չոբանի, փոխոխակների մեջ նաև վանա խոջային, տիրացուի, դուլգարի, սարկավագի, (բայց այդ չի նշանակում, ինչպես այդ ներքևում կըտեսնենք, թե կարդացվորը, սարկավագը հարդի չի յեղել ըստ քաւյակաների), վորոնք տնից բացակայելով՝ կը մոռանան իրեն, այլ նա ասում է մորը·

... Ջի տո՛ւ գործավոր (վ· խիաք) մարդու,
Մքուք թալա, պագա գիս·

Իսկ վարիանտի մեջ՝

... Մարե՛, ձի տո՛ւ խիաքին,
Թալի մքուք, սիրի գիս,
Հորևն եղնի, գրկի գիս:

Գործավորությունը կամ գործարարությունը (վոստայնանկությունը, կաւավազործությունը) մի ժամանակ շատ զարդացած է յեղել մեր գյուղերում, առանձնապես դաշտային գյուղերում յեղել են բավական թվով գործավորի հորևր: Գյուղացիներն այդ արհեստով պարապել են ամեները:

Աղջիկ, չիլեն ծալ երա,
Եիլեն ծալ ու մալ երա·
Եդ քու կարմիր քշներաց
Պագ մի տուր, հալալ երա:

Մի յերկու խաղի մեջ հիշվում է դարբին, մեկի մեջ էլ նալբանդ·

Ջուրը ղուրբան են աղրոր,
Համ գլավի, համ դարբին...
Ջաչկա յես նալբանդ ըլնի...

Մեկ խաղի մեջ էլ կա հյուսն·

Սիրածդ ա խառատ-դուրդյար...

Կա նաև հետևյալը, վոր ըստ յերեվույթին գյուղական յերգ չե·

Պլոտնիկը փետ տաշի,
Ջուչա քուչա կը յաշի·
Կուժն ուսեմ, ջուրը գնամ,
Կը յաշեմ՝ թառանչ քաշի:

Գյուղական յերգ է, անշուշտ, հետևյալը, վորի մեջ պատմվում է փայտահատությունը, վոր կատարում են վրչ անպայման արհեստավոր մարդիկ·

Ես գիշեր լուսը տեսա,
Յիմ յարս դուրսը տեսա·
Ելեր եր, մերին կ'երթար,
Կացինըն ուսը տեսա:

www.naregatsi.org

Ցերկու յերգի մեջ էլ հիշվում է ծմակում, սարերում վորս անելը, վոր սովորական էլ յեղել մեր գյուղերում.

Ծմակին հորս եմ արել,
Աչքերս չորս եմ արել.
Վատ խաբարդ լսել եմ,
Արինդ փորս եմ արել:

Ցեվ վերջապես մի քանի անգամ հիշվում է վոսկերիչ— արծաթագործը (զարդար) իրրև հաջուստ մարդ, յերեվի, այն պատճառով, վոր վոսկու, արծաթի հետ գործ ունի.

Մեջքիս քամարը ծուռն ա,
Աչքս զարդարի դուռն ա.
Զարդարը չատ փարալու,
Սիրտս քաղից յարալու:

Զարդարն ա բոզ չուխավոր...
Հալա մին քամար կ'ուզեմ...

Մի ուրիշ խաղի մեջ աղջիկը յերգում է.

Արծաթ տվի դուլումչին,
Քամար չինեն իմ մեջքին,
Ոսկա չինեն իմ քթին,
Ղուլփազ չինեն իմ ականջին:

Այս են խաղերի մեջ հիշված արհեստավորները: Թեպետ և մեր գյուղերում հարուստների համար սովորական և յեղել արծաթի, նույնիսկ ոսկի զարդարանքների գործածությունը, ինչպես և դրանք հաճախ հիշվում են բազմաթիվ խաղերի մեջ, բայց դժվար թե շատ գյուղերում բացառած լինեն ոսկերիչները: Այդ զարդարանքները, ինչպես և ամենի կարգները— խաս, զանազուղ, զարբար և այլն— քաղաքից են տարված գյուղերը:

5. ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ԽԱՎԵՐԸ ԽԱՂԵՐԻ ՄԵՋ

Առհասարակ սոցիալական խնդիրները, դասակարգային պայքար համեմատարար քիչ է յերևում այս խաղիկների մեջ: Դրա պատճառն այն է, վոր դրանք, սակավ բացառությամբ, սիրո յերգեր են կյանքի ծանրությունը դեռ շատ չզգացած պատանիների և յերիտասարդների, վորոնք, ինչպես ասվեց վերևում, չեն հետաքրքրվում այդպիսի խնդիրներով: Նրանք յերգի նյութ դարձնում են այն, ինչ վոր իրենց սիրո հույզերին է վերաբերում: Բայց և այնպես այստեղ էլ գյուղական աշխատավորների հոծ բազմության մեջից ջոկվում են գյուղի «հարուստները», ունեվորները, վորոնք և իշխաններն են. վորովհետև տնտեսապես ունեվորը և իշխող է և հարստահարող:

Ամենից առաջ աչքի յե ընկնում գյուղի հոգեվորականը: Նորատի յերգչուհիները նրա մասին առնում են իրենց հետաքրքրող մի քանի գծեր մի-այն: Հոգեվորականը հին գյուղի միակ կարդացվորն եր. իսկ կարդալը դժվում է.

www.naregatsi.org

Ծաղիկ ունեմ նարնջի,
Ագա, վեր արի վնջի՛։
Կարդալը լավ բան կ՚ըլնի,
Մանչ մի՛ արի յաղնջի։

Ա՛յ ագա, ալ կապավոր,
Քո՛ չեկար կարդացավոր։
Ինչի՞ սիրիր ու չառար,—
Դատաստանիս պարտավոր։

Կարդալը կատարվում է, հարկավ, հին յեղանակով, կրոնական գրքերի վրա։ Հիշվում են Սաղմոս ու Նարեկ։

Աղբեր նռան տակին,
Սաղմոսը կռան տակին։
Սաղմոսն անգիր ա արել,
Լիզուն բլբուլ ա դառել։

Սարեն եկավ ճիավոր,
Սաղմոսը ծոցին սավոր...

Ցերդչուհին առանձնապես սիրով և վերաբերում կարդացվոր պատառնուն, սիրացուին, սարկավագին.

Քաքուլիդ կալին մեռնեմ,
Երեսիդ խալին մեռնեմ։

Լսել եմ՝ կարդացող ես,
Սաղմոսիդ ծալին մեռնեմ։

Հին դյուղի աղջիկը սիրով ցանկանում է այդպիսի տղայի հետ ամուսնուն, սիրացուին, սարկավագին.

Ա՛յ տղա, սեվ չուխավոր,
Նարեկը ծոցիդ սավոր։
Երնեկ կը տամ են որը,
Վոր դաս մեր տուն թաղավոր։

Եսոր ծաղրդար պիտեր,
Տիրացուն իմ յար պիտեր...

Տիրացուն ցանկալի վեհատուր չե և այն պատճառով, վոր դրել դիտե։

Ճես հողերի տուխաքն եմ,
Լիք փոքերի հուդրքն եմ։
Ա՛յ դալամ քաշող տղա,
Ինկանդ ծերի թուղքըն եմ։

Այման չինող իմ յարը,
Ղալամ բռնող իմ յարը...

Սմեն սիրացու, հարկավ, դրել չդիտե։ Ահա դյուղացու ծաղրն այն սիրացուների, վորոնք դրել չդիտեն.

Ջուր կուգար արփին-արփին,
Համ սիրացու, համ դարբին։
Ջուր չեր ջրե ծառները,
Գիր չեր դրե մատները։

Տիրացուն արժանանում է դյուղական խաղերի մեջ մտնելու և նրա համար, վոր նա «գիր և անում»։

Ծառից ընկած ծիրան եմ,
Տիրացու չեմ, վոր գիր անեմ...

«Գիր անելը» կամ «Թուղթ անելը» կարեվոր արժեք ունի պատանիների համար։ Դա, ըստ նախնական հմայական սնահավատքի, սիրահարեցնելու միջոց ևր համարվում.

www.naregatsi.org

Երեվան ուխտ եմ արել,
Թաք ծամս կուխտ եմ արել·
Շան տղեն՝ սիրվել վրես՝
Գիտում ա՝ քուղէ եմ տրել:

... Ա՛յ ազա, խոսալ չուզա,
Ջն համար քուղէ եմ երթ:

«Գիր անելով» զբաղվում են և մոլլանները·

... Իմանամ՝ ինձ չես առնի,
Կ'երթամ, մոլլին քուղէ կ'անեմ:

Բայց մոլլաներից սակաս չեն պարապում այդ խաբեբայական գործով նաև տերտերները·

Ա՛յ ազա, իր անել տուր,
Միրուքդ վեր անել տուր·

Հերս քեզ աղջիկ չի տա,
Տերտերին դիր անել տուր:

Սիրահար աղջիկն ու տղան տերտերին, ինչպես և վարդապետին, հիշում են նաև հմայության դեպքում: Նրանք դառնացած բողոքում են հմայության դեմ:

... Ինձի չհաս հանեցին
Գլխամեռ տերտերները:
... Մեռնի տերտերի վորդին,
Ինչի՞ ասավ՝ չհաս եր:

... Հողիդ դառի, վարդապետ:
Ախ՞տա իր ասում՝ չհաս ա:

Ցեկեղեցական կանոնը չափազանց հեռացրել եր աղջակիցների ամուսնությունը· «չորը պորտն» անցնելուց հետո միայն աղջակիցներն իրավունք ունեյին իրար հետ ամուսնանալու: Ահա՛ թե ինչ և ասում այդ մասին յերգը·

Եսոր չարաթ, պա՞տ կ'ըլի
Ծոցին արծաթի թաս կ'ըլի·
Վարդապետ, բալեդ մեռնի,
Սիրածն ել չհա՞տ կ'ըլի

... Սիրած սիրածի չեն տա,
Տերտերն ա մեղքի տակը:

Չհասությունը տերտերների ու վարդապետների համար դարձած եր յեկամտի աղբյուր: Նրանք կաշառքով թույլ եյին տալիս մերձավորների ամուսնությունն ըստ հին ասության՝

Հիսուն ֆլորին,
Կարմիր ղորին,
Մեռնի կին,
Առնի քնին:

Իսկ խաղի մեջ յերգվում է·

...Միննաք աննենք մեր տեղին (տերտերին),
Չհասը հաս աննենք,

Ցավ այդ հնարավոր եր, վորովհետև ինչպես յերգն ասում է·

www.naregatsi.org

... Տերտերը փարին կարոտ ա։
... Նախշած աղլուխ եմ պահել
Մեզ պսակող տերտերին։

Տերտերից շատ ավելի բարձր է դասվում գյուղի ջոխվան, ռեսը, մելիքը, աղան։

Իմ յարը տիրացու յա,
Հատուկ տերտերացու յա.
Մազերը վոր վեր անի,
Մեր գեղի քյոխվացու յա։

Կինը պարծենում է, վոր ինքը «Մուսես աղայի» թոռը կամ հարսն է, վոր իր յարը մելիքացու յե.

Հաց եմ թխել գաթացու,
Իմ յարը մելիքացու.
Գեղումն ոխտը տգա կա,
Իմ յարին նոքարացու։

Ինչո՞վ է քյոխվան, ռեսը, մելիքը (=գյուղի տանուտերը) ավելի հարգի։— Նրա յեկամուտն ավելի մեծ է։

Ծաղիկ ունեմ՝ հենց ես ա.
Ցեղըն մեր գեղի ռես ա.
Ջռեսին խալաթ պիտեր,
Խալաթը մանեթ-կես ա։

Նա կողոպտում է գյուղը և ապրում նրա հաշվին.

Գամ չարաթ որ վեր ճաշին,
Գամ կիրակի վեր խաշին.
Հացը գեղեն, թան գեղեն,—
Դարտակ ռես, քու տունը չեն։

Մինչդեռ աշխատավոր գյուղացու արտն անջուր մնալով՝ չորանում է,

... Մեր ռեսի գարին հազար ու մազար։

Ցեխ «ուտում է» քյոխվան, վորովհետև նա էլ «կերցրել է» մեծերին. և նա իր «կերցրածը» տանտնապատիկ հանում է աշխատավորներին հարստահարելով ու բանտարկելով։

Ցարս դուքսազ ես արած,
Արունս թողել սառած.
Գելն ուտի քո եշ գլուխ,
Փողով քյոխվա յես դառած։

Ջյոխվի, ռեսի ուժը կախված է թե նա ինչ երեսատեղ ունի իր մեծի մոտ։

Մեր հանդերը ջրով ա,
Մեր ռեսը թրով ա.
Վոր մեկ խանի (վ. դատավորի) մոտ երթա,
Խոսքը վոսկե ջրով ա։

Ջաղերի մեջ բավականի հիշվում են՝ թավաղ, բեկ, բեկզադա, աղնիվ և այլն։ Գյուղացու համար դրանք ցանկալի վիճակի մարդիկ են. ուստի գեղջկուհին իր յարին գովում է՝ անվանելով նրան՝ թավաղ, սարդար և այլն։

www.naregatsi.org

Ա՛յ ալատա, ալատա՝
Թռիկին վոսկի սալադ ա.
Ինձ մի սարդար յար ունեմ,
Կ՚ասես՝ քաղքի թալադ ա:

... Ման յարս մելիք ա:
... Ինձ մի թալադ յար ունեմ
Համ մելիք ա, համ աղա:

Սա մի պատկերավոր արտահայտություն է, ինչպես և հետևյալների մեջ.

Աչքով, ունքով հերիք անես,
Ուրիշների նաղը տանես—
Ախտոս աբի ջիվան ջանիս,
Ինձ համար սուլթան ու խան ես:
Թառ խոթատիկ սալի զադ...

Մատանիք ոսկեջրած,
Ա՛յ աղա, դու ինձ դրված.
Դու խանին նաքար պիտիս,
Ցես քո ծոցին դանջրված:

Սրա մի վարիանտի մեջ «նաքար» բառի փոխանակ է «չաթիր»: Շաթիրները հաղնում էին կանաչ ու կարմիր, ինչպես հետևյալի մեջ.

Թաղավորը թախտով ա,
Իմ յարը չատ բախտով ա.

Կանաչ-կարմիր հաղնող ա,
Նամեանիկի կայնող ա:

«Ման նաքար թե չաթիր» (=ծառայող), «նամեանիկի կայնող» (=փոխարքայի սպասավոր), դրանք արդեն հին դյուղացու համար ամենաբարձր աստիճանն էլին համարվում: Գեղջկուհին չատ դոհ եր յարի արտաքին նմանությամբ միայն.

Են աղան եկավ, անցավ,
Իրմոքը (=իրենով) բնկ կըլմանի.

Եկավ, անցավ չան աղան,
Փիտցա քի ջոջ կըլմանի:

Մի քանի խաղերի մեջ միայն կինը պարծենում է իր աղնվական յարով.

Մի բարձ եմ արել՝ իմն ա,
Միհն էլ եմ արել՝ իմն ա.

Գյանջու քարվանն գալիս է,
Մեջի թալադն էլ իմն ա:

Վարիանտների մեջ «թալադ» բառի փոխանակ է «մեծ խոջա», «ազնիվ», «թոսուն» (=աղնվական): Սա արդեն աղնվականի ու առևտրական քաղաքացու յերկ է, ինչպես և հետևյալները.

... Ցես են թալադ յար ի՚ուղեմ,
Ջումարդ կանդնի խալխումը:

... Ինչի՞ ա բեկի աղան,
Իմ յարը չահրազ պիտի:

Մի ուրիշ խաղի մեջ էլ կինը պարծենում է ասելով՝ «Ցարս իշխանի սոյ ա»: Բայց դրանք, յեթե իրրեվ լոկ գովեստ չեն ասված, դյուղացի աշխատավորի արտահայտություն չեն: Ահա թե ինչպես և աշխատավորը, հույսի կինը, գովում իր ամուսնուն, կամ տավարածի համար սեր և հայտնվում:

Ջուր եմ դրել՝ կեծ ա,
Վոչխարիս աղաքն նծ ա.

Մեռնեմ մեջի չոբանին,
Վոր թալադիցն էլ մեծ ա:

www.naregatsi.org

Ծառին տակը հել ունեմ,
Հում տըրեխում թել ունեմ.
Ծո՛ մանչ, տավարը վար բե՛,
Ցեռ քո վրա սեր ունեմ:

Ձ՛յ տղա, տավարած տղա,
Ջուռով ճարած տղա.
Ոթախ սրբեմ, շոր քեմ,
Նաիր բեղարած տղա:

Բայց և այնպես տոհմը, ծագումը, վիճակը, դեռ ևս մեծ նշանակություն ունի.

Ադա, դու ի՞նչ ադա յես,
Ադա չես, բեկզա՞դա յես.
Հալարաւթյուն մի՛ անի,
Դու մի թուլի գյադա յես:

... Հենց գիտես՝ շահզադա յա.
Շատ մի՛ ուռիլ, տրաքիլ,—
Եղ քո սիրած՝ գյադա յա:

Առանձնապես շատ է հիշվում «խան», և նույնիսկ մի քանի հատուկ անուններ են հիշվում խանների համար: Դա հիշողություն է 17 և 18-րդ դարերում Արևելյան Հայաստանում նստող խանների:

... Ծանին չեմ տալ իմ աղջիկը,
Գյալբալայի Սուլթան աղա:

Կան, հարկավ, խանին աղջիկ տվողներ էլ.

Մեր բաղը երկեն բաղ ա,
Ծնձոր քցեմ՝ կը խաղա.

Ծանին եմ աղջիկ տվել,—
Ծան դնդի՝ (ասաց)՝ Սուլթան աղա:

Սույն ամուսնությունն է երգվում և հետևյալի մեջ.

Նշանածիդ (=քո, վոր նշանած ես) հենեն բերին,
կեսրանցդ տնեն բերին,
Վրեն ալ քողով ծածկած,
Մեծ խանի դռնեն բերին:

Սա կամավոր ամուսնություն է, դուցե և աղնվականուհու, կամ «խան» ասված է վրացական թագավորի համար: Բայց կա նաև բռնի ամուսնությունը: Ահա՛ մի խաղ, վորի մեջ երգվում է խանի դուռն «աղջիկ քաշելը», վոր նկարագրել է Ծաչ. Աբովյանը:

Ջաղացի աչի կուռը,
Կըցնծար մինչի գյուլը.

Վայ իմ սիրած բլբուլը (=աղջիկը),
Գաչեցին խանի դուռը:

Նույնը կատարվում է նաև «գեղի տիրոջ» ձեռով.

Սիրուն աղչկա տերը,
Չի տալիս քյաֆուր մերը.

Ինչ անի քյաֆուր մերը,
Տարել ա գեղի տերը:

Նախորդ քառյակի մի փոփոխակն այսպես է՝

... Վայ, իմ մեկիկ աղբորը
Գաչած ա խանի (վ. մելիքի) դուռը:

www.naregatsi.org

Այստեղ էլ վողբում են խանի դուռը մարդկանց քաշելը՝ հարստահարելու համար, ինչպես նկարագրել են Աբովյանն ու Պուշկինը:

«Խանի դուռը» հիշվում է նաև իբրև դատարան, քաղաքելու վայր.

... Ով իմ սիրածն ինձ չի տա,
Կըգնամ խանի (վ. քյոխվի) դուռը:

Իսկ մի ուրիշ խաղի մեջ յերիտասարդն ասում է.

... Սիրել եմ, տանել պտեմ,
Թող տանեն չահի դուռը:

Այսինքն՝ անպատճառ պիտի առնի աղջիկան, նույնիսկ յեթե դանգատի գնան չահի մոտ: Նույնն ավելի ուժեղ արտահայտված է հետեվյալի մեջ.

Ցել ու երթանք կանկու սար,
Ջուչկ (վ. բերդ) մի շինենք, մտնենք հիսար.
Թող գա վըր մե չահն խոնդքար,
Ուղե հարյուր, կուտամ հազար,
Բազե՛, քո թուխ աչքիդ համար:

Ինչպես կարելի յե տեսնել, «խանը» փոխանակվում է «մելիք», «քյոխվա», «գեղի տեր» բառերով: Դրանք մեծ ու փոքր իշխողներն են և կեղեքողները: Դրանք և դատավորներն են: Ահա թե ինչով և սպառնում կեսուրից զրկված հարսը.

Կեսուր ինձի զրկեը ի,
Անթրոցով մըկեը ի.
Կ'երթամ խանին դատ կ'անեմ,

Ճոճ տունը վերան կ'անեմ,
Փըտիկ տունը չեն կ'անեմ:

«Շենի աղեն» դեր և կատարում և ամուսնության խնդրում.

Վոչխարս արի են ուղին,
Մունաթ կ'անեմ շենի աղին.

Աստված, աշխարք կըսիրեք,
Ինձ ավելք են նամարդ տղին:

Հատկապես հիշվում են՝ Փանահ խան, Զանջր խան, Ախտա խան և Գյանջում նստող խաները, ամենքն էլ վատ հիշատակով: Լսենք, թե ինչպես և յերդում կինն իր յարի համար պաշար պատրաստելիս:

Գուլպա կ'անեմ, խաչար ա,
Թխածս յարիս պաշար ա.

Փանահ խան, քուռ մարը մեռնի,
Իմ յարը խե՞ մաշել (մաշվել) ա:

Մի ուրիշ յերդի մեջ պատմվում է Ախտա խանի սպանվելը.

Մեր թվանքը ծանոթ ա,
Լոխ ըրծաթե բանդեր ա.

Ախտա խանը սատկել ա,
Ձին ու դուշը անտեր ա:

Ցել վերջապես՝

Գյանջում նստած խաները—
Մեր մոթալին պանները (=պանիրը):

www.naregatsi.org

Վատ հիշատակ և պահված և լեկդինների արշավանքների մասին.

Ա՛յ տղա, դու խանի վորդի,
Հազինդ լիսամի մորթի.
Թե ինձնից դյուման յար բռնես,
Լեդդին քեզ տանի մորթի:

... Սիրածը վոր սիրածին չի տա,
Լեզատան կ'երթա դերի:
... Իրեք որ ա չեմ տեսել,
Հենց եմ լեդդու Թալանած:

Այսպես հիշվում է նաև Աչմու դերի, Դաղստանի և Ղորատանի դերությունը:

... Ղորատան յեսիր պիտի,
Իմ սիրածին նշանած:

Մի անգամ վոր խաղերի մեջ յերևան են գալիս իշխողները— «հարբուստները», ունևվորները, («Մակար ունևվոր, դեղին չնաշխոր»,— այսպիսիներն էլ կային դյուղերում),—բնական է, վոր այս դյուղական բանաստեղծությունների մեջ դտնեյինք նաև հարուստ զգեստներ և ավելի ևս թանկագին զարդարանքներ: Այսպես հաճախ, շատ հաճախ յերգվում են՝ քամար, արծաթե զոտիկ. մատանի, վոսկի մատանի. զնդեր, ականջի ողեր, վոսկի զնդեր, քթի ող, խզմա, վոսկի խզմա. ապրյան, բիլազուկ, վոսկի բիլազուկ, վոսկի զուլբազ. արծաթ վզնոց, ճակատի վոսկի, ճակատի մաղչա, քորոց, նույնիսկ ժամացույց, «ծոցումդ դեղին վոսկի», «սրսուռ վոսկի»:

... Ղորոտի աչքեր ֆինջան,
Բուկն է քյի լալ—մարջան.
Ապրջան ոսկեջրուկ,
Ղամեն ակնուսանք չարուկ:

Այս զարդարանքները կանայք թե քաղաքներում և թե դյուղերում են կրել, արծաթի և վոսկի զարդերն, անշուշտ, ունևվորները միայն: Նույնպես ունևվորներինն են յեղել և այսպիսի թանկագին զգեստները՝ սամույր կապա (տղայի), սմբըշում, խաս, զումաշ շորեր, զանազան կապա, զարբաթ, բուխարա զդակ, քիրման (չալի) զոտիկ և այլն:

Դյուղացիների աշխատավոր զանգվածները յեթե մատանի, ապրյան և ողեր ունեցել են, այդ յեղել է պողվատի, սակավագեպ՝ արծաթի: Նրանց կանանց ձեռքերին յեղել են ուլունքներ, ճակատին յեղել է վոչ թե վոսկի շար, այլ «շահի», այսինքն արծաթի հինգ կոպեկանոց զրամներ, նրանք տառապել են աղքատության մեջ: Ցավ մեր այս խաղերն ամենամեծ մասով հենց այդպիսիների վիճակի արտահայտությունն է.

Թունդիրը հով ա,
Վրեն լե բով ա.
Տասներկու ջան ենք,
Մե շոր լե կով ա:

Սրա փոփոխակն է.

Թոնդիրը բաց ա,
Վրեն լե թաց ա.
Տասներկու ջան ենք,
Մեկ շոր լե քած ա:

www.naregatsi.org

Ահա իսկական պրոլետարը, այս բառի սկզբնական իմաստով: Չունեն վառելիք, չունեն ալյուր, տաված՝ աղանձով են ապրում, չունեն թացան. բայց հարուստ են յերեխաներով, ընտանիքի անդամներով, վորոնցից յուրաքանչյուրը կարող է ասել.

Մավ հալավս փըրփըռում ա,
Անկաշներս ղըռղըռում ա.

Տաշտը դարտակ, մաղը կախ,
Փորս տաված ղըռղըռում ա:

Բայց կան դրանցից ավելի չքավորներ ել. կան նույնիսկ տուն չունեցողներ:

Աղջի՛, դու մարդ ուշ ելար,
Մենացար, կարմիր թուշ ելար.

Տուն ըմ չունիմ, որ տուն երթանք,
Քեզի առնեմ, ո՞ւր երթանք:

Չքավորին նեղում է պարտքը: Վո՞րքան նվաստացնում է յերիտասարդին այդ պարտքը:

Տաված քուչեն ման արի,
Ցես քեզ մարդ չեմ համարի.

Գնա հարդ պարտքը տուր,
Նոր արի՛, աղջիկ տիրի՛:

Ահա՛ թե ինչպես է վիրավորում աղջիկը պարտք ունեցողին:— Փուխրախակի մեջ ավելի ևս խիստ արտահայտությամբ է. աղջիկն այդպիսի մեկին չան տեղ ել չի ուզում դնել, և վիրավորանք է համարում, վոր պարտք ունեցող տղան իր «անունը տալիս է», այսինքն աղջկան ուզում է:

Հորս պարտքը տվել եմ,
Աղջի՛, քեզի տիրել եմ.

Ղալաթ ա արել հերդ,
Ջեզ մի խոսքով տարել եմ:

Ցեվ ինչպես չպահանջի աղջիկը, վոր տղան նախ պարտքը տա: Լսենք տանը խեղճ ու անճար մնացած կնոջ վողբը.

... Կուլամ, ողորմած աեր, աս ընդո՞ր բան է,
Գարաբկանն ալ նկեր, անեն կըհանե:

«Հոր պարտքը» յերբեմն հայրերի անմտությունից ել է ծագում. դյուղացին պարտքով առած կովը ճմեռը ծախում է, ինչ է թե կարողանա վորդուն պսակել և բուռնուզ առնել հարսանիքին:

Պարտքով կովը ծախեցին,
Ձմեռ տվին բուռնուզին.

Բուռնուզ պատեն կախեցին,
Մուրհակն ընկավ մեր վզին:

Այսպես բողոքում է նորահարսը կամ նորափեսան: Տեսեք, թե մի ուրիշ խաղի մեջ ինչպես է իր այս վիճակի համար դանդատվում մանկամարդ կինը:

Ձյունն եկել, դուռն առել ա,
Կեսարաս պարտքով մեռել ա.

Ցես պստիկ, յարս պստիկ,
Դարդը մեզի տարել ա:

www.naregatsi.org

Սրանից էլ ավելի դժվար վիճակ չի կարող լինել մանկահասակ ամուսինների համար, որոնց ամուսնացնում են ծնողները:

Ճես պուճուր, յարս պուճուր,
Ո՞վ կը սա մեզ հաց ու ջուր:

Այս և ահա այդպիսի չարաբաստիկների խաղերի կրկնակը, որ շատ տարածված է վաղուց ի վեր, որովհետև այդպիսի ամուսնությունները շատ սովորական են յեղել մեր գյուղացիների մեջ:

Ցերեկ ամուսնացումը լինում է ծնողների կամքով միայն, առանց սերի աղջկա կողմից, աղջիկը գերադասում է հարսանի մարդու գնալ.

Արեվ դիպավ պատին,
Վոչ ողորմի իմ տատին.
Ես լեն–արձակ աշխարհը,
Ինձի տավ աղքատին:

... Հարուստն ուզեց, տավ վոչ,
Պահեց տավավ աղքատին:

Փսիխոխակների մեջ «աղքատ» բառի տեղ է «վոնատ», «վորբ դյադան», վոր համապատ է «աղքատի»: Ահա թե ինչպես է գանգատվում անհայրենիք վորբը, վոր վոչ մայր ունի, վոչ մի դրդալ թիթու Թան.

Նանե՛, նանե՛, նան չունեմ,
Մին քթալ թիթու Թան չունեմ,

կը մեռնեմ ջահել–ջիվան,
Մի Թային վաքան չունեմ:

Հարստության ցանկությունը հարսնացու աղջկա կողմից՝ անդրադարձած է բազմաթիվ խաղերի մեջ.

Ճես աղջիկ եմ, ալ կ'ուզեմ,
Բարակ մեջքիս չալ կ'ուզեմ.

Վոր տուն վոր յես հարս երթամ,
Դումաչը ծալվիծալ կ'ուզեմ:

Վարիանտների մեջ աղջիկն ուզում է՝ «վոսկին ծալեծալ», «թիրմա չալ դոսիկ», «բողչան ծալեծալ», «յալդուզ վոսկի շար» (ճակատի կամ վզի):

Բայց կա մի ուրիշ հայացք էլ: Ուրիշ շատ խաղերի մեջ առավելությունը տրվում է վոչ թե հարստությանը, այլ վեհացու տղային:

... Ինչ կ'անեմ դունյի մալը,
Տղին տես, աղջիկը տուր,
Թող ըսկի չընի հալը:

Հաղար դուրուշով չեմ տա,
Կըտամ աղքատ Ջիվանի:

Այսպես է ասում հայրը՝ հրաժարվելով աղջկա ձեռագնից:

Սիրող աղջիկը, հարկավ, միշտ այդ տեսակետին է: Լսենք նրան:

Հասիբ ա, հա՛ հասիբ ա,
Տուն չունի, քյասիբ ա.

կ'ուզի ասեք, կ'ուզի վոչ,
Ես տղան ինձ նասիբ ա:

«Սիրել եմ, կառնեմ, ջայնամ աղքատ ա»—ահա խաղերի մի կրկնակ:

www.naregatsi.org

Բլրուլը տալի վրա,
Ինձորը ծառի վրա.
Սիրած սիրածի տային,
Ջոր գնանի, քարի վրա:

... Հաց ըսղ լինի դարի,
Մենակ յարս ինձ համար
Սրտով խոսքը կատարի:

Հաղերի մեջ հին գյուղն արդեն քայքայված է: Աշխատավոր չինականն այլևս չի կարողանում ապրել իր տեղում բնական տնտեսությամբ: Նա ստիպված դուրս է գալիս իր գյուղից ուրիշ աշխատանք վերոնելու: Նա պանդխտում է մոտիկ կամ հեռու կենտրոններն աշխատանքի համար: Զանազանց շատ կան հաղեր պանդխտության մասին, որ սակավ, բացատրությամբ հետևանք է աղքատության, և կան այնպիսի յերգեր, որոնց մեջ պարզապես արտացոլում է աղքատությունը:

Հաց եմ թխել դարի յա,
Իմ յարը սաֆարի յա...
Ջորեն ի վեր հանդեր ա,
Ջուրը տունս քանդեր ա.
Շուտ արա, յես դարձիր յա՛կ,
Սիրածդ տանն անտեր ա:

Լալվարու ջուրը սառն ա,
Ոտարությունը դառն ա.
Տունդ դարձիր, իմ աղեր (=յար),
Բոլորքս պտիկ դառն ա:

Այսպիսի հաղերի մեջ բազմակողմանի արտահայտված է պանդխտի տանը մնացած կնոջ, յերեխեն և պանդխտի իրեն, ծանր վիճակը, նրանց կրած հոգեկան տանջանքն ու կարոտը, և փափաքը վերադարձի համար, վերադարձն, ընդունելությունը, լուր ուղարկելը և այլն:

Ջուրն (վ. կալն) ելավ երես-երես,
Բազրյան, տասված սիրես,

Ինչ վոր կ'երթաս Երևան,
Իմ յարին հետդ բերես:

«Բազրյանի» տեղ փոփոխակների մեջ է «խոջա», «փոդրաթչի»: կինն ուրիշի իր պանդուխտ յարի համար դիմում է թափառող վերեզակին կամ կապալառուին, վոր գյուղերն ընկած տան են գալիս ապրանք վաճառելու կամ ձեռք բերելու:

... Խոջա, տասված կը սիրես,
Ինձ մի հեռու յար ունեմ,
Ոեր խաբարը դու բերես:

Իբրև պանդխտության վայր հիշվում են՝ Գյանջա, Նուխի, Շիրվան, Գյումրի, Երևան, Կաղզվան, արևմտյան յերգերի մեջ՝ Ստամբոլ, Իսկյուտար, Իզմիր:

Լուսնակըն ինձի ցերեկ,
Շիրվանու քարվան բերեք.
Աղլուխս մուժուս կուտամ,
Ցարիցս խառատ բերեք:

... Իմ յարը Գյանջու կուսն ա,
Գյանջա, քու սարը վուլ գա,
Բալքի իմ յարը տուն գա:

Մի յերկու խաղի մեջ պանդխտության վայր և արդյունք:

Հալեմ, հալեմ, հլըննեմ,
Ձրագն ոնեմ գըրըննեմ.

Բաքվից հեկողներ, ձեզ մատաղ,
Կացեք, իմ յարից հարցնեմ:

www.naregatsi.org

Կան մի շարք պանդխտի սրտառուչ յերգեր, վորոնք հորինված են 10 և 11-վանկանի տողերով: Դրանք ավելի Վանի և արևմտյան կողմերի յերգեր են և, ինչպես յերևում է, պատկանում են մի առանձին ցիկլի, մի ընդհանուր «Աբրե, յար, արի···» կրկնակով: Դրանք ֆերզվել են կամ հատ հատ յերկյակներով, յեռյակներով, քառյակներով, կամ թե մի քանի այդպիսի տուների հաջորդությամբ, բայց միշտ լույծ և տարբեր տարբեր կապակցություններով ու վարիանտներով: Հենց այդ պատճառով այդ յերգերն էս առնված են այս ժողովածուի մեջ:

6· ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԵՐԻ ՄԵՋ

Մի սխալ կարծիք կա, թե մեր գյուղացին բնության մեջ ապրելով հանդերձ՝ իրը չի տեսնում և չի սիրում այն: Դրա հակառակն են ապացուցում մեր այս փոքրիկ քնարական յերգերը: Դրանց մեջ ընդարձակ տեղ ունեն բնության նկարագիրն ու բնությունից առնված նմանությունները:

Գյուղացուն գրավում են ամենից առաջ արեգակն ու լուսին և աստղեր: Բերենք մի քանի խաղեր:

Արեվը բակ ա քցել,
Շաղքը սրտիս մեջ ցցել·
Քու սերդ էլ մի դհիլը
Լերդ ու քարս ա խոցել:

··· Սելին նստել կու դա Ծովին,
Արեվի շաղքը դիպել է՝
Դոշին կարած թագա մովին:

Արեվ ես ու լույս չես տալիս,
Ամպի տակից դուրս չես գալիս:

Ես ձորն ի վեր ծննդակ,
Դու նմանիս արեգակ···

Լուսնակը շող ա քցել,
Իմ յարը քող ա քցել·
Բարակ քամին տալիս ա,
Ալ քողը դող ա քցել:

Ես որ նորը նորել է,
Նորել է, բոլորել է·
Ծա՛ր, քո լուսնակ երեսից՝
Իմ սիրտը մոլորել է:

Լուսնակն ա կայնել գարին,
Պատկերն ա քո պատկերին···
··· Բոլոր լուսնակին նման
Հալել, մաշել եմ, տուն յեկ:

Բաղչի մեջի դող (=== լճացած) ջրեր,
Լուսնակն ի մեջն եր դիեր·
Ցարուկ ջրի մեջ կ'աչքեր,
Սիրտը լուսնակն եր ընկեր:

Աստղը ցոլաց յերկնքից,
Եկավ, անցավ մեր յերդկից···

Լուսնակ դիշերի դուրս ելա,
Կչեռք անուշ կըցոլա···

Ցես լիս աստղ եմ երկնքին,
Շողս տված դեռնքին···

Այսպես և բազմաթիվ այլ խաղերի մեջ: Նույնպես յերգվում է՝ արեգակի ծագումը, նրա ցոլացող գնացքը յերկնակամարի վրա, մայր մտնելը, յերկնքի մթնած մնալը, լուսնի ծագումը, լուսնակ դիշերները և այլն:

www.naregatsi.org

Արեվ թռվռուվ ելավ...
Արեվ առե ալ նարնջի...
Արեվը նոր ա ծեղել,
Սարերի գլխից չեքել...
Լուսինը յելավ կամարից...
... Բարկ արեվը յերկնքում,
Շողն ա դիպել ակոսին:

Արեվը ցոլաց, գնաց,
Ցերկինքը մթնած մնաց...
Ես գիշեր մթնեց, գնաց...
Լուսինը ցոլաց, գնաց,
Ամպին դեմ առավ, մնաց...

Ցեվ չատ ուրիշ խաղերի մեջ: Հավասար չափով յերգվում են նաև ամպ ու թուխպ, անձրև, ծիածան, կարկուտ, ցուրտ, ջրի սառել, ձյուն ու ձմեռ, ձյան ուսին (հյուս), բուք ու մեզ, աշուն ու աշնան անձրև և այլն:

Աշունն եկավ ցողալեն,
Ծառի թփեր դողալեն...

Աշունն եկավ սարիցը,
Տերեվ թափեց ծառիցը...

Սարը կոխել ա դուման...
Սարի տակը մշուշ ա...
Սարին նստել ա դուման...
Ալագյոզ սարն ամպել ա...
Եսոր ամպ ա, պարզում չի...
Սարերին թուխպը պիտի...
Սեվ ամպերը չատ սարին են...

Ամպել ա ամպի վրա,
Ամպերը սարի վրա...

Ձյուն եկավ, եկավ գոտիկ,
Ալագյոզ սարին մոտիկ...

Ելան սարերը մոտիկ,
Ձունը եկել ա գոտիկ...

Ալագյոզ ձուն ա բռնել...,
Ձյունն եկել, դուռն առել ա...

... Ես գիշեր, լուսնակ գիշեր,
Ձյունն եկել, գետին նախշել...

Ձյուն ա գալիս վերեվից,
Ջուր ա կաթում առեվից...

Ձերմակեց գետին ճնեց...
Բուք ու դուման ա ձորերս...
Սարերն եր ձուն ու բուք...

Սիրով յերգվում են նաև՝ առավոտ, լուսաբաց, յերեկո, մութն ընկնել, գիշեր· ապա նաև գարուն, ձյան հալվել, ծառերի կանաչել, ցող, քամի, չոգ, հովն ընկել և և այլն, և այլն,— տարվա և որվա բոլոր և ամեն տեսակի յեղանակներն ու յերևույթները: Դրանք իրենց բազմազան հեղհեղումներով ու ձևերով շարունակ կրկնվում են այս դյուղական յերգիկների մեջ թե իրրև բնության նկարագիր և թե բանաստեղծական պատկերավորության համար:

Սարերը հեչտացել ա,
Ջրերը չատացել ա...

Ա՛յ տղա դու բաղի մեջին,
Վոտներդ չաղի մեջին...

Ման կը դամ բաղի մեջին,
Վոտներս չաղի մեջին...

Առավոտյան անուշ հովին,
Շողքը դիպավ դուշիդ մովին...

Առավոտուն կ'ելլես պաղպաղ հովերուն,
Բիւլբիւլ չաղերը զարկեր վարդի քովերուն...

Սարիցը գալիս ա քամի...
Ծառի տակը հով քամի...

www.naregatsi.org

Բնության այսպիսի յերեվույթների հետ նկարագրվում է նաև դրծության վայրը՝ Հայաստանի սարը, հով սարը, ձյունապատ սարը, կանաչած ու ծաղկազարդ սարը, մարմանդը (յեյլաղ), սառն աղբյուրը, ղարձյալ աղբյուրը, դնացկան ջուրը, դետը, դետափը,— սար ու քար, քար ու քարափ, սար ու ձոր, այլ և բաղ ու բաղչա, մեկ մեկ նաև դաշտ ու դուբանը, ճանապարհը և այլն:

Ալագյազ սարի գլխի
Պաղ աղբըրից դուլալ եմ...
Ապարան, ա՛յ Ապարան,
Սառն աղբուր չարան չարան...
Ծառի տակի հովն անուշ,
Աղբուր կ'ելներ, համն անուշ...
Աղբուր գացի, ջուրն անուշ,
Ծաղիկներու հոտն անուշ...
Գետ ու գնում երես-երես...
Գետերուն կամուրջ չկա...
Ես ծարավ եմ, ջուր չկա,
Սարերին աղբուր չկա...
Սարեր, ձորեր, յետ կացեք,
Իմ յարի ճամբեն բացեք...

Ես բավականանում եմ բերած տողերով, վորոնք շատ են:

Բնության նկարագրի մեջ մտնում են նաև յերկրի բուսականությունն ու կենդանիները, վորոնք հիշվում են խաղերի մեջ: Ես արդեն ուրիշ տեղ*) պարզել եմ, վոր մեր սիրու յերգերի մեջ բնորոշ կողմն այն է, վոր դրանց մեջ գտնում ենք մի ամբողջ կանաչազեղ ու ծաղկազարդ այգի ու պարտեզ՝ արմավենի, նարնջենի, նռնի (սերկի), նշենի, նռնենի, ուռի որթ (= խաղողի որթ), մուրտ, սերկեվիլ, շամարեղեգն, խնձորի, շամամ, վարդ, աղբրանց արյուն և այլն: Ես այսպես մեր հին սիրու յերգերի, ինչպես և դուռանական ու ժողովրդական յերգերի մեջ, հաճախ միևնույն կիրառությամբ:

Այս միևնույն հատկությունը մեծ չափերով ունեն նաև խաղերը, վորոնց մեջ չեն յերեվում միայն վերևում ընդգծվածները, վոր մեր հին դուռաններին, իրրև արվեստավոր յերգիչների, կարող եին ծանոթ լինել վորևե աղբյուրից: Բայց դրանց փոխանակ՝ մեր խաղերի մեջ հիշվում են ուրիշ ծառեր և այլ բույսեր, ինչպես են՝ շլորի (սալորի), պոպոք, պընդուկ, թթենի, բալի, ծիրանի, չինար, բարտի, ուռի, մոշի (մի խաղի մեջ՝ թուրինջ): Գյուղացին յերգելիս ողջվում է իր շրջապատի բուսականությունից: Ամենից շատ յերգվում է խնձորը:

Խնձոր ես ծառի վրա,
Ծաղիկ ես սարի վրա.
Անուշ տաղ ասող բլբուլ,
Կայնել ես քարի վրա:

Խնձոր ունիմ, կծած ա,
Ջարս բոլորն արծաթած ա...

*) Մ. Աբեղյան, Հին դուռան. ժող. յերգեր, յեր. 123 հան.

www.naregatsi.org

Ինձորից հետո՝ կարևոր տեղ են բռնում Նուռն ու Նռենին, ինչպես և Ծիրանն ու Ծիրանին:

Տանս տակին կա Նռնի,
Բարձ քերեք՝ յոթս կռնի·
Ցես—դու մի բաղում պիտենք,
Ցես չինարի, դու Նռնի:

Ծիրանի ծառ բար մի՛ տա,
Ճղներդ իրար մի՛ տա...

Զափաղանց շատ են յերեվան գալիս խաղերի մեջ նաև ծաղիկները ու խոտերը և բանջարեղենները: Վերջիններիցս՝ Ծնեբեկ, սիբեխ, զոխ, ղըլղան, խավարծիլ, մանդակ, մանդկու ծիլ, ղանճիլ, քեղ, բոխի, կանդառ, շաղգամ, այլ և սոկոն, ռեհան և այլն: Ապա նաև՝ գաղնոց, սարի խոտ, արոտ, փալախոտ, սեզ, յեղեգն, (ղամիշ), սինձ, Թրթնջուկ և այլն:

Սրի երթանք մանդրկի...
Սրի քաղենք խարխարծիլ,
Դու կու նմանես մանդկու ծիլ...

են սարին քեղ ա բուսել...
Սարերի սինձն ինչ ա...
Սարի Թրթնջուկ Թաղա,
Մեղր ու շաքար քեզ մաղա...

Շատ սիրված են նաև վայրի ու մշակովի ծաղիկները, ինչպես են՝ անթառամ ծաղիկ, սուսան, աղբրանց արյուն, շուշան, ձնծաղիկ, կակաչ, պուտ, լալա, հորոտ-մորոտ, տուխտ, նարդիզ, նունուֆար, հիլ ու մեխակ և այլն: Ամենից սիրված ծաղիկն է վարդը, որը հաճախ յերգվում է առանձնապես վիճակի խաղերի մեջ իբրև կրկնակ·

Ջան վարդի՛կ, ջա՛ն, ջա՛ն,
Ջան ծաղի՛կ, ջա՛ն, ջա՛ն:

Ավելի սովորական է՝ «Ջան դյուլում, ջան, ջան»:

Վարդը բացվել ա հովին,
Բլբուլը կայնել քովին...
Իմ խերանց եկին վարդ հազար Թավուր,

Մենք են վարդերուն իմ վարդն է
քաֆուր...
Վարդն ի բացվե առավտան խավխուռց...

Բավական հաճախ յերգվում է մանուշակը, պակաս չափով և մեխակը (այլ և խարտանֆիլ անունով): Պակաս չի դովվում նաև «ծաղիկը», անանուն ծաղիկն ամեն տեսակի,— ծաղկի փունջ, ծաղիկ ցանել, ծաղիկ քաղել, սարի ալվան ծաղիկը, ծաղկունքը, Թե իրական ծաղիկները և Թե նմանությամբ ասված:

Ծաղիկ Ծաղկեվանա յես,
Ասըղ Երեվանա յես,
Տարենը մի հետ կը գաս,
Մազյամ նուրաբխանա՞ յես:

Ծաղիկ Ծաղկաձորեն եմ,
Մեծ բաղի խնձորեն եմ·
Ջամին տվեց, վե քցեց,
Վաթանս մոլորել եմ:

Հին գուսանական յերգերի— հայրեննների մեջ գտնում ենք նաև Թրռչունների՝ բազե, բլբուլ, արծիվ, ծիծեռնակ, կաքավ, աղավնի, սիրամարդ

www.naregatsi.org

և վայրի վարֆինակ, որոնց առաջին յերեքը դործածվում են տղայի համար, իսկ մյուսներին... նմանեցվում և սիրական կինը»: Այս միևնույն թռչունները, բացի ընդդծածներից, հաճախ յերդվում են և խաղերի մեջ (սիրամարդը՝ «սինամահավք» անունով): Այստեղ, սակայն, թեվավորների յերամն ավելի մեծ է. հիշվում են նաև թառլան ղուշ, կռունկ, ղաղ, բազ, ճնճղուկ, անձեղ, տուտի, արտուտիկ, բու և ուրիշները. իսկ չորքոտանիներից՝ յեղնիկ, մարալ ու ջեյրան, մի կողմ թողած ընտանի կենդանիները:

Ամեններից սիրված թռչուններն են՝ բլբուլ, կաքավ և լոր, որոնք դործածվում են աղջկա համար նմանութեամբ: Բլբուլը մեկ մեկ նաև տղայի համար:

Արեվը ծագեց սարեն,
Կաքավը կանչեց քարեն...
Սեվ ամպը սարի գլխեն,
Կաքավը քարի գլխեն...

Կաքավ եմ հազար դունով,
Իմա կալերն երամով...
Կաքավ եմ քարամիջին,
Կը կարդամ ձորամիջին...

Ահա Հայաստանի քարն ու սարն իր կաքավով: Սիրված կնոջ քայլքը, շարժումնքը սովորաբար նմանեցվում է կաքավի,— «կաքավի քելք», «կաքըվնակ» ման դալ, կաքավի պես չորոր տալ և այլն:

Կանաչ տեղը բաղում եմ,
Ցայրու միջին խաղում եմ.
Կաքավի պես սորալով՝
Տղաներին դաղում եմ:

Բաղի միջին ման ես դալիս,
Կաքավի չորոր ես տալիս...
Առաջման կաքվու նման,
Ձեննիկդ կու դեր սարեն՝ անուշ,
Ձեննիկդ կուդեր լեռնեն՝ անուշ...

Կաքավից պակաս է յերդվում լորը, լորիկը:

Գացի արտեր՝ բռնի լոր,
Աղջիկ տեսա յայլի ձոր,
Նման եր կարմիր խնձոր...

Աղջիկը հենց՝ կոչվում է «լոր», «լորիկ»:

Առավոտ լոր մտավ արտ,
Աչքս տասվ, եղավ դարդ,—
Կու նմաններ քաֆուր վարդ:

Առավոտ բարի լուսուն,
Ցնս մայիլ եմ քո տեսուն,
Լորի՛կ, դու իմ սրտի սուն:

7. ԽԱՂԵՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Իրենց ծագումով բոլոր խաղերն էլ անպատրաստից, հանկարծական բերմամբ ասված բաներ են: Դրանք չեն հորինված կարդացվելու և վոչ իսկ մեկ անդամից ավելի յերդվելու համար: Առաջին յերդողը, վոր և յերդի հորինողն է, իր խաղով արտահայտել է իր մեջ վայրկենապես ծնված, րոպեական տպավորության տակ առաջացած զդացմունքը, դրանով արտահայտելով ժամանակի և միջավայրի կենցաղային բարքերը և տրամադրու-

www.naregatsi.org

թյունները: Մի անգամ յերգվելուց հետո պիտի մոռացության տրվեր խաղը, ինչպես հաղարավորներ և չատ հաղարավորներ հորինվելուն պես, անչուչտ, մոռացվել են, կամ թե իրենց հեղինակի հետ մեռել են:

Սակայն ինչպես ամենայն ժողովրդական բանահյուսության, այսպես և խաղերի համար պետք է ասել, վոր այն յերգերը, վորոնք առանձին հաջողությամբ են հորինված յեղել և կամ թե արտահայտել են ժամանակակից ների վոչ վաղանցիկ տրամադրություններ, չեն անհետացել առաջին անգամ յերգվելուց կամ իրենց հեղինակի մահից հետո:

Ուշնդիրներից այս կամ այն անձը վայրկենապես սովորում է խաղը և ինքն ևս հարկավոր դեպքում կրկնում է կամ անփոփոխ, կամ հաճախ անդիտակցորեն փոխելով այն դեպի լավը և ավելի հաճախ դեպի վատը: Յեվ մի անձի՝ բոպեական տրամադրություն արտահայտելու համար ստեղծված յերգն այնուհետև պահվում է ուրիշների հիշողության մեջ, թափառում է գավառե գավառ՝ հարմարվելով, վորքան կարելի յե, տեղական բարքերին, և անցնում նույնիսկ յերկրե յերկիր, թարգմանվելով լեզվե լեզու և հարմարվելով տեղի ու ժամանակի բարքերին:

Ժողովրդի հիշողությունը չատ մեծ է: Յեվ վորովհետև խաղը նախնական ժամանակներից ցայսոր մոդայից չընկնող բանաստեղծական ձևն է վոչ միայն մեր, այլև ընդհանուր աղգերի մեջ, ուստի չատ հասկանալի յե, վոր, մինչդեռ ուրիշ հին յերգեր, որինակ՝ վիպականները, մոդայից ընկնելով մոռացության են տրվել, մեր արդի խաղերի մի մասը չատ մեծ հնություն կարող են հասած լինել մեզ: Որինակ՝ ի՞նչ և ասում հետևյալ յերկատողը.

Կ'երթամ խանին դատ կ'անեմ,
Մեծ տունը բարբաղ կ'անեմ:

Կամ վո՞ր դարու պատմական հիշողություն ունի հետևյալ քառատողը.

Կաքավն ա կայնել քարին,
Կուգը կարմիր արին,—
Դաղստան լեսիր պիտի,
Իմ սիրած յարին տանին:

Ժողովուրդը յերգի բնագրի նկատմամբ այն վերաբերմունքը չունի, ինչ վոր մենք ունենք դեպի վորևե հեղինակի յերկ: Շատ բնական է, ուրեմն, վոր խաղերը վոչ միայն բերնե բերան անցնելիս են փոխվում, այլև սերնդե սերունդ, դարե դար ավանդվելիս: Յեվ այս փոփոխությունը հենց նպաստում է յերգչի պահպանմանը: Խաղը կենդանի մնում է նաև նրա համար, վոր դյուր է դալիս: Իսկ դարե դար դյուր դալու համար պետք է վերանորոգվի, վերաստեղծվի հարմարվելով սերունդների կյանքին ու բարքին, նիստ ու կացին և լեզվին:

Խաղերի այս ծագումով ու պահպանման կամ ավանդման յեղանակով բացատրվում են և նրանց հատկությունները, նրանց կազմությունն ու հորինվածքը:

www.naregatsi.org

Ի՞նչ հորինվածք կամ արվեստ կարելի չե սպասել մի չերդից, վոր ընդամենը չերկու, չերեք կամ չորս տող է, և վորի հեղինակը չի էլ մտածել, թե ինքը բան է հորինում, այլ իրրև մի թռչուն չերգել է չրջապատի կամ վորևե դեպքի ազդեցության տակ: Այս պատճառով խաղիկների մեծ մասը պարզ և անպաճուճ խոսք ու խնդիր է՝ ուղղված ընդհանրապես առ սրբատի սիրելին: Որինակ.

Ցես աղջիկ եմ ալ կուզեմ,
Բարակ մեջքիս չալ կուզեմ.
Վոր տուն վոր չես հարս երթամ,
Վոսկին ծալվե ծալ կուզեմ:

Գուճո՛ւր աղջիկ սեվավոր,
Հազարի դռան սալոր,
Գնա՛, մերդ կանչում ա,—
Ինձի չանի մեղավոր:

Ա՛յ տղա կանաչ կապով,
Հերիք անցնես մեր պատով,—
Հերս քեզ աղջիկ չի տա,
Մեր պատ փլավ քո ապով:

Կապել ես քիրման դռաիկ,
Մարդ չես Թողնում քեզ մոտիկ.
Համ տեսքով ես, համ հոտով,
Բան ըղծաղիկ խորոտիկ:

Բնությունն ինքն այդ հասարակ չերգիչներին ներշնչում է արվեստ, վոր ունի իր առանձնահատկությունները և չերբեմն նման չե մեր դրագետ բանաստեղծների արվեստին:

Խաղերի մեջ դտնում ենք ժողովրդական չերգերին հատուկ զուգահեռականություն (parallélisme) առած ձևն իր ընդարձակ նշանակությամբ, այսինքն միևնույն խմաստի կրկնությունը տարբեր արտահայտությամբ, կամ ընդհանրապես խաղերի բաժանելը չերկու մասերի, վորոնք համապատասխան են մեկմեկու և վորևե առնչություն ունեն իրար հետ:

Խաղի եյական մասը, վորի մեջ է բուն խմաստը, դրեթե միշտ չերկրորդ չերկատողն է. իսկ առաջին եյրկատողը սովորաբար չերկրորդի լրացումն է և վորևե կողմից, նրա սկսվածքը, նախապատրաստությունը, բազդատությունը և այլն:

Խաղը քնարերգություն է, այսինքն մի բանաստեղծություն, վոր արտահայտում է պլխավորապես չերգչի զգացմունքն ու մտածմունքը, նրա ներքին կյանքը, առանձնապես սիրո զգացմունքն իր զանազան վիճակներով: Այս ներքին, հոգեկան կյանքն ահա՛ կազմում է ընդհանրապես խաղի զուգահեռական մասերից չերկրորդի բովանդակությունը: Բայց քնարերգություն չկա առանց բնության չերգի, մանավանդ չինական մարդու համար, վոր բնության մեջ է ապրում: Քառատողի սկսվածքի մեջ է լինում սովորաբար բնության մասը, բնությունն իր ընդարձակ իմաստով առած, լինի արտաքին աշխարհի թե ժողովրդական կյանքի նկարագրի, կամ կատարվող և կատարված դեպքերի պատմվածք:

Խաղերի ընդհանուր կազմությունն այս է: Բայց բնության մասը չերբեմն միայն առաջին տողի մեջ է լինում, չերբեմն անցնում է և չորրորդ տողին, վորով հոգեկան մասը մնում է միայն չերրորդ տողի մեջ:

www.naregatsi.org

Վորքան հաջողությամբ հարմարեցրած են իրար յերդիկների այս յերկու զուգահեռական մասերը, և վորքան սերտ ու ներքին է այս յերկու մասի կապակցությունը, այնքան ավելի դեղեցիկ է խաղը:

Բայց այստեղ հատկապես պետք է չեշտել, վոր խաղի այս յերկու մասերի ներքին կապը հաճախ անհասկանալի յե մնում մեզ, կամ այն պատճառով, վոր խաղն աղճատված է,— վորի մասին հետո կըխոսենք,— և կամ թե մենք չենք կարողանում թափանցել նրանց ներքին առնչության մեջ: Խաղը հորինված չե մեզ նման մարդկանց համար, վոր սենյակում կաք-դանք· այլ առաջին յերդչի և իր շրջապատողների համար, վորոնց աչքի առաջ է նկարագրած տեսարանը: Յերկու խոսք, յերկու—յերեք դիծ միայն բավական են նրանց ուշադրությունը դեպի բնությունը դարձնելու համար. մնացածը լսողներն իրենք ամբողջացնում են նայելով իրենց շուրջը:

Բացի այս՝ խաղերի մեջ տեսնում ենք ժողովրդական մտածողության յեղանակի մի ուրիշ տեսակ, քան ինչ վոր պատմվածքի կամ վեպի մեջ է: Այստեղ վիպասանը սիրում է ավելորդաբանություն, յերկար ու բարակ, նույնիսկ կրկնություններով չատախոս նկարագիր մանրամասնություններ: Խաղերի յերդիչն, ընդհակառակը, դիտե յերկատողի, յեռատողի ու քառատողի նեղ շրջանակի մեջ մտցնել ընդարձակ նկարագրիրներ ու պատմվածքներ ամենասեղմ կերպով, բայց չատ անգամ այնպիսի նկարագրիրներ ու պատմվածքներ, վոր միայն անպատրաստից յերդողին լսողները, կամ նրանց վիճակի մեջ յեղողները կարող են իսկույն ըմբռնել և պատկերացնել ամենայն ընդարձակությամբ: Այս յերկու պատճառով մենք, վոր հեռու յենք ժողովրդի կյանքից և նրա մտածողության յեղանակից, յերբեմն փոքր ինչ մտածելուց հետո միայն կարող ենք հասկանալ խաղերի զուգահեռական մասերի ներքին կապակցությունը և վայելել ժողովրդական բանաստեղծության այս տեսակի դեղեցկությունը: Յեվ այս չատ դժվար չե:

Խաղերի առաջին մասը, բնությամբ սկսվածքը, յերկրորդ մասի վերաբերմամբ դլխավորապես յերեք տեսակ է լինում:

1. Ամենապարզ և հեշտ ճանն է այն, վոր խաղի առաջին մասի մեջ մի նկարագիր է լինում: Ինչպես վոր վիպասանները գործողությունից առաջ ստվորաբար նկարագրում են բնությունը, վորի մեջ գործողությունը կատարվում է, այսպես և յերդիչը նախ մի քանի բնորոշ դծերով պատկերացնում է իրեն շրջապատող բնությունը իբրև մի շրջանակ, ապա դրա մեջ անց է կացվում կամ կատարվում է հոդևոր կյանքը: Արտաքին աշխարհը, դրությունը, որվա ու տարվա յեղանակը և այլն, մի քանի թեթև դծերով նկարագրված՝ կազմում են մի փոքրիկ վայրանկար կամ դյուղական կյանքի շրջանից և աշխատանքից առած մի պատկեր, վորին հաջորդում է յերդչի սրտում վայրկենապես ծնված զգացմունքը մի սրամիտ խոսքով կամ բառախաղով:

www.naregatsi.org

Մեր ջուխտ դուքյան դաշտ կու բանի,
Զուլո խաթուն հաց կու տանի,
Մին կու քելե, մին կու կայնի,—
Աչքով, ունքով մարդ կու սպանի։

Ահա մի մանրանկար պատկեր, վորի մեջ հանված է դաշտը և դաշտի մեջ գործող դույզ դուքանը։ Հեռվից յերևում է Զուլո խաթունը, ձեռքին բռնած հացը, վոր տանում է դուքանավորին։ Տեսնում է նրան և նրա քայլվածքը սիրահար մաճկալը կամ հոտաղը և իր սրտում վայրկենապես ծնված զղացմունքը հայտնում է մի կարճ խոսքով։

Մի ուրիշ յերգի մեջ հանդիպում ենք ամեռնային տեսարանի։ Գիշեր է ու լուսնակ գիշեր։ Սպիտակ ձյունը նախշել է դետինը։ Տան յետևում, կամ պարտիզում տեսակցում են սիրահար տղան ու աղջիկը, կես ունքերով ու կարմիր թշերով, և տղան հայտնում է իր ցանկությունը։

Ես գիշեր, լուսնակ գիշեր,
Ձյունն եկեր, դետին նախշեր.
Աչքդ դեմ արա պաչեմ,
Կես ունքեր, կարմիր թշեր։

Այս տեսակի բնությամբ սկսվածքը ամենից հեշտն է հորինման տեսակետից։ Բավական է միայն, վոր յերգիչն աչքը չուրջը դարձնի և դիտի իրեն շրջապատող բնությունը և մի քանի բառով նկարագրի։ Բանաստեղծի ամենամեծ չնորհքն այն է, վոր կարողանա շրջապատի բազմազան կողմերից եյական գծերն առնել, վորպեսզի բնության պատկերը հեշտությամբ ամբողջացվի։ Եվ յեթե եյականներն են վերցրած, վոր, ցավոք, միշտ չի լինում, նույնիսկ մենք հեշտությամբ կարողանում ենք լրացնել պատկերի մանրամասնությունները,— հասկանալի յե, յեթե չինական կյանքն ու բնությունը ծանոթ է մեզ։ Մի քաղաքացի մարդ, վոր վար ու դուքան չի տեսել, վոչինչ կամ շատ քիչ բան կարող է պատկերացնել վերևում դրած առաջին յերգը կարդալիս։ Բայց յերբ կյանքին ծանոթ մեկն է կարդում կամ լսում այն, նրա աչքի առաջ բացվում է ընդարձակ տեսարան. աշնան կամ գարնան դաշտ, տեղ տեղ վարից չերտ չերտ սևացած արտերը, չարժուն դուքաններն իրենց բազմաթիվ լծերով, մաճկալի և հոտաղների հոռովելներով, քաջալերական ու հանդիմանական խոսքերով. հեռվում լեռներ և այլն։

Խաղի յերկու մասի ներքին կապն ըմբռնելն ավելի դժվար է առանց ղյուղական կյանքի ծանոթության, յերբ ժողովրդական կյանքի ու սովորության, տեղական բարքերի գծեր են առնված։ Որինակ՝ վերցնենք հետևյալ քառատողը.

Արազը հեչտացել ա,
Ձմրեքը կոչտացել ա.
Ամարաթ տարեք իմ յարին,—
Առնողս չատացել ա։

Այս խաղի յերկու մասի մեջ ըստ յերեվույթին վոչ մի կապ չկա։ Բայց Արազի վրա բնակվողներին հարցնենք, և նրանք կասեն, վոր Արազը հեչտանում է ցուրտ աշնանը կամ ձմեռը։ Այս ժամանակ է, վոր ճանապարհ-

www.naregatsi.org

Ներն ել կոշտանում են. անձրևներ գալուց կամ ձյուն գալուց և հալչելուց հետո՝ ամառվա ճանապարհների վրա դիզված հողը ցեխ է դառնում և մի ցուրտ գիշեր սառչելով կոշտ կոշտ մնում է: Ահա՛ ցուրտ աշնան կամ ձմեռվա նկարագիրը գետի և ճանապարհի պատկերով: Բայց խաղի բուն իմաստը հասկանալու համար այսքանը դեռ բավական չէ: Պետք է իմանալ, որ ցուրտ աշնանը կամ ձմեռն են աղջիկ ուղում և հարսանիք անում: Այժմ յերևակայենք մի աղջիկ, որին շատ ուղողներ կան, բայց ինքն ուրիշին է սիրում: Նրա սիրականն ուրիշ տեղ է, և նա ահ ու դողի մեջ է, թե մի՛ գուցե իրեն սխալեն ուրիշի և վոչ իր սիրելիին մարդու դնալ: Նա դուրս է գալիս, նայում շուրջը հեչտացած Աբրալին ու կոշտացած ճանապարհներին և իր լցված սիրտը դեղում է յերգով.

Խաբար տարեք իմ յարին,—
Մուշտարիս չատացել ա:

Այս տեսակ սկսվածքի մեջ մտնում է և այն, վոր խաղի առաջին մասի մեջ վոչ թե նկարագիր է լինում, այլ մի պատմվածք, վորին հաջորդում է ղպացմունքը՝ փափաղ, ապաշավանք և այլն, իբրև հետեվանք առաջին մասի մեջ պատմված գործողության: Որինակ՝ մի աղջիկ հաց է տանում արտը, ուր իր յարն է: Նա փափաղում է տեսնել յարին. նրա սիրտը կարոտով լցված է, և կուզեր անպատճառ յարի մոտ լինել: Բայց արի տես, վոր յերբ յարը խնճոր է տալիս, նա ամաչում է ու չի առնում: Յարին տեսնելուց հետո յետ է դառնում. և ահա՛ նրան չարունակ տանջում է այն միտքը, թե ինչո՛ւ մերժեց յարի առաջարկությունը: Ապաշավանքը կրակում է նրան: Նա իրեն բեթախտ յար է համարում. յարն իսկապես այդպես չսիրի վարվեր և այլն: Այսպիսի մի դեպք ու հոգեկան դրություն ամփոփված ենք գտնում հետևյալ քառատողի մեջ.

Կանաչ արտը հաց տարա,
Յարիս տեսա յետ դառա.
Խնճոր տվավ՝ յես չառա,—
Ես ի՞նչ բեթախտ յար դառա:
(Վաբիանա՝ ես ի՞նչ կրակ եր՝ վառա):

Վերցնենք մի ուրիշ խաղ.

Գնացի ջուրը ջրի,
Վոտս ընկավ ոձի լեղի.
Իմ հորն ու մորն ի՞նչ ասեմ,—
Ինձ տվին ղարիբ տղի:

Այս քառատողը հասկանալու համար պետք է իմանալ, վոր գյուղերում սովորաբար աղջիկները ն են աղբյուրից կամ գետից ջուր բերում: Ջրատեղն են գալիս և ոտար տեղերից տղայքն աղջիկ տեսնելու և հավանելու: Այս դեպքն է ահա՛ պատմվում խաղի առաջին մասում: Հարսը, վոր դժդոհ է և ղարիբ տղայի հետ ամուսնանալու համար, իրեն տեսնելն ու հավանելը արտահայտում է պատկերավոր ձևով՝ ասելով, թե «վոտս ընկավ ոձի լեղի», և ապա դառնում ու փափուկ կերպով անիծում է իր հորն ու մորը, վոր իրեն տվել են ղարիբ տղայի:

www.naregatsi.org

2) Խաղի սկսվածքի մի ուրիշ ձևը լինում է բաղդատությամբ: Բնության յերևույթների ընդարձակ շրջանից վերցրած վորևե պատկեր է նկարագրվում առաջին մասում և այդ պատկերին համեմատվում է յերկրորդ մասի մեջ արտահայտված հոգեկան կյանքի յերևույթը կամ նմանությամբ կամ հակադրությամբ: Ասել չի պետք, վոր այս ձևով յերգի առաջին մասը մի նախապատրաստություն է բուն նյութին ավելի պարզ ու պայծառ հասկանալու և ղեկավարելու համար: Սակայն պետք է դիտել, վոր ժողովրդական յերգիչն իր այս բաղդատություններում գործ չի ածում բաղդատական բառեր՝ այնպես — ինչպես: Նա սակավ անգամ միայն պես, նման, բան (ց) բառերը դնում է, այն էլ ավելի յերբ բաղդատությունը վերաբերում է յերգի յերկու զուգահեռական մասերի մեջ է, այլ միևնույն մասի մեջ: Որինակ.

Լավ ձին նա՞յն ինչ կ'անե,
Սիրունը խա՞յն ինչ կ'աճե.
Սիրածը սրտով լինի,
Ադաբահի մա՞յն ինչ կ'անե:

Ուրագը փեսին կըտաշե,
Սերդ իմ սիրտը կըմաշե,—
Բարակ սրտով ինձի աշե:

Այս որինակների մեջ նմանությունը շատ պարզ է: Ինչպես վոր լավ ձին առանց նալի էլ լավ է. ինչպես վոր սիրունն առանց խալի էլ սիրուն է, նրան պետք չէ խալը, այնպես և սիրողին պետք չէ աշխարհի մալը, բավական է, վոր սիրածը սրտով լինի: Ինչպես վոր ուրագը տաշում է փայտը, այնպես և քո սերը տաշում մաշում է ինձ: Բայց կան խաղեր, վորոնց յերկու մասի բաղդատական հարաբերությունը դժվար հասկանալի յե սեղմ ու հակիրճ և ղեկչված արտահայտության պատճառով: Որինակ.

Ա՛յ հևա, հևա՛, սի՛րաս,
Ձնճղկան թև ա սիրաս.

Քան պուտը կարմիր չկա,—
Բաց անեմ՝ սև ա սիրաս:

Այստեղ յերկու բաղդատություն կա. յերկրորդ տողի մեջ յերգիչն իր բարակած սիրտը նմանեցնում է ճնճղուկի թևի. թեպետ և բարակած բառը և բաղդատական բառեր չկան, բայց այս բաղդատությունը հասկանալի յե: Ավելի դժվար հասկանալի յե յերկրորդ բաղդատությունը, վոր յերել է յերրորդ և չորրորդ տողերի մեջ: Յերգիչն այս տողերը կազմել է մի ժողովրդական առածից. «Քանց պուտը (կարմիր լալա) կարմիր չկա, վոր բաց անես՝ սև է սիրտը», վոր ասվում է այն մարդկանց համար, վորոնք արտաքուստ ուրախ են յերևում, բայց ներքուստ ցավը կրծում է նրանց սիրտը: Այդ առածի առաջին մասն յերգիչն անփոփոխ է թողել յերրորդ տողի մեջ, իսկ յերկրորդ մասը չորրորդ տողի մեջ չուռ է տվել իր սրտի վրա, վորով և մի բաղդատություն է դրել իր սրտի ու պուտի մեջ: Մի դրագետ բանաստեղծ այս նմանությունն այսպիսի մի ձևով կարտահայտեր կրկնություն անելով. «Ինչպես վոր քան պուտը կարմիր չկա

www.naregatsi.org

դրսից, բայց վոր բաց անես՝ ներսը սև է, այնպես էլ ինձ պես դրսից ուրախ չերևացող չկա, բայց վոր սիրտս բաց անեմ, սև է»:

Վերցնենք մի ուրիշ որինակ:

Կաքավն ա կայնել քարին,
Կատուցը լիքըն արին,—
Մի դաստա վարդ եմ քաղել,
Տարեք իմ թազա յարին:

Այս խաղի չերկրորդ մասից լսանում ենք, վոր մի աղջիկ նոր յար, նշանած ունի, վորին մի փունջ վարդ ուղարկել է ցանկանում: Բայց թե ինչ սրտով է ուղարկում ծաղիկը, այս բացատրվում է բնությունից վերցրած սկսվածքով, վորի մեջ աղջիկն իրեն նմանեցնում է մի վիրավոր կաքավի, վորը, սակայն, արդեն վոտքի չե կանգնած քարի վրա: Ինչպես վոր վիրավոր կաքավը բարձրանում է ու քարի վրա կանգնում, թեպետ և կատուցը դեռ արյունով լի, այնպես էլ և այն աղջիկը, վորին հին յարը թողել է. նրա սիրտը դեռ արյունալի չե, բայց նա իր ընկած դրությունից, իր անպատվությունից չելնում է, քանի վոր նոր յար ունի արդեն, վորին և մի փունջ ծաղիկ է ուղարկում:

3) Մի չերրորդ տեսակի ավելի բարդ, բայց և ավելի դեղեցիկ կազակցություն էլ է լինում խաղի չերկու մասերի մեջ. այն է՝ չերկրի առաջին մասը, բնությամբ սկսվածքը վերցվում է չերկրորդ մասի համար մի ժամանակ թե իրև շրջապատի նկարագիր և թե իրև բաղդատություն: Չերկրի առաջին մասի մեջ նկարագրված բնությունը մի լուկ անտարբեր շրջանակ չե, վորի մեջ կատարվում է հոդևկան կյանքը: Այլ բնությունն, արտաքին աշխարհը վերցվում է այնպիսի հատկություններով, վորոնք չերգչի տրամադրության կամ զգացմունքների հետ մի վորոշ հարաբերության մեջ են մտնում, վորով իրեն մի բաղդատության նախապատրաստություն և լինում խաղի չերկրորդ մասն ավելի զորեղ զգալու համար: Վերցնենք որինակ հետևյալ չերկատողը.

Գարուն ա, ձյուն ա արել,
Իմ յարն ինձնից ա սառել:

Այստեղ չատ պարզ և բնության չերևույթի հարաբերությունը հոգեկան վիճակի հետ: Առաջին տողը տալիս և մեզ բնության մի խիստ ժխնդակ պատկեր: Գարուն է. ուրեմն ծառերը տերևել ու ծաղկել են, դաշտերը կանաչել, ոդը տաք է և այլն. բայց հանկարծ այս կենսաբեր զարնան ժամանակ ձյուն է դալիս,— մի չերևույթ, վոր հազվադեպ չե Հայաստանում: Կենդանություն և մեռելություն: Չերգիչը դիտում է բնության այս հանկարծական խաղը: Արտաքին չերևույթը նրա մեջ առաջացնում է վորոշ տրամադրություն, և նա գտնում է իր ներքին աշխարհին: Այստեղ էլ նա նույն և նման չերևույթն է տեսնում: Նրա սրտում էս դարուն եր, սիրո գարունը. բայց հանկարծ յարը սառել է նրանից, և այժմ նրա սրտին էս ձյուն է չեկել, ճիշտ ինչպես գարնան կանաչազարդ հովիտների վրա:—

www.naregatsi.org

Այս յերկատողի բնությամբ սկսվածքն, ուրեմն, իր մեջ բովանդակում է շրջապատի նկարագիրը, վոր և միանգամայն ծառայում է իբրև քաղդատություն հոգեկան յերևույթի համար:

Վերցնենք մի ուրիշ որինակ: Ինչ վոր գրագետ բանաստեղծը կասեր միայն՝ քո սիրո արևն ընկավ իմ սրտին, կամ քո սերն իբրև արև ընկավ իմ սրտին և լուսավորեց կամ վառեց այն, ժողովրդական յերգիչն իր ձևով ասում է.

Արևն ընկավ ամուր բերդին,
Քո սերն ընկավ մեջ իմ լերդին.
Ցես քեզ սիրեմ, թող գիս քերթին:

Առաջին տողի մեջ, ուրեմն, յերգիչն աչքը չուրչն ածելով դիտում է իրեն շրջապատող տեսարանը, վորը պատկերացնելու համար վերցնում է միայն մի եյական գիծ, թե ծագող արևն ընկնում է ամուր (վարիանտ՝ խամուր) բերդին: Տեսարանի մնացած մասն արդեն աչքը լրացնում է, խակ մենք կարող ենք յերևակայությամբ ամբողջացնել, հիշելով ծագող արևի թողած ազդեցությունը բնության վրա: Բայց առաջին տողը միայն լոկ շրջապատի նկարագիր չե. դա միաժամանակ և մի նմանություն է հոգեկան կյանքի համար: Ինչպես վոր ծագող արևն ընկնում է ամուր բերդին և վառում, լուսավորում է և այլն, այնպես և քո սերն ընկել է իմ լերդի մեջ և ինձ վառում է և այլն:

Ջաղացս մանի, մանի,
Քունս անուշ կըտանի.
Իմ յարը սարում, քոլում,
Իմ քունը վո՞նց կըտանի:

Ահա՛ մի կին, վորի մարդը տանը չե, և ինքը դիշեր ժամանակ ջրաղացում է աղունի համար: Ջրաղացի քարը միատեսակ պտտում է աղմուկով, և կնոջ քունն անուշ տանում է և պետք է տանի. նա որորվում է: Մենք սպասում ենք, վոր նա պիտի անուշ ննջի: Բայց նա հանկարծ հիշում է, վոր իր մարդը սարում, քոլում է, այսինքն տնից հեռու նեղության մեջ է. սկսում է մտածել և յարի հոգն անել: Քունը վախչում է աչքերից, և նա չի քնում, չնայած ջրաղացի միատեսակ որորին: Յերկի առաջին մասն ուրեմն թե՛ շրջապատի նկարագիր է և թե՛ միաժամանակ հակադրություն բաղդատության համար:

Այժմ յերևակայենք մի յերիտասարդ, վոր չոլին պատահում է ծաբավից, բայց և նրա սիրտը միաժամանակ այրվում է սիրո տապից. նրա յարը յետ է դարձել իր տված խոսքից: Յերիտասարդն այսպիսի մարմնական և հոգեկան վիճակով՝ հանդիպում է լեռան գլխից իջնող պաղ ջրին, կռանում, խմում է. բայց պաղ ջուրը յերե կոտրում է նրա ծարավը, չի հովացնում նրա վառվող սիրտը: Նրա մտքով անցնում է իսկոյն ֆիզիկան ծարավի և սիրո ծարավի մեջ մի սիրուն բաղդատություն, և ահա յերգը պատրաստ է շրջապատի նկարագրով առաջին յերկու տողի մեջ.

www.naregatsi.org

Պաղ ջուր պրծել կուգա սարեն,
Կուգա, թափի մարմար քարեն,

Չի հովցուցե սրտիս յարեն,—
Ցարն ա դարձել իր իշղարեն։

Այսքանս բավական եմ համարում խաղերի հորինվածքը բացատրելու համար։ Խաղերի տողերի մեջ վոչինչ անիմաստ և անկապ չկա. այլ ընդհակառակն խաղի յերկու մասը մի շատ սերտ և ներքին կապով միացած են իրար։ Ցավ յեթե մենք չենք հասկանում կապակցությունը, կրկնում եմ, կամ այն պատճառով է, վոր ծանոթ չենք ժողովրդական կյանքին, կամ շատ սեղմ ու հակիրճ և արտահայտության յեղանակը։ Բնագետների համար ասում են, թե կենդանու մեկ յերկու վոսկոր միայն ձեռի տակ ունենալով կարողանում են լրացնել կենդանու կմախքը և պատկերացնել կենդանին ամբողջապես։ Ճիշտ այդպիսի բնագետի նման և մտածում և ժողովուրդը. նա մի յերկու դծով պատկերացնում է ամբողջը։ Մանրամասնությունները նրա համար ավելորդ են։ Ավերբորդ են և այնպիսի բառերն ու խոսքերը, վոր առանց ասած լինելու էլ կարելի յե իմանալ։

Մենք էլ յեթե կարողացանք ժողովրդի պես մտածել, կըհասկանանք ամենայն խաղ, յեթե միայն խաղն աղճատված չե։ Աղճատված յերգը վոչ ինքը ժողովուրդը և վոչ մենք կարող ենք հասկանալ։

Խաղերի այս ներքին կազմությունը, հորինվածքը տեսնելուց հետո՝ այժմ անցնենք նրանց արտաքին արվեստին, վոտանավորին։

8. ՎՈՏԱՆԱՎՈՐԸ

Ժողովրդական խաղիկների հիմնական ձևն է տողերի թվի նկատմամբ՝ յերկատող, յեռատող և քառատող. իսկ նայելով վանկերի թվին և հատածին տողերի մեջ և հանգերի դասավարության, խաղն ունի բավական բազմազանություն։ Ներքևում կըթվենք դլխավոր տեսակները։

5-վանկանի տողեր

Հինգ վանկից պակաս վանկեր ունեցող տողեր ֆիչ գործածական են բուն խաղերի մեջ։ Յերեք կամ չորս վանկանի տողեր պատահում են ավելի կրկնակների մեջ. իսկ բուն յերգի սովորական ամենակարճ տողն է 5-վանկանին, վոր հատածով չի բաժանվում մասերի, ինչպես և դրական բանաստեղծության մեջ։ Ամբողջ տողը մի բարդ վոտք է։

Հինգ-վանկանի յերկյակներ, այսինքն յերկատող խաղեր՝ չկան, այլ միայն յեռյակներ և քառյակներ, այսինքն յերեք կամ չորս տողից կազմված խաղեր։

Յեռյակները սովորաբար ունին մի 4 կամ 5-վանկանի կրկնակ, վորի հետ միասին մի քառյակ են կազմում։ Բուն յերգի յերեք տողերը նույնահանգ են, իսկ վերջին կրկնակն անհատ է մնում։ Որինակ.

www.naregatsi.org

Ա՛յ բալա Հեղնար,
Շատ կերար, դեղնար,
Ինձանից լեղվար,—
Գյուղ Հեղնար չան:

Այ բալա Մադիա,
Խրխատ ե հադիդ,
Կարոտ եմ պադիդ,—
Գյուղ Մադիա չան:

Քառյակները հանդերի նկատմամբ ավելի բազմազան են: Սովորական ձևով 1–ին, 2–րդ և 4–րդ տողերը նույնահանդ են, իսկ 3–րդ տողն անհանդ է մնում: Որինակ.

Թոնդիրը հով ա,
Վրեն լե բով ա,
Տասներկու չան ենք,
Մի չոր լե կով ա:

Սարերը սարսուռ,
Ձորերը մամուռ,
Սալդաթաներոջ
Սիրտըն է մրմուռ:

Ցերբեմն յերկրորդ տողն առաջինի թեթև փոփոխությունն է՝ իմաստի զուգահեռական կրկնությամբ, վորով նույն բառն 1–ին և 2–րդ տողերի վերջում կրկնվում է: Որինակ.

Ես յանը որոց,
Են յանը որոց,
Աղբոս մնռնեմ,
Բերում ա քորոց:

Ես յանը պոպոք,
Են յանը պոպոք,
Ջաղջուն կ'առնեմ,
Հաղինն ա սապոգ:

Այս չափով ասվում են սովորաբար թեթև յերգիծաբանական խաղերը, վորոնց առաջին մասը հաճախ կապ չունի յերկրորդ մասի հետ, և կամ նույնիսկ բառախաղ է կազմում: Ծաղրն առաջանում է վոչ միայն յերկրորդ մասի հանկարծական, անակնկալ իմաստից, այլև առաջին մասի անկապությունից ու բառախաղից: Որինակ.

Ես յանը ուլիկ,
Են յանը ուլիկ,

Սապոգի հետը
Ցես կ'ուզեմ չուլիկ:

Սակավ անգամ քառյակի չորս տողն էլ նույնահանդ են լինում, ինչպես հետևյալ 4–վանկանի քառյակի մեջ:

Ախուչովան,
Ցաղլի յավան,

Մանչերն եկան,
Կնիկդ տարան:

Ավելի սովորական են մեջ ընդ մեջ հանդեր կազմելը, այսինքն 1–ին և 3–րդ տողերն անհանդ են մնում, իսկ 2–րդ և 4–րդ տողերը նույնահանդ են: Որինակ.

Ախու մ'եմ ցանե,
Սաղա նարդիդ ի,
Իմ յարոջ մնռնեմ,
Աղիդ մադիդ ի:

Ջեռները խաչեր,
Կայնել ա դուռը,
Ցերևսը կարմիր,
Նման ա նուռը:

Այսպիսի մեջ ընդ մեջ հանդերով քառյակները, յերեք տողերն յերկերկու միանալով առանձին խոսքեր են կազմում, բնականաբար վերածվում են

www.naregatsi.org

10–վանկանի յերկյակաների, *վորոնց մի տողը կազմված է յերկու քարդ վոտքից: Որինակ.*

Աղբոր բլուզը ըստե չի կարվի,
Աղբոր նմանը ըսկի չի ճարվի:

Պոպոքի ծառը յելավ ծիծեռը,
Հեղնարը բռնե Աբսենի ֆեռը:

6 և 5–վանկանի տողեր

Միայն վեց–վանկանի տողերից կազմված խաղեր մեզ հայտնի չեն, բայց կան քառյակները, վորոնց առաջին և յերրորդ տողերը վեց–վանկանի յեն, իսկ յերկրորդ և չորրորդ տողերը հինգ–վանկանի յեն: Հինգ–վանկանի տողերը նույնահանգ են, իսկ վեց–վանկանի տողերն անհանգ են մնում: Որինակ.

Ցես սարեն կուդայի,
Դուն դուռը բացիր,
Ձեզ ծոցդ տարար,
Ախ արիր լացիր:

Ցերկինքըն ամպեր եր,
Ի՞նչ անուշ թոն եր.
Եկա դռնեն անցա,
Ջանանըս հոն եր:

Այսպիսի կարճ քառյակների յերկու տողը, քանի վոր հանգը մեջ ընդ մեջ է, միանալով կազմում են 11–վանկանի յեկյակներ, վորոնց մի տողը կազմված է յերկու մասից, 6–րդ վանկի վրա ունենալով հատած: Որինակ.

Կա՛նչե, կռունկ, կանչե՛, քանի գարուն ե.
Ղարիբներու սիրտը դունդ դունդ արյուն ե:

7–վանկանի տողեր

Ամբողջ յոթ վանկը կազմում է մի տող և մի ռիթմական միություն, առանց պարզ վոտքերի, իսկապես ասած՝ առանց կանոնավոր միակերպ պարզ վոտքերի, վորովհետև տողը բնականաբեն վերածվում է յերկու–յերեք վոտքի: Ցերը Քառյակի չորս տողերի մեջ նույն թվով շեշտեր կան, այն ժամանակ վոտանավորը համաշեշտ է): *

Ցերկու նույնահանգ տողը միասին կազմում են մի յեկյակ, վոր առանձնափոքրն է մեր խաղերի մեջ: Այսպիսի կարճ խաղերը, սակայն, շատ տարածված չեն և սովում են միայն պարելու ժամանակ: Որինակ՝ Ազգագրական Հանդես Ի—Ը գիրք (1901 թ.) յեր. 439 բերված են մի շարք այսպիսի յերկյակներ.

Սար, սար, սարերու գյուլն եմ.
Լևոն–Սամսոնի քուրն եմ:

Աբև նոր ա ծադկեր ա,
Ցարս ծաղիկ գրկեր ա: Ցեվ այլն:

Գնա, գնա, հեռիդ եմ,
կարմիր խնձոր դռտիդ եմ:

*) Տե՛ս Ա. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն», Ցերևան, 1933, եջ 227, հատ. «Համաշեշտ վոտանավորներ»:

www.naregatsi.org

Սակավ անգամ յերկյակին անհանդ է մնում. այսպիսի մեկը գտնում ենք, որինակ, Հովսեփյանի «Փչրանքներ» (ՓՇ.), յեր. 14.

Իմ մեր ինձի վո՞նց պահեց,—
Մալուկ դյուլբանդի նման:

Այսպիսի անհանդ յերկյակները, սակայն, հավաստյավ կարելի յե ասել, վոր հիմնական չեն, այլ մի վորևե քառյակի վերջին յերկու տողերը, վոր սկսել են անկախ ասվել, բայց իրենց ինքնուրույն կերպարանքը չեն ստացել: Վերևի յերկյակն, որինակ, մաս է կազմում հետևյալ քառյակի.

Ամպել ա ամպի նման,
Շաքար եմ զանդի նման.
Իմ մերն ինձ վո՞նց ա պահել,—
Մալած դյուլբանդի նման:

Ծոթ-վանկանի յեռյակները թվով սակավ են: Դրանց յերեք տողն էլ նույնահանդ են: Որինակ.

Գացի արտերը, բոնի լոը,
Աղջիկ տեսա յայլի ձոր,
Նման եր կարմիր խնձոր:

Քար մի՛ թալի մեր ղլին,
Թող դա նստի քու թշին,
Կրակ տու ղարիբ փշին:

Արև դիպավ սարերուն,
Կաքավ թռավ քարերուն,
Լորիկ կայնե վեր դարուն:

Լոր փախավ, մտավ ձեր արտ,
Դու մի՛ եղնի ծանր դարդ.
Արտեր քաղե՛ ու դի՛ր բարդ:

Ծոթ-վանկանի բառյակներն ամենից շատ սիրված և տարածված են, մանավանդ արևելյան հայերի մեջ: Այս խաղերի առաջին, յերկրորդ և չորրորդ տողերը նույնահանդ են, իսկ յերրորդ տողն անհանդ է մնում: Ըստ բովանդակության առաջին յերկու տողերը, շատ քիչ բացառությամբ, առանձին առանձին խոսքեր են, իսկ վերջին յերկու տողերը հաճախ մի խոսք են կազմում. 3-րդ տողի անհանդ մնալը շուտ և տալիս վոտանավորի ընդհատությունը, ինչպես վոր բովանդակությունն էլ հենց պահանջում է: Որինակ.

Մարիկ արեք են ղլին,
Վոտը դրել ա փշին.
Գյուխս մատաղ կանեմ
Թուխ աչք ու կարմիր թշին:

Սարի Քրթնջուկ Թաղա,
Մեղր ու շաքար քեզ մաղա.
Ինձպես նազանի աղջիկ
Քեզ պես տղին վո՞նց սազա:

Մեր խաղերի մեծագույն մասն այսպիսի կազմություն ունեցող քառյակներ են:

Սակավաթիվ 7-վանկանի քառյակներ կան, վորոնց չորս տողն էլ նույնահանդ են կամ հաջորդաբար զուգահանդ են, այսինքն 1-ին և 2-րդ տողերն իրար հետ են հանդ կազմում, իսկ 3-րդ և 4-րդ տողերն իրար հետ. կամ թե տողերը մեջ ընդ մեջ զուգահանդ են, այսինքն առաջին և յերրորդ տողերը մի հանդ ունին, իսկ յերկրորդ և չորրորդ տողը մի ուրիշ հանդ:

www.naregatsi.org

Այսպիսի հանդերձով քառյակները, սակայն, հիմնական չեն, այլ յերկյակներից կազմված քառյակները, վորոնց կազմութեան մասին հետո կըխոսենք:

8–վանկանի տողեր

Տողը կազմված է ութ վանկից և սովորաբար յերկու բարդ վոտք ունի: Յեթե քառյակի տողերի մեջ նույնաթիվ չեշտեր կան, վոտանավորը համաշեշտ է:

Յերկու նույնահանդ տողերը կազմում են մի վոտքրիկ խաղ, մի յերկյակ, վոր ավելի սիրված եր արևմտյան հայերի մեջ: Այսպիսի կարճ յերկյակներն էլ սովորաբար ասվում են պարելու ժամանակ: Որինակ՝ Սրվանձտյանի Համով–Հոտով եր. 305 բերված են մի շարք այսպիսի յերկյակներ, վորոնց հետ, սակայն, վերջը կցված են ուրիշ յերզեր:

Մոկաց սարեր, պետ պետ քարեր,
Դեռ չեր լուսցեր, արևն առեր:

Բարակ մանած, յերկեն խինած,
Մանեմ մանեմ, կտրավ մանած:

Ցես քե մեռնեմ ապտալի ծուռ.
Բաս ա կան դաս չիվար ու ծուռ:

8–վանկանի յեռյակները, վորոնց յերեք տողերն էլ նույնահանդ են, ավելի դործածական են, քան 7–վանկանի յեռյակները: Որինակ.

Արևն ելավ կամար կամար,
Ջուլոն կապեց ոսկե քամար,
Ցես կըմեռնեմ քեզի համար:

Ջուրը կ'երթաս ջուխտ դորակով,
Սիրտս կ'երես բոց կրակով,
Քեզի փախցում ալ քուռակով:

Դու դաշտ կուգաս հուլա հուլա,
Կունմանիս բամկի քուլա.
Աչքս տեսավ, սիրտս կուլա:

Հարավ քամին կըշնդշնդա,
Սազ քամանին կըճնդճնդա,
Ցես քու սիրուդ հիվանդ ընկա:

Դու կայներ էս աղբրան ական,
Փելքդ կըտա արեգական,
Կարմիր երեսք արյուն–կաթան:

Տան քով անցա, Թախ քելեցի,
Լանկով զարկի, զերդիկ բացի.
Ցարս տուն չեր, նստա լացի:

Ավելի սիրված են, մանավանդ արևմտյան խաղերի մեջ, 8–վանկանի ֆառյակները: Հանդերձի նկատմամբ այս քառյակների կամ բոլոր տողերն էլ նույնահանդ են, վոր սովորականն է, կամ թե հաջորդաբար զուդահանդ: Որինակ.

Մեր տուն, ձեր տուն մոտիկ մոտիկ,
Դու կապել ես կարմիր դոտիկ.
Երթանք, քաղենք կանաչ խոտիկ,
Տեսնենք՝ վի՞ր յարն է խորոտիկ:

Յերկու ամառ, իրեք ձմեռ,
Հերիք անես ձի կիսամեռ,
Գիշեր ցերեկ քո կարոտով,
Որ չեմ տեսնե ցամաք աչքով:

Կան նաև սակավաթիվ քառյակներ, վորոնց յերրորդ տողն անհանդ է մնում, ինչպես սովորական 7–վանկանի քառյակի մեջ:

www.naregatsi.org

Գարուն եկավ, ամառ գնաց,
Աչքս մնաց ճամբըներաց.
Աստվածամոր խնդիր ունիմ,
Դուռ մի բանա կարիքներաց:

Կես գիշերին և հավխոտաց,
Մերի՛կ, ո՞ւր է կորիճ իմ ծաց,
Թիքլ-միքլ մատաչ մանուկ
Ջինա ցրվի իմ սրտի խոց:

7 և 8-վանկանի տողեր

Սակավաթիվ խաղերի մեջ 7 և 8-վանկանի տողերի խառնուրդ է լինում, այսինքն առաջին տողը 7-վանկանի, իսկ յերկրորդը 8-վանկանի: Այս խառն չափով կազմվում են նույնահանդ յերկչափներ և կամ 3-րդ տողն անհանդ քառյակներ: Որինակ.

Թալիչու ճամբեն դուզ ա,
Անտոն կայնել Աչխեն կուզա.

«Ինձ պես տղեն քեզի հետ,
Աստված վկա, լավ կըսազա»:

7 և 8-վանկանի տողերի դեղեցիկ խառնուրդ լինում է «անտունի» չափի մեջ, վոր մեր ամենից ներդաշնակ ու յերաժշտական վոտանավորն է կազմում: Այս չափը միանգամայն և մեր ամենահին ժողովրդական չափն է: Գրիգոր Նարեկացուց իմանում ենք, վոր 10-րդ դարում արդեն այս չափը սովորական է յեղել նրանց համար, «որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւն»: Այժմ ևս այս չափով հորինված յերգերը մեծ մասամբ վողբ են և վերաբերում են պանդխտության: Ամենա կողմերում այս չափով հորինված պանդխտության յերգերը կոչվել են «անտունի» յերգեր, այսինքն անտուն, տուն չունեցող, պանդուխտ մարդոց յերգեր: Նույն անունով կոչում ենք և չափը: Սիրո յերգեր ևս կան հորինված այս չափով: Միջնադարյան յերգիչներին մանավանդ շատ սիրելի յե յեղել այս չափը, վոր ձեռագիրների մեջ կոչվում է «հայրենի», ավելի ճիշտ՝ «հայերենի»:

Անտունի չափը մեր միակ հին չեչտական չափն է, վորի վոտքերը պարզ են, այսինքն մի չեչտված և մի կամ յերկու անչեչտ վանկից են կազմվում, մինչ մյուս չափերի մեջ վոտքերը բարդ են: Անտունի չափի ամեն տող ունի յերեք չեչտ և յերեք վոտք, հետևյալ հիմնական դասավորությամբ առաջին և յերկրորդ տողերի մեջ.

ս՛ սս՛ ս՛
սս՛ ս՛ սս՛

Բերենք մի քանի որինակ ժողովրդական քառյակներից:

Ծոցիկդ առավոտ նման,
Առտվան չաղիկն է վրան,
Շաղվո՛ր, յետ ու յետ գնա,
Վոր ցաքե արևն ի վրան:

Ջինակ մ՛որ ջրեն զատես,
Ջուր մին ալ ձգես նե՝ չապրիր.
Մարիկն որ տղեն զատես,
Ճար չկա՝ պիտի մեռանի:

www.naregatsi.org

Հանդն ոյս չափի մեջ ազատ է. պատահաբար հանդեր կազմում են այս կամ այն տողերը, բայց սովորաբար անհանդ է վոտանաչորը: Հին հայրենները հանդավոր են*):

Այս չափով հորինված քառյակները կարող են վերածվել և յերկյակների, վորոնց տողն այն ժամանակ կազմված է լինում 15 վանկից, յոթներորդ վանկի վրա հատածով.

Ադ ո՞վ ադ երկիկդ եկեր, / ադ ոտար հողը կու կոխե.
Թե մարդ է նե՝ վար եկո՛ւ, / Քե չուշան ծաղիկ գնալու:

Անտունի չափով յերգերը չեն առնված այս ժողովածուի մեջ: Դրանք պահված են առանձին հատորի համար, վորի մեջ պիտի առնվեն հին գուսանական հայրենները:

9–վանկանի տողեր

Ինն–վանկանի խաղեր չկան: Բայց կան 9–վանկանի տողեր, վորոնք դործ են ածվում իբրև կրկնակներ, յերբեմն մի յոթ–վանկանի տողերի հետ: 9–վանկանի տողը կամ յերեք հավասար վոտք ունի, կամ յերկու վոտք՝ 5 և 4–վանկանի:

Հավ արեք, սարեր ջան, հով արեք,
Այ պուճուր աղջիկ, գալդովն արի:

Իսկ յերեք քառյակի մեջ ևս պատահում է, վոր առաջին մի կամ յերկու տողն 9–վանկանի չեն, այլ առաջանում է դլխավորապես նրանից, վոր կրկնակի յեղանակը մխանում է բուն խաղի յեղանակին և տալիս է մի ավելի բարդ յեղանակ, վորով յերդվում է բուն խաղը: Այս պատճառով քառյակի այն տողերն ևս, վոր ինն–վանկանի կրկնակի յեղանակով են յերդվում, վերածվում են ինն վանկի: Այսպես կազմված է, որինակ, հետևյալ քառյակը.

Հով արեք, սարեր ջան, հով արեք,
Իմ դարդին դարման արեք.—

Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:

*) Մանրամասնությունները տեսնել՝ Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն», յեր. 267 հետ. «Հայրենի կարդ»: Այլև Մ. Աբեղյան «Հին գուսանական ժողովրդական յերգեր», Ցևրևան, 1931. յեր. 30 հետ. «Հայրենի առանձնահատուկ ոլթմը»: Նույնպես և Մ. Աբեղյանի ժողովրդական խաղեր ուսմածք արտատպություն «Բաբաո» ամսագրից, Վաղարշապատ 1905. յեր. 27. հետ: Այս վերջին աշխատանքը, վոր պատրաստված եր իբրև ներածություն ժողովրդական խաղերի ժողովածուի համար, ոգտագործվում է այժմ այստեղ այս ներածության մեջ:

www.naregatsi.org

10–վանկանի տողեր

Ինչպես տեսանք, մեջ ընդ մեջ հանգերով 5–վանկանի քառյակները կարող են իրրև 10–վանկանի յերկյակներ ևս առնվել, վորոնց մի տողն ունի յերկու վոտք, միջին ունենալով հատած: Այսպիսի 10–վանկանի տողերով կազմված խաղերը բավական տարածված են յեղել մանավանդ արևմտյան հայերի մեջ: Ցերկյակները և յեռյակները, վորոնք նույնահանդ են, ռակավաթիվ են.

Ելեր ես իդին, խաղող կըքաղես,
Նորա չորս բոլոր կանաֆիլ չարես:

Մտեր ես իդին, խաղող կըքաղես,
Շամամ ծծերով չաքար կըմաղես,
Ալմաստ խանչալով պիմ սիրտ կըդաղես:

Ցես նման դինի, դու անուշ քյասա,
Դու լի՛ց, դու խմի՛, քո դարդ ձիկ ասա:

Բոստան եմ դրե վ՛երեվ են դարին,
Աստված չեն պահի ես տարվան տարին,
Շամամ մի չելավ ուղարկեմ յարին:

Ավելի սիրված են այն քառյակները, վորոնց չորս տողն ևս նույնահանդ են, կամ հաջորդաբար զուգահանդ.

Ցերկինքն եր ամպե, կու դար
մարմար ձյուն,
Դու դար, կըթափեր վեր մալուլ
մարդուն.
Մեկ յե՞ս եմ մալուլ, թե՞ աչխարհ
բիթուն:
Իմ յարոջ սիրուն մնամ երերուն:

Ծաղիկ եմ ցանե չորս բոլորն ե վարդ,
Վարդի հոտն անուշ կըցրվի իմ դարդ.
Փնջիկ մի քաղեմ, ուղարկեմ յարիս,
Կարոտս չմնար վեր ասովորիս:

Ցերեկեն յերրորդ տողն անհանդ է մնում.

Երեկ ե վիթե նման վարդի քոլ,
Թե հուդես արծաթ, կուտամ վոսկի բոլ.

Քո սերն իմ սիրտ կապենք, կապկապենք,
Անցնենք սար ու ձոր, երթանք Ստամբոլ:

11–վանկանի տողեր

11–վանկանի յերկյակները, տեսանք, կազմվում են 6 և 5–վանկանի քառյակներից, վորոնց հանգերը մեջ ընդ մեջ են, տողը յերկու բարդ վոտք ե, 6–րդ վանկի վրա հատածով: Այսպիսի յերկու յերկյակները միասին կազմում են քառյակներ, վորոնց տողերը հաջորդաբար զուգահանդ են.

Ելեր եմ, կ՛երթամ կը, վի՞վ դիտե հալս,
Մե մ՛ա Աստված դիտե դառնալս ու դալըս.
Մարի՛կ, ձեռքըդ պագնեմ, յա՛ր, մնաս բարով.
Աբդահիլ կամոքըդ պագըմ տուր սիրով:

11–վանկանի տողերն ունին և ուրիշ չափ. ամեն տող ունի յերեք բարդ վոտք, տողը բաժաններով հատածներով չորրորդ և ութերորդ վանկերի վրա: Որինակ.

www.naregatsi.org

Վարդն է բացվե Վանա քաղքի եդեսատը.
Աստված սիրես, մեկն ուղարկի ձիկը տար.
Քա՛ նազլրով, քա՛ խորտիկ, դու վի՞րն ես.
Աչխարհ դիտի, ալամ դիտի՝ դու իմն ես:

12–վանկանի տողեր

Այսպիսի տողեր գործածական չեն մեր խաղերի մեջ: Բայց պատահում է, որ 8–վանկանի տողերի մեջ մի 4–վանկանի բարդ վոտք է ավելանում, վորով տողը 12–վանկանի յե դառնում՝ բաժանված յերեք 4–վանկանի վոտքերի: Այսպիսի տողեր կրկնակների մեջ ևս պատահում են: Որինակ՝ այդպիսի ավելի վոտք ունի հետևյալ քառյակի վերջին տողը:

Քեզի մեռնիմ, խաթուն կեսուր,
Քո ծուռ լաճուն խրատ մը տուր,
Զերթա պառկի դոմչի մսուր,
Շեկ ծամերուս, չիմալ, բոյիս, ի՞նչ կա ղսուր:

12–վանկանի տողերից ավելի յերկար տողեր, 13, 14, 15 և 16–վանկանի, գործածական չեն մեր խաղերի մեջ: Բերած որինակներից կարելի յե տեսնել, որ դյուղական յերգիչները իրենց խաղերի մեջ ճիշտ նույն չափն են գործածում, ինչ վոր մեր դրագետները գործ են ածել և գործ են ածում: Յերկսի տարբերություն շատ չկա: Խաղերի մեջ վոչ գործածական չափերը սերված են և դրական բանաստեղծության մեջ, ինչպես են 9–վանկանի և անխառն 6–վանկանի և 13–վանկանի տողերը:

Ժողովրդական յերգերի չափի տեսակները վերևում դրված մի այն չեն սպառվում, վորովհետև միայն 2—4 տողերից կազմված փոքր խաղերն են վերցված այստեղ և վոչ բոլոր ժողովրդական յերգերը: Բայց այդքանն էլ միայն արդեն ցույց է տալիս, որ հայկան տարբերություն չկա մեր ժողովրդական և դրական բանաստեղծության չափերի մեջ:

Հանգերի նկատմամբ մեր ժողովրդական յերգը շատ ավելի զարգացած է, քան դրականը: Խաղերի մեջ կան այն թույլ ու անպետք հանգերը, որ հանգի տեղ անց կացնել են ուզում մեր բանաստեղծները: Ժողովրդական խաղերի հանգերը զորեղ են ու հնչուն և տողերի վերջում զուգահանդ շարվելով և որ գլխավորն է՝ արագ հաջորդելով իրար, փաղաքշում են ականջը և բանաստեղծության համար մի զարդ կազմում և վոչ թե ավելորդ բեռ, որ միայն հանդաչեններին նեղություն է տալիս՝ առանց գլխարձության պատճառելու ընթերցողին, ինչպես են մեր բանաստեղծների հանգերը մեծ մասամբ:

Ձեռի տակ ունենալով հազարավոր քառյակներ իրենց բազմազան վարիանտներով, տեսնում ենք, որ մեր դյուղական յերգիչների լեզուն աղքատ է հանգերով. սահմանափակ թվով են նույնահանդ բառերը: Հենց այս

www.naregatsi.org

պատճառով այդ յերդիչները շատ անգամ հանդի համար միայն դիմում են իրենց ծանոթ թուրքերենին, մինչ տողերի մեջ ոտար բառերը համեմատաբար պակաս են գործածվում և հաճախ այդպիսիները վարիանտների մեջ փոխանակվում են հայերեն, և յերբեմն շատ ընտիր, բառերով:

Ջորեղ հանդեր կազմելու համար բացի թուրքերենին դիմելուց՝ ժողովրդական յերդը բանեցնում է և մի միջոց, վոր հատուկ է նաև աշուղական յերգերին, այն է՝ իսկական հանդ կազմող բառի յեւելից տողերի վերջում կրկնվում է նույն բառը: Այսպիսի հանդերը կարելի յե կոչել «քողավոր հանդեր», մինչ սովորական կամ պարզ հանդերը մերկ հանդեր են: Որինակ՝ հետևյալ առաջին քառյակը մերկ հանդեր ունի, իսկ յերկրորդը՝ քողավոր հանդեր.

Ապուր եմ եփել աղի,
Ուտողի սիրտը դողի.
Ցես ու դու իրար սիրենք,
Թող դուշմանը կատաղի:

Ցես աղջիկ եմ, հեր չունիմ,
Մի սրտացավ տեր չունիմ.
Հորից-մորից զրկված՝
Աչխատող ազգեր չունիմ:

Հաճախ մերկ ու քողավոր հանդերի միություն և առաջ գալիս տողերի մեջ. այսինքն յերկու տող միասին քողավոր հանդ են կազմում, իսկ յերրորդ տողը մերկ հանդ և կազմում առաջին տողերի վերջում կրկնված բառին կամ քողին: Որինակ.

Լուսնակը սարի տակին,
Մամուռը ֆարի տակին,
Ցես իմ յարին կարոտ եմ
Ջան վարդ ու մանուշակին:

Հե՛յ, սարեն մարդ ա գալի,
Սարը կրակ ա տալի.
Առաջս աղլուխ բացավ,—
Իմացա վարդ ա տալի:

Ես դիշեր յես դուրս եկա,
Թաթախ ձնիկ թացել ա,
Կրկաթեր մարմար քարին,—
Ցարիս աչքն ա՝ լացել ա:

Ղարիբ եմ, կարս գնացի,
Ղարիբ տեղ հարս գնացի.
Պատկուց յես որ չտեսա,
Անկեսուր հարս մնացի:

Հանդերի քողավորությունը հատուկ է ավելի 7-վանկանի քառյակներին:

9. ԱՂՃԱՏՈՒՄ ՅԵՎ ՎԱՐԻԱՆՏՆԵՐ

Ժողովրդական խաղը բերնե բերան և սերնդե սերունդ անցնելով՝ փոփոխության է յենթարկվում: Այս փոփոխությունը միշտ հոգուստ յերգի չի լինում, այլ հաճախ ի վնաս:

Արդարև կարող է պատահել, վոր սկզբնապես թույլ բանաստեղծությունը հետզհետե ավելի գեղեցկանա. բայց դժվար է յենթադրել, վոր սկզբնապես անիմաստ և բոլորովին անշնորհք լինի մի վոտանավոր և մնա

www.naregatsi.org

ժողովրդի հիշողության մեջ և հետզհետե խմաստալից ու գեղեցիկ դառնա: Խաղը մնում է միայն այն ժամանակ, երբ դյուր է դալիս: Իսկ անիմաստ բանը դյուր չի դալիս. և յեթե դյուր էլ դա, նրա չրջանն ընդարձակ չէ, և վոչ էլ կյանքն է յերկարատև: Յեթե այժմ դտնում ենք բազմաթիվ անմիտ և անհեթեթ խաղեր, վորոնք տարածված են շատ կողմերում, դրանց մեծագույն մասն անհրաժեշտորեն հետագայում միայն աղճատված են: Աղճատված ձևով խաղը մնում է միայն նրա համար, վոր սկզբնապես գեղեցիկ ձև է ունեցել: Հին գեղեցկի ավերվությունը շարունակում է դոյ-ծել և այն ժամանակ, յերբ այլևս չկա գեղեցկությունը: Այս ինչպես անհատի, նույնպես և ժողովրդի հոգեբանության մեջ է:

Խաղն ուրեմն ժամանակի ընթացքում հետզհետե ավելի կորցնում է իր պարզ ու բնական կազմությունը, քան գեղեցկանում: Դա խանգարվում կամ աղճատվում է: Ցեվ աղճատ յերգը շարունակում է ապրել ժողովրդի բերանին, ճիշտ ինչպես աղավաղված ապրում են դեռ մեր պառավական աղոթքները, ավելի կապքի կամ հմայական աղոթքները, վորոնք սկզբնապես խմաստալից հորինվածներ են ունեցել, յերբ կենդանի յե յեղել այն հեթանոսական հավատալիքը, վորի արդյունքն են իրենք:

Ժողովրդական խաղի աղճատումը խիստ բազմազան կերպով կարող է առաջ դալ: Բավական է, վոր մի կամ յերկու բառ փոխվում են, մի բայի ժամանակ՝ ներկան անցյալ է դառնում, կամ անցյալը՝ ներկա՝ և այլն, և յերգի կազմությունն արդեն խանգարվում է, կամ իմաստը կերպարանափոխվում է:

Խաղն առանձնապես կազմալուծվում է, յերբ յերկու զուգահեռական մասերի հարաբերությունը կամ մթնանում է, կամ վոչնչանում: Առաջին դեպքում խաղը կորցնում է իր սկզբնական բնավորությունը. իսկ յերկրորդ դեպքում բնությամբ սկսվածքը, իր նշանակությունը կորցնելով, դառնում է մի դատարկ ձև: Վերցնենք որինակ, հետևյալ զողտրիկ քառյակը, վորի բովանդակությունը բացատրվեց վերևում, և տեսնենք նրա կրած փոփոխությունները:

1· Պաղ ջուր պրծել, կուզա սարեն, — Չի հովցուցե սրտիս յարեն,—
Կուզա, թափի մարմար քարեն, — Ցարն ա դարձել իր իրղարեն:

Այս քառյակի բազմաթիվ վարիանտներից մեկն է և հետևյալը.

2· Ջուրը պրծել, կուզա սարեն, — Չի սաղցուցեր սրտիս յարեն,—
Կուզա, թափի մարմար քարեն. — Ցարն ա դարձել իր իրղարեն:

Այս յերկու վարիանտի տարբերությունը շատ չնչին է, բայց և այնպես յերկրորդի մեջ արդեն մթնած է, իսկապես չկա առաջինի բնությամբ սկըզբնածքի պարզ ու պայծառ բաղդատությունը: Առաջինի մեջ ջուրը պաղ է և մեր մեջ ծնեցնում է մի նախապատրաստական տրամադրություն. սպասում ենք, վոր պաղ ջուրը հովացնի խմոդի սիրտը. բայց սրտի վերքն այնքան

www.naregatsi.org

բորբոք է, վոր չի հովացնում: Ցերկրորդի մեջ պաղ բառը դուրս է ընկել և մնացել սոսկ ջուր. իսկ հովացնել բառի տեղ անցել է սաղացնել, առողջացնել բառը: Բնությամբ սկսվածքն այս ձևով թեպետ և դեռ կապված է խաղի յերկրորդ մասի հետ, բայց այլևս վոչ մի տրամադրություն առաջ չի բերում, և մենք չենք էլ սպասում, վոր ջուրը թժչկի, առողջացնի սրտի վերքը: Այս տրամադրությունն առաջ կըղար, յեթե ջուրը լիներ սրտի վերքի բնական սպեղանին, ինչպես վոր պաղ ջուրը սիրտ հովացնելու միջոցըն է:

Վերցնենք ուրիշ յերկու վարիանտ.

3. Ջուրը պրծել, կուգա սարեն,
Կուգա, թափի մարմար քարեն.
Իրար մի՛ տա սրտիս յարեն,—
Ցարն ա դարձել իր իլդարեն:

4. Ջուր մի փրթե, կուգա սարեն,
Կուգա, թափի մարմար քարեն,
Ձեռ մե՛ք խաս սրտիս յարեն,
Ցարն ի դարձե յուր կրարեն:

Այս յերկուսը 2-րդ վարիանտի իրար նման ձևափոխություններ են: 4-րդի մեջ «Ջուր մի փրթել» փոփոխությունն առանձին նշանակություն չունի. բայց յերկու վարիանտի մեջ էլ 3-րդ տողի «իրար մի տա», «ձեռ մե՛ք խաս» ձևերը փոխանակ «չի սաղցուցեր» բառերի, բոլորովին կերպարանափոխ են անում խաղը: 3-րդ տողն արդարև լրմաստալից կերպով կապված է 4-րդ տողի հետ, բայց յերգի առաջին դուդահեռական մասը, բնությամբ սկսվածքը, իր համար մի անկապ բան է մնացած, մի դատարկ ձև դարձած:

Ամենից հաճախ փոփոխության է յենթարկվում քառյակի 3-րդ տողը, մանավանդ 7-վանկանի քառյակի, վորովհետև սրա 3-րդ տողը, սովորաբար անհանգ լինելով, հատատուն կերպարանք չունի. ուստի և շուտով մոռացվելով կամ դուրս է ընկնում, վորով քառյակը դառնում է յեռյակ, կա՛մ թե տեղը մի նոր խոսք է մտնում: Սակայն քառյակի 3-րդ տողը խաղի էական մասն է, և հատկապես այն մասը, վոր վոչ միայն ներքին կյանքն է բերում, այլև ներքինը, այսինքն խաղի յերկրորդ մասը, կապում է առաջին մասին, բնությամբ սկսվածքին: Ցերբ դուրս է ընկնում 3-րդ տողը, բնությամբ սկսվածքն անկապ է մնում. իսկ յեթե յերրորդ տողին մի նոր խոսք է փոխանակում, բնությամբ սկսվածքը կամ դարձյալ անկապ է մնում, յեթե նոր խոսքը չի հարմարվում խաղի առաջին մասի լրմաստին, կամ թե՝ յեթե հարմարվում է, կազմվում է խաղի մի նոր լրմաստալից վարիանտ: Որինակ՝ վերոհիշյալ խաղի համար ձեռքի տակ ունենք հետևյալ յեռյակը.

5. Ջուրն ա պրծել, կուգա սարեն,
Կու ղղկա մարմար քարեն.
Ցարն ա դարձել իր իղրարեն:

www.naregatsi.org

Այստեղ 2–րդ տողի մեջ «կու դլդլա» մի բանաստեղծական դեղեցիկ փոփոխություն է մյուս վարիանտների «կու դա, թափի» ձևին. բայց վորովհետև 3–րդ տողը դուրս է ընկել, խաղը դարձել է մի անմտություն, բնությամբ ակսվածքը մի դատարկ ձև:

Պատահում է յերբեմն, վոր քառյակի 3–րդ տողը մոռացվում է, տեղն անցնում է 4–րդ տողը. իսկ սրա փոխանակ մտնում է մի նոր 4–րդ տող և կազմում է մի խմաստալից կամ անխմաստ վարիանտ: Որինակ՝ ունենք հետևյալը.

6. Ջուրն ա պրծել կուզա սարեն,
Ցարն ա դարձել իր խրաբեն,—
Կուզեր թափեր ժամտան քարեն.
Վրեն եկնի, ա'խ, գեչ յարեն:

Այստեղ 3–րդ և 4–րդ տողերն իմաստով հարմարվում են իրարու, բայց խաղի առաջին մասը մի դատարկ ձև է մնացել: Ասել չի ուղիլ, վոր քառյակի մյուս տողերն էլ կարող են մոռացվելով՝ դուրս ընկնել, կամ տեղը նորերն անցնել: Որինակ՝ տակի 7–րդ վարիանտի մեջ սույն խաղի 2–րդ տողը մոռացվել է և տեղը դատարկ մնացել. մոռացվել է և 4–րդ տողը, վորի փոխանակ, սակայն, մտել է մի նոր տող, վորով կազմվել է մի կատարյալ անմիտ յեռյակ, վոր է՝

7. Պաղ ջուր պրծել, կուզա սարեն,
Դեռ չի սաղցել սրտիդ յարեն,
Ցես ինչ անեմ գիմ քոռ սիքաբեն:

Խաղի ամենից հաստատուն մասն է միշտ հանդն ու հանդ կազմող բառը, մեկ՝ այն պատճառով, վոր յերգի վոտանավորին քնավորություն տվողը հանդն է, վոր բաժանում է տողը տողից և կազմում տաղաչափական վոտքը. մեկ էլ՝ անշուշտ այն պատճառով, վոր հանդերը մեր լեզվի մեջ շատ բազմազան չեն, ուստի և մի անգամ արդեն կազմված հանդն իր յեռեվից հեշտությամբ բերում է իր պատրաստի ընկերը, մինչ նույն հանդով նոր բառ գտնելը դժվար է: Սակայն հանդերն էլ, ինչպես և հանդ կազմող բառերը, փոխվում են, թեպետ սակավադեպ: Հանդի և հանդ կազմող բառի փոփոխությունը հաճախ առաջ է բերում ամբողջ տողի փոփոխություն: Վերջին տողի այսպիսի փոփոխությամբ խաղի յերկրորդ մասի իմաստը հաճախ այնպես կերպարանափոխվում է, վոր խաղի առաջին մասն յերկրորդի հետ կամ անկապ է մնում, կամ թե կազմվում են նոր իմաստներով վարիանտներ, որինակ.

8. (Պաղ) ջուր կըղեր վերին սարեն,
Զեռվգուցեր սրտիս յարեն,—
Կուզեր, կաթեր մարմար քարեն.
Երված մնաց քո կարտաեն:

Այս վարիանտի մեջ թեպետ և չկա «պաղ» ածականը (վոր հավանորեն պետք է լինի, վորովհետև տողի մեջ մի վանկ պակասում է), բայց և այնպես յերգի յերկու մասերը սերտ կապված են իրար: Արդարև 4–րդ տողը

www.naregatsi.org

փոխված է, բայց կազմված է մի նոր իմաստալից յերգ, տարբեր 1–ին վարիանտից: Մինչ սրա մեջ յարի ուխտադրժությունից և սրտի վերքն անդուռանալի մնում, 8–րդ վարիանտի մեջ՝ կարոտից: «Այրված մնաց» առաւելությունը հաջող ընտրություն է և «չէ հովցուցել»–ի դիմաց: Այս 8–րդ վարիանտի միակ պակասությունն այն է, վոր «կարոտեն» բառը, վոր վոխանակած է «իլդարեն» բառին, թուլ հանգ է կազմում:

Պատահում է, վոր միևնույն հանգով կազմված կան տարբեր խաղեր: Խաղի առաջին մասի համար վերցվում է մի յերգի սկզբի մասը, վորին հաջորդում է մի ուրիշ յերգի նույնահանգ վերջը կամ սկիզբը և կազմվում է մի նոր վարիանտ իմաստալից կամ անիմաստ: Բայց այս ավելի խաղերի դարգացմանն է վերաբերում, վորի մասին հետո:

Պատահում է նույնպես, վոր խաղի տողերի դասավորությունը չուռ է գալիս. առաջին տողից հետո յերգվում է վերջինը, իսկ յերկրորդը գնում վերջն ընկնում և այլն: Եվ այսպես բազմազան կերպով միևնույն քառյակը յերբեմն այնքան շատ փոփոխությունների յե յենթարկվում, վոր իրոք միևնույն յերգի վարիանտները հաճախ քիչ նմանություն են ունենում միմյանց հետ, և սկզբնական յերգից շատ քիչ բան, միայն մի յերկու տող և մնում: Կազմվում են խիստ աղավաղված, յերբեմն և անհեթեթություններով լի յերգեր, վորոնցով, հարկավ, կարելի չե դաղափար կազմել ժողովրդական խաղերի մասին:

Խաղերի փոփոխության պատճառներից մեկն էլ հետևյալն է: Յերբեմն սկզբնապես մի չափով հորինված յերգը յեղանակի պատճառով չուռ և դալիս մի ուրիշ չափի: Այս դեպքում ամբողջ խաղը բնականաբար փոփոխության և յենթարկվում: Որինակ՝ մեր բերած 8–վանկանի խաղի 2–րդ վարիանտը 7–վանկանի խաղի յե վերածված հետևյալ ձևով.

9. Ջուրը կ'իջներ են սարեն, Ջի սաղցել սրտիս յարեն,
Երթար, թափեր են քարեն. Վոր դարձար քո իրդարեն:

Այս վարիանտի մեջ, ինչպես ընթերցողը կըտեսնի, բանաստեղծական դեղեցկությունը բոլորովին կորած է:

Վերևում դրված 6–րդ վարիանտի մի նույնպիսի ձևափոխություն և հետևյալը.

10. Ջուր եկավ վերին սարեն, Ով դառնա իր իրդարեն,
Թափում ա մարմար քարեն. Վրեն թափի դոթու յարեն:

6–րդ վարիանտի մեջ, ինչպես ընթերցողը կըտեսնի, իրդությունն արդեն կատարված է, և յերիչն անիծում է ուխտադրուժ յարին: Իսկ այստեղ հավատարմության յերդում և տրվում անեծքով, ինչպես սովորական է ժողովրդի մեջ: «Թափում ա» և «թափի» բառերը թուլ կապ են դնում խաղի յերկու դուդահեռական մասերի մեջ:

Այս վերջին 10–րդ վարիանտի մի փոփոխված ձևն է և հետևյալը.

www.naregatsi.org

11· Ջուր պրծեր, կուգա սարեն,
Դա, թափի մարմար քարեն·
Վոր դառնա իր դրաբեն
Հանա դոթեցուկ յարեն:

Խաղի փոփոխություն առաջ և գալիս և մի բարբառից մյուսին անցնելիս: Շիրակում կամ Ալբարատում հորինված յերգը, որինակ, Ղարաբաղ անցնելիս, կամ ընդհակառակը, վոչ միայն հարմարվում և տեղական բարբառի հնչյունաբանությանն ու ձևաբանությանը, այլև բառերն էլ թարգմանվում են: Այս պատճառով յերբեմն և վոտանավորն ամբողջ կերպարանափոխ և լինում: Մյուս կողմից՝ այն բառերը, վոր վատ են լսվում, կամ մի բարբառի մեջ՝ չթարգմանվելով՝ անհասկանալի յեն մնում, յերբեմն այնպես խեղաթյուրվում են, վոր անմտություններ են միայն առաջ բերում· որինակ՝ «Այ հեվա, հեվա, սիրոս» տողը դառնում է՝ «Այ Ցեվա, Ցեվա, սիրոս» կամ «Այ ո՞վ ա, ո՞վ ա սիրոս»: «Կեռ ունքեր» դառնում է «կեռ ընքեր», «կեռ ընքներ» և վերջը «կռնկեր», «կռնկներ» և այլն, վոր անհեթեթություն է:

Ասել չի ուզիլ, վոր կան խաղեր, վորոնք հենց նոր կազմված ժամանակ էլ անմիտ բաներ են յեղել: Անշնորհք յերգիչներն աղճատված խաղերի նմանողությամբ, կամ պատահատի յերգերից լոկ հանգեր փոխ առնելով՝ սարքում են տողեր՝ միայն, ինչպես ասում են, հանգը հանգին բերելով՝ առանց մտքին ուշադրություն դարձնելու:

Սակայն անիմաստ խաղերի մեծ մասը, ինչպես վերևում դրեցի, այսպիսի անհանճար մարդկանց մտքի ծնունդ չեն: Դրանք հետագայում միայն աղավաղված են: Ուստի և, ինչպես վարիանտների բաղդատությամբ վերականգնում են ձեռագրերների բնագիրը, վոր աղճատված և խառնված յ անշնորհք դրչակների ձեռքով, նույնպես կարելի յե և խաղերի վարիանտներն իրար բաղդատելով վերականգնել դրանց իմաստալից ձևը կամ «բնագիրը», յեթե կարելի յե խաղերի համար «բնագիր» բառը գործածել:

Անշուշտ, խաղերի «սկզբնական բնագիրը» հանել դժվար է, վորովհետև բաղդատությունից յերբեմն ստացվում են յերկու և ավելի իմաստալից վարիանտներ· իսկ առանց արտաքին միջոցների դժվար է ասել, թե վորն է վորից առաջացել: Բացի այդ՝ թե ստացած իմաստալից ձևը սկզբնականն է թե չէ, այդ հնարավոր չէ ասել: Համենայն դեպս բաղդատությունը մեզ մի հետևանքի յե տանում· անմիտ յերգերն ընդհանրապես իմաստալից են դառնում, և ստացվում են մեծ մասամբ փոքրիկ, սիրուն յերգեր մի քանի վարիանտներով:

Խաղերի վարիանտները բաղդատելը չատ ավելի ծանր ու տաղտկալի գործ է, քան ձեռագրներինը: Բայց բաղդատելուց հետո յերգերի բնագիրը վերականգնելն ավելի հեշտ է, քան ձեռագրներինը· դի յերգերի համար կան արտաքին տաղաչափական միջոցներ, վոր են վոտքը, հանգը և վոտանավորի ընդհանուր կազմությունը: Յեթե նույն խաղի մի վարիանտի

www.naregatsi.org

մեջ, որինակ, մի վորևե տող պահանջած հանգը չունի, կամ մի վոտքի մեջ մի վանկ ավելի կամ պակաս է, իսկ մի ուրիշ վարիանտի մեջ հանգն ու վոտքն անթերի չեն, հասկանալի չե, վոր առաջին վարիանտն աղավաղված է: Մյուս կողմից՝ վոտանավորի ընդհանուր կազմուվածքն մեզ ցույց է տալիս, վոր, որինակ, 7-վանկանի քառյակների մեջ տողերի կրկնություն չի լինում: Եթե ուրեմն նույն քառյակի մի վարիանտի մեջ գտնում ենք, վոր, որինակ, առաջին տողը նույնությամբ կրկնված է յերրորդ կամ չորրորդ տողի մեջ, իսկ մի ուրիշ վարիանտի մեջ այսպիսի կրկնություն չկա, շատ պարզ է, ուրեմն, վոր առաջին վարիանտն աղճատված է. յերգիչը մոռացել է յերրորդ կամ չորրորդ տողը և անճարությունից կրկնել է առաջին տողը: Նրանից սովորողներն էլ, անշուշտ, նույն ձևով կրկնելով են առում:

Բացի այս արտաքին միջոցներից, ասել չի ուզիլ, «բնագիրը» վերականգնելու համար մեծ տեղ է բռնում և ներքինը, այսինքն յերգերի իմաստը: Բերենք մի քանի որինակներ՝ ցույց տալու համար, թե ինչպես կարելի է մի քանի վարիանտների մեջ ընտրություն անել:

Իմ և Կոմիտաս վարդապետի հրատարակած «Հազար ու մի խաղ» ժողովրդական յերգարանի մեջ մեր խմբագրած մի յերգի համար իբրև առաջին տուն վերցրած ենք հետևյալ քառյակը.

1. Գութանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Տես, քեզ վորքան եմ սիրում,
Զուկը տապկած եմ բերում:

Դրա մի փոփոխակն և հետևյալը*).

2. Հոյ նարե գութանը հաց կտանիմ,
Հոյ նարե, բերանը բաց կտանիմ,
Հոյ նարե, գութանը հաց կտանիմ,
Հոյ նարե, տապկած ծածուկ կտանիմ:

Այս քառյակի համար մեր ժողովածուի մեջ ունենք և հետևյալ վարիանտները.

3. Գութանը հաց եմ տարել,
Բերանը բաց եմ տարել.
Ինձաս հաց եմ տարել,—
Զկնով տապկած եմ տարել:

5. Գութանը հաց եմ տարել,
Բերանը բաց եմ տարել.
Տե՛ս, քեզ ի՛նչքան եմ սիրել,
Զկնով տապկած եմ տարել:

4. Գութանը հաց եմ տանում,
Բերանը բաց եմ տանում.
Տե՛ս, քեզ վո՛րքան եմ սիրում,
Զուկը տապկած եմ տանում:

6. Գութանը հաց եմ բերել,
Բերանը բաց եմ բերել.
Տղա, քեզ ինչքան սիրի,
Զուկը տապկած եմ բերել:

*) «Մուրճ» ամսագիր, 1903 թ. № 11 յեր. 201. տես և Մ. Սրվեղյանի «Ժողովրդական խաղեր». ուսվածք, Վաղարշապատ, 1905 թ. յեր. 44. հմն.:

www.naregatsi.org

7· Գութանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում·
Շան աղա, չատ մի՛ խոսա,
Մուկը տապկած եմ բերում:

8· Գութանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում·
Շան աղջի, չատ մի՛ խաչա,
Մուկը տապկած եմ բերում:

Ահա ութ վարիանտ միևնույն յերգի:

Թե 2–րդ վարիանտն աղճատված է՝ չատ պարզ է· յերգիչը մոռացել է 3–րդ տողը և տեղը կրկնել է 1–ին տողը: Բացի այդ՝ աղավաղված է և 4–րդ տողը, քանի որ յերգիչն այնքան անշնորհք է յեղել, որ չի կարողացել հանգ կազմել· «հաց կտանիմ, բաց կտանիմ» հանգերի դիմաց դրել է «ծածուկ կտանիմ»:

Աղավաղված է և 3–րդ վարիանտի 3–րդ տողը· բայց այստեղ յերգիչն այնքան անշնորհք չի դտնվել, որ առաջին տողն անփոփոխ կրկնի· նա յերգի խմաստը ըմբռնել է և իր «ձկնով տապկածի» արժեքը մեծացնելու համար՝ շուռ է տվել, չինել· «դինաս (= դիտես) հա՞ց եմ տարել»: կազմվել է մի վարիանտ, որի մեջ տափակ սրախոսություն է լինում: Բայց թե այս տողն աղճատված է, պարզ յերևում է և նրանից, որ մի վանկ պակասում է:

Մյուսներից 1–ին, 4–րդ, 5–րդ և 6–րդ վարիանտներն ըստ եյության նույն յերգն են: Ինչնենք սրանց տարբերությունները:

1· «Տանել» և «բերել» բայերից վո՞րն ավելի հարմար է խմաստին և դրությանը: «Տանել» ցույց է տալիս մի գործողություն, որ չի ուղղված յերկրորդ դեմքին, այլ՝նքն այն անձին, որին մի բան ասում ենք: Ճերբ մեկին մի բան տանում ենք, նրան ուղղած խոսքի մեջ հայերեն կասենք թե քեզ բերում եմ այս բանը, և վոչ՝ տանում: «Տանել» բայը յերկրորդ դեմքի համար միայն այն ժամանակ կարելի յե ասել, յերբ յերկրորդ դեմքն այնտեղ չէ, ուր տանում են· որինակ՝ «քեզ համար այս բանը կտանեմ այս ինչ տեղը»: Արդ, դութանավորին հաց տանող աղջիկը, յերբ մոտենում է դութանավորին, իր անպատրաստից յերգն ուղղելով դութանավորներից մեկին, իր յարին· «Տես, քեզ վորքան եմ սիրում, վոր ձուկը տապկած եմ բերում» և վոչ թե «Տես, քեզ վորքան եմ սիրում, վոր ձուկը տապկած եմ տանում»: Այս վերջին ձևը անխմաստ չէ, բայց այդ ձևով միայն այն ժամանակ կարելի յե ասել, յերբ աղջիկը յերգում է տանը, ճանապարհ ընկնելիս, և իր յարը, վորին ուղղում է խոսքը· տանը՝ իր մոտին է, և վոչ դաշտում, դութանի վրա· և այդ յարը աղջկա հետ կամ նրա յետևից պիտի դնա դաշտը՝ նրա տարած հացն այնտեղ ուտելու: Բայց իրականության մեջ այդպիսի բան չի լինում, ինչպես և այն, որ աղջիկը տղային հիշեցնի անցյալում կատարած այդպիսի գործողություն:*

Հասկանալի յե, ուրեմն, վոր 2–րդ, 3–րդ, 4–րդ և 5–րդ վարիանտներից, վորոնց մեջ «տանել» բայն է, ավելի ընտիր են 1–ին և 6–րդ վարիանտները, վորոնց մեջ «բերել» բայն է:

www.naregatsi.org

2· «Բերում եմ» և «բերել եմ» ձևերից ո՞րն է ընտրելին:— Խաղն առեղծվում է բոլոր ազգերի ազգագրության տակ անպատրաստից: Գումանը հաց տանող աղջիկն այս կերպն ասել է, անշուշտ, այն վայրկյանին, երբ նա հաց տանելիս հեռվում տեսել է դումանավորներին, որոնց մեջ և իր սիրածին, և կերդով խմացնում է վերջինիս իր բերածը: Այս ի նկատի ունենալով՝ ներկա պատմվածքը «բերում եմ», որ կա 1–ին վարիանտի մեջ, ավելի կենդանի է· ինչ որ աղջիկն անում և ղղում է, նույնն անմիջապես նույն վայրկյանին արտահայտում և կերդով: Մինչ 6–րդ վարիանտը «բերել եմ՝» ձևով, թեպետ դարձյալ իմաստալից է, բայց կենդանությունից զրկված է: Աղջիկն այստեղ անցյալով է ապրում և, կարծես, տղային հիշեցնելով իր արածը՝ նրա կերեսովն է ղարնում: Բացի այս, 3–րդ տողն էս՝ «Տղա, քեզ ինչքան սիրի» (= սիրեցի), իր ձևով թույլ և հարմարվում մյուս տողերի պատմվածքին:

3· Բառական տարբերություններից առնենք «Ձուկը տապկած եմ բերում», «Ձկնով տապկած եմ բերել», և «Տապկած ծածուկ կտանիմ» ձևերը: Սրանցից կերկրորդը՝ «Ձկնով տապկած» իրրև կերակուր մեզ հայտնի չէ· կա յուղով տապկած, կա և տապկած ձուկ, բայց ձկնո՞վ տապկած... Թերևս, ձկնով հանդերձ տապկած, այսինքն թե ձուկն և թե տապկած, կերկու բան է տանում աղջիկը: Բայց կենթադրենք, որ «ձկնով տապկած» կերակուր կա, և կամ ձուկն ու տապկած պետք է հասկանալ· գառնանք քերականությանը: «Ձկնով տապկած եմ բերում» ձևով լոկ պատմվում է, թե ինչ է բերվում: Նույնպիսի լոկ պատմվածք կլիներ, կթե առաջին վարիանտի մեջ ևս լիներ սովորական շարադասությամբ՝ «Տապկած ձուկն եմ բերում»: Բայց «Ձուկը տապկած եմ բերում» ասվածքի մեջ շրջում կա· և այս շրջումը հատկապես չեշտում է՝ տապկած բերելը և վոչ թե խաշած: Ժողովրդի մեջ, հայտնի է, տապկած ձուկն ավելի հարգի և սիրելի է, քան խաշածը: Սրդ, «Ձուկը տապկած եմ բերում» շրջումն այս իմաստով ավելի զորեղացնում է նախորդ խոսքի իմաստը, թե «Տես, քեզ վորքան եմ սիրում, վոր ձուկը տապկած եմ բերում» և վոչ թե խաշած: Այս նկատմամբ էս, ուրեմն, ընտրելի է 1–ին վարիանտը:

Գանք «Տապկած ծածուկ կտանիմ» ձևին: Այստեղ պարզապես իմաստի անհեթեթություն կա: Այս վարիանտի առաջին կերեք տողի մեջ հայտնված է միայն, թե «գումանը հաց (= ընդհանուր իմաստով իրրև ուտելիք) կտանիմ» և թե «բերանը (= ամանի բերանը, վորի մեջ ուտելիքն է) բաց կտանիմ» և էլ ուրիշ վոչինչ: Եթե հանկարծ այսքանը միայն ասելուց հետո դալիս է չորրորդ տողը, թե «տապկած ծածուկ կտանիմ»: Էլ ի՞նչպես է տապկածը ծածուկ տանում, քանի վոր բերանը բաց է տանում: Չլինի՞ աղջիկը հացը, ցամաք հացը, իր իսկական իմաստով, դրել է ամանի մեջ և բերանը բաց է տանում, իսկ «տապկածը ծածուկ», կերևի, ծոցին է տանում· ցամաք հացը մյուս գումանավորներին, իսկ ծածուկ

www.naregatsi.org

տապկածը՝ իր սիրականին: Բայց լոկ հացը ամանի մեջ դրած չեն տա-նում դուքանավորին, վոր ամանի բերանը բաց տանեն, և վերջապես յեր-կի մեջ վոչ մի բան չկա, վոր այդպես հասկանանք: Շատ պարզ է, վոր այս անմտությունն առաջացած է նրանից, վոր յերգն աղճատված է: Իսկ աղճատումը յերևում է նրանից, վոր ինչպես տեսանք, չորրորդ տողը հանգ չի կազմում. «հաց կտանիմ», «բաց կտանիմ» հանգերի դիմաց ընկած է՝ «ծածուկ կտանիմ», փոխանակ «տապկած կտանիմ» ձևի, վոր կա մյուս վա-րիանտների մեջ: Մինչև անգամ կարելի յե ասել, թե վորտեղից է առաջ յեկել «ծածուկ կտանիմ» ձևը. «ձուկը տապկած կտանիմ» ձևը դարձել է նաև «տապկած ձուկ կտանիմ», և ապա պակաս վանկը լրացնելու համար թերևս «տապկածը ձուկ» ձևից անցնելով՝ դարձել է «տապկած ծածուկ»: Այս փոփոխությունը նույն կարգին է պատկանում, վորով, ինչպես տե-սանք, «կեռ ունքեր», «կեռ ընքներ» դառնում են «կոբնկներ»:

Այս աղճատման վրա ավելացնենք և այն, վոր 3-րդ տողը մոռացվել է և տեղը կրկնվել է առաջին տողը, և մենք տեսնում ենք, վոր այդ վա-րիանտի մեջ ներքին հոդակապ կողմն ամբողջ պակասում է: Սիրահարի սրտի քնքուշ զգացմունքն արտահայտող յերգը դարձել է մի տափակ, այն էլ անհեթեթ նկարագիր դուքանը հաց տանելու, վորի մեջ նույնիսկ վո-տանավորի արվեստը չի պահված:

Գանք մնացած յերկու՝ 7-րդ և 8-րդ վարիանտներին:

Ութերորդ վարիանտը պարզապես աղճատված է. յերգն ուղղված է հաց տանողի կողմից մի դուքանավոր աղջկա, մինչ կյանքի մեջ հակա-ռակն է լինում: Այս աղավաղումը առաջ է յեկել 7-րդ վարիանտի 3-րդ տո-ղից՝ «Շան տղա, չատ մի՛ խոսա»: Հաճախ խաղերի մեջ «չան աղջիկ» և «չան տղա» դարձվածները փոխանակում են իրարու: Սկզբնապես աղջկա կողմից ասածը տղան յերգելով՝ հարկ է համարել «չան տղա, չատ մի՛ խոսա» խոսքը դարձնել «չան աղջիկ, չատ մի՛ հաչա», չհասկանալով վոր դրանով մի անմտություն է անում:

Բայց ի՞նչ է 7-րդ վարիանտը: Արդյոք դա՞ ևս մի անմտություն է:— Ամենևին վո՛չ: Ծերևակայեցեք հետևյալը,— աղջիկը հաց է տանում դու-քանավորին. յերգում են հոտոտվելը. և հոտաղներից մեկը, ինչպես սո-վորաբար լինում է, անմիջական տպավորության տակ սկսում է յերգել հաց բերող աղջկա մասին և նրա բերած հացի գովքն է անում, թեկուզ մի այսպիսի ձևով.

Դուքանը հաց ես բերում,
Ինձ վո՛րքան ես սիրում,
Բերանը բաց ես բերում.
Ձուկը տապկած ես բերում:

Բայց աղջիկը պարտական չի մնում. նա սրամտությամբ դարձնում է հետաղին.

Դուքանը հաց եմ բերում,
Շան տղա, չատ մի՛ խոսա,—
Բերանը բաց եմ բերում.
Ձուկը տապկած եմ բերում:

www.naregatsi.org

Այստեղ այս կապակցության մեջ այս վարիանտն իմաստալից է. դա դրեթե և դեղեցիկ ծաղրական յերգ է, դեղեցիկ, ի հարկե, ժողովրդի գունհվական ճաշակով, վորով կերակրի ծաղրի համար մուկը սովորական բան է: Մկան դիպած, մինատ բանը սիղծ է. ո՞ւր մնաց տապկած մուկը: Նույն ճաշակով կազմված է, որինակ, և մի ծաղրական յերգի հետևյալ տունը.

Տո՛ դեչ հնիկ, քո հեր հորեմ.
Մածուն կ'ուղեմ, թան կըբերես.
Թիղ մի բորբոս՝ մուկն ի յերես,
Եվ ի՞նչ սրտով են ուտեմ յես:

Ի՞նչ յեղավ այս բաղդատության հետևանքը: Միևնույն խաղի ութ վարիանտներից 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ վարիանտներն ավելի կամ պակաս չափով աղճատված են, մեկն անմտության ատիճանի, մյուսը՝ վոչ: Ամենից կենդանի և դեղեցիկն է 1-ին վարիանտը: Բայց դրա հետ ունենք և 7-րդ՝ ծաղրական վարիանտը: Թե մեկը մյուսի նմանության է և կազմված՝ պարզ է: Կարծում ենք՝ 7-րդն 1-ինի նմանողությունն է:

Վերցնենք մի ուրիշ խաղ.

1. Կաքավն ա կայնել քարին,
Կատուցը լիքըն արին.
Մի դաստա վարդ եմ քաղել,
Տարեք իմ թազա յարին:

Այս յերգի համար, վոր վերևում վերլուծեցինք, ունինք ճեռի տակ 16 վարիանտ.

2. Կաքավը կայնել քարին,
Կատուցը լիքն եր արին.
Ցես մի փունջ վարդ եմ քաղել,
Տարեք իմ սիրած յարին:

4. Կաքավ կանգնել ա քարին,
Կատուցը կարմիր արին,
Մի դաստա վարդ եմ քաղել,
Ղրկեմ սիրական յարին:

3. Կաքավը կայնել քարին,
Կատուցն ա կարմիր արին.
Մի դաստա վարդ եմ քաղել,
Տարեք իմ անուշ յարին:

Այս յերեք վարիանտներն իսկապես առաջինի ձևափոխություններն են: Յերեքի մեջ էլ առաջին յերեք տողերը նույնն են, չհաշված մանր տարբերությունները, վորոնք էական չեն իմաստի համար:

Այստես աննշան չէ, սակայն, վերջին տողի մեջ «յար» բառի ածականի փոփոխությունը: Արդեն վերևում բացատրեցինք, թե ինչպես նշանը յետ դարձրած աղջիկն՝ իբրև մի վիրավոր կաքավ՝ մի փունջ վարդ և ուղարկում իր նոր յարին: Արդ, մի անգամ վոր «թազա» բառը փոխանակվում և «սիրած, անուշ, սիրական» բառերով, յերգի բովանդակությունն ամբողջ կերպարանափոխ և լինում:

Ի՞նչպես պիտի հասկանալ այս վարիանտներն: Արդյոք դրանք առա-

www.naregatsi.org

չին վարիանտի աղավաղումնե՞րն են և խաղի առաջին մասը, վիրավոր կաքավի պատկերը, և յերկրորդ մասը, սիրական կամ սիրած, անուշ յարին մի փունջ վարդ ուղարկելը, անկա՞պ են մնում, թե՞ դրանք միևնույն յերդի իմաստալից վարիանտներն են:

Կարծում ենք՝ անկապ, ուստի և անիմաստ համարել կարելի չե: Միայն յերդն այստեղ ստանում է բոլորովին տարբեր բնավորություն և բովանդակություն: Սիրած ու անուշ յարին մի փունջ վարդ ուղարկող աղջիկը իրեն վիրավոր կաքավի կընմանեցնի միայն այն ժամանակ, յերբ նա, ըստ մեր հին բարքերի, հակառակ իր ծնողների կամքին և անում այդ. յերբ ծնողները նրան ամեն որ նախատում, թքում, մրում են: Քիչ չեր պատահում մեր հին դեղերում, որ կոպիտ ծնողներն այդպիսի սիրու համար իրենց աղջկանը ծեծում էլին, նույն իսկ արյունլվա անում: Ի՞նչ և ասվում, որինակ, հետևյալ ժողովրդական յերդի մեջ (Գ. Հովսեփյանի «Փչրանքներ» յեր. 28) աղջիկը տղային:

Ասոր ձի քի աբուլ ենքան ի զարկած.
Հալաբա աբրուշում ի բերած, բիբինքարին (վերքեր) ի կապած.
Շամա չաքար ի բերած, բիբինքարին ի քաղած.
Ալմու բամբակն ի բերած, երինքարին (արյուն) ի սրբած:

Բայց չնայելով այս դրությանն՝ ավելացնում է աղջիկը.

Ինչ իմ աչք ընկնի քու աչք,
Անցդուն (այնպես ե), ինչ վարդ ոտհան վեր ձի չի չարժած.

Ցեվ նույն իսկ ժամադիր ե լինում տղային իր հերանց բաղչում համբույր տալու.

Ցես քու տղա սիրտ ձենե (ինձնից) չեմ թորկի.
Թե (թևև) զարկած զի թամամած (մեռցրած):

Մի՞թե սա նույն վիրավոր կաքավը չե, վոր իր սիրած անուշ յարին մի փունջ վարդ ե ուղարկում:

Այս միևնույն խաղի յերկրորդ իմաստով մի վարիանտ ե և հետևյալը.

3. Կաքավն ա կանգնել քարին.
Կատուցը կարմիր արին.
Մի դաստա վարդ եմ քաղել,
Պետք ե ղրկեմ իմ յարին:

Այստեղ «անուշ», «սիրուն» ածականը պակասում է «յար» բառի վրա. հենց այդ պատճառով և յերդի իմաստն ավելի մթնացել ե. բայց թե 2-րդ, 3-րդ և 4-րդ վարիանտներին ե պատկանում՝ պարզ ե: Այդպես չե, սակայն, տակի 6-րդ վարիանտը, վորի մեջ մի փունջ վարդը փոխվում ե «յայլուխով» վարդի, իսկ յարի վրա ղրվում ե «պատիկ» ածականը.

6. Կաքավ կայնել ա քարին,
Կատուցը լիքըն արին.
Ցայլուխով վարդ եմ քաղել,—
Ձամբեմ իմ պատիկ յարին:

www.naregatsi.org

Ի՞նչ է այս յերգը, վոր նախորդ հինգ վարիանտներից իսկապես մի «պատիկ» բառով է տարբերվում: Դա մի դառն ծիծաղ է մեր հայ գեղջկական հին կենցաղի մի այլանդակության, վոր մինչև 20-րդ դարի սկզբները սովորական եր մի քանի կողմերում, և վոր այնպես զորեղ կերպով արտահայտված է մի ժողովրդական յերգի մեջ, վորի սկսվածքն ու կրկնակն է հետեվյալը.

Ի՞մալ եննմ, ի՞մալ եննմ, ի՞մալ եննմ,
Սարեր ձյուն ա, չիվարել եմ,
Ցար պատիկ ա, մոլորել եմ:

Յեվ ապա յերգն սկսում է.

Թամահ երին հարյուրնոցին,
Ինձի տվին ղրկանոցին...

Ցանո, քսանհինգ տարեկան աղջիկը նշանվում և պսակվում է տաս, տասնուհինգ տարեկան տղայի հետ: Ի՞նչ անի այդ աղջիկը: Մի՞թե վիրավոր կաքավ չե նա, և մի՞թե կարող է նա առանց սրտից արյուն կաթեցնելու վարդ ուղարկել իր «պատիկ» յարին, վորի մահն է ուզում նա վերոհիշյալ յերգի մեջ:

Այս վեց վարիանտն, ուրեմն, վորոնք իսկապես միևնույն խաղն են, փոքրիկ փոփոխություններով պատճառով յերեք տարբեր իմաստալից յերգեր են կազմում: Բայց ունինք միևնույն խաղի ամբողջ յերկրորդ մասի փոփոխությամբ վարիանտներ ևս, վորոնք տարբեր բնավորության վիրավոր կաքավներ են պատկերացնում:

Ահա՛ մի կաքավ, վորի կուրծքն արյունլվա յե, վորովհետև իր սիրած յարին դերի յեն տարել.

7. Կաքավն ա կայնել քարին,
Կուրծքը կարմիր արին,—
Դաղստան յեսիր պիտի,
Իմ սիրած յարին առին:

Ահա և մի ուրիշ կաքավ, վորի սրտից արյուն է կաթում, և վոր վազում է, վորովհետև տանը մնացած պատռվում է, սեր ու սիրական չունի.

8. Կաքավը կայնել քարին,
Կուրծքը լիքը արին.
Սեր չունի, սամդա չունի,
Կանչնել ա ղուսի դարին:

Ահա՛ և մի յերրորդ կաքավ, վորի սիրտը ծուվ-ծուվ արյուն է, չգիտենք՝ ինչո՞ւ. բայց խնդրում է, վոր ձեռ չտան իրեն, թե չե՝ լաց կըլինի.

9. Կաքավը կանչնեց քարին,
Կուրծքն ա կարմիր արին.
Իրար մի՛ տա, լաց կըլնեմ.
Սիրտս ա ծուվ-ծուվ (վարիանտ՝ դյուլ-դյուլ) արին:

Թե այս վարիանտն աղավաղված է, պարզ յերևում է նրանից, վոր

www.naregatsi.org

2–րդ և 4–րդ տողերը նույն լմաստան ունին և նույն բառն իրրև հանդ ունին: Չունինք ուրիշ ձևեր, որ վերականգնենք խոհականը:

Ահա՛ դարձյալ մի կաքավ, որ վիրավոր է իր անպատասխանության մեջ: Այս նոր լմաստալից խաղի համար ունինք հինգ վարիանտներ, որոնց չորսի մեջ աղճատումներ կան. բայց վարիանտների շնորհիվ վերականգնել կարելի է:

10. Կաքավն ա կանգնել քարին,
Կուսյը լիքը գարին.
Թև ինձի հետ կամք չունիս,
Ախ՛ ընկար մեղք ու արին:

12. Կաքավն ա կայնել քարին,
Կուսյն ե քնարին.
Ջունքի մանդղիլդ եղբան ա,
Ախ՛ արիր մեղքը յարին:

11. Կաքավն ա կանգնել քարին,
Կուսյը լիքը բարին.
Միտքը չունես՝ ինձ առնես,
Ախ՛ ընկար մեղք ու արին:

13. Կաքավն ա կանգնել գարին,
Մախմառն եր քնարին.
Գիտեմ նամուսդ եղ ե,
Ախ՛ մոտր մեղքիս տակին:

Ցեխն վոչ մի ուրիշ վարիանտ էլ չունենայինք, կարող էինք այս յերկի վարիանտներն ուղղել հիմնվելով նախորդների վրա: Շատ պարզ է, որ 2–րդ տողերի մեջ պետք է լինի՝ «կուսյը լիքըն արին» և վոչ «գարին», «բարին», «քնարին», և վոչ «մախմառն եր քնարին»: «Քնարին» բառը ծագել է, անշուշտ, «լիքն արին» բառերից, «լիքն» բառի յերկրորդ վանկն առնվել և հաջորդ բառի հետ: Մի անգամ որ 2–րդ տողի հանդը կազմում է «արին» բառը, այս ժամանակ 10–րդ և 11–րդ վարիանտների վերջին տողի հանդը չի կարող «մեղք ու արին» լինել, այլ «մեղքը յարին», ինչպես որ է 12–րդի մեջ: 13–րդ վարիանտի «մեղքիս տակին» ձևն էլ, պարզ է, աղճատված հանդ է: Այսպիսի վերականգնած ձևի մոտիկ վարիանտ ունինք հետևյալը.

14. Կաքավն ա կանգնել քարին.
Կուսյը լիքն արին.
Քո խղաթը քե խաով,
Ախ՛ ընկար մեղքը յարին:

Բացի այս 14 վարիանտներից ունինք և հետևյալը.

15. Կաքավ կայներ վըր քարին.
Կուսյ դրեր քնարին.
Ցես աղջիկ ենք, բելլի չենք.
Նշանլու չենք, դելլի չենք:

Շատ պարզ է, որ այս խաղի առաջին յերկու տողերը ծագում են վերևի վարիանտներից, այն էլ 2–րդ տողն աղճատված ձևից. իսկ վերջին յերկու տողերը իրար հետ են հանդ կազմում, որից յերևում է, որ տարբեր յերգի մասն են կազմում: Ցեխ իրավ, ունինք մի խաղ, որի մի վարիանտն է հետևյալը.

Ցես աղջիկ եմ ալլու չեմ,
Նշանլու չեմ, բալլու չեմ,
Անտա խաթրիս մի դիպնիր,
Ղաբիր եմ, դնալու չեմ:

15–րդ վարիանտի նման աղճատված է և հետևյալը.

www.naregatsi.org

16· Կաքավ իջեր վըր քարին· Մեռնիմ կաքավ բանողին,
Դնդուկ (=կաուց) դիեր քնարին· Ղրկեմ իմ ողբըր յարին:

Այս վարիանտի 3–րդ տողը բոլորովին անկապ կնըմանում է ներա մասը· իսկ 4-րդ տողը վերևում դրած 4–րդ, 5–րդ կամ 6–րդ վարիանտների ազ ճառումն է:

10· ԽԱՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կազմուիքյան նայելով՝ պետք է տարբերել հիմնական խաղն իր զարգացումից:

Հիմնական խաղերն են իսկապես մի անգամից, մի բերմամբ հարինված–ները· զարգացած խաղերը ժամանակի ընթացքում առաջացել են հիմնական–ներից՝ իրրև տարբերական մասերից:

Այս զարգացումը լինում է կցումով և ճուռմով:

Ցերկու հիմնական յերկյակները, վորոնք իրարուց անկախ են և անջատ էլ յերգվում են, կցվելով իրար՝ կազմում են մի քառյակ և միասին առնը–վում իրրև մի բազադրյալ ամբողջ խաղ: Որինակ հետևյալ քառյակը կցու–մով է կազմված·

Ծաղկեվանքու ձորն եմ, Գնա, գնա, հետիդ եմ,
Մեծ բաղի խնձորն եմ· Կարմիր խնձոր դառիդ եմ:

Կցման համար իրրև հիմք ծառայում է կամ յերկու խաղի իմաստի իրար հարմարվելը, կամ բացի այդ՝ նաև մի բառ, վոր յերկու խաղի մեջ էլ կա: Առաջին յերկյակի իմաստը, կամ նրա մեջ յեղած մի բառը՝ յերգ–չին հիշեցնում է մի ուրիշ անկախ յերկյակ, վորի իմաստը բանում և առա–ջինին, և կամ վորի մեջ նույն բառը կա, ինչ վոր առաջինի մեջ, և նա յերկրորդ յերկյակը յերգում է առաջինի հետ կցած իրրև մի խաղ: Ցեղ այսպես կցումով զարգացած խաղը մնում և յերգիչների հիշողության մեջ և հարատևվում:

Այսպես զարգացած խաղերը, սակայն, իմաստալից, սիրուն յերգեր չեն, յերբ կցումը լինում է միայն մեքենայաբար, այսինքն լոկ բառի պատ–ճառով, առանց ուշադրության զարթնելու յերկյակների ներքին իմաստին: Քիչ չի պատահում նաև, վոր յերկու խաղի կցումը միմիայն բողեկական քմահաճույքից և առաջացած լինում:

Ճռումով զարգացման ժամանակ մի հիմնական յերկյակի կամ յեր–կյակի դիմաց, վոր կարող է նաև մենակ, անջատ ասվել, ավելանում և մի կամ յերկու տող էլ, և կազմվում է մի նոր համեմատաբար ավելի մեծ խաղ–յերկյակ կամ քառյակ: Ավելացած կամ ճռած մի տողը բնավ, իսկ յերկու տողը սովորաբար, մենակ չեն ասվում, դրանք ոչ ձևով, վոր կան զարգացած խաղի մեջ: Այսպիսի զարգացումով և կազմված, որինակ,

www.naregatsi.org

հետևյալ քառյակը, որի առաջին յերկու տողերն իրրև անկախ յերկյակ ևս քանում են.

Ծաղկավանքը ծաղկեր ա.
Ծամեր դլխիս թախկեր ա.
Եարար տարեք իմ նռնիս,—
Սերը ինձի հաղթեր ա:

Աճումով զարդացած խաղերը մեծ մասամբ ավելի խմաստալից են, քան կշռումով զարդացածները:

Խաղերի այս զարդացումը դանում ենք ամեն տեսակի վոտանավորների համար: Տեսնենք շատ դործածական չափերից մի քանիսը:

Ցոլմն-վանկանի հիմնական յերկյակները դրեթե բոլորն ունին կշռումով և ավելի ևս՝ աճումով կազմված քառյակներ. այնպես որ շատ քիչ այդպիսի յերկյակներ կան, որ քառյակների մեջ չմտնեն: Ցեթե կան ել այդպիսինները, դրանց մի մասն ևս, հավասարյալ. կարելի յե ասել, վոր կրկնակներ են, կամ ակզբնապես կրկնակներ են յեղել, կամ թե նոր հորինված յերկյակներ են ու դեռ միջոց չեն ունեցել զարդանալու, կամ թե քառյակները մեզ հայտնի չեն: Այնպես յերկյակների և նրանց քառյակների այս հարաբերությունը նկատի ունենալով՝ մեր բաղդատած հաղարավոր խաղերի համար կարելի յե 7 վանկանի քառյակի զարդացումը մինչև անդամ չտեսած ելպով բացատրել և ասել, թե այս տեսակի խաղի հիմնական ձևն է քառյակը, որի առաջին յերկու տողերը բաժանվելով իրենց ամբողջից՝ սկսել են հետագայում իրրև անկախ յերկյակներ բանել: Այս կերպով ևս, անշուշտ, առաջացած կլինին վորոշ թվով յերկյակներ. բայց խաղերի զարդացման ընդհանուր յեղանակը վերևում բացատրված է, այսինքն պարզից դեպի բարդը, յերկյակներից յեռյակներ և քառյակներ կազմվելը: Այս չի խանգարում, սակայն, ընդունել, վոր շատ յեռյակներ և քառյակներ ևս հիմնական են, այսինքն մի անդամից իրրև մի ամբողջություն են հորինված:

Բերենք մի քանի որինակներ խաղերի այս զարդացումը բացահայտ անելու համար: Ազդագրական Հանդեսի Լ—Ը դրքի մեջ (1901 թ.), յեր. 439, բերված են «Սար, սար, սարերու դյուլն եմ, Լևոն-Սամսոնի քարն եմ» կրկնակի տակ ի մեջի այլոց հետևյալ յերկյակները.

2. Գնա, գնա, կալը տես,
Կարմիր ինձոր դոտիդ եմ:

3. Գնա, գնա, կալը տես,
Գող աղրյուրի սալը տես:

3. Սինամ սարեր մտիկ ա,
Ձյուն ա եկեր, դոտիկ ա:

5. Լուսնակը ցոլաց, գնաց,
Դեմ առավ ամպին մնաց:

Արդ, այս միևնույն յերկյակների աճումով զարդացած քառյակներն են հետևյալները, որ ունինք ձեռի տակ.

www.naregatsi.org

1. Գնա, գնա, հետիդ եմ,
Կարմիր խնձոր՝ դոտիդ եմ.
Դու ինձ նստեղ չես Քաղնի,
Վորտեղ յերթաս՝ մոտիդ եմ:

2. Գնա, գնա, կալը տես,
Գաղ աղբյուրի սալը տես.
Իմ հեր քեզ աղջիկ չի տա,—
Գնա, գլխիդ ճարը տես:

Գնա գլխիդ գալը տես:
Աբի սրտիս հալը տես:

Վարիանտներ վերջին տողի.

4. Սինամ սարեր մոտիկ ա,
Ձյունը նկել, դոտիկ ա.
Մեռնեմ իմ յարիս բոյին,
Տունս տանդ մոտիկ ա:

5. Լուսնակը ցոլաց, գնաց,
Դեմ առավ, ամպին մնաց.
Սրտով պայման չավավ,—
Սրտիս դաղ եկավ մնաց:

Կցումով կազմված 7 վանկանի քառյակները համեմատաբար սակավաթիվ են: Այսպիսինները մի արտաքին նշան ունեին, այն է՝ կամ բոլոր չորս տողն էլ նույնհանգ են, կամ թե հաջորդաբար զուգահանգ են, այսինքն առաջին յերկու տողը մի հանգ ունին, վերջին յերկուսը մի ուրիշ հանգ, մինչդեռ աճումով զարդացած քառյակների 3–րդ տողն անհանգ է մնում: Այսպես նույնհանգ զարդացում ունի, օրինակ, վերևում դրած 4–րդ յերկյակից հետևյալ քառյակը.

Սինամ սարերը մոտիկ,
Ձյունը նկել է դոտիկ.

Աղջի դու ինչ խոթոտիկ,
Աբի մեր դռան մոտիկ:

Իսկ հաջորդաբար զուգահանգ զարդացում ունի վերևում դրած 1–ին յերկյակից հետևյալ քառյակը.

Ծաղկեվանքու ձորն եմ,
Մեծ բաղի խնձորն եմ.

Գնա, գնա հետիդ եմ,
Կարմիր խնձոր՝ դոտիդ եմ:

Սրա վարիանտն է հետևյալը, վորի չորրորդ տողը, սակայն, աղբեցյուրյուն է կրել վերևում դրած աճումով զարդացած 1–ին յերդի վերջից:

Ցես ես գնդի ձորն եմ,
Ես բախչի խնձորն եմ.

Կարմիր խնձոր դոտիդ եմ,
Ուր վոր երթաս՝ հետիդ եմ:

Այս քառյակի առաջին յերկյակը կցվում է և ուրիշ յերկյակների հետ, վորոնցից են, որինակ.

Ծաղկեվանքա ձորն եմ,
Մեծ բաղի խնձորն եմ.
Ուրիշ յար պիտի չառնեմ,
Հին յարի պարտով մնանեմ:

Ցես կեռբխի ձորն եմ,
Մեծ բաղի խնձորն եմ.
Խնձոր կծեմ, թող անեմ,
Միջի հարսը կոլ (կուլ) անեմ:

Ցես ես գնդի ձորն եմ,
Մեծ բաղի խնձորն եմ,
Խնձոր յեղել, հասել եմ,
Բլբյուլի հետ խոսել եմ:

Կազդվանի ձորն եմ,
Մեծ բաղի խնձորն եմ.
Դիար դիար կորել եմ,
Ցարոչմանն ջոքել եմ:

Սակավ անգամ կըպատահի, վոր կցումով կազմված քառյակները մեջ ընդ մեջ զուգահանգ լինեին, այսինքն 1–ին և 3–րդ տողերն իրար հետ հանգ կազմեին, իսկ 2–րդ և 4–րդ տողերն իրար հետ: Հանգերի այս զասավորությունը առաջ և գալիս միայն տողերի տեղափոխությունից, որինակ՝

www.naregatsi.org

Ես սարերում ձնեբակ,
Շաղաթաթախ արեգակ.

Արեգակին տեր աղբեր.
Շաբաթ մաղեմ՝ կ'ե՛ր, աղբեր:

Այս քառյակի յերկրորդ յերկյակի առաջերը կցվելով մի ուրիշ յերկյակի հետ՝ մեջ ընդ մեջ են ընկել.

Արեգակին տեր աղբեր,
Ա՛յ շաղաթաթախ աղբեր,

Շաբաթ մաղեմ՝ կ'ե՛ր, աղբեր.
Ջանս քեզ մատաղ, աղբեր:

Ձոճն–վանկանի յեռյակներ ընդհանրապես շատ քիչ կան, իսկ յերկյակից զարդացած յեռյակներ ավելի ևս սակավ: Մեր ձեռքն տակ ունեցածների մեծ մասը հիմնական յեռյակներ են: Կան և յեռյակներ, վորոնք քառյակներից են առաջացած՝ անհանդ 3–րդ տողի դուրս ընկնելով:

Ցերվ. Լալայանի «Ջավախքի բուրմունք» յեր. 20. դանում ենք հետեվյալ յերկյակը՝ դրված ուրիշ խաղի սկզբում.

Առավոտան Թանդիրմուխ,
Ձերմակ լաչիկ, գլխուն Թուխ:

Սրա վարիանտն է Մխիթարյանի «Տաղեր ու Խաղեր» յեր. 243.

Թանդիր վառե, եղեր և մուխ,
Կապե փուչին, Թորիկեր և պուխ.
Ունքեր կամար, աչքերն և Թուխ:

Սույն այս խաղը դանում ենք զարդացած Շերենց «Վանա ապզ», Բ. յեր. 29.

Ցառավոտան Թանիր մուխ,
Աչքեր բալաք, ընքվիր Թուխ,

Նույն Սրվանձտյանցի «Համով, Հոտով», յեր. 320.

Ջարկեց մախճան, Թալեց պուխ.
Երես կարմիր, աչքեր Թուխ:

Նույնն և Ազդարը. Հանդ., Ի—Ը յեր. 442.

Ճողկակ պաժ, բարակ մատներ,
Աչքեր բալաք, ընքներ Թուխ:

Ունինք և հետևյալ յերկյակը.

Առավոտան Թանդիր մուխ,
Ցաշմակ զարկիր, Թորիկիր պուխ:

Այս միևնույն խաղի մի յերկյակ դանում ենք և Ծերդաձյանի «Քնար Մշեցոց և Վանեցոց», յեր. 31.

Աղջիկ, մի՛ զար, մեր տուն ծուխ ի,
Դիլբար, մի՛ զար, մեր տուն ծուխ ի,
Կարմիր երես, աչքեր Թուխ ի:

www.naregatsi.org

Այստեղ խազն ըստ յերևույթին միայն յեռատող է. իրոք գա յերկ–յակ է, վերավհետև յերկրորդ տողը «Դիլբար, մի՛ դար, մեր տուն ծուխ է», մի առանձին տեսակի կրկնակ է, ինչպես նույնը դանում ենք նույն տեղում և ուրիշ խազերի համար, ինչպես են՝

Աղջիկ, մի՛ դար մեր կալերով,
Դիլբար, մի՛ դար մեր կալերով,
Դիլբարի ձին եր նալերով։ Ցեվ այլն։

Այսպես, տեսնում ենք յերկյակից յեռյակներ և քառյակներ են դարդանում բազմազան ձևերով։ Բացատրությունների մեջ մանելու փոխանակ՝ ավելի լավ ենք համարում մի որինակ էլ բերել, թե ինչպես յեռյակից մի տող ավելանալով կազմվում են քառյակներ։

Լալայանի «Ջավախքի բուրմունք», յեր. 22 կա հետևյալ յեռյակը.

Առավոտուն թոնդրին բոց,
Աբի՛ եղնինք դիրկ ու ծոց,
Վոր գա, խամրի դարդ ու խոց։

Այս յեռյակին իրրև քառյակ, մի տող ավելացած, դանում ենք Շերենցի «Վանա տող» Բ. յեր. 29.

Առավոտուն թոնիր բոց, Գող մը յես սամ, պող մը դու,
Աբի մանենք իրար ծոց, Ցրվի մեր դարդ ու խոց։

Նույնն ուրիշ ձևով Ազդ. Հանդ. Լ—Ը յեր. 444.

Առավոտուն թոնիր բոց, Աբի՛ եննենք դիրկ ու ծոց,
Կախիր յաշմաղ, Թոռիկիր պոչ, Բալթիմ խամրի դարդ ու խոց։

Ուէթ–վանկանի խազերի զարդացման համար ևս բերենք մի յերկու որինակ։

Լալայանի Ջավ. Բուրմ. յեր. 19. «Կայնե՛, Ֆիլդան բոյիդ դուբրան» կաթ.

Ելեր ես, կ'երթաս կը մարագ,
Թևերդ երկան, մեջդ բարակ,
Կերածդ և միչտ մեղրով կաթագ։

Նույնը Սեդրակ. Քեն. Մշ. և Վան. յեր. 23. «Աղջիկ, յար անենք» և այլն. կրկնակի տակ.

Դու ելեր ես, կերթաս մարագ,
Վիդդ երկեն, մեջդ բարակ,
Ինչ վոր հագնես՝ քեզ մունբարագ։

Այս յերկու յեռյակի մեջ հատատուն հիմնական մասն է առաջին յերկու տողը. իսկ 3–րդ տողը յերկուսի մեջ էլ նոր ավելացած ու տարբեր են։ Մեր ժողովածուի մեջ այս յերկու աճած տողը միասին կան, վորով նույն խազը քառյակ է դարձել։

www.naregatsi.org

Դու ելեր ես ի՛երթաս մարտ, կերածդ մեղր ու կարագ,
Վիզդ երկեն, մեջդ բարակ, Հաղիվ հալավ քեզ բումբարակ։

Սեղրակյանի Ին. Մշ. և Վան. յեր. 30. «Աբի յար, արի» և այլն. կրկնակի տակ դանում ենք նույնն իրրև յեղյակ, միայն վերջին յերկյակի հետ առաջին յերկյակից մի տող միացած.

Դու ելեր ես, ի՛երթաս մարտ,
Քու ուսելուն մեղր ու կարագ,
Հաղնելուդ քե բումբարակ։

Նույնը Մրմանճատյանցի «Մանանա» յեր. 292, իրրև վիճակի յերգ.

Ելեր ես ի՛երթաս ուխտ Վաթաղ,
Քո ուսելիք սեր ու կարագ,
Ինչ հագներ ես՝ քե մուրթաթեք։

Նույնը Շերենցի «Վանա Սազ» Ա. յեր. 97. դարձյալ վիճակի յերգ, միայն վերջի յերկու տողը չուտ տված.

Ելեր ես, ի՛երթաս Վարագ,
Ինչ ես հագնե՝ քե մումբարագ.
Քո կերածն է սեր ու կարագ։

Սեղրակ. Ին. Մշ. և Վան. յեր. 31. դանում ենք հետևյալ յերկյակին իր մյջի կրկնակով.

Աբի երթանք հորթիկա խոտիկ,
Դիլբար, երթանք հորթիկա խոտիկ,
Տեսնենք վի՞ր յարն ա խորոտիկ։

Նույնը Միհնաարյանցի «Քնար Հայկական», յեր. 177. դանում ենք զարդացած իրրև քաւյակ.

Մեր տուն ձեր տուն մոտիկ մոտիկ, երթանք, քաղենք կանաչ խոտիկ,
Դու կապել ես կարմիր դոտիկ. Տեսնենք վի՞ր յարն ա խորոտիկ։

Նույնն ուրիշ ձևով զարդացած. Սղդ. Հանդ. Ի—Լ դիրք. յեր. 443.

Մեր տուն ձեր տուն մոտիկ մոտիկ, Բերենք, դնենք մորին մոտիկ,
երթանք, քաղենք հորթիկան խոտիկ, Տեսնենք վի՞ր յարն ա խորոտիկ։

Նույնը զարձյալ ուրիշ ձևով զարդացած Շերենցի Վան. Սազ. Բ. յեր. 43.

Մեր տուն ձեր տուն մոտիկ-մոտիկ, Իմ յար քանց քոն շատ խորոտիկ,
Երթանք, քաղենք վորթիկան խոտիկ։ Ցարոլա մեռնեմ, անուն Վարդիկ։

Պատահում է յերբեմն, վոր յերդչի քմահաճույքով մի կամ մի քանի տող էլ ավելանում են քաւյակի վրա, վորով յերդը խաղը սովորական ձևից դուրս է դալիս։ Որինակ՝ Միհնաարյանցի Քնար Հայկական, յեր. 177 կա հետևյալը.

www.naregatsi.org

Մեր տան յետև քառասուն կաթսա,
Քառասուն կաթսի դինին եր խաս,
Վոսկի դյուդյում, արծաթե քաս.
Ամեն քասին պադիկ մը տաս:

Նույնը մի տող ավելացած դանում ենք նույն դրքի մեջ յեր. 178.

Մեր դռան յետև տունն մի կաթսա,
Ջեր դռան յետև տուն մի կաթսա,
Ամեն կաթսի դինին եր խաս,
Վոսկի դյուդյում, երծաթե քաս,
Ամեն քասին պադ մը կուտաս:

Այս միևնույն յերդը դանում ենք Ազդ. Չանղես, է—Ը յեր. 443, ավելի ևս ընդարձակված.

Մեր դռան առաջ քառասուն կաթսա,
Ջեր դռան առաջ քառասուն կաթսա.
Քառասուն կաթսի դինին է խաս.
Ամեկ կաթսեն մեկ քաս ի տաս.
Ամեկ քասին մեկ պադ ի տաս.
Թե դու չի տաս, դու դառենաս:

Ունինք մի վարիանտ ևս, վորի մեջ 3-րդ տողից հետո կա «Վոսկի դյուդում, արծաթե քաս», վոր այստեղ պակասում է և մինչև անդամ մի 8-րդ տող վերջից. «զառենաս ու վորբևիերնաս»:

Ճիշտ այսպիսի ավելցուկ տողեր ունի և հետևյալ խաղը, Ազդ. Հանդես է—Ը յեր. 442.

Ծառի տակի պաղ աղբյուր,
Արծաթե քաս, վոսկի ջուր.
Ցես կըվառիմ քո սիրուն,
Քաս մի կ'ուղեմ, երկուս տուր.
Թե վոր չիտաս՝ դառենաս,
Դառենաս, վորբևիերնաս:

Այս խաղի հիմնական յերկյակը դանում ենք Սբվանձատ. Համ. Հատ. յեր. 327.

Ծառի տակի պաղ աղբյուր,
Մեկ դու խմե, մեկ ձի տուր:

Իսկ զարդացած ձևերից և մեր ժողովածուի մեջ.

Հով ծառի տակ պաղ աղբյուր,
Արծաթե քաս, վոսկի ջուր.
Մին յես խմեմ, մինը դու.
Անուշ կենանք յես ու դու:

Վերջին տողն ունի և հետևյալ ձևը. «Դատաստանին ջուհար տուշ»:

Բերենք մի քանի որինակ և հինգ կամ աստն-վանկանի խաղերի զարգացումից:

Սբվանձատ. Համով-Հոտով. յեր. 328 կա.

Ես որ ի՞նչ որ է, ուրբաթ ու պաս է.
Աղջիկ, քո գլուխ արծաթե քաս է.
Յորած վարդապետ կ'ասե՝ չհաս է:

Նույնը Վանա Սազ. Ա. 39.

Ես որ ի՞նչ որ է, ուրբաթ ու պաս է,
Աղջիկ, քո գլուխ արծաթե քաս է.
Տգա, քո գլուխ սրմալու ֆաս է.
Յորած վարդապետ կ'ասե՝ չհասե:

www.naregatsi.org

Համով–Հոտով յեր· 328 կա·

Ցերկինքն եր ամպեր, կուզեր մարմար ձուն,
Կըհալեր, կաթներ վեր մալուլ մարդուն·
Աստված ամբերը զամազ մարդու տուն:

Նույնը Տաղեր ու Խաղեր յեր· 121·

Ցերկինքն ի ամպեր, կուզար մարմար ձուն, Աստված ամբերը զամազ մարդու տուն·
Կուզար կըթափեր վեր մալուլ մարդուն· Զկթաղ վոր իմ յար մեկ որ գեր մեր տուն:

Նույնը Վանա Սազ Ա· 39·

Ցերկինքն եր ամպեր, կուզեր մարմար ձուն, Մեկ յե՞ս եմ մալուլ, թե՞ աշխարհ ըթխուն·
Կուզեր կըթափեր վեր մալուլ մարդուն· Իմ յարոջ սիրուն մնամ երեսուն:

Սրվանձամ· Համով–Հոտով, յեր· 328· «Պարերով» վերնագրի տակ դնում ենք մի շարք իրարուց անկախ խաղեր, վորոնցից մեկն է:

Ցերեկ հավարին Թվանքով զարկին,
Վոչխար վեր բերին, Բրինդար արին:

Այս քառյակի վարիանտն՝ իրրև 10 վանկանի յերկյակ առնված՝ դնում ենք Վանա Սազ· Ա· 37· մի ուրիշ նման յերկյակի հետ միացած իրրև պանդխտի յերգ·

Ցերեկ եվարին վեր Սաոմա քարին, Ախբրիկ իմ տարեք իմ նազլու յարին,
Թվանքով զարկին բրինդար արին· Թե չե՝ կըզրեմ մեջ են դավխարին:

Ցեթե այսպես շարունակելու լինինք, խիստ շատ տրինակներ կարող ենք բերել, վորոնց մեջ պարզ յերևում է, թե ինչպես յերկյակները, վորոնք խաղերի տարրական ձևն են, զարգանալով դառնում են համեմատաբար ավելի մեծ խաղեր, յեռյակներ և քառյակներ: Հաճախ ի հարկե դժվար է վորոշել, թե արդյոք վորն է հիմնական յերկյակը, և թե արդյոք հիմնական յերկյակի՞ց է յեռյակ ու քառյակ զարգացած, թե՞ ընդհակառակը: Բայց այս դժվար է միայն նյութի պակասության պատճառով: Ցեթե կարևոր նյութը ձեռքի տակ ունենա մարդ և համբերություն ունենա մանր–մանր աշխատանք անելու, կարելի յե ասել, թե առհասարակ կ'որոշվի խաղերի հիմնական ձևերն իրենց զարգացումներից:

Ինդիրն այստեղ, ի հարկե, այն չեր, վոր վորոշեինք այս կամ այն խաղի հիմնական ձևն իր զարգացումից, այլ ցույց տալ, թե ինչպես պարզ խաղերից կազմվում են բարդ խաղեր և ընդհակառակն:

Դառնանք մեր յերգերի զարգացմանը:

www.naregatsi.org

11· ՑԵՐԳԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԱՂԵՐԻՑ

Ամեն մի խաղ, յերկյակ լինի թե յեռյակ կամ քառյակ, կազմում և մի առանձին յերգ: Սակայն կյանքի մեջ, այսինքն յերգելիս, մի քառյակով չի բավականանում յերգիչը,— այդ կլուսեր շատ կարճ: Ցերեկոզուռնայությունը սովորաբար ավելի յերկար և տևում. հանդեսների և պարերի ժամանակ նույն իսկ ժամերով յերգվում է: Բառերն արագ փոխվում են, իսկ յեղանակն անփոփոխ մնում:

Իրարուց անկախ խաղերը միևնույն յեղանակով և միևնույն կրկնակով յեռանդ յեռանդ տալով են ուզածի չափ յերկար տևողությամբ, մինչև վոր կամ ձանձրանում են ու յեղանակը փոխում, կամ նույն չափով հորինված յերգերի պաշարը սպառվում է: Ով ներկա յե յեղել մեր ժողովրդական պարերին և յերգեցողության մրցմանը, նա այս անձամբ նկատած կլինի: Զարմանալի չի լինել սակայն հիշել մի դեպք:

Մի անգամ, յերբ յես Ցերեանից Եջմիածին եյի գնում, կառապանն իր կողքին նստեցրեց իր ծանոթներից մեկին: Այս յերկուսը սկսեցին մրցել թե ով ում «կրկնալի», այսինքն թե վոքն ավելի խաղ դիտե: Ցեվ Ցերևանի այդինների տակից մինչև Վաղարշապատի մոտերը, փարատքար պլյուզում մեկն զազարելով, նրանք մի ժամից ավելի միևնույն յեղանակով յերգեցին փոխոխակի բազմաղան քառյակներ: Ցեվ այս շատ հետաքրքիր է, քանի վոր միանման չափով հորինված խաղերը շատ են և վոր գլխավորն է՝ խաղերը, սակավ բացառությամբ, չունեին իրենց հատուկ հատուկտուն յեղանակը: Կրկնակները, ընդհակառակն, չհաշված լե-լեներն ու նա-նայներըը, կապված են մի հատուկտուն յեղանակի հետ. դրեթե ամեն կրկնակ ունի իր հատուկ յեղանակը թե իր և թե իր հետ յերգված խաղերի համար: Այս պատճառով է, վոր յեղանակները սովորաբար կրկնակներով են կոչվում. որինակ՝ Ջան դյուզում, Ախ մարալ Ջան և այլն:

Միևնույն կրկնակի հետ կարելի յեր լինում յերգել ամեն խաղ, յեթե չափը ներում եր, և ընդհակառակն՝ միևնույն խաղը կարելի յեր յերգել ամեն կրկնակի հետ, զգալով յեթե չափը ներում է: Ժողովրդական խաղի ասելու եյական հատկությունն է այս, վոր, ինչպես հետո կերևանք, մեջց եր տալիս խաղերից ամբողջական ընդարձակ յերգեր կազմելուն:

Ավելորդ չե մի քանի որինակներ բերել:

Վերցնենք հենց առաջին պատահած յերգը մեր ձեռքի տակ ունեցած Աղգ. Հանդեսի է—Ը գրքից: Այստեղ յեր. 442, «Բաղումի Ջան բազումի (արևմտյան տառադարձությամբ՝ պաղմի ճան պաղմի) կրկնակի տակ յերգվում և իրեև առաջին տուն.

Աբի երթանք կըռնկու սաք,
Գուգնո հարյուր, կուտամ հազար.
Թուխ աչքերու խաթրի համար,
Շեկ ունքերու խաթրի համար:

www.naregatsi.org

Սույն քառյակը մի ուրիշ ձևով գտնում ենք Սրվանձտ. Համով-Հոտով յեր. 327, իրրև «պարերգ» առանց կրկնակի.

Ցիվ ու երթանք կանկու սար,
Ռուխ մի չիննենք, մանենք հիսար.
Թող դա վեր մե Շահն ու Խանգբար.
Ռդեղ հաբյուր, կուտամ հազար,
Բաղե, քո Թուխ աչքիդ համար:

Սույն յերդն իրրև աղճատ յեռյակ գտնում ենք Սեդրակյանի Ծն. Մշ. և Վան. յեր. 23. «Աղջիկ, յար անենք, յար անենք, Դիլբար, յար անենք, յար անենք» կրկնակի տակ.

Ռուխ ըմ չիննենք, մանենք խասար,
Կ'ուզեն խաբիր, կուտամ խազար.
Բարով եղնիմ քո խոր փեսա:

Նույն «Բաղումի պյուլ բաղումի» կրկնակի տակ (պյուլ և ջան բառերն իրար փոխանակում են, ինչպես որինակ՝ «Հոյ նազան ըմ, պյուլ նազան ըմ» ասվում և և «Ջան նազան ըմ») Շերենցի Վանտ Սազ Ա. 40 թերված և իրրև առաջին տուն.

Տուն մ' եմ չինե գետի բերան,
Վերեն Թալի Ջուխտ ըմ գերան.
Մեկն ի խոխ, մեկն ի ծիրան.
Խոխեն կոտրավ, մնաց ծիրան.
Ծիրան փեխավ յարոջ բերան:

Այս խաղը, սակայն, Սեդրակյանի Ծն. Մշ. և Վան յեր. 26 թերված և իրրև առաջին տուն «Ջանիման, ջանիման» կրկնակի տակ հետևյալ ձևով.

Տուն մ' եմ չինե գետի բերան,
Թալինք ի նե ջուխտ ըմ գերան.
Մեկն եր խոխ, մեկն եր ծիրան,
Կոտրավ խոխ, մնաց ծիրան:

Այս «Ջանիման, ջանիման» (արևմտ. տառադարձությամբ «ճանիման, ճանիման») կրկնակի հետ, սակայն, Սդղ. Հանդես Ի—Ր. 443 դրված և իրրև առաջին տուն.

Մեր դռան առաջ ծառ մի պնդուկ,
Ձեր դռան առաջ ծառ մի պնդուկ,
Առնեմ քեզի, մանեմ անդուկ:

Այս յեռյակն էլ, սակայն, Ինար Հայկական յեր. 177 դրված և «Հավար Ջուր, մաղաթ Ջուր» և այլն, կրկնակի հետ այսպես.

Մեր դռան յեռել արտ ըմ պնդուկ,
Ձեր դռան յեռել արտ ըմ պնդուկ,
Ջուրն առնեմ, մանեմ անդուկ:

Նույն «Բաղումի պյուլ բաղումի» կրկնակի հետ Մխիթար. Տաղեր ու Ասղեք յեր. 244 թերված և իրրև առաջին տուն՝ մի այլ դանդիկ արտասանությամբ.

www.naregatsi.org

Սարեն հուզա պաղպաղ ջրեր,
Կը կաթկթի մարմար քարեն և այլն։

Այսպես յեթե չարունակելու լինենք, ամբողջ դիրք կարող ենք դրվ-քանի վոր ամեն խաղ էլ կարող է ամեն կրկնակի հետ յերգվել, յեթե, դարձյալ կրկնում ենք, չափը ներում է, և մեր ժողովրդական յերգերի ժողովածուները լի յեն այդպիսի որինակներով։ Հատկապես առաջին տները վերցրի, վորովհետև յեթե յեղանակի ու կրկնակի հետ քիչ ու շատ կապված մնում են, առաջին տներն են։ Բայց այս էլ հաստատ չէ, ինչպես վերևում «Բաղումի ջան բաղումի» կրկնակի համար դրածից յերևում է. որինակ՝ մի ժամանակ խիստ սիրված «Հոյ նազան ըմ» և այլն կրկնակի հետ «Տաղեր ու խաղեր» յեր. 160 դրված է իբրև առաջին տուն.

Բարձր բոյդ տալ չունի, *Ջահել յարի մոտացի,*
Լուս երեսդ խալ չունի, *Վոր տխրել ու լալ չունի։*

Իսկ կոմիտաս վարդապետը նույն կրկնակի համար ձայնագրած ունի իբրև առաջին տուն.

Դարձան սիրուն ծաղիկ ես, *Գլխիս վրով պտիտ տուր,*
Ինձ համար ազունիկ ես. *Նախշուն-թև թիթեռնիկ ես։*

Յեթե առաջին տներն այսպես տարբերվում են, փոփոխության էլ վախ մի սահման չկա հաջորդ տների նկատմամբ։ Յերգչի հիշողությունից կամ մխան ընկնելուց և կախված մեծ մասամբ մի տան յեռևից այս կամ այն տունը կգալը։

Ասել չի ուզիլ, այսպես յեռևե յեռև իբրև մի յերգ յերգված խաղերը միայն մի ընդհանուր բան ունեին, այն՝ վոր նույն յեղանակով ու կրկնակով են յերգվում, և վոր մեծ մասի բովանդակությունը սերն է։ Եվ ուրիշ ներքին կապակցություն չունեին։ Ճիշտ է, անկախ քառյակները յեռև յեռև յերգվելով դառնում են մի յերգի տներ, բայց իմաստով մնում են դարձյալ իրարուց անկախ։

Թե պատահմունքը վորքան մեծ դեր է կատարում տների հաջորդության մեջ, այդ շատ լավ յերևում է մեր յերգերի ժողովածուներից և նույնիսկ ժողովրդի գործածության համար կազմված յերգարաններից։ Այստեղ դրի առնողները կամ յերգարան կազմողները, մոռանալով կամ չիմանալով, վոր քառյակները մեծ մասամբ իսկապես անկախ յերգեր են և անկապ կցումով են միայն միևնույն յեղանակի տակ յերգված, ինչպես լսել են, այնպես էլ յեռևե յեռև շարում են տները իբրև մի յերգի մասեր,

www.naregatsi.org

վորով մի անմիտ բան է դուրս գալիս: Ցեվ մի՞թե ընթերցողներն իրավունք չունեն ասելու, թե մեր յերգերն անհեթեթ բաներ են, դրանց մեջը ներքին կապակցություն չունեն, ճիշտ ինչպես անմիտ են համարում խաղերն առանձին առանձին վերցրած, վորովհետև հրաժարակվում են նույն իսկ յերգարանների մեջ աղճատված ձևով առանց «բնագիրը» վերականգնելու:

Բայց, ինչքան էլ պատահմանքով են խաղերը կցվում իրար և անկապ աներով յերգեր կազմվում, յերգեցողության այս եյական հատկությունը մեջց է տալիս, ասացինք, անկախ խաղերից ամբողջական մեծ յերգեր կազմելուն. վորովհետև յերբեմն և աների հաջող ընտրություն է լինում. յերբեմն միևնույն յեղանակի տակ իրար հաջորդում են այնպիսի քառյակներ և նույնիսկ յերկյակներ, վորոնք իմաստով հարմարվում են իրար և մեծ ամբողջական յերգ:

Այստեղից ահա առաջանում է ժողովրդական մեծ յերգերի ղարգացումը խաղերից՝ իրրև բաղադրիչ տարերքներից: Ժողովրդական մեծ յերգն, ուրեմն, այս դեպքում կազմվում է հարադրությամբ, այսինքն անկախ փոքրիկ յերգերը ավելի կամ պակաս իմաստալից կերպով կցվելով իրար՝ կազմում են մեծ յերգեր:

Սակայն այս հարադրությունը միշտ կուրր պատահմունքով և արատքին չի լինում. անկախ յերգերը միշտ իրկ մեքենայորեն չեն միանում իրար հետ: Յերգչի բանաստեղծական տրամադրությունն ու տրամաբանությունը մեծ դեր են խաղում այս դործում: Մի խաղ մյուսին հարադրվում և նաև դիտակցորեն, և խաղերը հարադրվելիս կրում են ներքին վերաբերություն, իսկապես վերամշակվում են միասին մի ամբողջություն կազմելու համար. յերգի մեջ մտնում և մի ընդհանուր իշխող բան, յեթե վոչ գաղափար, գոնե դրամատունք, հոգեկան վիճակ, վոր աները կապում և իրար հետ: Խաղերը հարադրվում են, ուրեմն յերբեմն նաև բովանդակության համեմատ: Այս նպատակի համար աղդում են և ուրիշ հանդամանքներ, ինչպես են՝ հաջող կրկնակները, կամ տարբեր խաղերի մեջ յեղած նույն և նման բառերն ու խոսքերը, վոր ընդհանուր դույն են տալիս աներին, և ապա մի վորևե դեպք, վոր առիթ է լինում իրեն հարմարվող անկախ քառյակներն իրար մի համախմբելու:

Տեսնենք որինակներով մեր յերգերի ղարգացման այս յերեք աեսակը սկսելով վերջին ազդող հանդամանքից:

Դեպքի կամ անձի ազդեցության տակ իրար հետ միանում են այն խաղերը, վորոնք տալած են վորևե համանման դեպքի կամ անձի առիթով: Դրանք իսկապես վիպական բնաերգության տարերքն են: Որինակ՝ մեկը խեղդվում է, մի մարդու սպանում են, մի աղջիկ փախցնում են և այլն. և ահա կազմվում և այդ առիթով մի յեղանակ ու կրկնակ, վորի մեջ հիշվում է դիպվածի մի եյական դիծը՝ հիշեցով յերբեմն և նրա անունը, վորի դլխին

www.naregatsi.org

յեկել և դիպվածը: Կազմվում են և մի յերկու խաղեր, վորոնց մեջ պատմվում և դիպվածից: Եվ այսքանը բավական և, վոր իրրև կենտրոն իրենց քաշի հնուց անտի արդեն պատրաստի համանման բովանդակության խաղերի մի մասը, կամ թե ուրիշ պատրաստի խաղերից այս կամ այն վերցնեն և հարմարվեն նոր պատահած դեպքի վրա:

Վորովհետև դեպքը կամ անձն յեղել և և ունեցել և վորոշ բնավորություն, ուստի և խաղերը պատահաբար չեն կցվում իրար, այլ մի ներքին առնչությամբ: Բոլորը միասին ունին մի ընդհանուր բովանդակություն և պատմում են պատահած դեպքի կամ անձի չուրջը: Սակայն տները չունին ներքին սերտ կապ և վոչ էլ հաստատ դասավորություն, կամ վորոշ թիվ: ուրիշ խոսքով՝ արվեստավոր հորինվածքը դեռ պակասում և: Տների կապակցությունը տրամաբանական չե, ուստի և լույծ և: Տները հեշտությամբ թաժանվում են իրարուց, յեթե ու առաջ ընկնում, ամբողջության միջից դուրս դալիս և այլն: Ցերդչի քահանայությը դեռ իշխում և կատարելապես և իշխում և ամեն անդամ յերգելիս ուրիշ տեսակ:

Խաղերի այս տեսակ համախմբումները մի դեպքի կամ անձի չուրջ՝ լոկ փորձեր են անկախ փոքր յերգերից մեծ ամբողջական յերգեր առաջ բերելու, և արվեստավոր հորինվածքի տեսակետից՝ անհաջող փորձեր: Այստեղ վոչ մասերի վորոշ դասավորություն կա և վոչ տների համար սահման:

Այսպես համախմբված յերգերն ու նրանց յեղանակները սովորաբար այլևս իրենց կրկնակների անունով չեն կոչվում, այլ դեպքի հերոսի անունով:

Այսպիսի յերգերից և, որինակ, «Գուլարեցի Աբշակի» խաղը: Սա մի 55—60 տարի առաջ Բալդիյոլում ձուկ վորսալիս խեղդվում և: Մահն յերեք առանձին տպավորություն և թողնում իր համագյուղացիների վրա, վորոնք խաղ ասել սերում են. կազմվում և վրան յեղանակ ու կրկնակ.

Շաբաթա՛, Մալաթ (հնով անունը), չաբաթա՛,
Նամե (վոր. լոդկեն, դայդն) Աբշակին կ՚ա բաթա.

և ապա մի քանի քառյակներ Աբշակի կյանքից ու յեղերական մահից: Ցերդչին, յերևի, յեղանակի պատճառով տարածվում և ուրիշ կողմեր, և ունեբի թիվը բազմապատկվում և ուրիշ պատրաստի խաղերից: Այս յերգից քառյակներ և յեռյակներ կարելի յե գտնել և մյուս և Լալայանի «Զավախքի բուրմունք» յեր. 23, ուր տները մեր նկարագրած ձևով խառն և խառն և անկապ են: Նույն Աբշակի խաղից յոթը տուն միայն առանձին բնորոշությամբ և վորոշ դասավորությամբ դրել ենք և մեր «Հազար ու մի խաղ» յերգարանի մեջ, Ա. 49:

Այս կարգի յերգերին պատկանում են և «Դերիկոն» (Փնար Մշ. և Վան. յեր. 17. Խաղեր ու Տաղեր. յեր. 148), վորի մեջ պատմվում և

www.naregatsi.org

Հակոբի սպանման դեպքը: Այսպիսի երգերից են և Աչխենի երգը, Տպկը ու Խաղը· էր· 184, և ուրիշներ:

Այսպիսի երգերի քննարկման տեսակին է պատկանում և Մասարեցի Զուլոյի խաղը: Զուլոն, ինչպես ականատեսներից լսել ենք, 1850-ական թվականներին և ապրել, մի շատ դեղեցիկ, բայց և կասկածելի բարքի տեր կին, որին սիրահարներ շատ են ունեցել: Զուլոյի համար 43 քառյակ և յուրյակ բերված են Գնար Հայկական էր· 173, ուր կրկնակին է·

Հավո՛ր Զուլո, մադա՛թ Զուլո,
Ամեն դյորդում, յանդըմ, Զուլո:

Այս կրկնակը ժամանակի ընթացքում արդեն վերածված է· երկրորդ տողը ժողովուրդն ինքը թարգմանած և հայերեն, ավելացնելով և մի երրորդ տող, ինչպես ունի ձայնագրած Կոմիտաս վարդապետը, և և հետևյալը·

Հավո՛ր Զուլո, մադա՛թ Զուլո,
Քեզի տեսա, վառա, Զուլո,
Բացվիր, բացվիր, իմ վարդ Զուլո:

Անշուշտ Զուլոյի երեն վրա մի քանի յուրյակներ և քառյակներ կազմված կը լինեն, բայց Զուլոյի կրկնակի տակ յերգվածները վոչ բոլորը հավաստյալ Զուլոյինն են: Որինակ՝ վերցնենք Տպկը ու Խաղը, էր· 243, Զուլոյի անվան բերված 10 յուրյակը, որոնք բոլորը կան «Գնար Հայկականի» մեջ իբրև Զուլոյի խաղեր: Սրանցից հետևյալ յերկքը մեկին կարող են Զուլոյինը լինել·

Ցնո Զուլոն եմ Մասարեցի,
Հինդ որ սրբե, մեր տուն կնգի,
Դեմ աղոթքան յեկեղեցի:

Արև ընկավ Խոմուր բերդին,
Քա սևդն ընկավ մեջ իմ լերդին,
Ցնո քեզ տիրեմ, Բող գնա փերթին:

Հելո՛ւ-մելո՛ւ Մորու գոմեշ,
Իմ ձնո թաթիմ գալաշի վնաս,
Զուլոն եղնի ընձի վնասես:

Տասից այս յերկը յուրյակը, ասում ենք, կարող են Զուլոյինը լինել, մնացածները հավաստյալ անկախ խաղեր են, վորանք մեկին Զուլոյի վրա չեն յերգվում, այլև ուրիշների: Տեսնենք մեկմեկ:

1· Ձաֆար աղի նշխուն ագեն,
Նոր եմ եկել Զուլոյի մոտեն,
Ձը կշտացա անուշ հոտեն:

Այս յուրյակը, վոր ասվում է զեղծ Զուլոյի մոտից յեկող ազգի կողմից, մի ուրիշ ձևով մտնում է և «Իմա՛լ ննեմ» յերգի մեջ: Այստեղ յերգողն իր «մատաղ մանուկ» ամուսնուն դավաճանող կինն է·

www.naregatsi.org

Իմամալ ենեմ յես քու դարդին,
Իմ երեսիս պատռամ փարդին.
Նար եմ եկել յարիս մոտին,
Չկշտացա համ ու հոտին:

2. Տան քամ անցա, ճրագն եր վառ,
Դու կու մանիս զուգանի դառ,
Վորբեվերեցի՛, արի դիս առ:

Այս խաղի վարիանտները յերգվում են երբ Լուբիկի և Թուխ փուչով աղջիկս յերգեր: Ջավախքի Բուբմունք, յեր. 21. «Քիսի լուբիկ, լուբիկ, Գարնան քարեր վարդ եղիր, լուբիկ» կրկնակի հետ.

Իրիկվոբե՝ ճրագն եր վառ,
Դու կը մանեք զուգանի դառ,
Վորբեվերեցի՛, արի դիս առ:

Նույն տեղը յեր. 22. «Ախ լուբիկ, լուբիկ, լուբիկ, կանաչ ու կարմիր լուբիկ» կրկնակի հետ.

Առավոտան թունդիր վառ.
Լաչակ Քալի խառ ու մառ,
Կը լմանիս զուգանի դառ:

Ագպագրակ. Հանդես Լ—Ը. 444. Նույն յերգը կրկնակ ունի.

Շաւաֆով թուխ փուչով աղջիկ,
Դու բոլոր եքես,
Ցես ու դու ջախտ կը քեզենք,
Դու մոլորեր ես:

Իսկ խաղի վարիանտն է.

Առավոտան թոնիր վառ,
Դլոխ կապիր խառ ու մառ,
Վորբեվերեցի՝ դիսի առ:

Նույն խաղի վարիանտն է և Վանա Սազ Բ. յեր. 29. «Բուրիկ Մայրամ, բուրիկ բարիսեմ» և այլն. կրկնակի հետ.

Առավոտան Թոնիր վառ,
Սիմսակ լաչակ խառ ու մառ,
Կարմիր սոլերդ Քառ ու մառ,
Դու կը նմանիս զուգանի դառ:

Մենք ունինք և ուրիշները, վոր ավելորդ է բերել:

3. Ջաղցի բոլոր համ'ն ուռ եր,
Աչխարհ կ'ասեր՝ Ջուլոն ծուռ եր,
Մեջ իմ սրտին լալ ու դուռ եր:

Այս խաղի հիմնական մի յերկյակը դնում ենք Ազգ. Հանդես Լ—Ը յեր. 443. «Բաղմամի Ջան բաղմամի» կրկնակի տակ.

Գեղով կըսեն քա յար ծուռ,
Մեջ իմ սրտին լալ ու դուռ:

www.naregatsi.org

Այս խաղի մի զարդացած վարիանտը կա և Համով Հատով յեր. 305, ուրիշ յերգերի հետ կցված իբրև «Մոկացի Հայոց հարսանյաց սարը»։

Աչքարհ տանն՝ քո յար ծուռ եր,
Ալամ տանն՝ քո յար ծուռ եր։
— Խազար ծուռ եր։
Մեջ իմ սրտիս լալ ու դուր եր։

Սույն խաղի վարիանտն ունինք և հետևյալ ձևով։

Վանքի բոլոր մանդր նուռ և։
Սավդալի ինձ՝ չասեք ծուռ է։
Սեր ու սավդան իիսա մրմուռ է։
Ցերկիր կասեն՝ իմ յար ծուռ է։
4։ Թռչդիր վառե, յերեր և մուխ,
Կապե փուչին, Թորկեր և պուխ։
Ունքեր համար, աչքերն և Թուխ։

Այս խաղի վարիանտներն արդեն առաջ բերել ենք։ Հիշենք միայն, որ յերգվում և դանազան կրկնակների հետ։ Իբրև Լուրիկի յերգ, Ջավախքի Բուրմ. յեր. 20, 21, 22։ Իբրև Թուխ փուչով աղջկա, Ագդ. Հանդես Լ—Ը յեր. 444։ Իբրև Բուրիկ Մայրամ, Վանա Սազ. Բ. 29։ Իբրև Ալաջա սար «Գլեջան, Մբալե» կրկնակով՝ Համով Հատով յեր. 320 և այլն։

5։ Տան քով անցա, Թախ քելեցի,
Լանգավ զարկի, դեղին բացի,
Ցարս տուն չեր, նստա լացի։

Ջուլոյի յերգի այս տունը զարդացման դանազան ձևերով գտնում ենք և ուրիշ յերգերի մեջ։ Իբրև Լուրիկի յերգ, Ջավախքի Բուրմ. յեր. 22։

Ելա երդիկ, Թախ քելեցի,
Վառա զարկի, յերդիկ բացի,
Ցարս տուն չեր, նստա լացի։

Իբրև Ջանիմանի յերգ «Ջանիմանո» կրկնակի հետ Ագդ. Հանդ. Լ—Ը 443։

Ելա տանիք, Թախ քելեցի,
Ջարկի լանկե մ'երդիկ բացի։
Իմ յար տուն չեր, նստա լացի,
Փոս ու փուշման Թողի գացի։

Իբրև Ամարի յերգ «Բաղնի Ջանո» կրկնակի հետ, Գնար Մշ. և Վան. յեր. 24։

Ելա տանիս, Թախ քելեցի,
Լանկով ավի, երդիս բացի,
Կարմիր խնձոր դլորեցի,
Ցարս տուն չեր, նստա լացի։

Նույն տեղն յեր. 34։ Իբրև Խումարի յերգ։

Ելանք տանիս, Թախ քելեցինք,
Կարմիր խնձոր դլորեցինք,
Երդիս բացինք, երիվացինք,
Խումար տուն չեր, նստանք լացինք։

Նույնը բառն անվան հետ կապված Համով Հատով։ յեր. 327։

www.naregatsi.org

Տան քով ընցա, թախ քելեցի,
Բազեն տուն չեր, նստա լացի,
Տղեն կուլաթ, սրտբեցի։

6· Դու կայներ ես դեմ ամբոցին,
Ջուխտակ շամամ մեջ քո ծոցին,
Դու կբխաղաս խետ վզնոցին։

Այս խաղը մեր ժողովածուի մեջ կա իբրև Յանկյի յեզդ.

Յանկն կայնել դեմ ամբոցին,
Յանկն կբխաղեք հետ վզնոցին,
Ցես մալուլ ենք ճերմակ ծոցին։

Սրա վարիանտներն են դարձյալ մեր ժողովածուից.

Կայնել ես դեմ ամբոցին,
Կը խաղաս քո վզնոցին,
Երկու շամամ քո ծոցին,
Ջուխտակ Թուբինջ քո ծոցին։

Դու կայնել ես դեմ ամբոցին,
Դու կը խաղաս հետ վզնոցին,
Մայիլ եղա ճերմակ ծոցին։

Սրա վարիանտն է և հետևյալը, որ իբրև պարերգ կա Տ· Նավասարդյանի Հայ ժողովրդ· Հեքիաթներ, Զ· գիրք· էր· 92·

Դուն կայներ եր դեմ ամբոցին,
Հա՛ կբխաղեր խետ վզնոցին·
Ծառա քու ոսիտակ ծոցին,
Վոր դուն դառնաս յես ի՞նչ անիմ։

7· Դու կայներ ես դաբհի դուռ,
Ճենջդ մանի խանչլի բուռ,
Ձիս երեցիր սավդալ ու ծուռ։

Այս խաղն իբրև քառյակ կա Վանա Սաղ· Ա· էր· 41· «Կանչեմ յաք, արի» և այլն կրկնակի հետ.

Տնեն ելաք, կայնաք ի դուռ,
Մենջդ ի բարակ խանչալի բուռ,

Քամին եգաք ետու չուռ մուռ,
Ցես քո սիրուն ավդալ ու ծուռ։

Նույնը Քնար Մշ· և Վան· էր· 22· «Աղջիկ, յար առենք» և այլն· կրկնակի հետ.

Դու ելել ես, կայնել ես դուռ,
Մենջդ բարակ խանչալի բուռ,

Քո հորն ու մոր աչքերն ևկուր,
Տղեն տեսավ, աղջիկն ետուր։

Այսպես տեսնում ենք Ջուլոյի անվան յերգված խաղերը տալիս են և Լուբիկի, Յանկյի, Ամամբի, Խումամբի և այլն համար։ Դրանք, ուրեմն, այն կարգի յերգերին են պատկանում, որոնք ընդհանուր դույն ունեին միայն և, ինչպես «Հազար ու մի խաղի» Ա· հիանյակի ծանոթության մեջ դրել ենք, «անկապ տներով, խառն ի խուռն յերգվում են այս կամ՝ այն անձի, կամ զանազան համանման դեպքերի մասին»։

Անցնենք մյուս տեսակների հարաբերությանը։

Բառերի և խոսքերի ազդեցության տակ հարաբերությունը լինում է ճիշտ այնպես, ինչպես մոր հիմնական յերկյակների միանալուց քառյակներ են կազմվում։ Մի խաղի մեջ յեղած մի բառ կամ խոսք հիշեցնում է

www.naregatsi.org

մի ուրիշ խաղի մեջ յեղած նույն կամ համանման բառը կամ խոսքը, ուսաի և յերկրորդ խաղը, յերբեմն և յերրորդը և այլն, սովորաբար առաջին խաղի յետևից, և յերկու, յերեք ու ավելի խաղ՝ մի ցածր մնում են հիշողության մեջ և ապա յերդվում թե միասին և թե անկախ:

Այս կերպով կազմված մեծ յերգերի անուն իմաստով իրարու ավելի յեն հարմարվում, քան դեպքի կամ անձի աղերսության տակ միացածները: Սակայն սրանց մեծ մասն ևս արվեստի տեսակետից անհաջող բաներ են, որովհետև անկախ խաղերի հարադրությունն այստեղ արտաքին և հիմնված չե բովանդակության վրա: Ուրիշ բան է, յերբ բառերի հետ միասին և խաղերի իմաստն ե իրար բռնում, կամ անկախ խաղերն իրար հարադրվում են միայն նրա համար, որ իմաստով նման են իրար կամ որևե ներքին առնչություն ունին իրար հետ: Այս դեպքում յերգերի կազմությունը հիմնված ե բովանդակության վրա, ուստի և անունը միասին կազմում են իմաստալից ամբողջություն:

Մեր ամենից հաճող ժողովրդական յերգերը կազմված են այս վերջին տեսակի հարադրությամբ: Ինքնին այստեղ, իհարկե, անկախ խաղերից կազմված մեծ յերգերի մասին ե և ոչ թե այն մեծ յերգերի մասին, որոնք մի անդամից իրրև ամբողջություն են հորինված:

Տեսնենք այս յերկու տեսակի հարադրությամբ կազմված յերգերի ոճերնահները: Ամենից առաջ պիտի նկատել, որ այսպիսի յերգերն ևս մեծ մասամբ աղճատված են մեր ունեցած ժողովածուների մեջ, ինչպես են և առանձին առանձին վերցրած խաղերը: Այդպիսի յերգերի «բնագիրն» էլ պետք է նախ վերականգնել, որպեսզի աների ներքին իմաստի կապակցությունը պարզ հասկանալի լինի: Բայց, ցավոք, մեր ժողովածուների աղճատվության պատճառով այդ անելն անհնարին է: Մենք կը բավականանանք յեղածով և մեր առձեռն ունեցածով:

Լոկ բառերի պատճառով, առանց իմաստին ուշադրություն դարձնելու, հարադրությամբ կազմված մի յերգ է, օրինակ, Վանա Սազ Ա. 45 «կոքմանների յերգ» վերնագրի տակ դրածը: Այս յերգն իրրև ամբողջություն և դրված, բայց ամբողջությունը լոկ արտաքին է: «Կաքմներ» առելով հասկացվում է «աղջիկներ», և հավանորեն վարիանտի մեջ ևս «աղջիկներ» կրկնի, դավառական ձևով «աղչներ», որ, ինչպես ուրիշ խաղերի մեջ, հանդ և կազմում «ջաղցներ» բառի հետ: Վանա Սազի մեջ հիշված յերգի առաջին յերկյակն է.

կաքմներ, կաքմներ,
(Աղչներ, աղչներ)
Եքեք, երթանք ջաղցներ:

www.naregatsi.org

Վորովհետև այս սկզբի յերկյակը, վոր խնամակս կրկնակ է, վերջանում է «ջաղաց» բառով, ահա յետևից գալիս են մի շարք յերկյակներ նույն բառով.

1. Ջաղցի առուն ջուր կըղեր,
Աղջիկ լաճուն դյուր կըղեր:

2. Ջաղցի առուն կանաչ եր,
Աղջիկ լաճուն ճանաչ եր:

3. Ջաղցի տանիքը փուռ եր,
Քաթ կըթալիմ՝ կը սուսեր:

4. Սեռիկը իլին յեղ եր,
Իմ յար Թուխ աչք, Թուխ բեղ եր,
(Վար. աղջիկ լաճուն լայեղ եր):

5. Ջաղցի առուն ավազ եր,
Աղջիկ լաճուն դավազ եր:

6. Իմ ծոցի կուբինը Թուշ եր,
Իմ յարոջ յերես պուճ եր:

7. Սարերն իլին ասեղ եր,
Իմ յար նորախասեր եր:

8. Սարերն իլին ալաշ եր.
Իմ յարն ալաշ կալաշ եր:

9. Դարի (վար. սարի) տակի պատաճն,
Իմ յար քանց քոն խատաճն:

10. Կաքվներ, կաքվներ,
Շելա չապիկ ծալ առեք,
Կարմիր երես խալ արեք.
Ձեր պաղ ձիկ հալալ արեք:

11. Բարձի տակին հատ կու դներ.
Տեղ ձղեցի փոնթ կուզեր.
Կաքվներ, կաքվներ, (աղչներ, աղչներ).
Ելեք երթանք ջաղցներ:

Այս յերգի տների կապակցության համար պետք է նկատել, վոր 4-րդ յերկյակին ունի և հետևյալ վարիանտը.

Սեռիկը իլին յեղ եր,
Աղջիկ լաճուն լայեղ եր:

Հասկանալի յե, վոր սկզբնական հարաղրության ժամանակ այս վարիանտն և կցվել մյուսներին և հատկապես «աղջիկ լաճուն» բառերի պատճառով, վոր կա մյուս յերկյակների մեջ էլ: Այս 4-րդ յերկյակին այնուհետև իր բառերով հիշեցրել և 7-րդը, վոր ունի և հետևյալ վարիանտը.

Ճոխդ ուլունք ասեղ եր,
Ջանս ջանիդ լայեղ եր:

10-րդ քառյակի համար ունինք հետևյալ վարիանտները, վորի մեջ կա կապող բառը, «աղջիկ»:

Աղջի, չիլեն ծալ եքա,
Շելեն ծալ ու մալ եքա,

Եդ քո կարմիր Թշներից
Պաղ մի տուր, հալալ եքա:

11-րդ յերկյակին ունի հետևյալ քառյակը.

Տեղը դցեմ փոթ կըգա,
Աղջիկ լաճու մատ կըգա.

Մեռնեմ եդ խաս բըչամիդ,
Մինչեն անուշ հատ կըգա:

www.naregatsi.org

Այս վարիանտով կապակցող բառն է դարձյալ «աղջիկ լաճուս», ինչ կա նախորդ յերկյակների մեջ:

Անհատականալի մնում է միայն 6–րդ յերկյակի հաբաղրութիւնը, որի համար վարիանտներ չունինք ձեռք առած: Յեթե այս յերկյակը մի կամ յերկու յերկյակ հետո յեկած լիներ, այն ժամանակ «յար» բառով կը կապվեր:

Ավելորդ ենք համարում ասել, վոր այս յերգի յերկյակներն ունին և քառյակներ՝ զարդացած ձևով. բերենք միայն 1–ին յերկյակինը.

Ջաղցի դանեն ջուր կըզա,
Աղբեր քրոջ հյուր կը գա.

Աղջի ջան, հանչա՝ լսեմ,
Քանի սրտիս դյուր կը գա:

Նույնատիպիկը խաղերը բնականաբար չարվում են յեռանդ յեռանդ և կազմում մի ամբողջություն: Այդպիսի մի յերգ դանում ենք Վանա Սազ Ա. յեր. 41. հետևյալ կրկնակով.

Քա՛ նազերով, քա՛ խոթոսիկ, դու վի՞րդ ես,
Աչխարհ դիսի, ալամ դիսի, դու ինչ ես:

Իսկ հարաղրված յերկյակներն են.

Վարդն ի բացվե Վանա քաղքի եզեռաթը,
Աստված սիրես, մեկն ուղարկի ձիկը ասր:
Վարդն ի բացվե առավոտան խավխավուց,
Իմ յար բանչեն կայներ երկու ձեռն ի ծոց:

Վարդն ի բացվե առավոտան չաղերով,
Իմ յար բանչեն վարդ կըթպի մազերով:

Վարդն ի բացվե Վարդվերի կիրակին,
Քո սերն ինկե մեջ իմ սրտի պռակին:

Այս յերկյակներն սկզբնապես իրարուց անկախ են: Վերջին յերկյակն, որինակ, մի վոտք ավելացած, դանում ենք նույն դրքի մեջ, յեր. 54. մի ուրիշ յերգի վերջում, վոր կազմված և նույնպես նույնատիպիկը բառերով:

Մեկ ըս ասրի ծառեր ծաղկին Ծառազարդարի կիրակին,
Քո սերն ինկե մեջ իմ սրտի պռակին:

Այս միևնույն յերկյակը դանում ենք և Զավախքի Բուբմունք, յեր. 34. իբրև անկախ յերկյակ «վարդ» բառով միացած մի ուրիշ յերկյակի հետ:

Վարդ կըթացվի Վարդևորի կիրակին, Հալդը վարդ կը ժողովե, յես հորան մորաս,
Ցես չեմ դիմանա իմ յարիս կրակին. Հալդը վարդ կը ժողովե, յես հորան մորաս,

Նույնատիպիկը բառերով հարաղրված մի յերգ և, որինակ, և հետևյալը՝ Վանա Սազ. Բ. յեր. 53. «Հէյրանդ ի՛նչնեմ, յար յար, Ջանիդ զուրբան, իմ յար» կրկնակով.

www.naregatsi.org

Ուսաւ՛ կուգաս չորթալեն,
Աստված պահէ քո ջուխտ բալեն.
Ձաքաթ մը տուր նէ քո մալեն,
Ջարանջամ յես իմ հալեն:

Ուսաւ՛ կուգաս, եղեմանա,
Աստված քեզի դուռ մը բանա.
Պաչիկ մը տուր, մարդ չիմանա,
Բոշ բան մի՛ անեք քեզ մհանա:

Ուսաւ՛ կուգաս ուշիկ ուշիկ.
Վառքերդ խթվի կակուղ փուշիկ.
կաթմիր երես, պազն անուշիկ.
Տուր, վոր կծեմ կակուղ թշիկ:

Վերլուծենք հետևյալ յերգը, վոր կա Վանա Սազ. Ա. 36.

1. Մաեր ես իգին, խաղող կըքաղես
Շամամ ծծվելքավ չաքար կըմաղես,
Ալմաստ խանչալավ սրտիկս կըդաղես,
Աչքավ ունքերով դուռ ձի կըմաշես:

2. Ելեր ես իգին, ավուղ ջուր կուգա,
Ֆաֆուր վարդ բացվի, անուշ հոտ կուգա:

3. Իմ հերանց իգին վարդ հազար թավուր,
Մեջ են վարդերաց իմ վարդն ի քաֆուր.
Շահ բլբյուլն իջավ վեր իմ վարդին հյուր:

Այս յերգը ըստ ինքյան մի սիրուն ամբաղձություն է կազմում միայն ազատազրված: Նախ՝ կրկնակը՝ «Արի, յար, արի, խռով մի մնա. Աստվորես մալ ձի քի չի մնա» չի համամատվում բուն յերգին: Ապա յերգը կազմված է յերեք խաղից, վորոնց առաջինը մի ավելորդ չորրորդ տող էլ ունի, վոր սկզբնապես չի յեղել խաղի մեջ, ուստի և հանդն էլ թուլլ է: Սկզբնական մի յեռյակ գտնում ենք Համամ Հոտոյ յեր. 328. ուրիշ յերգերի հետ խառն:

Ելեր ես իգին, խաղող կըքաղես,
Շամամ ծծերովդ չաքար կը մաղես,
Աչքիդ խանչալով սրտիկս կըդաղես:

Այստեղ արդեն «մաեր ես իգին» ձևի փոխանակ ունենք «ելեր ես իգին»: Այս սկիզբն էրեն և քաշել 2-րդ խաղը, վորը, ասկայն, նույնպես ապամավազված պիտի լինի, քանի վոր մի տող պակաս է և հանդն էլ չի բռնում: Վարիանտը չունինք, վոր ուղղենք: Այս յերկրորդ խաղի «վարդ» բառն էլ իր կողմից միացրել է իր հետ 3-րդ խաղը, վոր անկախ յեռյակ է, և վորի համար ունինք հետևյալ վարիանտը.

Բաղչա մ՛ եմ անկել, վարդ հազար թավուր,
Մեջ ըմեն վարդին իմ վարդն եր քաֆուր.
Շահ բլբյուլն իջավ վեր իմ վարդին հյուր:

Վանա Սազ Ա. 53. և Համով Հոտով յեր. 322. գտնում ենք սովորական յոթն-վանկանի անկախ քառյակներից կազմված մի յերգ, վոր հարազրված է բովանդակությամբ: Ամբողջի մեջ նկարագրվում է ազայի հուսահատ հոգեկան վիճակը, յերբ մերժում է աստանում աղջկանից: Տղան ա-

անլով թե հետամնաց է, մի վերջին փորձ է անում դարձյալ՝ համոզելու աղջկան:

Փակագծում առած տները չկան Սրվանձտյանի ժողովածուի մեջ.

Կ'եքիամ, կ'եքիամ, հեռանիմ,
Ցես քյու դարդեն (վաբխանա՝ սիրուն)
Մեռանիմ։ Ոնքերդ կալամքաշ աղջիկ,
Իմ սիրածը կորուսի,
Հապա յես ինչո՞ր անիմ։

(Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Մազերդ ի սիրմա աղջիկ,
Իմ սիրուն աչեր չան աղջիկ)։

(Աչյաս ֆատան խառաչով,
Մազերդ ի սիմ սիրմաչով,
Բոլոր դերդանիդ վրա
Շաբեմ անգին քարերով)։

Շալը դլուխդ կ'ալաբաճա,
Հիալտա կ'անցնի սրտիս,
Ախոր յեսի չսիրես,
Աճեր ինչ մ'նեղնա հալիս։

Սիմ սրմալի ալ փաչիկ,
Աղջիկ սրտիկս կը մաչի.
Մեկ տեսդ ի չեմ ի տես
Հարյուր հազար դաւդուչի։

Շրաքեն եղեր կըհիա,
Աչուընդը կըլալա.
Երթամ քովը մտանամ,
Կըվախենամ՝ եղնա դըժա։

Աղջիկ, մազերդ հյուսելիը,
Դանչիդ ակհան քսելիը,
Ելայիը վաքդի ծաղին
Բլբուլի պես խոսելիը։

Աղջիկ, Անունդ ի Թումա,
Ծոցիդ յերկու դումդումա.
Եկո՛, ինձի խոսք մի տուր.
Քեզի պահե տուրը Թումա։

Անկելորդ ենք համարում ցույց տալ, թե վորտեղ կան սրա անկախ քառյակները։

Վերևում ասացինք, վոր խաղերը հարադրվելիս հաճախ վերամշակվում են միասին մի ամբողջություն կազմելու համար։ Այսպես որինակ Վանա Սազ Ա. յեր. 41. միացած են յերկու քառյակ, վորոնց յերկրորդի վերջին տողը դարձած է. «Երվամ մնաց քո կարոտեն», այսինքն սիրուց, փոխանակ իսկական ձևին «յարն ի դարձե իր կրարեն», վոր դտնում ենք նույն դրքի մեջ յեր. 62 և ուրիշ տեղեր.

Տնեն ելար, կանար ի դուռ,
Մեջդ ի բարակ՝ խանչալի բուռ.
Քամին եգար, եաու չուռ մուռ,
Ցես քո սիրուն ավդալ ու ծուռ։

(Պաղ) ջուր կուդեր վերին սարեն,
Կուդեր կաթեր մարմար քարեն,
Ձեռավացուցեր սրտիս յարեն,
Երվամ մնաց քո կարոտեն։

Մեր ժողովածուների մեջ, ինչպես անկախ քառյակներն իրար յետևից չարվում են անխտիր, նույնպես կից ապատրված են հաճախ յերկու և ավելի ամբողջական յերգեր, վորոնք յերբեմն չափով ել իրարուց տարբերվում են։ Այդպիսիները, վորոնք ժողովրդի բերանին հենց հարադրվում են, բնականաբար պիտի անջատել իրարուց։ Վերցնենք յերկու այդպիսի յերգ։

Վանա Սազ. Բ. 43. կա հետևյալն իբրև մի ամբողջ յերգ դրված.

www.naregatsi.org

1· Տնեն ելար, կայնար տանիս,
Քեզ տեսնելուս մաշավ իմ միս.
Բոյդ նման ի գարնան կամիչ,
Ասի՝ կարեմ, չելա կիմիչ:

Տնեն ելար, հայց կըտանես,
Ազար լաճուն աչքով ի՛տանես.
Վոր մտանիս՝ աղբեր ի՛տաես,
Վոր գաւանա՝ սիրով մաշես:

2· Մեր տուն մտիկ, ձեր տուն մտիկ,
Երթանք քաղենք վարդիկան խտիկ.
Իմ յար քանց քոն չատ խորտիկ,
Ցարօջա մեռնիմ, անուն Վարդիկ:

Վարդիկ սիրուն ի վարդի նման,
Բլբյուլներք վերեն հայրան ելան.
Վարդ վոր պակեր ծաղիկ կըտար,
Վարդիկիս հոտը մեջեն կուտար (կուդար):

3· Դարբի տիկեն ժուխ կուգեր,
Աղջիկ լաճուն հյուր կուգեր.
Սիրած սիրածին դյուր կուգեր.
Ցարօջ աչքից ջուր կուգեր:

Բարձ վերուցեմ հոտ կուգա,
Կարմիր խնձոր դյուր կուգա:

Խնձոր կիսից կծած եր,
Ջոբս բոլորն արծաթած եր:

Խնձոր յարօջ ուժած եր,
Ցարօջ ծառից պրծած է.

Ասի տապիմ, կիս անեմ,
Չկիմիշա, վոր ուտեմ:

Այս՝ իրրև մի ամբողջութիւն դրված յերդը խակապես յերեքն է: Առաջին յերդը յերկու տնից է, վորոնք իրար հարադրվել են «տնեն ելար» սկսվածքով:

Ցերկրորդ յերդը, վոր մի առանձին ամբողջութիւն ունի ըստ բովանդակութեան, դարձեալ յերկու խաղից է կազմված, և առաջին յերդի հետ կցվել է միայն «տուն» բառով: Ցերկրորդ յերդի առաջին խաղն իրրև անկախ քառյակ ունի և հետևյալ ձևը. Քնար Հայկ. 177.

Մեր տուն, ձեր տուն մտիկ մտիկ,
Դու կապել ես կարմիր դոտիկ.
Երթանք քաղենք կանաչ (վար. հորթկան)
խոտիկ,
Տեսնենք վի՞ր յարն է խորոտիկ:

Ցերդիչն այս քառյակի 2–րդ տողը դուրս է ձգել, 4–րդը դարձրել՝ «Իմ յարը քանց քո չատ խորոտիկ», և ապա ավելացրել է մի նոր տող իրրև 4–րդ՝ «Ցարօջա մեռնեմ, անուն Վարդիկ»: Այս ներքին փոփոխութիւնն անհրաժեշտ է յեղել յերդի հաջորդ տունը հարադրելու համար, վոր սկսվում է «Վարդիկ սիրուն ի վարդի նման» տողով:

Ցերրորդ յերդը նույնիսկ 7–վանկանի չափով ել տարբերվում է 8–վանկանի նախորդներից: Ըստ յերեվույթին չի հաւակացվում, թե ինչն է այս բոլորովին անկապ յերդերի մեջ իրրև կապ մտածվել: Բայց յեթե վերականգնենք նախորդ յերդի վերջին տողի բնագիրը, այդ մեզ հասկանալի կըլինի: Այդ վերջին տողն է. «Վարդիկիս հոտը մեջեն կուտար», վոր աղճատված է: «Հոտը» բառը պիտի լինի «հոտ», այսինքն մի վանկ պակաս, ինչպես պահանջում է վոտանավորի չափը: Ապա այս տողի վերջին բառը «կուտար» նույնպես աղճատված է, վորովհետև հանգ չի կազմում նախորդ

www.naregatsi.org

տողի հետ, վոր նույնպես «կըտար» բառով է վերջանում: Շատ պարզ է, վոր վերջին տողի «կուտար» բառի տեղ պիտի լինի «կուդար»: Ուրեմն ամբողջ տողը. «Վարդիկիս հոտ մեջեն կուդար»: Ցերդն այս ձևով արդեն կարող էր իր հետ միացնել հաջորդ յերգը, վոր նույնպես «Կուդեր=կուդար» բառով է վերջանում:

Ցերրորդ յերգն ըստ յերևույթին իմաստալից կապակցություն չէ. բայց, կարծում ենք, միայն այն պատճառով, վոր աղճատված է: Այդ յերգի 12 տողը ժողովողը դրել է իրրև յերեք քառյակ. բայց այդ ճիշտ չէ: Ցերդն իսկապես կազմված է չորս քառյակից, միայն 2-րդ և 4-րդ քառյակները թերի յեն մնացել: Դնենք այդ քառյակների տեղ մեզ ծանոթ վարիանտները, վորոնք դուրս և շատ հաջող չեն, և կը տեսնենք, վոր յերդն ավելի իմաստալից է դառնում.

Բարձր սարեն ջուր կըգա,
Աղբեր քրոջ հյուր կըգա.
Ինչ անեն հերն ու մերը,—
Աղջիկ ազին դյուր կըգա:

Տեղ եմ քցել փոթ կըգա,
Ցար յարի մոտ կըգա,
Կարմիր խնձոր բարձի տակ,
Մեջեն անուշ հոտ կըգա:

Կարմիր խնձոր կծած ա,
Ջորս բալոցն արծաթած ա,
Աղբերս ուղեց չավի.
Ախ՝ յարի ղրկած է:

Ախ՝ տապկիմ կես անեմ,
Չի կիմիշա, վոր ուտեմ...

Մեր ժողովածուի մեջ վերջին յերկյակի համապատասխան քառյակ չտեսնենք. հավանորեն դա նախորդ քառյակի աճումն է: Մեր ժողովածուի մեջ կան վերևում դրած քառյակների համար մանր տարբերություններ ևս, վորոնցից այս կամ այն, դուրս, ավելի իմաստալից դարձնելին յերդը. բայց բերածից եղ արդեն յերևում է այս խաղերի իմաստալից կապակցությունը: Ցերդի բովանդակությունը վերլուծել չենք ուզում, միայն այսքանը նկատենք, վոր յերդի ամբողջությունը հասկանալու համար՝ առաջ պետք է քառյակների իմաստը լավ ըմբռնել:

Վերցնենք մի յերգ ևս Գնար Մշեց. Ե. Վան. յեր. 31.

1. Եսար ուրթաթ ի, պատ ի,
Սրտիկ արծաթի թաս ի.
Սրտիկ մալուլ մի՛ մնա,
Աչիաբք մարդի չի մնա:

Սրտիկ սինի անդուկ եր.
Կոտրալ են սինի անդուկ.
Թռալ են կարիր ճնճղուկ,
Թռալ բանձրիկ սար եկավ:

2. Տ'ևնեմ բանձրիկ սարերաց,
Հավիլ ուշաթակ անեմ.
Կոպալ իր ձեռքեն առնեմ
Թալեմ քիրեն երիցեմ:

Մոխիրդ ի տամ վոսկերչուն,
Մախչա չինե իմ ճակատուն.
Մատնիք չինե իմ մատուն.
Կուպչա չինե իմ ձեռքուն.
Գոտար չինե իմ մեջքուն.
Գուլպաղ չինե իմ վոտուն:

3. Աղբե'ր, դու արի, գնա,
Շատիկ քո հան ու գնա,
Մոխրաջրով լվանամ,
Թափ տամ, վեր կենի փռեմ:

www.naregatsi.org

Ցարի՛կ, դու արի, գնա,
Շատիկ քո հան ու գնա։
Սաղոնջով լվանամ,
Թափ տամ, վեր ծառին վռնամ ։

Այս բոլորը՝ ժողովողը դրել է իբրև մի ամբողջություն «Դևհև դընդ դընդ, դեհև ջանդ» կրկնակի հետ։ Բայց դա իսկապես յերեք յերգ է։

Առաջին յերգի առաջին յերկու տողը հետևյալ քառյակի հիմնական յերկյակն է.

Ես որ ուրբաթ է, պաս է,
Սրտիկ արծաթե թաս է.

Հոգիս դատի, վարդապետ,
Ինչի՞ ասիր չհաս է։

Իսկ յերկրորդ յերկու տողն իսկապես մի կրկնակ է, վոր «սրտիկ» բառի պատճառով միացել է առաջին յերկյակին։ Առաջին յերգի յերկրորդ տունն առանձին անկախ քառյակ է, վորի մի վարիանտը գտնում ենք Վանա Սաղ. Ա. 64 կցված ուրիշ քառյակների հետ.

Քո ծոց ձիկ սալվի անդուկ,
Ցես ելնի կարիբ ճնճղուկ.

Վոր կոտրեր են սալվի անդուկ,
Թռներ են կարիբ ճնճղուկ։

Այս քառյակը «սրտիկ» բառով միացած և նախորդին և յերկուսը միասին կազմում են մի ամբողջական սիրուն յերգ։ Նախ նկարագրվում է մի վշտահար անարատ սիրտ, վոր ինքն իրեն մխիթարել և ուզում աշխատհի ունայնության համար։ Բայց իսկույն յերկրորդ տան մեջ նա ընկնում է անմխիթար հուսահատության մեջ. յերգիչը հիշում է ժողովրդական հավատալիքը, թե մարդուս սիրտը մի անդուկ է, վորի մեջ մնում է հոգին իբրև պանդխտած ճնճղուկ. մեռնելիս անդուկը կոտրվում է և այդ ճնճղուկ հոգին պրծնում է թռչում ծառերն ու սարերը։ Այդ յերգչի սրտի անդուկը կոտրվել է ու հոգին թռել է բանձրիկ սարը յելել։ Ուրեմն նա մեռած մարդ է, այլևս մխիթարության հույս չունի։

Ցերկրորդ յերգը մանկական է։

Իսկ յերրորդ յերգը սիրուն կերպով հարադրված յերկու անկախ քառյակ է։ Դրանցից եյականն է յերկրորդ քառյակը, առաջինը նրա զարդացումն է։ Ցերկրորդի վարիանտը գտնում ենք իբրև անկախ խաղ Ազգապր. Հանդես. Դ. դիրք 1898. յեր. 168.

Ա՛յ տղա, արի, գնա.
Շատիկդ առիր ու գնա.

Լվամ, լվամ չիսրբվի,
Վարդաջրե՛ս— խառբվի։

Նույնը գտնում ենք Վանա Սաղ Ա. յեր. 43. անկապ կերպով միացած ուրիշ խաղերի հետ.

Ես չապիկդ հան գնա,
Ինչ ջրով լվամ չիսրբվի,
Վարդի ջրով կ'սրբվի.

Ծալ տամ, ծոցիս վռնամ,
Փուչին թալնամ, նոր վռնամ։

www.naregatsi.org

Նույնը և կա և Համով Հուտով յեր. 310, միացած ուրիշ խաղերի հետ.

Եկար ու անցար, դիշեր չմնացիր,
Շալդ ու չադիկդ Քողիդ դնացիր.
Լվամ, լվամ, չիսալկի.
Բերնիս փուքով փոչին հանեմ.
Շուտ տամ ու ծալ ծալ անեմ:

Նույնը գտնում ենք դարձյալ Ջավախքի Բուբմանք յեր. 20. ուրիշ յերգերի հետ միացած.

Ծո՛ մանչ, տուր չուխադ լվամ,
Լվամ, լվամ, չիսալկի,
Վարդի ջրով խասլկի,
Լվամ ու քարին ձգեմ,
Քամի տամ ու ծառին ձգեմ,
Ծալեմ ու ծոցս դնեմ:

Այս ժողովածուի մեջ առնված են հարցաւորից ավելի յերգերը, վորոնք գտնված են հինգ, վեց և ավելի տաղերից և խաղիկների դարդացումն են:

Մ. ԱՖԵՂՅԱՆ

www.naregatsi.org

Ե Թ Ա Ջ Ա Ր Ե Ն

Այս աշխատութեան սկիզբը դրվել է իմ և Կոմիտասի «Հազար ու մի խաղ» ժողովրդական յերգարանը խմբագրելու առթիվ 1900 թվին: Այդ ժամանակներում ժողովրդական յերգերը շատ սիրված էին իրենց յեղանակների պատճառով: Կոմիտասն ղրաղված եր յեղանակների մշակումով, իսկ յես՝ ժողովրդական յերգերի ուսումնասիրութեամբ: Ցերկուսս էլ ունեինք բավական թվով քառյակներ ժողոված. ճեռք բերինք բազմաթիվ խաղեր նաև մեր ընկերներից ու Գ. Ճեմարանի աշակերտներից, վորոնց անունները, ցավոք, չեմ կարող հիշատակել այստեղ, վորովհետև չեն պահված: Բայց այդ ամենը բավական չհամարելով, ինչպես դրել եմ մի ուրիշ տեղ), ամառն իրենց ծնողների մոտ և առհասարակ դյուղերը գնացող աշակերտներին պատվիրեցինք ժողովել ժողովրդական յերգեր: Այս միևնույնը կատարել ավինք և հայրդ տարիները, այնպես վոր մեզ մոտ հավաքվեցին տասնյակ հազարավոր թերթիկներ, վորոնց վրա գրված եյին ժողովրդական յերգեր:*

«1900 թ. աշնանն արդեն սկսեցինք աշխատել ժողովրդական յերգարանի վրա. բայց մի յերկու ամիս չանցած՝ տեսանք, վոր նախ պետք եր այդ հավաքած նյութերը մշակել, այնպիսի դրության բերել, վոր դրանցից ոգտվել կարելի լիներ: Թողնենք յերգարան կազմելը և սկսեցինք բաղդատել մեր ունեցած ժողովրդական յերգերը, վորպեսզի կարողանայինք վերջնել անխառն և աղճատված յերգերը և ոգտվել միայն խառատալից վարիանտներից: Ցերկու տարի միասին պարապեցինք այդ աշխատանքով: Ցերկար տևվեց այդ, վորովհետև հեշտ չեր քառյակների վոտոխակներն իրար մոտ բերել: Գործը հնարավոր յեղավ արագ առաջ տանել միայն այն ժամանակ, յերբ յես նկատեցի, վոր քառատողերի ամենահատատուն մասը հանգերն են, և առաջարկեցի Թողնել բառարանի կարգով դասավորությունը և հանգերի կարգով դասավորել ճեռքի տակ ունեցած խաղերը: Հետևանքն այն յեղավ, վոր նույն քառյակներն իրենց վարիանտներով իրար մոտ յեկան, և մենք տեսանք, վոր միևնույն քառատողը զանազան մարդկանց ճեռքով և զանազան ժամանակներում գրված լինելով՝ հաճախ

) Կոմիտաս, ժողոված-ու նվիրված Կոմիտասի ծննդյան 60-ամյակին, հրատ. Ռուբեն Թերլեմեզյան, յեր. 53—69, Մ. Աբեղյան, «Հիշողությունները Կոմիտասի մասին»:

www.naregatsi.org

բառացի կրկնված և տասը, քան և ավելի անգամ»: Այսպիսով մեր թեր-թիկների ամենամեծ մասը վոչնչացավ, և մենք ունեցանք 1263 քառյակ իրենց վարիանտներով:

Հետագայում միասին չշարունակեցինք մեր սկսած գործը: Կոմիտասին չեք հետաքրքրում բանասիրական աշխատանքը: Նա թողեց այդ: 1902 թվից հետո յես մենակ աշխատեցի: Շարունակելով մենակ ժողովել և բաղդատել քառյակները՝ յես բազմաթիվ ուրիշ այդպիսի վոտքը յերդեր ել ձեռք բերեցի իմ ընկերներից ու ծանոթներից: Ժողովածուն հետզհետե մեծացավ:

Նույն ժամանակներում մտադիր եյի լույս ընծայելու այդ ժողովածուն և դրա համար իրավունք պատրաստեցի մի ուսումնասիրություն: Բայց չհասավ թողի այդ միտքը, կիսատ գործ համարելով իմ ունեցած նյութերի հրատարակությունն, ասածս ներառելու և ավարտվածները: Ուսումն 1905 թ. առանձին հրատարակեցի հիշված ուսումնասիրությունը («Ժողովրդական խաղեր» վերնագրով), վոր և մասամբ ոգտագործվում է այս գրքի «Ներածության» մեջ:

Այնուհետև սկսեցի արդեն ավարտված յերգերը համեմատության առնել, և դուս, վոր դրանց մեջ բազմաթիվ քառյակներ և վարիանտներ կան, վոր յես չունեմ, և վոր ժողովրդական խաղերի ժողովածու կարելի չե կազմել՝ առանց սպառիչ կերպով ի մի հավաքելու նաև ավարտվածները: Այդ աշխատանքը կատարել եյի մինչև 1914 թ. և ապա տարիներ ընդհատելուց հետո՝ Աբգարյանց Մուսայանի հորդորով վերսկսեցի և ավարտեցի 1927 և 1928 թվերին:

Շատ ժամանակ և մեծ ջանք խլեց ինձնից այդ գործը: Պետք եր տեղն անգամ վորոնել դնել տված խաղի համապատասխան վարիանտն իմ ժողովածուի մեջ: Իսկ այդ հեշտ չեր: Արդարև քառյակները հանդերձի կարգով եյին դասավորված, բայց դասավորությունը կատարյալ չեր և արված եր վոչ թե այրբենական կարգով, վերջի տառերից յետ դնալով, ինչպես այս ժողովածուի մեջ, այլ դա հիմնված եր ա, ե, ի, ո, ու, ը ձայնավորների վրա: Մի տեղ եյին խմբված նախ՝ Ա ձայնավորով կազմված հանդերձը, ապա՝ Ե ձայնավորով կազմվածները և այլն: Այսպես որինակ՝ «Աչուդի պես խաղ աստ» խաղը ժողովածուիս մեջ դանելու համար՝ վոչ թե պետք եր յերգել, ինչպես այս ժողովածուի մեջ է, տողավերջից և տողը կարդալ վերջից «աստղախ», այլ պետք եր Ա ձայնավորի կարգի մեջ դանել «աղ» հանդերձը և դրա մեջ վորոնել տվյալ յերգը: Նույնպես, որինակ, «Ծաղ առեմ խաղի դլխին» քառյակը դանելու համար՝ վոչ թե պետք եր կարդալ, ինչպես այս ժողովածուի մեջ, տողավերջից՝ «նիխլղխղալա», այլ պետք եր Ի ձայնավորի կարգում դանել «աղի» հանդերձի մեջ:

Սկզբում յես այսպիսի դասավորությունն ըստ հանդերձի՝ հարմար եյի համարել, վորովհետև այդ յեղանակով նույն հանդերձը մի տեղ են

www.naregatsi.org

դալիս և հնարավոր է լինում հեշտությամբ ուսումնասիրել մեր քառյակների մեջ դործածված հանդերձն իրենց տեսակներով: Բայց յերեվաց, վոր դործնապես դա հարմար եր միայն վոչքր ժողովածուի համար. իսկ յերբ ժողովածուն ընդարձակվեց, դա դործնական չեր, վորովհետև բավական վորոնելուց հետո միայն հնարավոր եր լինում իմանալ, թե ավյալ քառյակը կա՞ ժողովածուիս մեջ, թե վոչ:

Այս նկատի ունենալով՝ 1929 թվից սկսեցի խաղերը վերադասավորել մաքուր այբբենական կարդով, միայն վոչ թե առղասկղբի բառի սկղբից դեպի վերջը դնալով, ինչպես բառարանում է, այլ առղավերջի բառի վերջից դեպի առաջ, ինչպես հանդարանի մեջ է:

Ապա՝ այսպիսի դասավորության համար նկատի ունեցա միայն խաղերի առաջին առղերը:

Այս դործն ևս մեծ ջանք և հոդնածություն պահանջեց ինձ, մանավանդ վոր խաղերը վոչ թե առանձին թերթիկների վրա եյին դրված, այլ տետրակների մեջ: Բացի այդ՝ այս աշխատանքը մեքենայական լինելով՝ հետաքրքրություն չեր ընծայում: Բայց վերջը պահում է դործը:

Վերջը ստացվեց մի մեծ ժողովածու, վորի մեջ հեշտությամբ կարելի յե դանել ուզած խաղն իր վոտիսկակներով, միաժամանակ և իմանալ, թե ավյալ խաղը վո՛ր դրքի մեջ և սրա վո՛ր եջում տպված կա:

Այստեղ դնում եմ իրենց կրճատ անունների այբբենական կարդով՝ այն դրքերի ցուցակը, վորտնցից հավաքել եմ վոտիսկակներ և ամբողջական խաղեր: Մեջ են բերված նաև դրանց դրի առնվելու տեղերի անունները, յեթե հիշված են յեղել այդ դրքերի մեջ:

1. Ա.Բ = Ազդագրական Հանդես, յերկրորդ տարի, Բ. դիրք, 1897. Թիֆլիս: Ցեր. 332—347. «Սուրմալուի ժողովրդական յերգեր»: Սկզբում ունի մի առաջաբան ժողովրդական յերգերի մասին ընդհանրապես: Թվով ընդամենը 126 քառյակ և 16 յերկյակ: Դրանցից 341 և 342 յերեսների յերգերը (թվով 28) «կողբեցու յերդած է»:

2. Ա.Դ = Ազդագր. Հանդես, յերրորդ տարի, Դ. դիրք, 1898— № 1, Թիֆլիս: Ցեր. 91—104. «Զավախք, Ցերվանդ Լալայանի. բանավոր դրականությունը, վիճակի յերգեր»: Ցերգերի վերջում կա՝ «Ց. Աղնաուրյան», վորի ժողովածն են, ուրեմն, այդ քառյակները, թվով 186 խաղ:

«Սիսիան» (յեր. 105—260) հոդվածի վերջում (յեր. 261—270) «Սիսիան, ժողովրդական յերգեր» վերնագրի տակ ընդամենը 110 քառյակ:

3. Ա.Դ = Ազդագր. Հանդես, յերրորդ տարի, Դ. դիրք, 1898 № 2, Թիֆլիս: Ցերվ. Լալայանի «Զանդեղուր» ուսումնասիրության վերջում, յեր. 113—116 «Ժողովրդական յերգեր» և «Վիճակի յերգեր» վերնագրերի տակ, ընդամենը 36 խաղ:

Ցեր. 161—176 «Շերաքի ժողովրդ. յերգեր, հավաքեց Մ. Խաչատրյան. Պարերգեր (յայլի)»: Ընդամենը 208 քառյակ: Կան նաև կրկնակները:

www.naregatsi.org

4· Ա.Ե = Ազգագր· Հանդես, չորրորդ տարի, Ե· գիրք, 1899 № 1, Թիֆլիս: Ցեր· 185—199 «Ալաշկերտի բանահավոր դրականություն, Գրիգոր ք· Նժդեհյանց· յեր· 189 հտ· «Սիրո յերգեր», յեր· 190 հտն· «Պարերգեր», մեջը կան նաև կրկնակներ· յեր· 195 հտն· «Վիճակի յերգեր», յեր· 197 հտ· «Հարսանեկան յերգեր», յեր· 199, «Ցերկրագործական յերգ»:

Ցեր· 200—212 «Շիրակի ժողովրդ· յերգեր, հավաքեց Մ· Իսահակյան», մեջը կան նաև կրկնակներ: Կան նաև «Աչուղական յերգեր» (յեր· 208 հտն·):

5· Ա.Զ = Ազգագր· Հանդես, հինգերորդ տարի, Զ· գիրք, Թիֆլիս 1900: Ցեր· 69—73 բազմազան բովանդակությամբ «ժողովրդական յերգեր», «Բուլանըխ կամ Հարք· դավառ, Բենսեյի» հոդվածի մեջ:

Ցեր· 372—382, Ցերվ· Լալայանի «Գանձակի դավառ» ուսումնասիրության մեջ՝ «Բանավոր դրականություն, Ա· յերգեր, վիճակի յերգեր», հավաքել են Լալայանն և ուրիշները· ընդամենը 170 քառյակ:

Ցեր· 383—390, «Բասեն, ժողովրդական յերգեր», «Հավաքեց Արամ Զարըդ», 87 քառյակ, Ցեր· 386 նաև կրկնակներ:

6· Ա.Լ = Ազգագր· Հանդես, վեցերորդ տարի, Լ· և Լ· գրքեր, 1901 Թիֆլիս: Ցեր· 113—204 «Հայկական սովորություններ, Ֆաջրերունու», մեջը նաև բազմաթիվ ժողովրդ· յերգեր, այլազան բովանդակությամբ և զանազան դավառներից:

Ցեր· 437—455 «Ալաշկերտ, Գ· ք· Նժդեհյանի բանահավոր դրականություն, Ա· յերգեր» զանազան բովանդակությամբ:

7· Ա.Թ = Ազգագր· Հանդես, յոթներորդ տարի, Թ· գիրք, 1902, Թիֆլիս: Ցեր· 28 հտ· վիճակի յերգեր Նոր Նախիջևանի գյուղերի: Սրանից չեմ ոգտված:

Ցեր· 83—116 «Հայկական սովորություններ», Ֆաջրերունու· մեջը մանկական և այլ յերգեր: Սրանից էլ չեմ ոգտված:

Ցեր· 197—202· «Բորչալուի դավառ, Ցերվ· Լալայանի»· սակավաթիվ ծխական յերգեր: Սրանից էլ չեմ ոգտված:

8· Ա· Ա.Ժ.Ա = Ազգագր· Հանդես, իններորդ տարի Ժ.Ա· գիրք, 1904, Թիֆլիս: Ցեր· 33—128 «Բորչալուի դավառ, Ցերվ· Լալայանի, բանահավոր դրականություն»· բազմաթիվ յերգեր:

8· Բ· Ա.Ժ.Բ = Ազգագր· Հանդես, իններորդ տարի, Ժ.Բ· գիրք, 1904, Թիֆլիս: Ցեր· 104—108 «Փշրանքներ ժողովրդ· բանահյուսությունից, հավաքեց Ա· Իսահակյան»· սակավաթիվ յերգեր զանազան բովանդակությամբ, հայրեն և անտունի (մասամբ): Սրանից չեմ ոգտված:

9· Ա.Ժ.Ե = Ազգագր· Հանդես, տասնմեկերորդ տարի, Ժ.Ե գիրք, 1908 № 1· Թիֆլիս: Ցեր· 36—48 «Վարանդայի բանահավր դրականու-

www.naregatsi.org

թյուն», Ա. Դադյանի, «Ջանդյուլումներ», ընդամենը 86 քառյակ, դիտական ուղղագրությամբ:

10. ԱԺՀ = Ազգագր. Հանդես, տասնեմեկերորդ տարի, ԺՀ. գիրք, 1908 № 2. Թիֆլիս: Ցեր. 25—32 «Վարանդայի բանավոր գրականությունից», Ա. Դադյանի, «Ջանդյուլումներ», ընդամենը 85 քառյակ: Դիտական ուղղագրությամբ:

11. ԱԺԹ = Ազգագր. Հանդես, տասներկուերորդ տարի, ԺԹ. գիրք, 1910 № 1. Թիֆլիս: Ցեր. 85—89 «Վարանդայի բանավոր գրականությունից» Ա. Դադյանի, ընդամենը 58 քառյակ: Դիտական ուղղագրությամբ:

Ցեր. 99—114 «Վանա բանահյուսությունից, Ա. Սոլաքյանի». բազմաղան բովանդակությամբ յերգեր. մենք նաև ամբողջական յերգեր: Ոգտվել եմ սակավաթիվ յերգերից:

12. ԱՒ = Ազգագր. Հանդես, տասներկուերորդ տարի, Ի. գիրք, 1910. № 2. Թիֆլիս: Ցեր. 112—113 «Ղափանի բանավոր գրականությունից», Աբգարիկի, «Ջանդյուլումներ», ընդամենը 25 քառյակ:

13. ԲՆԱ. = Բիւրակն լրագիր (չաթաթաթերթ), 1898, Կ. Պոլիս, խմբագիր Գ. Անդրեասյան: Ցեր. 313 հա. «Պարերդ մշեցոց գավառաբարբառով», Մ. Դանիելյանի: Ցեր. 473. «Պանդուխտին յերգը Խարբերդի բարբառով», Լ. Սրապյանի: Ցեր. 557 «Հարս տանելու յերգ Ակնա բարբառով», Տ. Վ. Պալյանի: Ցեր. 558. ա) «Ժողովրդական պարերգ չատաղցոց բարբառով», բ) «Մխմունջ մը սամկական, Երեվանա բարբառով», գ) «Վանեցոց պարերգ», Կայծոռիկի: Ցեր. 565. Ակնա բարբառով յերգեր: Ցեր. 566. «Սիրերդ Վանա և Երեվանի բարբառներով», Վանիկի. («Աչխենի յերգը»): Ցեր. 568—569. Ալաշկերտի, Շատաղցոց և Դիարբեքիրի բարբառներով յերգեր: Ցեր. 583 «Պարերդ Վանա բարբառով», Կայծոռիկի: Ցեր. 584. «Սիրերդ, Խարբերդի գավառաբարբառով», Գ. Մուշեղյանի: Ցեր. 623 հա. «Սիրերդ», Խարբերդ, Գ. Մուշեղյանի: Ցեր. 671 «Սիրերդ», «Պարերդ», Խարբերդ, Գ. Մուշեղյանի: Ցեր. 739 «Խոյթեցոց մեջ յերգված հարսանեկան պարերդ, սիրերդ. Մշեցի Ասոված տուր Թահտապրունյանի ժողովածուից հավաքեց Զ. Կենճյան, Հալեպ»: Ցեր. 776 «Սիրերդ, Խարբերդ, Գեղամ Մուշեղյան»: Ցեր. 804. «Պարտիզակ, Գ. Տ. Մեսրոպյան» ստորագրությամբ տպված են հինգ քառյակ իբրև բնիկ պարտիզակցի «Պետիկ» աշուղի, բայց ժողովրդական են:

14. ԲՆԲ = Բիւրակն լրագիր (չաթաթաթերթ), 1899, Կ. Պոլիս: Ցեր. 42 «Գավառի յերգեր»: Ցեր. 237. «Լուսնի սեր», 6 քառյակ «Մ. Նուպարյան» ստորագրությամբ. բայց ժողովրդական են: 349—350 «Ժողովրդական յերգ, Մարաշի լեզվով», «տեղին վրա հավաքեց Ս. Դավթյան». ընդամենը 14 քառյակ. դժվար հասկանալի լեզվով: Սրանից չեմ օգտվել: Ցեր. 364 «Սիրերդ», «Պայազիտ. հավաքեց Ց. Մարության». 5 քառյակ: Ցեր. 524

www.naregatsi.org

հտ. «Ժողովրդական բանահյուսություն»: Սկզբի մասն աշուղական է: Ցեր. 572 «Ժողովրդ. բանահյուսություն», «Ծինիի խաղեր», «Տարանտեյի զավառաբարբառով», 3 քառյակ և մի «նաքարաթ», աշուղական է. միայն մեկ քառյակ ժողովրդական է: Ցեր. 641 հտ. «Ժողովրդ. բանահյուսություն», «սիրերգ. Նիերկերտ. հավաքեց Գ. Մուրադյան». 4 քառյակ: Շատ յերգեր կան նաև Մուշեղ Վարդ–ի «Ցերգը իրրև հոգեկան պետք» մեծ հոդվածի մեջ:

15. ԲՆԳ = Բիւրակն լրագիր (շաբաթաթերթ) 1900. Կ. Պոլիս: Ցեր. 388 հտ. «Ժողովրդ. բանահյուսություն, Սիրերգ. Ակնա անտուններ»: Հին հայերեններ են: Ցեր. 471 «Պարերգ Սասնցոց. հավաքեց Մ. Մուրատյան»: Ցեր. 491 «Սիրերգ Խարբերդի բարբառով», «Ս. Շ.» ստորագրությամբ: Ցեր. 519 «Պարերգ Խարբերդի լեզվով, հավաքեց Ս. Շ.»: Ցեր. 634 «Կիւրինի կյանքեն», «Ակիւլինե» ստորագրությամբ: Ցեր. 650. «Պարերգ. հավաքեց Մ. Մուրատյան»: Ցեր. 677 «Սիրերգ Տիգրանակերտի բարբառով», «Գ. Մ.» ստորագրությամբ:

16. ԲԱ = Բանասեր ամսաթերթ դրական և դիտական, հատոր Ե. Պարիզ 1903, յեր. 123—159 «Ջան դյուլում» վերնագրի տակ 600 քառյակ, Հայկ Տեր Ասատուրյանի ժողոված.: Առաջաբանի մեջ ասված է, վոր ոգտված է նախորդ հրատարակություններից, ինչպես են՝ Բրուտյանի «Ռամկական Մրմունջներ», Մխանսարյանցի «Քնար Հայկական». Սրվանձտյանի «Գրոց Բրոց», «Աղգագրական Հանդեսի» բոլոր համարները և այլն: Առանձին քառյակների համար աղբյուրները չեն հիշված. իսկ Սրվանձտյանցի «Գրոց Բրոց»–ի մեջ քառյակներ չկան: Մյուս աղբյուրներն ել լրիվ չեն ոգտագործված: Կան բավական թվով քառյակներ ել, վորոնք առաջին անգամ այս գրքում են տպագրված: Դրանց ձեռագիրը Տ. Ասատուրյան 1902 թ. անձամբ տվել եր ինձ մեր ժողովածուի մեջ մտցնելու համար: Բայց դրանց ժողովրդական ծագումը շատ կասկածելի յե. ուստի չատ քչերն են առնված իմ այս ժողովածուի մեջ:

17. ԲՄԴ = Բանասեր ամսաթերթ, հատոր Դ. Պարիզ, մի քանի քառյակ:

18. ԹՄԿ = Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Գեորգ Տեր Աղեքսանդրյանի, Թիֆլիս 1885 յեր. 57—64 ժող. յերգեր:

19. ԺԽ = Ժողովրդական խաղեր, ուսումնք Մ. Աբեղյանի, Վաղարշապատ, 1904. (Արտատպություն «Արարատ» ամսագրից):

20. ԽՈՏ = Ցերգեր, առակներ, հանելուկներ Խոտրջուր, հավաքեց Հ.Մ.Հ. Գավառացի, Տփղիս, 1904. յեր. 50 հտ. «Մանի կանանցմե լըսված»:

21. ԾՎ = Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության, Առաջին պրակ, հավաքեց Հայկ Ամեմյան, Եջմիածին, 1917:

22. ԿԺԵ = Կոմիտաս, Ժողովրդական յերգեր, աղգագրական ժողո-

www.naregatsi.org

վածու, հայերեն նոտագրությունից փոխադրեց յելրոպականի, առաջաբանով և դիտողություններով, Սպիրիդոն Մելիքյան. ՀՍԽՀ Պետհրատ, 1931: Բառերը մեծ մասամբ մեկ կամ յերկու տող են, յերբեմն խիստ աղճատված: Բառերի համար Մելիքյանն ոգտված և նաև մեր «Հազար ու մի խաղեր» յերգարանից:

23. ՀՍ. = Հնություններ Ակնայ, Ց. Կ. Ճանիկյան, Թիֆլիս 1895:

24. ՀԺԵ = Ժողովրդական յերգ, առած, հանելուկ, յերդում, որհնանք, անձեռ և այլն, հավաքեց Ս. Հայկունի, Մոսկվա–Վաղարշապատ 1906. Եմինյան Ազգագրական ժողովածու, հատոր Զ.:

25. ՀՀ = Համով Հոտով, յերկասխրեց Գ. Վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս 1884:

26. ՀՄԽԱ = Հազար ու մի խաղ, Առաջին հինյակ, խմբագրեցին Կոմիտաս վ. և Մանուկ Աբեղյան. Վաղարշապատ 1903, յերկրորդ տպ. 1904. Ժողովածուիս մեջ ցույց են տրված վոչ թե սրա եջերը, այլ յերգերի համարները: Խաղերը մշակված են:

27. ՀՄԽԲ = Հազար ու մի խաղ, յերկրորդ հինյակ. խմբագրեցին Կոմիտաս վ. և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ 1905. ցույց են տրված վոչ թե սրա եջերը, այլ յերգերի համարները: Խաղերը մշակված են:

28. ՆՀԳ = Հայ ժողովրդ. հեքիաթներ, ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, Գ. գիրք, Թիֆլիս 1884, յեր. 44—50 յերգեր:

29. ՆՀԶ = Հայ ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, Զ. գիրք, Թիֆլիս, 1890. յեր. 65— 109 «Ժողովրդական յերգեր»:

30. ՋՀ = Ջահարմահալի հայ ժողովրդական բանահյուսությունը, գրեց Արամ Ցերեմյան, Վիեննա 1923:

31. ՊՍՎ = Պռոշյանց Պերճ, Սոս և Վարդիթեր, յերկրորդ տպ. 1887. Ցերեվան: Քառյակներ կան «Ջանգյուլումի» նկարագրի մեջ:

32. ՊՎ = Պանդուխտ Վանցին, Նամակներ, յերգեր, առածներ, ռեղձվածներ, գրեց Աբիստակես վ. Տեր Սարգսյանց, Կ. Պոլիս 1876.

33. ՋԲ = Ջավախքի բուրմունք, հավաքեց Ցերվ. Լալայանց, Թիֆլիս 1892.

34. ՌՄ = Ռամկական մրմունջներ, ժողովրդական յերգեր ու պարերգեր, խմբագրեց Սրբուհի Բրուտյան, Աղեքսանդրապոլ 1895.

35. ՍՄ = Մանանայ, ժողովեաց և ի լոյս ետած Գ. Վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս 1876.

36. ՎԺԵԱ = Վանա ժողովրդական յերգեր, Ազգագրական ժողովածու, ձայնագրեցին Սպ. Մելիքյան և Գար. Գարդաշյան, Ցերեվան 1926: Նույնը նաև ՀՍԽՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի № 1 Տեղեկագրի մեջ:

37. ՎԺԵԲ = Վանա ժողովրդական յերգեր, ձայնագրեցին Սպ. Մելիքյան և Գար. Գարդաշյան, յերկրորդ պրակ 1928: Այս վերջին յերկու

www.naregatsi.org

ժողովածուների մեջ կան նաև ամբողջական յերգեր: Խաղերի բառերը հաճախ աղճատ են. ոտնված են նաև մեր «Հաղար ու մի խաղից»:

38. ՎՍԱ = Վանա Սազ, հավաքածոյք Վասպուրականի ժողովրդական յերգերի, հեքիաթների, առածների և հանելուկների, ժողովեց Գեորգ Գ. Շերենց. Ա. մաս, Թիֆլիս 1885.

39. ՎՍԲ = Վանա Սազ, հավաքածոյք Վասպուրականի ժողովրդական յերգերի և այլն. ժողովեց Գեորգ Գ. Շերենց, Բ. մաս. Թիֆլիս 1889.

40. ՏԳԱ = Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի, № 2. Յերեվան 1927.

41. ՏԽ = Տաղեր ու խաղեր, խմբագրեց և կազմեց Աղեքսանդր Մխիթարյանց, Աղեքսանդրոպոլ 1900, յեր. 73—260.

42. ՓԶ = Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, ժողովեց Գաբրիել Ս. Հոսեփյանց, Թիֆլիս 1892.

43. ՖՀ = Ֆնար Հայկական, խմբագրեց Մ. Մ. Մխանսարյանց, Ս. Պետերբուրգ 1868.

44. ՔՄՎ = Քնար Մշեցոց և Վանեցոց, մինչև այժմ չհրատարակված յերգեր, ժողովեց Արիստակես վ. Սեդրակյան, Վաղարշապատ 1874.

Սրանք են այն գրքերը, վորոնց մեջ տպված ժողովրդական խաղիկները յես նկատի յեմ ունեցել այս ժողովածուն կազմելիս: Դրանցով, անշուշտ, չեն սպառվում տպագրված ժողովրդական խաղիկները, լինեն առանձին գրքերի, թե մանավանդ պարբերական հրատարակությունների մեջ լույս ընծայված: Կան և չտեսերը, վորոնք դեռ չեն գրի առնված: Բայց, կարծում եմ, այս ամենով արդեն լիակատար ծանոթություն և ստացվում մեր հին դյուցազուն ստեղծագործության մասին այս տիպի խաղերի նկատմամբ: Իմպերիալիստական պատերազմի, արեվմտյան Հայության գաղթի, ապա և Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության և Հայաստանի խորհրդայնացման պատճառով՝ արագ փոխվել է և փոխվում է մեր դյուղացու տրնտեսությունն ու կենցաղը և նրա մտայնությունը: Դրա հետևանքով արդեն փոխվել են և փոխվում են նրա ստեղծագործության նյութն ու յեղանակները: Այս փոքրիկ խաղերն այժմ հնացել են ու մեռնում են, տեղի տալով նորերին, վորոնք ավելի հարուստ բովանդակություն ունեն:

Այս ժողովածուի գործածության ժամանակ պետք է նկատի ունենալ հետևյալները.

1. Ինչպես վերևում (յերես 110) բացատրվեց, խաղերը դասավորված են այբբենական կարգով, միայն ըստ հանդարանի: Նկատի յեն առնված խաղերի առաջին տողերը: Վորևե խաղ գտնելու համար՝ պետք է առնել դրա առաջին տողը: Դիցուք ուզում եք գտնել մի քառյակ, վորի առաջին տողն է՝ Ելբևանու հողեն եմ»: Ժողովածուի մեջ պետք է գտնել նախ այդ տողի վերջի Մ տառն ըստ այբբենական կարգի: Ապա՝ Մ տառից առաջ ընկած է տա-

www.naregatsi.org

որը պետք է դանել դարձյալ ըստ այբբենական կարգի, ուրեմն ԵՄ վերջը: Այսպես և ԵՄ վանկից առաջ ընկած տառերն առնելով՝ ունենում ենք ԵՆ ԵՄ վերջը: Բայց այս վերջն ունեն հետևյալ առաջին տողերը՝ «Ծաղիկ, յես քու ալեն եմ», «Որդակ եմ ու դյուլեն եմ», «Երեվանու հողեն եմ», «Ծաղիկ, յես քո ծառեն եմ», և հետո ուրիշները: Ինչպես կարելի յե նկատել, ԵՆ ԵՄ վերջից առաջ դարձյալ այբբենական կարգով ընկնում են Լ, Ղ, Ր տառերը— լեն եմ,—ղեն եմ,—ռեն եմ: Առաջին—լեն եմ վերջով յերկու քառյակ կա· դրանցից ըստ այբբենական կարգի,—ալեն եմ վերջն ավելի առաջ է ընկնում, քան գյուլեն եմ· իսկ—ղեն եմ վերջով միայն մեկ քառյակ կա, և դա մեր վորոնածն է:

Գործը կատարված լինելով յերկար ընդհատումներով՝ ը տառի դրությունը բառամիջում յերբեմն պահված է, յերբեմն՝ վոչ: Ուստի, յեթե մի քառյակ ը-ով դրության տեղում չդանվի, պետք է վորոնել առանց ը դրության չարքում:

2· Բարբառային քերականական ձևերը դրված են դրական հնչյունական ձևերի չարքում: Ուստի բարբառային վերջավորությամբ խաղերը պետք է վորոնել համապատասխան դրական վերջավորության տեղում:

ա) Որինակ՝ «Ճես կյորխի ձորան եմ» խաղը, վոր նշանակում է «Ճես կյորխի ձորեն եմ», պետք է վորոնել վոչ թե— ան եմ, այլ— են եմ վերջի մեջ: Այսպես է դրված, վորովհետև այդ կերպով իրար մոտ են դալիս նման յերգերը· «Կաղղվանա ձորեն եմ», «Ճես ես գեղի ձորեն եմ», «Կաղզմանա ձորեն եմ» և ուրիշները:

բ) Որինակ՝ «Տախտ եմ կիւտալ, հավան ըմ», վոր է՝ «Տախտ եմ կիտել, հավան եմ», պետք է վորոնել «հավան եմ» վերջավորության չարքում:

գ) Որինակ՝ «Կանիմ», «Ընիմ, ունիմ», «Կոնես» և նման բարբառային ձևերը պետք է վորոնել դրական «կանեմ», «անեմ», «կանի», «ունեմ» կամ «ունիմ» ձևերի չարքում· «Տանս տակին հոնձ կ'անիմ», վոր է՝ «Տանս տակին հունձ կ'անեմ»· «Սպիտակ ձին նալն ի՞նչ կոնես», վոր է՝ «Սպիտակ ձին նալն ի՞նչ կանի»· «Նանե, նանե, նան չոնիմ», վոր է՝ «...Նան չունիմ,— չունեմ»:

դ) Անորոշ դերբայով կազմված բարբառային ձևերը՝ «հեծեր եմ», «բացվեր եմ», «չարալ ըմ», «չվարալ ըմ» և այլն, պետք է վորոնել դրական ձևերի չարքում՝ «հեծել եմ», «բացվել եմ», «չարել եմ», «չվարել եմ»:

Նույնպես 2–րդ դեմքով ձևերը՝ «հագեր ես», «ելեր ես» և այլն վորոնել՝ «հագել ես», «ելել ես» և այլն ձևերի չարքում:

Նույնպես 3–րդ դեմքով ձևերը՝ «յըղըկալալ ա», «սառալ ա», «բլեր ա», «քներ ա» և այլն վորոնել «յեղակալել ա», «սառել ա», «բլել ա», «քնել ա» և «քնել է» ձևերի չարքում:

www.naregatsi.org

Եթե մի խաղ չկա «առել» և նման ձեվերի չարքում, պետք է վորոնել, «առել ա», կամ «առել է» չարքերի մեջ, կամ ընդհակառակն: Այս վերջին յերկու ձևերն էլ՝ «սառել ա», «սառել է», ինչպես և «սառել է» հաճախ փոխանակում են իրար և դրված են միմյանց մոտ:

3· Խաղերի ու նրանց փոփոխակների տակին յերկաթագիր տառերով նշանակված են այն դրքերը, իսկ թվանշաններով այն եջերը, ուր կա տվյալ քառյակը: Որինակ՝ «ԱԺԱ 61» նշանակում է՝ «Ազգագրական Հանդես, 11-րդ դիրք, յեր· 61»:

Եթե խաղի կամ փոփոխակի տակին վոչ մի այդպիսի ցուցում չկա, այդպիսի խաղն ու փոփոխակը մեր, այսինքն իմ կամ Կոմիտասի, կամ յերկուսիս ժողովածուներից է: Տպագրված խաղերից չատերը ձեռագիր էլ եմ ունեցել: Եթե ձեռագիր խաղերից մեկը նույնությամբ տպագրված է յեղել, հիշատակել եմ միայն տպագրվածը, ավելորդ համարելով հիշել, վոր ձեռիս յեղել է նաև նույնի ձեռագիրը կամ նորից դրի առնվածը:

4· Վարիանտները ցույց տալու համար խաղերի տողերը նշանակված են 1· 2· 3 և այլն թվանշաններով, 1—առաջին տող, 2— յերկրորդ տող և այլն: Վոր տողի մեջ վոր կա տարբերություն, այդ տողն ամբողջապես մեջ է բերված՝ սկզբից դրված իր թվանշանով, որինակ՝ ժողովածուիս առաջին խաղի տակին կա՝ «1· Սելին կառեն արաբա», այդ նշանակում է, վոր փոփոխակի մեջ միայն 1-ին տողն է զանազանվում· մնացած յերեք տողերը տպվածի պես են: Ժողովածուիս չորրորդ խաղի տակին «123» թվանշաններից հետո դրված են յերեք տողեր· այդ նշանակում է, վոր փոփոխակի մեջ առաջին յերեք տողերն այդպես զանազանվում են, իսկ 4-րդ տողը նույնն է տպվածի հետ: Եթե վարիանտի բոլոր տողերն էլ տարբեր են, այդ դեպքում վարիանտն ամբողջապես մեջ է բերված ընդհանրապես յեռաստղ (***) նշանի տակ կամ առանց սրան:

Այս յեռաստղ (***) նշանի տակ տպված վարիանտից հետո դրված տարբերությունները հենց այդ վարիանտի նկատմամբ են: Որինակ՝ վեցերորդ խաղից հետո յեռաստղ (***) նշանի տակին տպված է այս քառատող վարիանտը՝ «Տեղ եմ քցել, փութ կը գա» և այլն· ապա՝ սրա տակին «14» թվանշաններից հետո գալիս են յերկու տող: Այդ նշանակում է, վոր 1-ին և 4-րդ տողերի այդ տարբերությունները յեռաստղի տակի վարիանտի նկատմամբ են՝ այսինքն այս նոր փոփոխակը յեռաստղի տակին տպված վարիանտից զանազանվում է 1-ին և 4-րդ տողերով, իսկ 2-րդ և 3-րդ տողերում նույնն է յեռաստղի տակ տպված վարիանտի հետ:

Եթե յեռաստղ նշանը չկա, բոլոր վարիանտներն ամենից առաջ տպված խաղի նկատմամբ են:

5· Եթե յեռաստղի տակին իրեն փոփոխակ դրված են յերկու կամ յերեք և այլն տող, առանց սկզբում տողերը ցույց տվող թվանշանի, այդ նշանակում է, վոր փոփոխակը միայն բերված տողերն են: Այսպիսի դեպ-

www.naregatsi.org

քերում, սակայն, հաճախ սկզբում նշանակվածե՝ «1—4», «1—3», «1—8» և այլն. (մեկից մինչև չորս, մեկից յերեք, մեկից ութ), այսինքն խաղի չորս, յերեք կամ ութ տողերի փոխանակ իբրև փոփոխակ կան միայն տըրված յերկու կամ յերեք կամ ութ տողը:

Կան և այսպիսի յուցումներ. «4—6» և նմաններըը: Այդ նշանակում է, վոր վարիանտի առաջին յերեք տողերը նույնն են վեցատող խաղի առաջին յերեք տողերի հետ, իսկ նույն խաղի 4—6 տողերի փոխանակ՝ վարիանտի մեջ է ըստ տրվածի. իսկ սա կարող է և յերեք տող լինել և ավելի կամ պակաս:

6. Նույն խաղի փոփոխակներըը յերբեմն իբրև անկախ յերգեր են առնըված, յերբեմն՝ վոչ: Այդ առաջացել է յերկար տարիների ընթացքում ընդհատումներով պարապելուց: Փոփոխակներն իբրև անկախ յերգեր են առնված, յերբ դրանց հիմնական մասի բովանդակությունը տարբեր է:

Մ. ԱԲԵՂՅԱՆ

www.naregatsi.org

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

www.naregatsi.org

1

Մեզի չըլնի արաբա,
Մեր բանները խարաբ ա.
Անուչ յարըս դուրս չի գա,
Քանի ձեռը պարապ ա:
1· *Սելին կ'ասեն արաբա:*

2

Զիուս անունն Արաբ ա,
Ծուրչինինըս զարբաք ա.
Կորցրել եմ չեկլիկ յարըս,
Նագուկ սիրտըս խարաբ ա:

3

Հասիբ ա հա՛, հասիբ ա,
Տոն չունե, քյասիբ ա.*
*Կ'ոգե՝ ասիքյ, կ'ոգե՝ վուչ**,*
Են սրդան ինձ նասիբ ա:
ԱԺԸ 28

* *Տուն չունի:* ** *Կ'ուզի՝ ասեք, կ'ուզի՝ վոչ:*

4

Ծամերըս համբա–համբա,
Շեկ յարըս քյի ճամբա.
Ճամբին չունի ոդնական:

123· *Շեկ յարիս դըրի ճամբան,*
Աչսո՛ս, չասի իրան բան.
Ճամբին ոդնական չունի:
ՀՄԽԱ. 20

123· *Մազերըս անպահապան,*
Շեկ յարըս ղըրկի ճանապան.
Ճանապեն ոդնական չեղավ:
Աե 200

5

Մազերըս համբա–համբա,
Աղբյորըս ղրկի ճամբա.
Ճամբեն ոդնութեն չերավ,
ՀԺԵ 119

***

Կայներ եմ, չեմ կըրնա գա:
Տես՝ կայներ եմ, գալ չեմ կըրնա:

6

Տեղը քըցեմ, փոնթ կը գա,
Բարձի տակիս հոտ կը գա.
Իմ յարը հեռու տեղ ա,
Ասանց ներքան քուն չի գա:
Աբ 345
Տես՝ Բարձի տըկեն խոտ կու դեր:

***

Տեղ եմ քըցել, փոթ կը գա,
Մի իջից անուչ հոտ կը գա.
Մինչև են յարի գալը
Աչքիս վո՞նց քուն մատ կը գա:

14· *Տեղ կըքըցեմ, փոթ կըգա...*
Աչքերիս հո՞ւնց քուն կը գա:
ԱԴ 114

www.naregatsi.org

7

Տեղ եմ քցել, փոթ կըդա,
Բարձ եմ դըրել, սոթ կըտա.
Մեռնիմ միջի քընողին,—
Անուշ խընկահոտ կըդա:

ՌՄ 115. ՏՒ 178

1. Տեղ եմ քցել, փոթ կըտա:

ՔՀ 161. ԲՄ 154

23. Բարձ եմ դըրել, սոթ կուգա.
Միջի քընողին մեռնիմ:

ԱԴ 167

4. Անուշ խընկան հոտ կըդա:

ԱԺՍ 61

8

Տեղ եմ քցել, փոթ կը գա,
Բարձիս տակից հոտ կըդա,
Մեռնեմ բոլոր քաքուլին,—
Միջեն վարդահոտ կըդա:

4. Ինընկի նման հոտ կըգա:

***

Տեղ եմ քցե, փոնթ կիգա,
Բարձի տըկից հոտ կիգա
Մեռնեմ ըո քանդուլնեբուն
Միջեն խընկան հոտ կիգա:

ՓՇ 74

***

Դյոչակ ձըդի, փոթ կուգար
Բարձիդ տըկեն գոտ կու գար.
Մեռնիմ դաստա քյանքյուլիդ,
Միջեն խնկա գոտ կու գար:

ԱԳ 93

***

Տեղ եմ քցել, փոնթ կըտա,
Բարձի տակեն հոտ կըդա.
Մեռնեմ դաստա քոնքուլիդ,
Մեջեն խընկի հոտ կըդա:

ԱՀ 132

***

Տեղ եձգեցի, փոնթ եկավ,
Բարձի տըկեն հոտ եկավ.
Նոր գալած թեխիդ մեռնիմ,—
Միջին խընկան հոտ կիգեր:

ՆՀՋ 88

9

Տեղ եմ քցել, փոթ կըդա,
Ցարը յարի մոտ կըդա.
Կարմիր խընձոր բարձի տակ,
Միջեն անուշ հոտ կըդա:

ԺՒ 88

12. Տեղը քցեմ, փոթ կըդա,
Բարձը դընեմ սոթ կըտա:

Հմմտ. Թագա հացի հոտ կըդա:

10

Դյոչակ ձըդեմ, փոթ կուգա,
Տեսնեմ՝ յարըս յե՛րբ կուգա.
Սեվ քենքուլին մեռնիմ,
Բերնեն անուշ հոտ կուգա:

ԲՆԳ 677

11

Դյոչակ ձըդի, փոթ եկավ,
Բարձիդ միջեն գոտ եկավ.
Մեռնիմ դաստա քյանքուլիդ,
Քու խաբարըդ յե՛ր եկավ:

ԱԳ 93

12

Տեղը քցեմ, փոթ կըդա,
Աղջիկ լաճառ մոտ կըդա.
Մեռնիմ եդ խաս բըրչամիդ,—
Միջեն անուշ հոտ կըդա:

ԺՒ 88

Տես՝ «Բարձ վերուցեմ հոտ կուգա»,
և «Բարձի տակին հոտ կուգեր»:

13

Մաղկաձորեն ձեն կիգա,
Մաղկամերը քըներ ա.
Թող քընի, ուր (իր) քունն անուշ,
Վիճակ խաղալ չատ անուշ:
(Վիճակի յերգ)

ԱՀ 446

***

Լուծն ու սամին սարեն կիգա,
Տես՝ Հարրավ քամին
չընդչընդեր:

www.naregatsi.org

14

Ախ ըսիմ, արին կուգա,
Սիրտըս սեվ քարին կուգա։
Վախիմ թե խարիւք մեռնիմ,
Ինչ քոր, ինչ ախտեր կուգա։*
ԲՆԱ. 623

* Վոչ քույր, վոչ յեղբայր։

15

Աչունք մոտ ա, ձուն կըգա,
Ֆիդան յարըս տուն կը գա.
Գըլուխըդ դիր կըռնկերիս,
Աչքըդ անուշ քուն կըգա։
Տխ 191

16

Ծաղկածորը ձուն կըգա,
Ծաղկավորը տուն կըգա.
Ոձը տա իմ դուշմանին,
Սեվ խաբարը ընձի գա։
ՌՄ 107. Տխ 145

34. *Սեվ ոձը տա դուշմանին,*
Սեվ խաբարը տուն կըգա։
4. *Սեվ խաբարը ինձ կըգա։*
4. *Դարա խաբարը ինձ գա։*
12. *Ծաղկեվանքում ձուն կըգա,*
Ծաղիկները տուն կըգա։
124. *Սարեն ձորեն ձուն կըգար,*
Ծաղկավորը տուն կըգար...
Սեվ խաբարը ինձ կըգար։

***

Ծաղկեվանք ձուն և եկել,
Ծաղկի մեր տուն և եկել.
Ոձը տըվեց դուշմանին,
Սեվ խաբար տուն և եկել։

17

Սարի գըլխին չատ ձուն կը գա,
Իմ անուշ յարըս տուն կըգա.
Ցերրոր ինձ լավ մուժտա տըվին,
Աչքերիս անուշ քուն կըգա։
Տխ 223

18

Սարեր բըռներ ձյուն կուգա,
Աղբեր քըրոջ հյուր կուգա։
ՀՀ 312

19

Սարերում դարուն կըգա,
Սեվ սըրտիս արուն կըգա.
Ի՞նչ անեմ ենպես յարը,
Պըտըտվի, տարուն կըգա։
12. *Ախ ենեմ, արուն կուգա,*
Սեվ սըրտիս դարուն կուգա։
ԲՄ 139

20

Ախ կ'անեմ, արուն կուգա,
Սեվ սըրտիս դարո՞ւն կուգա
Կորուցել եմ (վ. կորուսել եմ) իմ յարը,
Ո՞վ դիտե՝ յերբ տուն կուգա։
ՀՄԽԱ. 19
12. *Սարերին գարուն կուգա,*
Սեվ սրտիս արուն կուգա։
ԿԺԵ 12

21

Լուսադեմին քուն կուգա,
Կես գիշերին տուն կուգա.
Երված ու վառված յարիս՝
Սըրտիցը արուն կուգա։
Տխ 194. ԲՄ 156

22

Ասոր Թոխալ ա, Թոռ կըկյա,
Պյուլուր քարերը վոլ կըկյա.
Հու վոր մին յարը չունե,
Մալուր մուշկյուն չոռ կըկյա։
ԱԺԻ
«*Ասյոր Թուխալ ե, Թոռ (անձրև) կը գա,*
Բոլոր (կլոր) քարերը վուլ կըգա.
Ով վոր մի յար չունի,
Մալուլ մուշկուն չուռ (ման) կը գար։

www.naregatsi.org

23

Տեներն ելլալըս կուգա,
Դարվար նայիլըս կուգա.
Ելին աղջիկն ի՞նչ տ՚ընիմ,—
Գըրկիլ պառկիլըս կուգա:
ԲՆԴ 677
3· Ելին աչխին ի՞նչ տ՚ընիմ:
ԲՆԱ 623

24

Ըրիքնակը տիւս կյըկյա,
Մնակեն յըրա լիւս կյըկյա.
Հու խեր պենում չառ խոսե,
Բլլեն աչկերը թող տիւս կյա:
ԱժԼ 47
«Արեզակը դուս կըզա,
Մենակի վրա լուս կըզա.
Ով խեր բանում չառ խոսի,
Բալի աչքերը դուս դա»:

25

Թաղա հացի հոտ կըզա,
Ցարը յարի մոտ կըզա.
Իմ սիրած Ջահիլ տըղից
Անուշ խընկահոտ կըզա:
ՏԽ 153
Չմմտ. Տեղ եմ քցել, փոթ կըզա,
Ցարը յարի մոտ կըզա:

26

Բարձ վեռուցեմ, հոտ կուգա,
Կարմիր խընձոր տիւր(ս) կուգա.
Խընձոր կիսից կըծած եր,
Ջորս բոլորն արծրծած եր:
ՎՄԲ 44· ԺԽ 93·
234· Կարմիր խընձոր դիւրս կուգա.
Կըծած եր, արծրծած եր,
Են իմ յարոջ տըվածն եր:
ՊՎ 97
Չմմտ. վ· Գիչերվորե դուս ելա:
Չմմտ. «Խընձոր ունեմ կըծած ա».
Չմմտ. 7 Տեղ եմ քցել փոթ կըզա:

27

Ելեր ես իգին, ավուղ ջուր կուգա,
Ֆյաֆուր վարդ բացվե, անուշ խոտ (հոտ) կուգա:
ՎՄԱ 36
12· Ելանք ավգընոց, ավղեն ջուր կուղեր,
Ֆյաֆուր վարդ բացվե, անուշ խոտ (հոտ) կուղեր:
ՊՎ 88

28

Պիճիմ չային ջուր կուգա,
Ֆու մարդ ինձի դուր կուգա:
ՏԽ 107

29

Ջաղցի դըռնեն ջուր կիգա,
Աղբեր քուրոջ հուր կիգա:
Աղջի Ջան, կանչա՛ լըսեմ,
Քանի սըրտիս դուր կիգա:
ԱԵ 196· ԺԽ 89

30

Բարճըր սարեն ջուր կուգա,
Մի տեսեք, թե ուր կուգա.
Ինչ անի հերն, ու մերը,
Աղջիկ տըղին դուր կուգա:
2· Ծարավ մարդուն դուր կըզա:
23· Աղբեր քրոջ հյուր կըզա.
Ի՞նչ անեն հերն ու մերը:
ԺԽ 95

31

Ջաղջի դըռներ ջուր կուգա,
Աղջիկ տըղին դուր կուգա:
ՀԺԵ 128·

***

Ջաղցի առուն ջուր կիգեր,
Աղջիկ տըղին դուր կիգեր:
ՀԺԵ 80
2· Աղջիկ լաճուն դուր կուգեր:
ՀԺԵ 44· ՎՄԱ 45
ԾՎ 46· ԱԺԹ 105
Ջաղցի առուն ջուր կուգա,
Աղջիկ լաճուն դուր կուգա:
ՊՎ 97

www.naregatsi.org

32

Ալուր մաղեմ, թեփ կուգա,
Ես իմ յարըս յե՞ր կուգա.
Ֆյոտաղաղ գըլխու փոսը,
Իմ յարիս սըրտի խուսը:
ԱՋ 388

33

Ալուր մաղեմ, թեփ կուգա,
Իմ յարըս հըյըվի յե՞ր կուգա.
Ամեն ծառին մի փըչատ,
Ցարիս ոմըր ըլլի չատ:
ԱԴ 103

***

Ալյուր մաղեմ, ձին կըգա,
Ցեգոր աղեն յե՞ըր կըգա.
Ամեն ծառին մի փըչատ,
Սիրած յարիս ումըրը չատ:
ԱԺԱ 49

Տես՝ իմ աղջիկը կըռնել ա:
Տես՝ են սարին սար չեմ ասի:

34

Ալուր մաղեմ, թեփ կիգա,
Շեկլիկ աղբեր յե՞ր կիգա:
Ա.Ը 440

35

Ջուր եմ գըրել, յեփ կըգա,
Ալիր մաղել, թեփ կըտա.
Աչքըս ճամփիդ մընում եմ,
Ցարաբ յարըս յե՞ր կըգա:
ԱԺԱ 59

***

Սարեր ամպեր, ձուն չի գա.
Տես՝ Ամպել ա, ձուն չի գալի:

36

Դոլիկ մ'եմ հորդե, թերմաչ ջուր չիգա,
Առու մ'եմ բացե, անտեր ջուր չի գա,
Ընկնիմ ու ժուռ գամ՝ քե պես յար չրկա.
Ա.Ը 438
Տես՝ Դյոլիկ մի՛ խորտեք,
Թերմաչ ջուր չի դար:

37

Կավկավու սարերը փուլ գա,
Շիրին յարըս բալքի տուն գա.
Երնեկ են դիշերվան կըտամ,
Ցերը աչքերըս անուշ քուն գա:
ՏԽ 159

38

Հեյ ըրեք, հեյ ըրեք, դանան կյա,
Ծըհանը մըեկնե, կուտանան կյա.
Հու լավ տըղա յա, ծեն անե,
Երված յարը հրետան կյա:
Ա.Ը 29
«Հեյ արեք, հեյ արեք, դանան դա,
Հացահանը մեկնիր, կուտանան (կուտը) դա.
Ով լավ տղա յե, ձայն անի, դա.
Երված յարը հետան (յետևից) գա»:

39

Դիլբա՛ր, քո չուչեն կըզընգա,
Ամար, քո չուչեն կըզընգա,
Ցես քո սիրուդ հիվանդ ընկա:
3· Ցես քո դարդեն հիվանդ ընկա:
ՀԺԵ 98

40

Լամպի չիչան կըճընգա,
Գըլորա ծոցըդ ընկա:
— Սիրելդը զոխ ե դառել,
Իմ յարը դոխ ե դառել:
Ա.Գ 98

41

Հարավ քամին կըշընդշընգա,
Սաղ-քամանին կրճընգճընգա,

www.naregatsi.org

Ցես քու սիրուդ հիվանդ ընկա։
ԺՀ 25

2· Սաղ ու քամանին կըճընդա։
ՋԲ 19

123· Սաղ ու քյամանին կըճընկա,
Ցես քու սիրուտ հիվանդ ընկա.
Հարսավ քամին կըչընկչընկա։
ՌՄ 120· ՏՀ 108

42

Աղջիկ, քեմբերդ կըչընդա,
Քըչեչբաղին չընկա չընկա
Քու դերդեն հիվանդ ընկա։
ԲՆԲ 642

43

Եսոր թող ճուն դա,
Իմ յարը տուն դա,
Ինձ անուշ քուն դա։
(Կրկնակ) ԱԺԱ 68

44

Սաղիդիս կանչեք՝ չուտ դա,
Սըրտիս յարին դարմանն տա.
Գնացեք ասեք հորն ու մորը,
Թե ձեղ յեղել եմ վեհսա։
ԲՄ 137

45

Թառ խորոտիկ ասլի դաղա,
Քո դարդ մեջ իմ սըրտին չատ ա,
Քո ծոցն ընձի նախչուն ողա։
ՔՆ 174

46

Սարեն իջար փեխադա,
Թրխանդն ուսիդ, ա՛յ դյադա.
Ցես դու իրար սիրեցինք,
Վերև աստված չըհադ ա։
12· Սարից կըգաս փեխագա,
Սաղմոսը ծոցիդ աղա։

47

Հոպըմ, հոպավլի դյադա,
Կորի, քյոփողլի դյադա։
(Կրկնակ) ԱԴ 164

48

Ալին ալմալու դյադա,
Ջուխեդ չաքմալու դյադա։
(Կրկնակ) ԱԴ 176

49

Ջուրն ունի կանաչ աղա,
Իմ ջանը ջանիդ բաղա.
Դուշմանի վատ խոսքովը
Ինձ մի՛ ասիլ թե յադ ա։
1· Գետն ունի կանաչ աղա։
ՏՀ 221

50

Ինձ հետ կըտրի վախտ ու վադա,
Ջիվան ջանըս ըմբրիդ բաղա.
Երվածծ սըրտիս մի հարցըրո՛ւ,
Լուս երեսըդ ինձ դարձըրու։
ՏՀ 159

51

Բաղես չորք կիւսը* լոխ վարդ ա,
Իմ յարը մին մադաք մարդ ա.
Կ՚ասիմ՝ ա՛յ յար, տանան տիւս մե՛
կյա**,
Չորք կիւսըդ*** դիւշման մարդ ա։
ԱԺԼ 44
* Բաղիս չորս կուսը (կողմը)։
** Տանեն դուրս մի՛ դա։
*** Կուսդ, կողմդ։

52

Մի յար ունիմ՝ վարդ ա,
Վարդ չի, գըլխիս դարդ ա։
Փահլըվանի կըշտին եկ,
Ամենից ուժով մարդ ա։
ԲՄ 127

www.naregatsi.org

53

Հաց առա թագա թագա,
Բոյը թամամ մի գազ ա.
Մեջն եմ դըրել ճըվածեղ,
Վայ տանեմ յարիս մազա:
ԱԴ 164· ՏԽ 163

54

Նոր ճուկն եմ բըռնել թագա,
Խորովեմ, տամ քեզ մազա.
Ինձ պես տղեն քեզի հետ,
Հաչս աստու, լավ կըսազա:
ՏԽ 198
Համմտ. Թալիչու ճամբեն դուղ ա:

55

Ջուխտ ըմ յար ունեմ, մեյ խին, մեյ (մեկ) թագա.
Մեյ կուտա արաղ, մեյ կուտա մազա.
Են արաղ տըվող չիվար չափարզա,
Են մազա տըվող իմ ջանին ջագա:
ՎՍԱ 61

56

Ծիրանն ի խասե, խաղողն ալաջա,
Երկու յար ունիմ, մեկ խին, մեկ թաժա.
Մեկն կուտա արաղ, մեկն կուտա մազա.
Են արաղ տվողն չիվար չափարզա,
Են մազա տըվողն ձի կուտա ջագա:
ՊՎ 125· ՏԽ 121

57

Ծիրանն ի հասե, խաղողն ալաջա,
Երկու յար ունեմ, մեկ հին, մեկ թագա.
Հընին չատ բարև, նորին չատ արև,
Երկըսի կարոտն էլ սըրտիս վերև:
ՎՍԲ 40

58

Սարի թըրթընջուկ թագա,
Մեղր ու շաքար քեզ մազա.
Ինձ պես նազանի աղջիկ
Քեզ պես տըղին վո՞նց սազա:
ՀՄԽԱ. 41· ՌՄ 101
1· *Սարի թարթանջուկ թագա:*
2· *Ջավզ ու մեխակ քեզ մազա:*
ՔՀ 130· ԱԴ 666· ՏԽ 240
2· *Ջավուզ շաքար քեզ մազա:*
12· *Սարերի թարթանջուկ թագա,*
Ջավուզ մեխակ քեզ մազա:
ԱԳ 266
134· *Սարի թրթուր մի թոզ ա,*
Ինձ պես նազանի յարը
Քեզ պեսին վո՞նց սազա:
ԱԵ 252

59

Սանրածըս ոսկե մազ ա,
Հադինըս կապուտ խաս ա.
Բուզմանն քըցած արխալուղ
Քեզի կըտամ թավազա:
ԲՍ 133

60

Ցես աղջիկ եմ նոր մազա,
Աչխարքն ինձ փիանդազ ա.
Անմահական խընձորը
Կ'անեմ յարիս թավազա:
ԱՋ 379

61

Են ծառին ի՞նչ կըսազա,
Ճրղնեբին դինձ կըսազա.
Ըլիլն ըլել ա պըրծել,
Ասիլն էլ ի՞նչ կըսազա:
ԱՋ 379

62–63–64

Ցարըս դեղի խարազ ա,
Աղլուխս տըվի թավազա.
Մին էլ վոր իմ կուչըը դա,
Գաթա կ'ուտեցնեմ թագա:
ԲՍ 153

www.naregatsi.org

65

Սարերը բարակ սեղ ա,
Քաղել ես կակուղ բեզա.
Հազըրվի, արի գընանք,
Քանի չի մըթնել, թեզ ա:

ՏԽ 211

66

Ձորի ճամբեն մեկ իզ ա,
Շան արղի բոյը մի թիզ ա.
Արիք գընանք, Ասատուր,
Վոսկե գյամին քըցենք ջուր

67

Հաց եմ թըխել, բոզ ա,
Ընկավ թընդիրը, թոզ ա.
Ելնեմ, կայնեմ հարցընեմ՝
Ցարաբ իմ յարը հո՞ս ա:

ԱԴ 162

68

Ճամբա յեմ գընում, թոզ ա,
Իմ ու քու սիրտը դուզ ա.
Ամեն մի ներս մըտնելիս՝
Լեզուս տամ քեզի մազա:
234. Իմ յարը շատ դուդուզ ա.
Ամեն մեջլիս մըտնելիս՝
Լեզուս տամ յարիս մազա:
4. Լեզուդ տուր ինձի մազա:

***

Երիվանա ճամբախ թոզ ա,
Տես՝ Թալիչու ճամբեն դուզ ա:

69

Բամբակ եմ ցանե(լ) ղոզա,
Մի յար եմ սիրե(լ) թաղա.
Հին յար, աչքերըդ քոռնա,
Մեկն ել եմ բըռնե(լ) փեսա:
124. Բամբակ եմ ցանե խոզան,
Մի յար եմ բըռնե թաղան...
Մինն ել բըռնի թաղան:

ՀԺԵ 110

123. Բամբակ եմ ցանե խոզա...
Մեկ յար եմ բըռնե թաղա.
Հին յար, աչքերիդ ղուրբան:

70

Մըտանք մաղազեն, բոլորը բուզ ա,
Հայի սալդատը թաղավոր կ'ուզա:

ՀԺԵ 114

71

Մեր կալատեղը դուզ ա,
Ձեր կալատեղը դուզ ա.
Վո՞րը կանա ինձի ուզա,
Իմ դին հազար մանեթ դուզ ա:

72

Մեր կալի տեղը փոս ա,
Քար կըթալեմ, կըսոսա.
Իմ դինը հազար մանեթ,—
Վո՞ր կանա ինձի ուզա:

ՀԺԵ 115

73

Մարգարի դուռը դուզ ա,
Աչխեն կայներ Անտոն կ'ուզա.
«Երկու հարուրն ի՞նչ անե,
Իմ հերը շատ բաշլըղ կ'ուզա»:

Խորոտ ե Աչխենը,
Կորտ ե Աչխենը:

ՀՄԽԲ 26

74

Հերանցըս դուռը դուզ ա,
Հերըս բաշլուղ շատ կ'ուզա.
Երկու հարուրն ի՞նչ անի,
Գընա հինգ հարուր խոսա:
1. Հերանցըս դուռը փոս ա:

***

Տես՝ Հերանցըս դուռը
դուզ ե:

www.naregatsi.org

75

Թալիշու ճամբեն դուղ ա,
Անտոն կայներ Աչխեն կ'ուզա.
«Ինձ պես տըղեն քեզի հետ,
Աստված վըկա, լավ կըսազա»:
Խորոտ ե Աչխենը,
Կոլոտ ե Աչխենը:
ՀՄԽԲ 26

***

Երեվանա ճամբաս թողա,
Անդրեն կայնե Աչխեն կ'ուզա:
Խորոտ եր մեր Աչխեն,
Կոլոտ եր մեր Աչխեն,
Սիրուն եր մեր Աչխեն:
ԲՆԱ. 566

76

Թըխել ես կարմիր դաթա,
Մի տարի կըտրել վաղա.
Ա՛խ, յես ձեղի ինչ ասեմ,
Սերը մի յաման զատ ա:
ՏԽ 191
34. Իմ սըրտով սիրած յարըս
Աչխարհումը մի հատ ա:

77

Դու ո՞ստա կուզաս, դու Խըլաթա,
Բոլոր երես լըմանի դաթա.
Պադիկ մի տաւր, տամ դոլաթա,—
Կանչիմ՝ յար արի՛, չուտ արի:
ՌՄ 98. ՏԽ 233

78

Դալալ, ո՞ստա կուզաս.— Այար
Խըլաթա:
Պադիկ մի տամ քե, տուր ընձի
դոլաթա:
ՀԺԵ 56

79

Քեզի կ'ասեն ըռեսի հարս,
Կարմիր երես, արուն կաթաս.
Պադիկ մի տուր, տամ դոլուքա:
ՔՄՎ 23

80

Մատիս մատնիկ արծաթ ա,
Կերածըս հալալ կաթ ա.
Ցարս, ինձի բան մ'ա՛սա,
Դոստ ու դուշմանըս չատ ա:
ՀԺԵ 114

81

Քարեն պաղ ջուր կրկաթկըթա,
Քեզ տըվել են ինձի բութա.
Աբի ինձ հետ խոսք մին արա,
Աչխարքը թող ասի առա*) ա:
ՏԽ 227

82

Մինթանես սպիտակ չիթ ա,
Ցես կ'առնեմ, նանըս չի տա.
Ադա, քո հոդուն մեռնեմ,
Ուրիշին իրդար մի՛ տա:
2. Ցես կ'ուզեմ, ադես չի տա:
12. Կերածըս կարմիր թութ ա,
Իմ հեր քե աղջիկ չի տա:

83

Աղջի՛, հագածդ չիթ ա,
Ցես կ'ուզեմ, հերըդ չի տա.
Աղջի՛, քու դաշեն առնեմ,
Ուրիշին իրդար մի՛ տա:
3. Աղջի, քու հոդին կըծեմ:
Տես՝ կերածըս կարմիր
թութ ա:

84

Կընատեմ, տեղս հարթ ա,
Զորք կիւսըս դյուղու վարդ ա.
Քյրեցեք ըսեցեք են տղեն,
Վըեր դյուշմանըդ տանա մարդ ա:
ԱԺԼ 26
«Կընատեմ, տեղս հարթ ա,
Զորք կուսս (կողմս) գյուղ ու վարդ
ա.
Գնացեք ասացեք են տղին,
Վոր դուշմանդ տանու մարդ ա»:

*) Արտասանվում և «սուքթ»:

www.naregatsi.org

85

Աղջի՛, անուշըդ Մարթա,
Ցես դիր գըրեմ, դու կարդա.
Քու խոսքերըդ ինձ համար՝
Ամեն մինը մի զարդ ա:
ԱԺԼ 41

86

Ջաղացիս դուռը տարթ ա,
կըտուրը լիքը մարդ ա.
Հըրես եկավ իմ յարը,
Գոտիկը լիքը վարդ ա:
ՌՄ 126· ԱԵ 201· ԲՍ 145

13· Ջաղացի դուռը տարթ ա.
Հըրես եկավ իմ յարը:
ՔՀ 163

3· Հըրեն եկավ իմ յարը:
ՏԽ 144

34· Ցարըս բաղեն ե դալի,
Ցայլուխը լիքը վարդ ա:
ԱԳ 261

12· Ջաղացիս մեջը մարդ ա,
կըտուրը լիքը տարթ ա:
ԱԳ 262

2· Հըրես եկավ իմ աղբեր:
ԱԺԱ 59

Ճըղացեն տոռնը տարթ ա,
կըտերը լիքը մաղթ ա.
Ցարըս կյամա հըռնացե,
Ծեռքենը փոնջ վարթ ա:
ԱԺԸ 31

Ելա տանիք, լիք մարդ եր,
Մարաք զըմեն հարդ եր.
Են դեհեն յարըս եկավ,
Տեսա՝ գոտին լիք վարդ եր:
ԱԵ 195

Ցար Ջան, Ջաղցի կտուրը տարթ եր,
Գոտիկըս լիքը վարդ եր.
Թելիկ-մելիկ աղբերըս,
Գոտիկըս չարած վարդ եր:
ՀԺԵ 117

87

Ջաղացիս դուռը տարթ ե,
կըտուրը լիքը մարդ ե.
Ասուած սիրող բան չասե,
Ուզածըս տըղամարդ ե:
ԱԳ 98

88

Ջուրն իր ճամբով կերթա,
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըտրիճ տըղեն
Հազարի մեջ մի քերդ ա:
ՀՄԽԱ 41

234· Ցարըս ինձ համար քերդ ա,
Ինձ սիրող Չիվան տըղեն
Թոքունի մեջ մի մարդ ա:
ՏԽ 171

Պուճուր առվով ջուր կ'երթա,
Տես՝ ես առուն ջուր ա դընում:

89

Ամպել ա բութա-բութա,
Ըռանդ-ըռուշըդ մութ ա.
Երդում-կըրակն ել ընկնես,
Խոսքերըդ քո՛մմա սուտ ա:
3· Վորտեղ կայնես դյալաջում:

90

Ամպել ա բութա-բութա,
Աչխարքի վերջը փուտ ա.
Թող իմ սիրածն ինձի տան,
Իրադի ասեն՝ սուտ ա:
ՏԽ 252

Տես՝ Ամպել ե, երկինք մութ ե:

91

Ամպել ա բութա-բութա,
Իմ կերած կարմիր թութ ա.
Ցես ու դու իրար սիրենք,
Թող դեղով ասեն՝ սուտ ա:
ԱԵ 195

***

1—4· Ամպել ա բութա-բութա,
Քո կերած կարմիր թութ ա:
ՇՎ 52

www.naregatsi.org

92

Ամպել ա բութա–բութա,
կերածըդ կարմիր թութ ա.
են խաղ ասող աղջիկը
Բրոնել եմ ինձի բութա:
ԱԴ 174.

***

Ամպել ա հուդա–հուդա,
Ձեռացըդ կարմիր թութ ա:
են ալ ֆասով աղջիկը
Ինձի տըվել են բուդա:
ԱԴ 169

93

Ամպել ա բութա–բութա,
Ֆո կերած կարմիր թութ ա.
Ցես սիրեցի, քե առի,
Թող աչխարհն ասի՝ սուտ ա:
ՎԺԵԱ 5

94

Մլնթանեդ բութա–բութա,
Մեջքիդ ա բալաք ֆութա.
Սիրել ենք, իրար կ'առնենք,
Թող գեղով ասեն սուտ ա:
34. Ցես քեզի վոր սիրել եմ,
Գեղով թող ասեն՝ սուտ ա:
34. Ցես դու իրար սիրեցինք,
Թող աչխարհ ասի՝ սուտ ա:
1—4... Բալաք ֆութա,
Ցես սիրեցի, աչխարհ կասի՝
սուտ ա:
ՀԺԵ 62

95

Ամպերն եղեր բութա–բութա,
Ջուրն կապեր բալաք փութա.
Ցես քեզ սիրեմ, թող ըսեն՝ սուտ ա:
ՓՀ 175

Կայներ ես բութա–բութա,
Մեջքըդ կապեր բալաք ֆութա,
Քեզի սիրենք, չըսեն՝ սուտ ա:
ԱՀ 442

96

Ամպը քըցել ա բութա,
կերածըդ կարմիր թութ ա.
Ղալամքաշ աչք ու ունքըդ
Կոտրած սըրտի ումուդ ա:
ՏՒ 205

97

կերածըս կարմիր թութ ա,
Ինձ տըվել են քեզ բութա.
Ցար Ջան, քո հոգուդ մատաղ,
Ուրիշին իրդար մի՛ տա:
ՏՒ 214

3. Ադա, քո հոգուն մատաղ:
ՌՄ 131. ԱԴ 174

Տես՝ Մինթանես սիպտակ
չիթ ա:

4. Բոլոր ասածըդ սուտ ա:

98

կերածըս կարմիր թութ ա,
Ցարիս աչքը կապուտ ա.
Աղջի՛, արի փախցընեմ,
Թող գեղով ասեն՝ սուտ ա:

99

Ամպել ա, յերկինք մութ ա,
կերածըդ կանաչ թութ ա.
Ա՛յ, դու ինձի խաբուտ ես,
Ասաքըդ ինձ ի՞նչ ոգուտ ա:

100

Ամպերն ելան ֆութա–ֆութա,
Մեջքս եմ զարկեր կանաչ ֆութա.
Գլուխս եմ դրեր ֆինո ֆասեր,
Մատաղ եմ արեր,—կ'երևա՝ սուտ
ա:
ՀԺԵ 100

101

Գիշեր մութ ա, սարեր մըժ ա,
Երկիղ ունիմ, մատղաչ ճիժ ա.
Գիշեր չուր լուս կըվըժվըժա,
Մարդու ականջ կըդըժդըժա:
ՀՄԽՔ 31

www.naregatsi.org

1—4· Ելա դեղուկ, սարեր մըժ ա,
Երիկ մ'ունիմ, քորփա ճիժ ա,
Գիշեր չաւր լուս կըվըժվըժա:

102

Շըրաքն ելեր կըհիա,
Աչվընեըը կըպըլպըլա.
Երթամ քովը մոռենամ,
Կըվախնամ ելնա գըժա:
ՀՀ 323

103

Մինթանեղ ալ ա,
Աչինըը չալ ա.
Մատներըդ բարակ,
Մաչինու կար ա:
1· Գոզնոցդ դուխնի յա:
ԱՒ 336

104

Աչքեր ունիս վիսալա,
Թըչերըդ փարմիը լալա.
Մեր տունը յերբոր հարս գաս,
Գըլխիդ կըգըցենք վալա:
ՏԽ 199

105

Վարագա սար բացվե լալա,
Եղունիկ բերի ջուխտիմ բալա.
Մեկն ի ասլան, մեկն ի կափկան,
Քանց մեկըդմեկ են անդրմանն:
ՎՍԲ 38

***

1—4· Վարագա բացվե լալա,
Եղունիկ բերե ջուխտ մը բալա:
ՊՎ 127

106

Բոյդ ի յատամի, երեսդ ի լալա,
Խոյըդ ի, խելքըդ ի չատ լավ ուալա,
Խրդճալ եմ, մի' բերեր գըլխուս ի բալա:
ՀՀ 325

107

Գարնան բացվեց նոր լալա,
Խումար բերեց ջուխտ բալա.
Աչքըդ լուս, հաչի աղա,
Թոռներուդ հալալ արա:
(Ամբողջ յերդ) ՀՄԽԲ 28

***

Թազա յափուն բացվե լալա,
Խումար բերեր ջուխտըմ բալա.
Ատամնդ սիրես, Սահակ աղա,
Բալաքաեբացդ հալալ արա:
ՔՄՎ 33

108

Դոչիդ վըրեն ջուխտակ խալ ա,
Գըլխիդ քըցել ես ալ վալա,
Ճամբեդ մըտիկ տալով հալա:
ՏԽ 166

109

Թոն կուպա կալկալա,
Բոյիդ մեռնիմ, Մարգարա.
Սալմա կռճակ եմ չարել,
Քեղնից լալն եմ ճարել:
Ա.Ե 203

110

Քոչեր եկավ, անցավ ճալա,
Ձերմակ ճակատ, կարմիր վալա,
Քու սեր քաչելով հալա:
3· Քու սեր քաչեմ, հալա մաչա:
ՋՔ 20

111

Մաչքըդ պերակ* չըմալ ա,
Կոժըդ** ծանդըր՝ ճըմալ ա.
Քու ալագյոզ աչքերըդ
Իմ արունըս խըմալ ա***:
ԱՒ 112

* Մեջքդ բարակ.** կուժդ.
*** խմել է:

112

Քու հագած զեյրեն ալ ա,
Ճակտիդ ի ջուխտ մի խալ ա.
Աղջի', սեղան մի' կապա,
Քու յարըն չատ բեհալ ա:
Ա.Ե 196

www.naregatsi.org

113

Աչքերըդ չաո՛ւտ չալ չալ ա,
Ամեն թըշիդ մի խալ ա.
Ա՛խ, են որը յե՛րբ կըգա,
Գըլխիդ քըցեմ ալ վալա:

Տհ 156

4· Գըլխիդ գըցես ալ վալա:

ԲՍ 130

114

Տեղ եմ քըցել ալ վալա,
Երկու թըշերիս խալ ա.
Ցես են տըղին չեմ ուզում,
Ել ես ի՛նչ զալմաղալ ա:

115

Ընըրեցես յըղըկալալ ա,
Վըրէխարըս կըղըկալալ ա.
Եսա կյամ ա իմ յարը,
Բեղերը չըղըկալալ ա:

Ա.Ժ. 48

«Ինձգիս յեղակալել ա,
Վոչխարս կեղտակալել ա.
Ես ա գալիս ա իմ յարը,
Բեղերը չաղակալել ա»:

116

Սարը ձյունը կալել ա,
Անձրև արել, հալել ա.
Խարաբ ասրեք իմ նանին,
Սիրտըս վարամ կալել ա:

Ա.Ղ 143

117

Սարերը ձյուն կալել ա
Անձրև արել, հալել ա.
Զալում գյանջեցի աղջիկ,
Դարդերն ինձ կալել ա:

Ա.Գ 268· ԲՍ 138

34· Վոր դու ըտենց բեքեփ ես,
Դարդերըդ ինձ կալել ա:

Ա.Ժ.Թ 87

118

Զյուն ա եկել, հալել ա,
Լըցվել գյոլը, սառել ա.
Եդ ելողու գէշ խոսքը
Ինձ մոմի պես վառել ա:

ԲՍ 126

123· Զինը եկել, հալել ա,
Լըցվել փոսեր, սառել ա.
Եդ դուշմանի ասած խոսքը:
234· Փոսն ա գառել, սառել ա,
Եդ քաւ բըռնած բաները
Ինձ մոմի պես հալել ա:

Ա.Ժ.Ա. 56

119

Արփաչայը ելել ա,
Ցարըս դուռը կայնել ա.
Ինձի աչքով անում ա,
Սիրտ ու հոգիս հանում ա:
4· Սիրտըս հոգիս մաշում ա:

Ա.Դ 163

120

Լուսու աստղըն ելել է,
Նանի, յարըս քընել է,
Ք'ընել է, քըրտընել է:

Հ.Ժ.Ե 119

121

Կողբա բերդը բըլեր ա,
Ցարըս տակին քըներ ա.
Զեն տըվի, ձենըս չառավ,
Մեղեր Թարկըս տըվե՛ր ա:

Հ.Ժ.Ե 122

124· Կողբա քարեր ճըղվել ա,
Ցարըս մի'ջին քընել ա...
Ինձանից խըռովել ա:

***

Սարի ուսին բըլեր եր,
Ցարըս տակին քըներ եր.
Ք'ըներ եր, քըրտըներ եր,
Վախենամ, Թարկըս տըվեր եր:

Հ.Ժ.Ե 97

***

Ղարսա բերդը պըլել է,
Իմ յարս մեջը քընել է.
Զեն տըվի, ձենս չառավ,
Մեղար ինձմե ջորե՛ր է:

Ա.Ը 132

www.naregatsi.org

124· Կանա յայլեն փըլեր եր,
Ցարըս տակը քըներ եր·
Մեզեր ինձեն ջորի՞ր եր:

ՆՀՋ 87

Կանա յայլան փըլեր ե,
Ցարըս մեջը քըներ ե·
Ձայն կուտամ, ձայն չհանե,
Մեզար ինձեն ջորի՞ր ե:

ՀԺԵ 83

124· Կողբա պատեր դըրած եր,
Ցերըս տակին քընած եր·
Ցարաբ ինձնեն չորված եր:

122

Աղվես դարը պըլել ա,
Ցերըս տակը քընել ա·
Ձեն տըվի, ձենըս չառավ,
Եղ ի՞նչ անուշ քընել ա:

ԱՖ 342

***

Աղվես դարը փլեր ա,
Ա՛յ սար ու սեյրան,
Ցարս տակը քներ ա·
Ցարալո ջեյրան:

ԿԺԵ 50

***

Ձեռնակա բերդն եր փըլեր,
Ցարիկս ի տակն եր քըներ·
Քըներ եր ու քըրտըներ,
Հիալով եր, ախ կ'իներ:

ՀՀ 321

124· Ղարսա բերդը փըլած ա,
Ցարրս տակը քընած ա·
Ես ի՞նչ անուշ քընած ա:
4· Եղ ի՞նչ քաղցըր քընած ա:

123

Ղարսա բերդը փըլել ա,
Ցարըս տակին քընել ա·
Աղբեր, ոգնություն հասիր,
Իմ որը խավարել ա:

ԲՄ 142

124

Քաղքի ուսին փըլեր եր,
Իմ յարիկ տակ քներ եր,
Քըներ եր, քըրտըներ եր,
Քանց քաֆուր վարդ փըթթեր եր:

ՎՄՔ 57

124· Ղարսա բերդը բըլեր եր,
Ցարըս տակը քըներ եր·
Վարդն երեսին թըփուեր եր:

ՀԺԵ 139

125

Բախտն ինձանից փախել ա,
Դուռն իմ դեմըս ախել ա·
Սերըդ քաշել ինձ տարել,
Բարձըր ծառից կախել ա:

ՏԽ 207

126

Իմ նան ինձի թակել եր,
Դուռն երեսիս փակել եր·
Երնեկ ավգանին մեռնեյի,
Մարիկիս մըտեն ելնեյի:

ՀԺԵ 116

Տես՝ Մերս ինձի բերել ա:

127

Նանեն ինձի թակել է,
Դուռն երեսիս փակել է·
Ցես նանիցս ջորել եմ,
Դիար զուրպատ կորել եմ:

ԱԴ 175

34· Դիար դիար կորել եմ,
Ցարոջմեննեն ջորել եմ:
Նանես ինձի տըփել է,
Դուռը վըրես խըփել է·
Ցես նանեես ջորեր եմ,
Դիար դիար կորեր եմ:

ԱԳ 98

128

Ծաղկեվանքը ծաղկել ա,
Ծամեր գըլխիս թաղքել ա·
Ախարար տարեք իմ նանիս,
Սերըն ինձի հաղթել ա:

ԺԽ 58

www.naregatsi.org

12· Փըշատի ծառ ծաղկել ա,
Մազերս գըլխիս թաղքել ա:

***

1—4· Ծաղկավանքը ծաղկեր ա,
Ծամեր գըլխիդ թաղքեր ա:
ՓԾ 74

129

Ծառիս ծերը ծաղկել ա,
Մազիս ծերը թաղքել ա.
Վախում եմ ղարիբ եթամ,
Ղարիբություն հաղթել ա:

130

Ծիրանի ծառ ծաղկել ա,
Թուխ մազերըս թաղքել ա.
Թուղթ ուղարկեք աղբորըս,
Ժամանակը փոխվել ա:

131

Ալուչի ծառ ծաղկեր եր,
Մայրամը տակ պառկեր եր.
Ալուչի ծառ կոճկեր եր,
Մայրամու փոր արճկեր եր:
ՎԺԵՒ 16

Մայրամի յերգից (գյոնդ). Տես նաև ՔՄՎ 127 հա.

132

Հաղկալ ա, հաղկալ*) ա,
Բաքվա չհարը ծաղկալ**) ա.
Են աղեն***) լսեցեք՝ կյա,
Դիւքյան բաղար սարքալ**) ա:
ԱԺՔ 28

*) Հաղկել ա**) Ծաղկել ա.
Սարքել ա. ***) Տղին պա:

133

Ալև նոր ա ծեղկեր ա,
Ցարըս ծաղիկ ղըրկեր ա:
Կայներ ես մահլի վերեվ,
Վի՞ր հետ ղըրկեմ իմ բարեվ:
ԱՀ 439· ԺՀ 23

Տես՝ Հենց վոր ծաղի արևը:

***

Ղարսա ջուրը պաղել ա,
Տես՝ կողբա ջուրը սառել ա:

134

Գեղի բոլոր կըծղել ե,
Մեկը վարդով լըցվել ե.
Ախաբար տարեք իմ նանին,
Բալեն դարդով լըցվել ե:

135

Հոռոմ, հոռոմ, հոռոմել ա յարըս,
Վարդը ձեռին թոռոմել ա յարըս:
(Կրկնակ)

136

Իմ յարը դուռ քըներ եր,
Փափաղը ծուռ դըրեր եր.
Հաղվին յարը տուն դարձավ,
Իմ յարը ձորեն անցավ:
ԱԳ 94

137

Յար, յար, յարըս քըներ ա,
Հով ծառի տակ քըրտըներ ա.
Հով, հով, հովը քըներ ա,
Հունձ ա անում, բեզդեր ա:

***

Ժամի դուռը թխկնել ա,
Տես՝ Այ յար, այ յար, կոնել ես:

138

Իմ աղջիկը կըռնել ա,
Վարդը ձեռին բըռնել ա.
Ամեն ծառին մի փըշատ,
Իմ աղջկա ումբրը չատ:
ԱԺՍ 41

Տես՝ Ալուր մաղեմ, թեխ կուդա:

***

Ագիկ յարըս կըռնալ ա,
Գյուլն ըրեսեն փռնալ ա.
Ամեն ծառա մին փըշատ,
Խելունք տըղեն ումբրը չատ:
ԱԺԻ 41

www.naregatsi.org

139

Ցես մի զարիք զուշ ելա,
Զալում մարդի թուշ ելա.
Զունքի ինձի սիրեցիր,
Ղումաւթյունը թարկ արա:

140

Ցոնջեքը կանանչել ա,
Ցարըս ինձ հանանչել ա.
Ասի, թե մի պաչ առնեմ,
Աղջիկըն ամանչել ա:
1. Ծառերը կանանչել ա,

***

Ցոնջեն նոր ա կանաչել,
Աղջիկ տըղեն ճանաչել.
Աղջըկան բան մի՛ ասեք,
Աղջիկըն ա ամաչել:

141

Ալագյազ սարն ամպել ա,
Աղբեր իր ձին թամբել ա.
Ցարոջ դրռնեն անցել ա,
Ելե դաշտը խաղցել ա:
Անձրեվ զարկե, թըրջել ա.
Արեվ զարկե, չորցել ա,
Քան քաֆուր վարդ բացվել ա:
ՀՄԻՄ. 11

***

1—8. Դալու բաբեն ամպեր ա,
Աղբեր իր ձին թամքեր ա,
Ելի մեյդան խաղցեր ա,
Անձրեվն եկի, թըրջեր ա,
Արեվն զարկե, չորցել ա,
Քյաֆուր վարդից բացվեր ա:
ՓՇ 72

***

1–8. Դալու բաբեն ամպել է,
Շեկ յարը ձին թամքել է,
Հեծի, ջիրիդ խաղցել է,
Անձրեվ եկի, թացվել է:
Ա.Ը 133

***

1–8. Դալու բաբեն ամպեր ա,
Ջրչեր, մեյդան անցեր ա,
Անձրեվ եկեր, թըրջեր ա,
Արեվ զարկեր, չորցեր ա,
Քանց քաֆուր վարդ բացվեր ա:
Ա.Ը 447

***

1—8. Արտասրա սար ամպեր ա,
Սեվ լաճ ուր (իր) ձին թամքեր ա,
Մեջ հեծելին կայներ ա,
Հեծել կուտոր արեր ա:
ՀԺԵ 86

***

1—8. Ալագյազը ամպել ա,
Գրիգոր ձինը թամքեր ա:
ՀԺԵ 116

***

1—8. Ադռա վերա ամպեր ա,
Իմ աղբեր իր ձին թամքեր ա,
Գացեր մեյդան կըռվեր ա,
Անձրեվ եկեր, թըրջեր ա,
Արեվ առեր, չորցեր ա,
Քանց քաֆուր վարդ բացվեր ա:
ՀԺԵ 122

***

1—8. Թամյանց սարեր ամպեր ա,
Աղբերըս ձին թամքեր ա,
Գնացեր մեյդան, խաղցեր ա,
Անձրեվ եկեր, թըրջեր ա,
Քըներ ա, քըրտըներ ա,
Վարդն երեսին փըռվեր ա:
ՀԺԵ 129

Հմմտ. Քաղքի ուսին փըլեր եր:
Հմմտ. Կես գիշերին դուրս ելա:

142

Ցարոջ դրռնով անցա յես,
Անձրեվ եկավ, թացվա յես,
Արեվ զարկավ, թըխտա յես,
Քանց կարմիր վարդ բացվա յես:
ՀՀ 321

Հմմտ. Գիշեր խաղա, դուս ելա:

www.naregatsi.org

143

Կողքա յետեվն ամպել ա,
Թուխով ոսկին բանդել ա.
Մեռնիմ ազատ ղըըղիդ,
Ղըըղըդ կեղտոտել ա:
Ա.Դ 161

124. Պատին եռևն ամպեր եր,
Թուխով ոսկին բընդեր եր...
Ղըըղըդ կեղտոտեր եր:
Ա.Դ 97

144

Կողքա յետեվ ամպել ե,
Թուխով ոսկին բանդել ե,
Քուրը մեռնի են աղբար,
Ալ ձին տակը թամքած ա:
Ա.Ե 202

145

Խոր գետը ծով գառել ա
Ինձ էլ հետը տարել ա.
Խեղճ աղջիկն ենպես գիտի,
Սիրտս իրենից սառել ա:
ՀՄԽՍ. 35

13. Խոր գետը վարարել ա,
Խեղճ տըղեն ենպես գիտի:
ՏԽ 138

Տես՝ Մեր գետը վարարել ա:

146

Ջուրը ջըրին առել ա,
Մատրս գալամ տարել ա.
Են Թուխ բեղավոր տըղեն
Ուշն ու միտքըս տարել ա:
Ա.Ջ 375

Տես՝ «Սառել ա» չարքը:

147

Ջյունն եկել, գուռն առել ա,
Կեսրարս պարտքով մեռել ա.
Ցես պըստիկ, յարըս պըստիկ,
Դարդը մեզի տարել ա:
ԺԽ 6

234. Կեսուրս պարտքով մեռել ա.
Ցես պուճուր, յարըս պուճուր,
Միտքը մեզի տարել ա:
124. Ձյունն եկավ, գետինն առավ,
Կեսրարըս պարտքով մեռավ...
Հոգսը միտքը մեզ տարավ:
ՀՄԽԲ 10

***

Ձյունն եկել, գուռըն առել,
Աբեվն ա տեսել, հալել.
Ցես ջահել, յարըս ջահել,
Դարդն ա մեզի տարել:

148

Դըրըդեն տակը սառալ ա,
Մաննեբս սառնը տարալ ա.
Ընդըդավ մին տըղա գյընեց,
Ոչ ու մրետքս տարալ ա:
Ա.Ժ.Խ 45

«Դարբադեն տակը սառել ա,
Մաննեբս սառնը տարել ա.
Են տեղով մի տղա գնաց,
Ուշ ու միտքս տարել ա»:

13. Ըխալբեն հըղեն սառալ ա.
Սրեվ տըղա, կարմիր յեխան:
Ա.Ժ.Խ 45

3. Թոխ չոխա, կարմիր, յեխա:
Ա.Ժ.Խ 45

«Աղբրի ուղին սառել ա.
Սեվ տըղա, կարմիր յախան:
Թուխ չուխա, կարմիր յախա»:

***

Դարվադեն տակը սառալ ա,
Մաննեբս գալամ տարալ ա.
Թուխ յախավոր, բոզ չուխավոր,
Ոչքս խելքըս տարալ ա:
Ա.Դ 115

149

Աբխա-չայը սառել ա,
Նազոս ծառին թառել ա.
Ցարխս չեկլիկ մարդերը
Խելքըս գըլխես առել ա:
ՏԽ 206

www.naregatsi.org

150

Ձըկնաւ ծովը սառել ա,
Ձուկը տակը կալել ա.
Թուխ փափախ, սպիտակ ճակատ
Ցարի խելքը տարել ա:
ԱՁ 38

151

Կողբա ջուրը սառել ա,
Ջու աֆքյարդ ինձ առել ա.
Են չեկ-բեղավոր տըղեն
Խելքըս գըլխես տարել ա:
ՏՒ 253

***

Ղարսա ջուրը պաղել ա,
Ղամեն ձեռըս տարել ա.
Են չեկ բեղավոր տըղեն
Խելք ու միտքըս տարել ա:
ԱՔ 341

***

Կանանչ ջուրը սառեր եր,
Ձեռքըս դաման տարեր եր.
Պարին միջի չեկ տըղան
Խելքըս գըլխես տարեր եր:
ՋՔ 20

123· Ձայի ջուրը սառել ա,
Խանչալ ձեռքըս տարել ա.
Եղ թուխ ու խումար տըղեն:
13· Ղոչա ջուրը սառել ա.
Թուխ բեղավոր չան տըղեն:
3· Շեկ մազավոր լավ ադեն:

***

Լոռվա ջուրը սառել ա,
Ղամչին կուռըս տարել ա.
Քանքըլիկ ու Թանթըլիկ տըղեն
Ուշք ու միտքըս տարել ա:
ԱԺԱ 54

152

Սարի ջուրը սառել ա,
Ղամեն ձեռըս տարել ա.
Բաղի միջի չեկ աղջիկ
Ուշքըս միտքըս տարել ա:
ՀԺԵ 114

134· Կողբա ջուրը սառել ե...
Եղ չեկ մազավոր աղջիկ
Խելքըս գըլխես առել ե:
ՌՄ 129

***

Ղարսա ջուրը սառեր եր,
Ղամեն բուռըս տարեր եր.
Շեկիկ ծամերով աղջիկ
Խելք ու միտքըս առեր եր:
ՆՀՋ 88

153

Գետան ջուրը սառել ա,
Խանչալ բուռըս տարել ա.
Գընացեք ասեք են յարին՝
Սիրտըս քեզնով վառել ա:

154

Քամին մեջքըս առել ա,
Ղումաշի պես տարել ա.
Քո մոր թահնա խոսքերը
Քո՛մեռ սըրտիս առել ա:

155

Քրտինք մեջքիս սառել ա,
Մաճը բուռս տարել ա.
Են չեկ ծամերով աղջիկ,
Ուշ ու միտքս առել ա:

***

Ջըրի ճամբեն սառել ա,
Մաճը բուռըս տարել ա.
Կաքավպոչիկ Թուխ տըղա
Ուշ ու խելքըս տարել ա:
ԱՔ 142

***

Ղրիեն հըղեն սառալ ա,
Մաննները չուշա տարալ ա.
Կյարմուր յախա, Քոխ չոխա
Ոչըս խելքըս տարալ ա:
ԱԻ 113

123· Ըխպըրին հըղեն սառալ ա,
Մաննըս զալամ տարալ ա,
Չեն Քոխ չուխա, կարմիր
յախան:
ԱԺԻ 45 հա.

www.naregatsi.org

***

Ձըրին հըղեն սառալ ա,
Աչքի կոռնըս տարալ ա,
Են քյաքյլիդյ պոչիդյ տըղան
Ոչըս մըեռքըս տարալ ա:

Ա.Ժ.Ը 31

23· Մաչի մաննըս ասեղ
տարալ ա.
Ամեն մին յարըս տրսնալավ:
«Ձրի ուղին սառել ե,
Աչու կուռըս տարել ե.
Են քանքլիկ պոչիկ տղան
Ուչըս միտքըս տարել ե»:
23· «Միչի մատս ասեղ տարել ե
Ամեն յարըս տեսնելով»:

156

Բուխարիկը վառել ա,
Աֆքյարըդ ինճի առել ա.
Ջանի վոր քեզ սիրել եմ,
Ուչ ու միտքըս դառել ա:

Տի 148· ԲՍ 141

157

Վարդավառը հասել ա,
Բան ու գործըս Թարսել ա.
Թե սիրել ես, ջուր շաղ տուր,—
Կըրակըս Թեժացել ա:

ԲՍ 136

158

Ախտ եմ արել, հասել ա,
Ղարղուս միչին քուսել ա.
Ինաբար արեք իմ յարին,
Իմ ու քո վախտ հասել ա:

159

Գիշեր ղալդա, դուս ելա,
Թուխ ամպ անուչ կըցոլա.
Ցոլա, ցոլալուդ հայրան.
Կըցոլեր Հալվա սարին,
Շատ բարև հեռու յարին,
Քիչ բարև մոտիկ յարին:

Ա.Ե 192

Հմմտ. Մաղեր ունիմ խլվանի:

***

Գիշերս ի յես դուրս ելա,
Թուխ ամպն անուչ կըցոլեր.
Դե՛ ցոլա՛, ցոլա, ցոլա.
Դե՛ ցոլա՛ Հալվա սարին.
Ցոլա՛, ցոլալուդ դուրբան,
Փիլա՛, փիլալուդ հայրան:

Հ.Ժ.Ե 138

***

Գիշերվորե դուս ելա,
Թուխ ամպ անուչ կըցոլեր.
Ցոլա՛, ցոլալուդ ղուլ եմ,
Սարերու դաստագյուլ եմ:

Ա.Ե 189

***

Լուսնյակ գիշեր դուրս ելա,
Կըշեռք անուչ կըցոլա.
Թող ցոլա Ալվան սարին,
Բարեվ տուր բերախտ յարին:

Ա.Ե 203

Աստըղն անուչ կըցոլա,
Կըցոլա Հալվա սարին,
Շատ բարեվ ղարիբ յարին:

Ա.Ե 194

Գիշերը դուս ելա,
Լուսնյակն անուչ կըցոլա.
Կըցոլա Ալմա սարին,
Լավ բարեվ անուչ յարին:

Հ.Ժ.Ե 125

Այս գիշեր յես դուրս ելա,
Լուսինն անուչ կըցոլա.
Կըցոլա Հալվա սարին.
Կըկաթե մառմառ քարին:

Ա.Ը 136

***

Ես գիշեր յես դուրս ելա,
Լուսինն անուչ կըցոլա.
Թող ցոլա Ալվան սարին,
Բարեվ տա Նաղլու (Լեյլու)
յարին:

www.naregatsi.org

34· Յուլա դու Հալվա սարին,
Բարեվ տուր անուշ յարին:
4· Շատ բարեվ տար իմ յարին:

160

Գիշեր խալդա, դուս ելա,
Լուսնակ անուշ կըցոլար:
— Լուսնակ, դուրբան ո՞ւր
կ'երթաս:
— Կ'երթամ վըր Հըլպը սարուն:
— Կ'երթաս վըր Հըլպը սարուն,
Ախր խարբրիկ տանես յարուն:

Ձեռագիր ժող· Ցեղիազար Կարապետյանի, Թալինի Իրինդ գյուղ 5/II 1928·

Գիշեր խալդա, դուս ելա,
Թուխ ամպ անուշ կըցոլա·
Աչնան գիշեր, հով գիշեր,
Շաղն իջե, գետին նըխշեր:
Ման չիմ· «Լուսնա՛կ, դո՞ւր
կ'երթաս:

— Կ'երթամ գիշըրիկն ու ցերեկ,
Կ'երթամ վըր Ալու սարին:
— Շատ բարև խորոտ յարին:

ՀԺԵ 93

161

— Լուսնա՛կ, լուսնա՛կ, ո՞ւր
կ'երթաս:
— Կ'երթամ հետ Հալվա սարուն:
Ցարուկ բախչեն խորունկ քուն·
Ջրներ եր, քըրտրներ եր·
Պաղուկ եր, կարմըրուկ եր·
Սիրուկ եր, զարդըրուկ եր,
Վարդն երեսին փըռուկ եր,
Վախենամ՝ խրտռվուկ եր:

ԲՆՄ. 313

Հմմտ· Ջաւոու յեմ եկե, եկեք
եմ քեզ տես:

162

— Լուսին, իմ հովան լուսին,
Ո՞ւր կ'երթաս:— Հալվա սարին:
Լուսնակ՝ գիշեր անահուն,
Ջաւիւ աչուն ու գարուն:
Լուսնակն ի բակն եր իջեր,
Բակն արեվով եր լըցվեր·
Լուսնակն եր սարու ոլոր,
Հըմ խորոտիկ, հեմ բոլոր:
Ցարուկ բաղչեն խորունկ քուն
Պուրսայու բարձ տակ գըլխուն,
Ծիծ ու ծոց դեմ աստղնուն,
Լուսնակ բերի անուշ քուն:

ԲՆԲ 237

1–12· Գիշերըս յես դուրս ելա,
Քո սիրուն հիվանդ ընկա·
Լուսնակն ի բակ իջեր եր,
Բակ չողերով լըցեր եր:

ՀՀ 312

***

1–12· Ելավ ուրր Հըլպու
սարուն,
Կաւլեր գաչուն ու դգարուն:

ԲՆԳ 121

Տես՝ Հընչի երբ ըսինք գետ
բան...

163

Գիշըրիկս ի յես դուրս ելա,
Թուխ ամպ անուշ կըցոլեր·
Կըցոլեր Հալվա սարուն,
Շատ բարև հեռուն յարուն:
Ցարուկն եր բաղչեն ի քուն,
Բուրսայու բարձեր գըլխուն·
Ջրնուկ եր, քըրտնուկ եր,
Կըզա թեե պաղիկ մ'առնենք,
Դըլորա ու գընդան ընկա:
Են գընդան, ի՞նչ մեծ գընդան,
Մեջ վարդ եր, բոլոր ռեհան·
Հուսսի սուրբ Սարգիսն երի,
Եկավ ու գընձի հանեց:

ԱՋ 72

www.naregatsi.org

Տես՝ «Ցարըս բաղչեն քընուկ ա։
Տես՝ «Ցարուկ բաղչեն խորունկ քուն»։

164

Գիչեր խալղա, դուս ելա,
Բոբիկ հետիկ մի դըտա։
Առա հետիկն ու գացի,
Գացի բաղչեն դուս ելա։
Խորոտիկ մեջ քըներ եր,
Ջըներ եր, քըրտըներ եր։
Իմ թե պապիկ մ՝առնենք,
Ըսեց։ «Տըղա՛, բևվախտ ե»։

Հմմտ. 93

165

Ցես գիչերս ի դուս ելա,
Թաթախ ձընիկ թալեր եր։
Բոբիկ հետիկ գացեր եր։
Բըռնի հետիկն ու գացի
Իմ յար մեջն եր, չըտեսի։
Գացի, գացի, դըռնիկ բաց։
Մըտա՝ առնենք թաժա հաց,
Անտեր թուլեն դիս իմաց։

Հմմտ. 138

Տես՝ Պրծա, սարեն եկա ցած։

166

Գիչերը հազյան դիւս ելամ,
Մորմորիկ ձյուն մ՝ել եկավ։
Մե բոբիկ խետ մ՝ել գնաց։
Ընկամ խաթան։
Խետ են խետին գնացիմ,
Գնացիմ, խաւամ յարոց դիւռ։
Դիւռ բացիմ, երիչկացիմ,
Ցար տուն չեր, նըստամ լացիմ։

ՔՄՎ. 36

***

1–8։ Շաղ թափեր գետին հալեր,
Բոբիկ հետիկն եր կորեր։
Առա գհետիկն ու գացի,
Ցարոջ դուռ հանդըցուցի։

ՀՀ 320

167

Իրիկվորե դուս ելա,
Թաթախ ըմ ձուն եր թալե,
Բոբիկ խետիկ մ՝եր գացե։
Խետ են խետին գացի,
Գացի բաղչեն լիմ։
Բաղչեն եր ազգալվացք,
Սիմտակ լըվացք են երած,
Փողպատ ղալմով են բացած։

Հմմտ. 97

Համատ. Ցար չան, արի ու գնա։

***

Առա չըրչա գետուկ մի,
Ազգա լըվացք են երած,
Պաղչի փըշին են փըռած։
Ոսկին ճակտին են դըրած։

Հմմտ. 93

***

Լուսնակ գիչեր մ՝ դուս ելա,
Սեր–սըրտիկ լըվացք ըմ տեսա,
Շարե չապիկ պարդած տեսա,
Ակիկն եր մատնախըրած,
Փողպատը կալմով բացած։
Հարս, հա՛ն վիճակն ի բարին։

ՎՍՍ. 89

(Վիճակի յերդ)

168

Գիչերվորե դուս ելա,
Թաթախ ձընիկ մ՝եր եկե,
Բոբիկ հետիկ մ՝եր գացե։
Առա գհետն ու գացի,
Գացի ու բաղչե մ՝իջա։
Ազգալըվաց են երե,
Պաղչի փըշին են փըռե։
Ղալմով փողպատ են քաշե,
Ասողուն կռճակ են դըրե։

Ցարիկս ի բաղչան քուն եր,
Ուրֆալի բարձ գըլխուն եր։
Ոչ քուն եր, ոչ արթուն եր։
Բարձի տրկեն հոտ եկավ,
Վերցի տեսա խընձոր մ՝եր։

www.naregatsi.org

Ընձաղրի կես կծուկ եր,
Զորս կողեն արծթուկ եր:

Քըներ ես, քըրտըներ ես,
Բեր պագեմ, կարմիր երես.
Վախենամ՝ խըռովեր ես:

Ա.Ե 189

Համա. Բարձ վերուցեմ, հոտ կուգա:

169

Կես գիշերուն դուս ելա,
Մատղաշ ամպիկ մ'եր ելեր,
Թանթաղ ձընիկ մ'եր թալեր,
Բուկիկ հետիկ մ'եր գացե:
Առա զհետիկն ու գացի,
Գացի կայնա գըլխընուն.
Վարդեր փըռուկ եր երեսնուն,
Երկու ծըծի մեջ նըշան կեր:
Զոքա թե զնըշան պագեք,
Գըլորա, ընդան ինկա:
Կանչի սուրբ ու սըրոքեք.
Մեկիկ չեկավ երեվան:

ԲՆԱ 740

***

Մեր դոստան ի քընե,
Շաղ թալե կարմիր երես.
Կ'ուզեմ դամ պագնեմ,
Կըվախենամ՝ խըռովես:
Ցար հալալ ա,
Ջոջ դաշտերն եր կանաչ մեյդան,
Մեջն եր վարդ,բոլորն թուխ ռեհան:
Ձեռ տարա, տակն կըտրեցի,
Ջարկին գիմ ձեռը կոտրեցին.
Կոտրեցին, ընդան թալեցին,
Մարդ չեկավ ձի տեսություն:

ՔՄՎ 38

***

Ձիկ տարան, են ընդան թալեցին,
Ընդընի դըռներ վըրես փակեցին.
Բանլիս են ձրկան բերան թալիցին,
Անատակ ծովեր խաստւցին:

Թորդեր ես երկու ջուխտ ծամ,
Ջուխտ ծամներ մեջն եր նըշան.
Կըդա թե պագնեմ նըշան,
Գըլորա, ընկա գընդան:
Հըմլա գընդան ո՞վ է տեսի.
Մեջ վարդ է, բոլոր ռեհան:
Վոր մեկ սուրբեր կանչի,
Ձեկան խորոսան:

ՔՀ 184

170

Գիշեր խալդա, դուս ելա,
Ջաղջի դըռներով անցա.
Անձրեվ եկավ, յես տըղկա.
Արեվ առավ, յես չորցա:

ՀԺԵ 94

Համա. Ալագյազ սարն ամպել ա:

171

Գիշեր մութ ա, դուս ելա,
Ամպել ա լուլա լուլա.
Կըկաթի մարմար քարին,—
Յարըս ինձ համար կուլա:

***

Գիշեր շատ ա, դուս ելա,
Թուխ ամպն անուշ կըցողա.
Ճոլա՛, ցողալուդ մատաղ,—
Յարիս աչքն ա՝ լացել ա:

234. Թուխ ամպն անուշ կըցողա.
Ցողա՛, ցողալուդ մատաղ,
Յարիս աչքերն ա՝ կուլա:

***

1–4. Գիշեր դյուրս ելա,
Թուխ ամպն անուշ կըցողեր:

ՎՄԱ 50

***

Ես գիշեր յես դուրս ելա,
Թաթախ ձրնիկ թացել ա.
Կըկաթեր մարմար սըրտիս, —
Յարիս աչքն ա՝ լացել ա:
3. Կըկաթեր մարմար դոշիս:
3. Կըկաթեր մարմար քարին:

ՀՄԽԱ 23. ԺԱ 35

www.naregatsi.org

172

Գիշերվօրե դուս ելա,
Աստղըն անուշ կըցոլա.
Յոլա՛, ցոլալուդ զուրքան,
Յարիս աչքն ա՝ կըպըլա:

***

Գիշեր չաա ա, դուրս ելա,
Թուխ ամպ անուշ կու ցոլա.
Յոլա՛, ցոլալուդ զուրքան,
Յարիս աչքեր կը պըլա:

Ա.Ե 204

173–174

Կես գիշերին դուս ելա,
Յարույջ մեջ քընաւն տեսա.
Քըներ եր, քրտընքեր եր,
Վարդն երեսին փըռավեր եր:

Հ.Ժ.Ե 102

Հմմտ. Ալագյազ սարն ամպել ա:

175

Ես գիշեր յես դուրս ելա,
Երկու բալաք բուրջ տեսա,
Ու մեկ սոնա նոր միսա,
Վոր ասուն մեկ վեցկի կուզեր:

Պ.Վ 112

176

Եսա գիշեր յես դուրս ելա,
Երկու բալաք բուրջ տեսա.
Մեկ սոնա նոր հարս ու փեսա,
Նոր արև, նոր լուսին մեր գեղի
վերա:
Հարս ու փեսին փունջ մանուշակ,
Աղյաս լըհեճի վերեն, տակ դոշակ.
Թող խորովեր աքրախս կըրակ,
Վոր չիրիցեր ինոնց պըրակ:

Վ.Մ.Բ 45

Այս և նախորդ յերգերը՝ սկսած համար 159–ից («Գիշեր դալդա, դուս ելա»), հին հայրեններէ մնացորդներ են*):

177

Միրանի ծառ ծըռվել ա,
Յարըս սալդաթ գըրվել ա.
Յար Ջան, սալդաթ մի՛ դնա,
Ֆո եղնիկը կը մընա:

178

Արեգակը փըռվել ա,
Ջոլոզ գըլխին ծըռվել ա.
Ուղի քեզ աղբեր կանչի,
Ժամանակը լըրվել ա:

***

Արեվն ելավ, փըռվեցավ,
Ջոլոզ գըլխիս ծըռվեցավ.
Ախ՝ քեզ աղբեր ասեմ,
Ուռուզքյարը ծըռվեցավ:

179

Արևն առի փըռվել է,
Ալ ֆօտս գըլխին ծըռվել է.
Ովոր առնի իմ սիրած,
Թագը գըլխին չըվելայ:

Ա.Ը 138

4. Թագը գլխին չվելե:

***

Մաղերըդ ոլոթվել ա,
Տ. Մաղերըդ ոլորել ա:

180

Աղջի, բախալըդ բացվել ա,
Վախտ ու վագդը լըցվել ա.
Դու ինձ անտեր մի՛ թողա,
Աղբուխ լացով թաչվել ա:

---

*) Տես. Մ. Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական յերգեր», (Արտատպ. ՀՍԽՀ Պետ. Համալսարանի «Տեղեկագրից» № 2–3. 4 և 6) Յերեվան 1931, յեր. 248 հտ.:

www.naregatsi.org

34· Դու ինձ չեթիմ մի՛ թողա,
Իմ սիրտ դարդով լըցվել ա։

181

Աղջի, բախտըդ բացվել ա,
Սիրտս արնով լըցվել ա,
Զանք իմացա, մոտացա,
Դուվրան ձեռքիս դռացել ա։

182

Բաղչան վարդը բացվել է,
Սիրտս դարդով լըցվել է.
Գիտամ՝ զաղուկ սիրեցինք,
Աչխարհքն իմացվել է։

183

Քո վարդերը բացվել ա,
Սիրտս արնով լըցվել ա.
Ուրիշների գէչ խոսքից
Լերդ ու Թոքըս խոցվել ա։

123· Սիրտս արնով լըցվել ա,
Քո դյուլերդ բացվել ա.
Ելողլու գէչ խոսքերից։

ՏՒ 246

184

Սարի խոտը հասել ա,
Ցեղինքը նըստոտել ա.
Հրես եկավ իմ յարը,
Քյաքյուլը Թողոտել ա։

***

Սարին խոտը հասավ ա,
Գիմշինին նըստոտավ ա.
Ջալում գինջեցի աղջիկ,
Փաքուլդ Թողոտավ ա։

ԱԴ 114

2· Գոմեշնին նըստոտել ա։

185

Ես որ արեմ պատել է,
Իմ յարն ինձի տալ է.
Ցար, կանչե՛, ձենիդ մեռնեմ,
Մերըս ինձ տպատել է։

ԱՀ 139

186

Վաղքիս ճամփեն խոտել ա,
Ցեղներըդ նըստոտել ա.
Ախպարդ սարեք իմ նանին,
Սապրըս ժալըտալ ա։

ԱԺԱ 61

187

Ես սարը ծաղկոտել ա,
Ոխարը բըրդոտել ա.
Մեռնիմ եդ Թուխ քյաքյուլիդ,
Ծերըս խի՛ Թաղըտալ ա։

***

Տումարը ոչլոտել եր,
Սարերը ծաղկոտել եր.
Մեռնիմ դաստա քյանքյուլիդ,
Եդ ինչի՞ տպոտոտել եր։

ԱՋ 389

1—4· Սարերը ծաղկոտել եր,
Ոչխարը արկոտել եր։

188

Սարերը ձրնոտեր է,
Ֆյալերը քընոտեր է.
Աղբերքս բաղի մեջը,
Վռանները չաղի մեջը։

ԱՀ 144

***

1—4· Սարերը ձրնոտեր է,
Ֆյալերը քընոտեր է։

Տես՝ Ա՛յ տղա, դու բաղի մեջին։

189

Ծորդանըդ երկարել ա,
Երեսդ, գյուխդ ծածկել ա.
Մի բաց արա, վեր տեսնեմ,
Կըրակը սիրտս վառել ա։

ԲՍ 131

www.naregatsi.org

190

Մեր գեղը վարարել ա,
Սիրտըս հեղը տարել ա.
Ինձ պես ջոմարդ աղջիկը
Ծաղկի պես սալարել ա:

Տհ 175· ԲՍ 153

Ախր գեղը վարարել ա,
Տես՝ ախր գեղը ծով դառել ա:

191

Մերըս ինձի բերել ա,
Բալուլ արել, ղըրել ա.
Երնեկ բալուլ մեռնեյի,
Ցար Ջան, մըտքեդ չելնեյի:

***

Նանես ինձի բերել ե,
Բալուլ նրել, տիրել ե.
Ֆյաչքա բալուլ մեռնեյի,
Ցար, քու մըտքեդ չելնեյի:

Ա.Գ 98

***

Մերըս ինձի բերեր ա՝
Ճերմակ փաճուճ երեր ա.
Փաճուճի մեջ յես մեռնենք,
Վոր մորս ի մըտքից ընկնենք:

Ա.Ե 193

***

Մերըս ինձի բերեր ե,
Ներխուն բալուլ երեր ե.
Ներխուն բալուլ մեռնեյի,
Մորըս մըտքին ելնեյի:

Ա.Զ 387

Իմ մոր մըտքին ելնեյի:
Տես՝ իմ նանն ինձի թակել եր:

192

Իմ նան ինձի բերել ե,
Ներխուն բալուլ նրել ե.
Ընձի մոռանալու իր,
Ով մոռանա, կըքոռանա:

ՀԺԵ 116

193

Հերըս գիր իմ գըրեր ե,
Բազըմ ոանիմ՝ փըլեր ե.
Մեր բաղի մենծ ալ ղուչը
Իմ գըրկումը քներ ե:

ՎՍ 154

194

Լուսնակը բոլորել ա,
Իմ յարը մոլորել ա.
Մոռոսած համբին մեռնիմ,
Բևխերը ոլորել ա:

Տհ 249

195

Լուսնյակը բոլորել ե,
Ամպի մեջ մոլորել ե.
Աղջի, քու ծոցիդ մեջը,
Ծըծերըդ կըլորել ե:

Ա.Գ 94· ԲՍ 145

196

Արեվը բոլորել ա,
Լուսնիակը նորել ա.
Սիրուհի խաթեր համար
Գուլան աչքիցըս կորել ա:

Տհ 220

197

Մաղերըդ ոլորել ա,
Աչքերըդ բոլորել ա.
Ճերկ՝ որ ա չեյի տեսել,
Իմ սիրտը մոլորել ա:

ՀՄԽԲ 17

3· Իրեք որ ե չեմ տեսել:

ԲՍ 154

***

Մաղերըդ ոլորվել ա,
Աչքերըդ բոլորվել ա.
Իրեք որ ա չեմ տեսել,
Իմ սիրտըս մոլորվել ա:

ՊՄՎ 108· Տհ 180

Իրեք որ ա տեհել չեմ:

Ա.Ժ.Ա. 57

www.naregatsi.org

***

Թուշիս մազերդ ոլորել ես,
Աչքերըդ բոլորել ես.
Իրեք որ ա տեսել չեմ,
Իմ սիրտը մոլորել ես:

ԱԺՍ. 53

198

Եսոր նորը նորել է,
Նորել է, բոլորել է.
Ցա՛ր, քո լուսնակ երեսից
Իմ սիրտը մոլորել է:

ՀՄԽՍ. 34

199

Եսոր նորը նորել է,
Ցարիս յեզը կորել է.
Ով որ գըտել է՝ Թող տա,
Քամարըս կուտամ մուժտա:

ԱԴ 175

***

Ասոր նորը նորեր է,
Իմ յարի յեզ կորեր է.
Վովոր գանի՝ Թող յետ տա,
Ճակտիս ոսկին միւժդան է:

ԱԴ 92· ԲՍ 150

***

Լուսնիակը նորեր է,
Ցարիս յեզը կորեր է.
Վովոր գըտեր է՝ Թող յետ տա,
Հիսուն մանեթ միժտա կա:

ԱԴ 98

***

Եսոր նոր ըմ նորեր է,
Ցարոջ փուշին կպրեր է.
Վովոր գընտե՝ Թող յետ տա,
Ասուած ուր (իր) մուրազին տա:

ԾՎ 50

***

Նորը Թաժա նորել ա,
Ցարիս յայլուխ կորել ա,
Ով որ գըտե՝ Թող յետ տա,
Մեջքիս քամարը մուժտա:

***

Լուսնակ եսոր նորել ա,
Ցարիս դուխին կորել ա.
Ով գըտել ա՝ յետ Թող տա,
Հինգ Թուման իրեն մուժտա:
Տես՝ ձամբեքը ոլոր-մոլոր:

200

Եսոր նորը նորել է,
Ջեռնես բան ըմ կորել է.
Առավոտ գըրավ գըրավ,
Սիրել ի, ձեռնես Թըռավ:

ՀԺԵ 117

201

Արեվը ծագյալ ա կըծացալ ա,
Ֆռու յարըդ մըծացալ ա.
Ջախտ ըրա, տուն ընկեր,
Դիւշմաններդ չըտացալ ա:

ԱԺԻ 43

«Արեվը ծագել է, կեծացել է,
Ֆռու յարըդ մեծացել է.
Ջանք արա, տուն ընկիր,
Թըշնամիդը չատացել ա»:

202

Արեվը կըծացալ ա,
Ղումըրը քուչտացալ ա.
Խաբար տարեք իմ յարին,
Մուշտարիս չատացալ ա:

ԱԴ 268

***

Արաղը հեչտացել ա,
Ձամբեքը կոչտացել ա.
Խաբար տարեք իմ յարին,
Առնողըս չատացել ա:

ՀՄԽՍ. 7

4· Առողըս չատացել ա:
34· Խաբար տարեք իմ նանին,
Մուշտարի(ս) չատացել ա:

ՌՄ 88· ՏԽ 155· ՀԺԵ 143
ԲՍ 157

www.naregatsi.org

Իմ նանին խաբար տարեք,
Մուշտարիս չատացել ա:
ԲՀ 162

***

Սրաղը հեչտացեր է,
Կանանչը կըչտացեր է.
Խաբար տարեք իմ յարին,
Դարդերըս չատացեր է:
ՆՀՋ 87

***

Սարերը հեչտացել են,
Ջրերը չատացել են.
Խաբար արեք իմ յարին,
Մուշտարիքը չատացել են.

***

Սարերը հեչտըցել են,
Ջրերը չատըցեր են.
Խաբար երեք իմ յարիս,
Մուշտարիքս չատըցեր են:
ԱԴ 97

203

Մեր առուն չատացել ա,
Ցարըս անհետացել ա.
Քանի վախտ ա չեմ տեսել,
Դարդերըս թաղացել ա:
ՏԽ 257· ԲՍ 129

204

Գետիս ես ղոլը ցել ա,
Ցելը ջրով լըցվել ա.
Խաբար արեք են յարին,
Սիրածդ դարդով լըցվել ա:
ԱՋ 378

205

Ըրեքչնակը ցըցալ ա,
Իմ փայ կալաս լըցալ ա.
Փխ նանուն աչկը տիւս կյա,
Վրեր ինձ հընդըրմաչա քյըցալ ա:
ԱԺԻ 47

3· *Փխ յարին աչկը տիւս կյա:*
ԱԺԻ 47

«Արեգակը ցըցվել է,
Իմ փայ կուլաս լցվել է.
Փխ նանի աչքը դուրս գա,
Վոր ինձ ընկերմիջից քցել է»:

206

Բերդի բոլորը ցել ա,
Բերդը վարդով լըցվել ա.
Աղբերն ասավ՝ քույր չունեմ,
Քույրը դարդով լըցվել ա:
ԱԲ 346

***

Վանքի բոլորը ցել ա,
Վանքը մարդով լըցվել ա.
Աղբերս ասեց՝ քուր չունեմ,
Քուրը դարդով լըցվել ա:

207

Առավոտուն կ'ելլես, երեսըդ վըլա՛,
Եպիշում մազերըդ դըրեր ես հինա,
Ադ աղվոր երեսեդ պաղ մի տուր հըլա.
Ծածկե Թոռ գիլիֆըդ, մարդը կ'երես դուն,
Ձերմակ չեվահիր ես, անգին քար ես դուն:
ՀՍ. 414

208

Առավոտուն կ'ելլես, երեսըդ վըլա,
Երեսըդ կումանի ըսպունդի քուլա:
ԲՆԱ. 557

209

Աչքերդ հաղոզի գիլա,
Ուրախացիր, չատ մի՛ լա.
Թե իմ սիրտըս կոտրեցիր,
Աստանից կ'առնես բալա:
ՏԽ 205

210

Կես գիշերին աստղեր փիլա,
Գոլի քանար թաթլաղ տիլ ա,
Արշակ նըստեր դայըդ՝ կուլա:
ՋՔ 23

www.naregatsi.org

221

Դու գայտ կուգաս հուլա-հուլա,
Կու նըմանիս բամբկի քուլա.
Աչքըս տեսալ, սիրտս գուլա:
ՀՄԼՄ. 38

12. Տնեն ելա, գյուլա-գյուլա,
Ծըծվերդ ի ծոց բամբկի քուլա:
ՆՀԳ 46

***

Տնեն ելար հալա-հուլա,
Ծիծերդ նըմանի բամբկի քուլա.
Աչկունքս տեսան, սիրտըս
կուլա:
ՔՀ 176 հա.

Դու կըքելես գյուլա-գյուլա,
Ծըծերդ մըներ բամբկի քուլա,
Աչքս ը տեսալ, սիրտս ը գուլա:
Ա.Ե 193

222

Կանդնել ես բախա-բախա,
Սեվ չուխա, կարմիր յախա.
Քանի դու հեռու մընաս,
Իմ կյանքըս ախ ու վախ ա:
Ա.Հ 135

223

Կաղնել ես բախա-բախա,
Վոններդիդ չմուշկը լախ ա.
Սեվ տըղա, կարմիր աղջիկ,
Բռնել են ուրուր յախա:
ԱԳ 269

Կայնել ըս ախա-բախա,
Լեչակիդ տուրը կախ ա.
Սեվ տըղա, գյուղացի աղջիկ,
Բըռնալ իրուր յախա:
ԱԳ 269

***

Կանել ես ախա-բախա,
Լաչակիդ տուրը կախ ա.
Շեկ տըղա, սիպտակ աղջիկ,
Բըռնել եք իրար յախա:
ՌՄ 109. ՏՒ 141

3. Սեվ տղա, սպիտակ աղջիկ:
ՔՀ 160

***

Կայնել ես բախա-բախա,
Շամադուն տուրը կախ ա.
Շեկ տըղա, սիպտակ աղջիկ,
Թող բըռնենք իրար յախա:
ՊՍՎ 105

***

Կանդնել ես ախա-բախա,
Ծամերդիդ տուրը կախ ա.
Աբի, աղջիկ Գյուլիպար,
Պինդ բըռնենք իրար յախա:

***

Կայնել ես բախա-բախա,
Ջաքմանիդ թեվը կախ ա.
Շեկ տըղա, սիրուն աղջիկ,
Կըպել են իրար յախա:
ՀԺԵ 125

224

Գելում եմ բախա-բախա,
Լաչակըս ճոթը կախ ա.
Ցարըս մեր տուն ա գալի,
Ես պիշեր լինճ դռնախ ա:
2. Եսոր սիրտըս ուրախ ա:

225

Գելում ես բախա-բախա,
Շամադուդ տուրը կախ ա.
Ջուխա մի չամամ մեջ ծոցիդ,
Մեկը բեր ինձի ծախա:
12. Կայներ ես բախա-բախա,
Լաչակի ճոթեր կախ ա:
Ա.Ե 192

226

Կայնել եմ ախա-բախա,
Ցարըս լինձի լայող ա.
Շեկ տըղա, գյուղալ աղջիկ,
Համա մոր սիրտը կախ ա:

www.naregatsi.org

221

Դու գաչտ կուգաս հուլա-հուլա,
Կու նըմանիս բամբկի քուլա.
Աչքըս տեսավ, սըրտըս կուլա:
ՀՄՆՄ. 38

12. Տնեն ելա, գյուլա-գյուլա,
Ծըծվերդ ի ծոց բամբկի քուլա:
ՆՀԳ 46

***

Տնեն ելար հալա-հուլա,
Մի ծերդ նմանի բամբկի քուլա.
Աչկունքս տեսան, սըրտըս
կուլա:
ՔՀ 176 հա.

Ծածուկ խաց ես արել:
Տի 242

1543

Աչքերըս Թաց ես արել,
Յորդանըդ բաց ես արել.
Ֆուրիկ նայե իմ յարին,
Վարդ ու մեխակ ա դառել:
Բ.Ս 126

www.naregatsi.org

1544

Մեր պատուն քար ես տարել,
Ինձ քեզի յար ես ճարել.
Կայնել ես, գյուլ կըլմանիս,
Բացվել ես, վարդ կըլմանիս:
Ան 201

1545

Բեռներով կաղ եմ բերել,
Քեղ ոսկե մաղ եմ բերել.
Հինդու անդին քարերից
Գըլխիդ փարմաղ եմ բերել:
Տխ 257. ԲՍ 156

1546

Իմ յարը հաց չի կերել,
Թազա մածուն եմ մերել.
Հեռու տեղից ա գալիս,
Ինձ լավ վեչքաչ ա բերել:
Տխ 144

1547

Մերըս (աղես) մածուն ա մերե(լ),
Փեսեքին տուն ա բերե(լ):
Անտեր մրնա դուղ կաուսն,
Փեսեքի վայն ա կերե(լ):
Ան 347

12. Աղեն կաթ ա բերել,
Աղչիկ մածուն ա մերել:
134. Աղեն մածուն ա մերել.
Անտեր մրնա չար կաուսն,
Երեսի սերն ա կերել:

***

Նանեն մածուն ա մերել
Փեսեքուն տուն ա բերել.
Անտեր մրնա չալ կաուսն,
Փեսեքու վայն ա կերել:
ԱԴ 175

Նանեն մածուն ա մերեր,
Ջոջ փեսի վայ պահեր ա.
Անտեր մրնար չալ կաուսն,
Ջոջ փեսի վայ կերեր ա:
Հժե 87

Իմ նանը մածուն ա մերեր,
Փեսեքին կանչեր բերեր.
Անտեր մրնա սեվ կաուսն,
Փեսեքին վայն ա կերեր:
Հժե 122

Թազա մածուն եմ մերել,
Փեսին ղոնաղ եմ բերել.
Կաուվաուեր, վորդիդ մեռնի,
Են էլ կաուսն ա կերել:
Համմա. Մերըս արավ ճըվածիդ:

1548

Աղբերըդ բաղ ա դըրել,
Վոտներին չաղ ա դըրել.
Եդ քու խաժուժ աչքերըդ
Իմ սըրտին դաղ ա դըրել:
Տխ 170

1549

Ծաղկի վըրա չաղ ա դըրել,
Իմ ճակատին ես են դըրել.
Ցես աղչիկներե սարդարին
Շատ վաղուց սըրտով եմ սիրել:
Տխ 82

1550

Բարդանը դուռն եմ դըրել
Ջևրերըս նուռն եմ դըրել.
Մե բերան չասիր՝ յերո՛,
Շլաֆիկեդ ծուռն ես դըրել:
Ան 342
Տես՝ Բահըդ ուսըդ ես դըրել:

1551

Իմ յարը դուռն ա դըրել,
Գոտիկը նուռն ա դըրել.
Երթացած ճամբին դուրբան,
Ալ ֆասր ծուռն ա դըրել:
3. Ցես կըմեռնիմ են յարին:

***

Իմ յարը դուռն է դըրած,
Ալ գոտին նուռն է դըրած,
Իմ յարիս բոյին մեռնիմ,
Ալ ֆասր ծուռն է դըրած:
ԱԴ 94

www.naregatsi.org

Իմ յարը դուռը դըրեց,
Գոտիկը նուռը դըրեց.
Մեռնիմ բոլոր քյանքյուլիդ,
Շլապեն ծուռ ես դրբե:
ՀԺԵ 112

***

Գըռանը դուռն եմ դըրել,
Գոտիկըդ նուռն եմ դըրել.
Աչքիդ, ընքիդ հավան եմ,
Փափախըդ ծուռն ես դըրել:

***

Իմ յարը դուռ կըղըներ,
Գոտիկը նուռ կըղըներ.
Ցես կըմեռնեմ են յարին,
Փափախը ծուռ կըդըներ:
ՏԽ 152
Հմմտ. Ցարըս կայնել ե դուռը:
Հմմտ. Փափախըդ ծուռ ես դրել:

1552

Երդիկը բուն ես դրե(լ),
Տղեկներ չուն եմ դըրե(լ):
ՍՀ 446

***

Երդիկը տուն եմ չինել,
Հավերին բուն եմ չինել,
Ընկերո՛ք, եկեք տեսեք,
Տըղերանց սուն եմ չինել:
ՏԽ 253

***

Տան յետեվ տուն եմ չինե,
Հավերուն բուն եմ չինե,
Մի՛ք վախենա, իմ դոստեր,
Դուշմանը չուն եմ չինե:
ԱԳ 99

***

134· *Տան վրրա տուն եմ չինել,*
Այ տըղեք մի՛ք վախենա,
Սուլթանին չուն եմ չինել:

1553

Երդիկներ բուն եմ դըրել,
Հորըս մորըս քուն եմ դըրել.
Աղջիկ յարիս հավասից՝
Ամեն բան տուն եմ դըրել:
ՍՀ 132

1554

Բահըդ ուսըդ ես դըրել,
Թովչակը ծուռն ես դըրել.
Մե բերան չասիր՝ յերո՛,
Շլափկեդ ծուռն ես դըրել:
ՍՀ 343
Տես՝ *Բարդանը դուռն եմ դըրել:*

1555

Աչքերըդ դեղ ես դըրել,
Ինձի դըժի տեղ ես դըրել.
Անըղդամի խոսքովը
Իմ վըրա մեղ ես դըրել:
ՏԽ 169· ԲՍ 124

1556

Աչքըդ սուրմա յես դըրել,
Մեղը ու կարագ ես կերել.
Կերածըդ քեզի անուշ,
Ինձ համար ի՞նչ ես բերել:
ՏԽ 247

1557

Փափախըդ ծուռ ես դըրել,
Գոտիկըդ նուռ ես դըրել.
Ծոցումըս դեղին ոսկի՝
Դու երկու բուռ ես դըրել:
ՏԽ 171· ԲՍ 148

Տես՝ *Իմ յարը դուռն ա դըրել:*

1558

Ծոցըդ վարդով ես լըցրել,
Սիրտըս դարդով ես լըցրել.
Ջոբս բոլորըս լալ ու վաո՝
Խոսդ մարդով ես լըցրել:
ՏԽ 157

www.naregatsi.org

1559

Ձակատըս դեմըդ բացել,
Ֆեզ համար չատ եմ լացել.
Ինձ Թողել ես մոլորած,
Դու քեզ մեկդան ես քըցել:
ՏՒ 173

1560

Ոխտը տարի կ'անե, իմխիր ես դացեր,
Իմխիրի չոլերը թիւքեն ես բացեր,
Ձեռացըդ Թղթիկն ալ ինչո՞ւ յես մոռցեր.
Ադ տեղացը յարուն քուռք ես հազուցեր,
Ֆու եոքսիւղ յարիկըդ չատ ես լացուցեր:
ՀՍ. 460

1561

Ֆիրդ ասավ՝ չատ ես լացել,
Սըբտիդ սուվրեքը բացել.
Վարդի Թըփերի տակին
Սերըդ ինձ ես խոստացել:
ՏՒ 199

1562

Տեղիցըդ նոր ես վեր կացել,
Փերուչաններըդ կախ քըցել.
Ո՞սմ ինադուն դուշմանի դեմ
Դու սըբտիդ դըռներն ես բացել:
ՏՒ 236

1563

Հոռնճ եմ արել, նեղացել,
Գետն եմ մըտել, լեղացել.
Ուխ որվա հիվանդ եյի,
Ծոցդ եմ մըտել, սաղացել:
ՍՋ 374

1564

Ելի գալն եմ խմացել,
Աչքըս ճամբիդ մընացել.
Ֆեզ համար պիչեր-ցերեկ
Միաք անելով եմ կացել:
ՀՄԽՍ. 7

12. Ցերըոր գալդ եմ խմացել,
Աչքըս ճամփին ա մընացել:
ՏՒ 175

1565

Ախչի, ի՞նչ ես խմացել,
Ինձ ու մոլոր եմ կացել.
Ինձ գըժվացնելու համար՝
Սիպտակ դոշըդ ես բացել:
4. Ես սիպտակ դոշըդ բացել:
ՏՒ 198

1566

Չորս տարի յա գընացել,
Սիրտս դադ է մընացել.
Ցար Ջան, վագիդ անցել ա,
Երկու ամիս ա մնացել:
ԲՍ 128

1567

Արտախը վրեր ա քեցել (գնացել),
Մաչավը*) ոել ա քեցել.
Ջահտ ըրեք, Ջաուահ պերեք,
Էն տըղան մաչին**) ա քեցել:
ԱԺԼ 43

*) Մեջովը. մեջին:

1568

Ըատըղաըվեր ճիւր ա քեցել,
Մաչավը հըետ ա քեցել.
Վրեր իմ յարըս յեկել ա,
Ուընքամանչըս յետ ա քեցել:
ԱԺԼ 46

«Ես տեղս ի վար ջուր է գնացել,
Մեջովը հետ(ք) է գնացել.
Վոր իմ յարս յեկել է,
Ուընքամեջս յետ է գնացել»:

1569

Լուսնակը բակ ա քըցել,
Ֆեզ ամպի տակ ա քըցել.
Իմ կուրացած բախտըն ել
Ինձի մենակ ա քըցել:
ՀՄԽՍ. 27

3. Իմ քուռացած բախտըն ել:
ՏՒ 198

www.naregatsi.org

1570

Արեվը քակ ա քցել,
Շողքը սըրտիս մեջ ցըցել.
Քու սերդ ել մի դըհիցը
Լերդ ու թոքըս է խոցել:
ՏԽ 212

1571

Լուսնակը չողդ ա քցել,
Իմ յարը քողդ ա քցել.
Բարակ քամին տալիս ա,
Ալ քողը դողդ ա քցել:

1572

Երեսըդ չողք ա քցել,
Սիրտըս դարդերով լըցել.
Քու սերդ սըրտիս միջին
Հազար խանչալ ա ցըցել:
ՏԽ 195

1573

Գետնը յեր*) կարմինջ եմ քըցալ (քըցել),
Մընը մեջ վարթևը եմ լըցալ.
Խարար տարեք իմ յարին,
Ձիմ իրան դարդերն եմ լըցալ:
ԱԳ 267

*) Գետի վրա:

1574

Քըթկալը քիթս եմ քցել,
Իմ յարը միտս եմ քցել.
Եսոր երկ'որ չեմ տեսել,
Կըրակը սիրտս եմ լըցել:
124. Ծայլուղը ճիտս եմ քցել,
Շեկ յարը(ս) միտս եմ քցել.
Կըրակը սիրտս եմ քցել:
ԱՔ 346

***

Սեվ փուչին ճիտս եմ քցել,
Կըրակը սիրտս եմ լըցել (քցել),
Եսոր հինգ (չորս) որ չեմ տեսել,
Իմ յարը(ս) միտս եմ քցել:
ՌՄ 125. ԱԳ 169.
ԲՍ 130

1·3. Սեվ փուչին վիզս եմ քցել.
Թամամ հինգ որ չեմ տեսել:
1. Բաղդատին վիզս եմ քցել:

***

Ուսկալը ուսս եմ քցել,
Շան ալդին միտս եմ քցել.
Եսոր չորս որ (մին որ ա) չեմ տեսել,
Կըրակը սիրտս եմ քցել:

***

Լաչակը բուկս (ճիտս) եմ ձըդե,
Իմ յարը միտքս եմ ձըդե.
Իրեք որ է չեմ տեսե,
Կըրակը սիրտս եմ լըցե:
ԱԳ 95
124. Իմ յարը միտս եմ ցըկե,
Լաչակըս ճիտս եմ ցըկե.
Կըրակը սիրտս եմ ցըկե:
ԱԳ 102

1575

Հուսերըդ կախ ես քցել,
Սիրտըս դարդերով լըցել.
Տրտրանքըս տեսնում ես,
Ախանջըդ խի՞ չես խըցել:
ՏԽ 219

1576

Ջուն կուդա փաթիլ-փաթիլ,
Փըտում ա մեր դարաֆիլ.
Սիրածին վոր չըտեսնեմ,
Արուես կ'երթա դիփ կաթիլ:
ԲՍ 157

1577

Աբի քաղենք խավըրծիլ,
Դու կումանիս մանուկու ծիլ.
Հեյրան եղնիմ քու բոյին,
Դու ինձի ձենե պիլ-պիլ:

1578

Սարևբին կըլի դանձիլ.
Քեղը հետը, ծըլոտ, անձիլ,
Ով իմ սերըս յետ առնու,
Վորդին ըլի անձիլ-անձիլ:
ԱԺՄ 60

www.naregatsi.org

***

Սարերին քեղ չի ընել,
Տես՝ ... «չինի» չարքի մեջ:

1579

Երթանք Ըստամբոլ,
Բերենք վարա բոլ.
Մեր յարի համար,
Առնենք ջուխտ ըմ սոլ.
Խաղնենք դարեդար,
Ընկնենք չոլե չոլ:
Արի, յար, արի, խըռով մի՛ մնա,
Աստվորիս բան մեղիկ չի մընա:

***

Երթանք Ըստամբոլ,
Փող ել պիրենք բոլ.
Առնենք ջուխտ ըմ սոլ,
Խաղնենք դորվեդոր:
ԲՄՎ 21

Եհանք (երթանք) Ըստամբոլ,
Պիրենք (բերենք) ոսկի բոլ.
Առնինք (առնենք) ջուխտ ըմ սոլ,
Խայնենք (խաղնենք) դորեդոր:
ՊՎ 121. ԲՆՄ 583

Կ'երթամ Ըստամբոլ,
Պիրեմ ոսկի բոլ.
Խժնեմ Ապրուսմ,
Առնեմ ջուխտ ըմ սոլ,
Խայնենք դորե դոր:
ՎՍՄ 37

Երթամ Ըստամբոլ,
Դատիմ վարա բոլ.
Իմ յարի (յարոջ) համար
Առնիմ ջուխտ մի սոլ:

Արի, յար, արի, խռով մի՛ կենա,
Աստվորիս բան, յար, մղիկ չի
մընա:
ՌՄ 58. ՏԽ 97

Երթանք Ըստամբոլ,
Բերենք ոսկի բոլ.
Երթանք Արզրում,
Առնենք ջուխտ ըմ սոլ.
Խայնենք դորե դոր:
ՀԺԵ 86

Իջնենք Ըստամբոլ,
Գընենք ջուխտակ սոլ.
Հագնինք դոր բը դոր,
Ընկնինք չոլ բը չոլ:
ԲՆԳ 122

1580

Երեսդ և վրքիդ նըման վարդի քոլ,
Թե կ'ուզես արծաթ, կուտամ ոսկի
բոլ.
Քո սերն իմ սիրուս կապենք,
կապկպենք,
Անցնենք սար ու ձոր երթանք
Ըստամբոլ:
ՎՍԲ 42. ԺԽ 31

1581

Երանեկ քե, բաղչի բըլբուլ,
Վոր չես տիսե չիդրի մըրմուռ.
Վոր տիսնաս չիդրի մըրմուռ,
Կըթափի քյո նըխչուն փիտուռ:
ՎՍՄ 59
Երանեկ քե, բաղչի բըլբուլ,
Վոր չես տեսի չիդրի մըրմուռ.
Թե վոր տեսնաս չիդրի մըրմուռ,
Կըթափի քո սըրմա փիտուռ:
ԱԺԹ 107

1582

Ա՛խ, խազար երնեկ հան դյախ,
Ինչ կըկյա (կըզա) իմ մերիկ,
Երկու խարիր մանեթ կըխամբի,
Ըմ խեր կ'ասա՝ քիչ ա, քիչ ա.
Ըմ մեր կ'ասա՝ բոլ ա, բոլ ա:

Տուռու տուռ տուռ տուռ տուռ տուռ տուռ,
Ա՛խ, խազար երնեկ են ավուր:
ՎԺԵԲ 18

1583

Հար յե՞ր կենանք վախե վախ,
Արի անենք աո ու փախ:
Տես՝ Բաղչա քաղաք ձորի մեջ:

www.naregatsi.org

1584

Անտոնի ձեռի յայլուխ,
Աչխենի լաչին ուներ պուխ։
Խորտա եր Աչխենը, և այլն։
ՏԽ 184

1585

Սասման կ'ելներ բարակ ծուխ,
Ցարիկ մ'ունենք Բուլանուխ.
Ջարկեց մախճան, թորկեց պուխ,
Երես կարմիր, աչքեր Թուխ։
ՀՀ 320· ԺԽ 64

Տես՝ Ցար մի ունիմ Բուլանուխ։

1586

Դրոնեն անցա, Թընդիրն եր ծուխ,
Աչքեր բալակ, ունքերը Թուխ,
Մեռնիմ քեզի, սուրբ Բուլանուխ։
ՋԲ 21· ԺԽ 63

***

Իրիկուն Թունդիր մուխ,
Աչքեր բալաք, ընքներ Թուխ,
Թալեր լաճի, կախեր պուխ,
Աժեր Մուշն ու Բուլանուխ։
ՀԺԵ 97

123· Առավոտ Թունդիր մուխ,
Թալեց սարիկն, կախեց պուխ,
Աչքեր բալաք, ընքեր Թուխ...
ՀԺԵ 123

123· Առավոտուն Թոնիր մուխ,
Ցաչմաղ գարկիր, Թորկիր պուխ,
Կլոր աչքեր, ընքեր Թուխ...
ԺԽ 64

***

Առավոտուն Թոնիր մուխ,
Աչքեր բալաք, ընքվեր Թուխ.
Արի երթանք Մուշ, Բուլանուխ,
Ցըրվի մեր սրտի քինն ու վուխ։
ՎՄԲ 29

234· Ցաչմաղ գարկիր, Թորկիր պուխ.
Իրիկըվան Թոնիր վառ,
Ցաչմաղ կապեր խառ ու մառ։
ԱԵ 195

***

Առավոտուն Թոնիր մուխ,
Կախիր յաչմաղ, Թորկիր պուխ.
Աժիր Մուշն ու Բուլանուխ։
ԱՀ 444· ԺԽ 63

12· Առավոտուն Թոնիրն եր մուխ,
Կլոր աչքեր, ընքեր Թուխ...
ԺԽ 63

Առավոտուն Թընդիր մուխ,
Կլոր աչքեր, ընքներ Թուխ,
Աժիր Մուշն ու Բուլանուխ։
ՌՄ 86

***

Առավոտուն Թոնդրին մուխ,
Աչվին բալակ, ունքվին Թուխ,
Ջեմ ի տա Մուշ Բուլանուխ։
ՋԲ 22· ԺԽ 63

***

Թունդիր վառեր, եղեր և մուխ,
Կապել փուչին, Թորդել ա պուխ,
Ունքերդ կամար, աչքերդ Թուխ։
ՓՀ 174

23· Կապե փուչին, Թորկեր և պուխ,
Ունքեր կամար, աչքերն և Թուխ.
ՏԽ 243· ԺԽ 63· 82

***

Առավոտ Թոնտիր մուխ,
Փուչին կապե, Թողե պուխ,
Ջեռ բընենց, տարավ Բուլանուխ։
ՀԺԵ 127

***

Առավոտուն Թոնդիր մուխ,
Ձերմակ լաչիկ, գըլխուն Թուխ։
ՋԲ 20· ԺԽ 63

www.naregatsi.org

1587

Են սարըմը երկու ծուխ,
Մինը հանդած, մինը մուխ.
Ցես մի յար եմ կորցըրել,
Ֆինթը կալած, վարսը թուխ:
Ա.Ժ.Ա. 53

Սարեն ելավ երկու մուխ,
Մինը հանդավ, մինը ծուխ.
Սիրականըս կորցըրի,
Ֆինթը կալնած, վարսը թուխ:
Հ.Ժ.Ե 126

***

Սարի գլխին երկու մուխ,
Մինը մուխ եր, մինը ծուխ.
Աղնիվ քուրըս կորցըրի,
Ֆինթը կալած, մազը թուխ:
34· Ջիվան քիր եմ կորցըրել,
Ֆինթը կալը, մազը թուխ:
4· Ֆինթը կալած, ծամը թուխ:

1588

Մեր տան տակին երկու ծուխ,
Մինը հանդած, մինը մուխ,
Ցես մի դնացած յար ունեմ,
Բեխն բլորած, ճակըը թուխ:
Ա.Ժ.Ա. 57

1589

Սարիցն ելավ երկու ծուխ,
Մեկը հանդավ, մեկը մուխ.
Երկու դյոզալ եմ սիրե,
Մեկը չեկ ա, մեկը թուխ:
Հ.Ժ.Ե 133

***

Սարեն կելլեր երկու մուխ,
Մեկը հընկավ, մեկը ծուխ.
Երկու դիզալ եմ սիրե,
Մեկը չեկլիկ, մեկը թուխ:
Ա.Դ. 102· ԲՍ 138

123· Սարեն ելավ երկու մուխ,
Մեկը մարավ, մեկը ծուխ.
Երկու սիրուն երեվաց:

1590

Ծառատակին բարակ մուխ,
Հար յե՞րբ քաշեմ ախ ու վուխ.
Դուս կ'ելնեմ, աղբերս կու դա,
Բուկը սիպտակ, բենը թուխ:

1591

Ծառի տակին բարակ մուխ,
Ջուր յե՞րբ քաշեմ ախ ու վուխ.
Սիրաըս բանամ՝ յարա յե,
Գաղտուկ չե, աշկարա յե:

***

Ծառի տակը ալաֆ մուխ,
Ջուր յերբ անեմ ախ ու վուխ.
Սիրտըս բացեմ, յարա յա,
Թաքուն չի, աշկարա յա:

1592

Ցար մի ունիմ Բուլանուխ,
Հաղեր ճուղին, թորկեր պուխ.
Ճոպլակ բաժ, բարակ մատներ,
Աչքեր բալակ, ընքներ թուխ:
Ա.Ը 442· Ժ.Ի 64
Տես՝ Սասման կ'ելներ բարակ ծուխ:

1593

Բուխարա փափաղըդ ծալած,
Վըռնակըեքը*) ջուրըդ հալած.
Տու**) մին ջահիլ տըղա ընխս,
Շըհարին մին բուրջը կալած:
Ա.Ժ.Ի 44
*) Վռոսկիքը: **) Դու:

1594

Հաղող, ծառը անիծած,
Ունես չատ տրներ քանդած.
Ովոր քո ջըրից հեռանա,
Ջիբը կըմընա փակված:
Ի.Ս 156

1595

Ղարիբ երկիր ման եկած,
Ջանիդ մեռնեմ բեզարած.

www.naregatsi.org

Մի վոտը վոր չուտ դայիր,
Ինձ չեյիր տեսնի տարած:
ՏԻ 181

1596

Զոլում քըրդեր մեկ եղած,
Զորս կողերս են բոլորած.
Զորուվենով մեր տավար
Թալնեցին եղած-չեղած:
ԲՄ 143

1597

Մեր դռան առաջ առու հանած,
Ձեր դռան առաջ առու հանած.
Միջու միջու ուհան ցանած,
Ինձի իմ յար միջին հանած:
Ա.Ղ 443

Վերիվ մեր տան առուն հանած,
Ներքևվ ձեր տան առուն հանած.
Շուրջ ու բոլոր ուհան ցանած,
Իմ յարն ու քույմ մեկ նըշանած:
ԲՆԳ 651

1598

Նարընջի թել-թել մանած,
Իմ տեսած, քու հավանած.
Ես որ իրիք որ չեմ տեսե,
Ինչոր լակղու թալանած:
ՀԺԲ 112

***

Միրանին թել-թել մանած,
Իմ տեհած, իմ հավանած.
Իրիք որ ա տեհել չեմ,
Հենց եմ լեկղու թալանած:
Ա.Ժ.Ա. 55

12. *Սարումն ունիմ թել մանած,*
Իմ սիրած, քու հավանած
Ա.Ժ.Ա. 61

1599

Սիպտակ ու սեվ մի մանած,
Իմ յարը սըհմանած.
Ոխտը տարի տեսել չեմ,
Հենց եմ ըչխարեն հանած:
Ա.Ղ 382

1600

Գընացի տեսա քընած,
Գիւղիւբ-գիւղիւբ քըրթընած.
Մեկ երեսը յետ քըցի,
Տեսնեմ՝ վարդ մանիշակը փըռած:
Ա.Ղ 378

4. *Վարդ մանիշակը ցանած:*

Գընացի տեսա՝ քընած ա,
Գիւղիւբ-գիւղիւբ քըրթընած ա.
Ցետ քըցեցի, թա տեսնեմ,
Վարդ, մեխակ խըռնըված ա:
Ա.Ղ 376
Չմոռ. Նանիկ ասեմ՝ քընես դու:

1601

Բարակ մանած, երկեն խինած,
Մանեմ, մանեմ, կըտրում մնանած.
Դարուն երե, խինած չըկա,
Ցետ քո՞սիրուն ևրա մըրկա:
ՀՀ 306
Տես՝ Մեռնիմ քըղի, պըզտիկ լուսնակ:

1602

Ջաղացիս դուռը տաչած,
Ադըբխիս դյուլը քաչած.
Կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,
Ոսկե դալամով քաչած:
ՔՀ 158. ՏԻ 144

2. *Ադըբխիս դյուլը նախչած:*
3. *Մեռնեմ կեռ կեռ ունքերին:*
Ռ.Մ 126. ԲՄ 127
3. *Մեռնեմ կեռ կեռ ունքերիդ:*
Ա.Դ 172
23. *Ադըբխիս դյուլը մաչած.*
Մեռնեմ կեռ կեռ ունքերիդ:
Ա.Ժ.Ա. 59
234. *Մահրըմաս դյուլ քաչած.*
Մեռնեմ կեռ կեռ ունքերիդ,
Դասախ դալամով քաչած:
Ա.Ժ.Ա. 59

www.naregatsi.org

Ջաղացքի դուռը տաշած,
Ճախլուխիս դյուլը քաշած.
Մեռնեմ կեռ կեռ ունքերիդ:
Հենց ա ղալամով քաշած:
ԿՀ 179

Ճըղաչիս տիւռնը տաշած,
Ճաղլուխիս յոլը քաշած.
կեռ կեռ ունքերիդ մատաղ,
Ղասիա ղըլամով քաշած:
ԱԳ 265· ԲՄ 152

Ջաղացին դուռնը տաշած,
Ճաղլախիս վարդը քաշած.
Աղըեր, կեռ ունքերիդ մատաղ,
Ղասիդ ղալամով քաշած:
ԱԴ 114

***

Ճըղացին տոռնը տաշած ա,
Ճալլեխը դիւլավ նախշած ա.
կեռ կեռ ունքերիդ մըռնիմ,
Վըեր վըեկէ ղըլամով քաշած ա:
ԱԺԸ 31

Ճաղացին տիւռնը տաշած ա,
Ճայլուխը դիւլ քաշած ա.
Մեռնիմ Թոխ Թոխ ունքերիդ,
Հենց ղալամով քաշած ա:
ԱԳ 261

***

Ջաղացիս դուռը փոս ա,
Քար կըթալեմ կրխոսա.
կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,
Ոսկե ղալամով քաշած ա:
ՀԺԵ 134

Տես՝ Ջաղացիս դուռը տաշած է:
Տես՝ Ջաղլի դռներ տաշած եր:

1603

Աղլի, քու բաժն ի ուընդայով տաշած,
Քու թարթափքերն ի կալամով քաշած,
Ճես քու դարդեն եր հալած–մաշած:
ՓՇ 29

1604

Բաժն ի բարակ՝ ծովեն քյաշած,
Քյո ըղընկներ ըղընտով տաշած,
Ճես քյո սիրուն խալած–մաշած:
ԿՄՎ 29

1—3· Բաժդ եր բարակ՝ ծովեն քյաշած,
Ճես քյո սիրուն խալած–մաշած.
ՀԺԵ 48

***

Մեկք նազուկ, ծովեն քաշած,
Եղունգ ըղընդով տաշած.
Աչքերըդ ղալմով քաշած,
Սիրուցդ եմ հալած–մաշած:
Ա.Ե 204

1605

Քահլան ձին դոմում կապած,
Սիրտըս սըրտիդ է կըպած.
Տանեւ դուշման մարդիկը
Ինձ ու քեզ լավ են խարած:
ՏՒ 183

2· Սիրտըդ սըրտիս է կըպած:
ԲՍ 154

1606

Առավոտուն կ'ելլես, մաղըդ չի հուսած,
Երկինքին վառ աստղեր ղըլուխդ են իջած,
Սիրտս ալ ա'ն աստղերուն պես իջած, վառած:
ԲՆՄ. 101

1607

Լամբըս–մամբըս կախ տըված,
Տրեղըս–մըեղըս վըեր քյըցած.
Հո՞ւվ ա տըեսալ դուցցաղում
Նամարդ յարըդ նըստըրըած:
Ա.ԺԻ 48

«Լամբըս–մամբըս կախ տըված,
Տեղըս–մեղըս վեր քյըցած.
Ո՞վ ա տեսել դուխտաղում
Նամարդ յարըս նըստեցրած»:

www.naregatsi.org

1608

Ջաղցի դըռներ խաւխըտած,
Աղջկան ձեռքերն եր խինած:
ՊՎ 97

Տես՝ Ջաղցի տանիս կանանչ էր:

1609

Ժամերըդ թել թել արած,
Մեջը մարգարիտ չարած,
Բավթեքով արխալուղըս
Հատուկ քո ձեռով կարած:
ՏՒ 158

1610

Կիւթանր հանդին լարած,
Մըշկինն միջին չարած.
Մըղափուն դուք, ա՛ մըչկնիկ,
Սեվ հողին դերի դառած:
ԱԴ 114

1611

Խերիկս եր հովիվ, աղրիս
դառնարած,
Կարիր եմ ճամբեն իտել սարերաց,
Իտել սարերաց, իտել քարերաց.
Կարիրիս մեռնիմ, ուր (իր)
ճամբընեբաց:
ՆՀԳ 45. ՎՄԲ 60

Տես՝ Գյամին վեր ծովուն երեվաց:
Տես՝ Ստամբոլ չիներ են վեր Սեվ
ծովերաց:

1612

Ճարրս դուքսաղ ես արած,
Արունըս թողել սառած.
Գնին ուտի քո եչ դլուխը,
Փաղով քյոխվա յես դառած:
ԲՍ 158

1613

Ջրմածնիդ, չաքար արած,
Ճարիս մոռիցը բերած.
Դեռ եսպես անուչ թիքա
Ցես որումըս չեմ կերած:
ՏՒ 194

1614

Ա՛յ տընավեր, սարի սիրած,
քարի պիրած,
Մեջ տեղ զարկե պողպատ ուրագ,
Զիկ իցկիր ես յանկուն կըրակ,
Ցես իրիցա քյո դարդին,
քյարամսավդին:
Ջյարի դըլոխ ծարվիցա,
Տընավեր յես քյո դարդին իրիցա:
ՀԺԵ 50

1615

Սիրտըս ու հոդիս երած,
Թողի իմ տուն պապերաց.
Ախ քուլփաթ, հեռացա,
Մընաց տունըս ավերած:
4. Մընաց արտերըս բուսած:

1616

Թրմանքն ուսիդ դըրած,
Զամաման ոսկեջրած.
Աչք ու ունքիդ հավան եմ,
Ախտս ուռնդրդ ա թըռած:
4. Մի քիչ (քիչ մը) ուռնդրդ ա
թըռած:
Չմմա. Մի բարձ ունիմ, դըրած ես:

***

Բահըն իր ուսին դըրած,
Թավչանկն եր ոսկեջրած.
Աչքը ունքիդ հավանած,
Խիստ եր ըռանդրդ թըռած:
ԱԲ 340. ԲՍ 133
34. Թրմանդն եր ոսկեջրած.
Աչքին, ունքին հավան չեմ:

1617

Ադիկ եմ տանր դըրած,
Արծաթ եմ ոսկեջրած.
Հորն ու մորըս ի՞նչ ասեմ,
Ձակատիս ես ա դըրած:
ՀՄԽԲ 13
4. Հերն ու մերն ի՞նչ անեն:

www.naregatsi.org

1618

Մատանի ոսկեջրած,
Ա՛յ տըղա, դու ինձ դըրած.
Պատճառին ի՞նչ մեղք ունի,
Ցես քո սիրով չըդիմայած:
ՀՄԽԲ 13

***

Մատանիք ոսկեջրած,
Ցես քո սիրով դընջըլած.
Սարսրին ի՞նչ մեղք ունի,
Ձակատիս ետ եր դըրած:
2. Ծոցիդ մեջը դընջըլած:

1619

Մատանիք ոսկեջրած,
Ա՛յ տըղա, դու ինձ դըրված.
Դու խանին նոքար պիտես,
Ցես քո ծոցը դանջիրված:
ԲՀ 160. ՏԺ 225
34. Դու խանին չաքիր պիտեր,
Ցես քո ծոցին դընջըլած:

***

Մատնիքս եր ոսկեջրած,
Ցարար յես (ինձ) ումն եմ (էն) դրած,
Ցարար ինձ ումն էն տըվե,—
Ցես քո ծոցին դընջըլած:

1620

Ծաղիկներըս դեռ չըջըրած,
Ձակատիս սեվ դիր եր դրած.
Անուշ յարիս հետ սարելու՝
Վաղ ուխտ ու պայման եմ դըրած:
ՏԺ 239

1621

Ուրադըս սարըծած, սըրած,
Մաչիկըս սադրուց կարած.
Ես իմ կարմիր երեսըս
Երես երեսին դըրած:
(Քաղհանի)
ԱԺՄ 69
Տես՝ Քաղհան եմ անում մոտ սարին,

1622

Ցես նան ունեմ մոլորած,
Գիշերը քունը կորած.
Նանն ու բաջին ի՞նչ անի,
Գուճուր տըղա մոլորած:
(Որոր)
ԱՀ 202

1623

Ցես բաջին ըմ մրլեորած,
Պոչերըս ալ հրլեորած.
Փիս յարը մըեռած բեղար,
Ասար ոխնը պիւլլորած:
ԱԺԹ 86

14. Ցես բաջին ըմ հիւլարած.
Ժամ պատարաքյը պըլլեորած:
ԱԺԹ 86

«Ցես բաջին եմ մոլորած,
Պոչերս ալ ոլորած.
Փիս յարը մեռած պիտեր,
Եսոր յոթը բոլորած»:

1624

Եկար, մեր դըռնով անցար մոլորած,
Ձերմակ լաչին, թուխ թուխ աչքեր բոլորած:
(Կրկնակ)
ԱԵ 192

1625

Պըրծա, սարեն եկա ցած,
Դըռներ Թոզեր կիսաբաց:
ՀՀ 327

***

Վերի դաշտեն եկա ցած,
Մըտա կ՚առնենք Թաժա հաց,
Թրտամ չընիկ, դիս իմաց.
Ընձի ի՞նչ իմացնել պիտեր,
Ընձի դիրկ ու ծոց պիտեր:
(Մուշ)
ԲՆԱ 313

www.naregatsi.org

... Ցարոլ սելեր բերեցէ,
Ցարոլ դըռնեն անցուցէ.
Ցարոլ դըռներ կիսաբաց,
Մըտա կ'առնենք թաժե հաց,
Թըտա չընիկ, դիս իխած.
Ջուխա՛, թերմաչ մընացած:
(Խոյթ)

ԲՆԱ 741

Տես՝ Վարդեվորի երկուչաբթին:

***

Ցես գացի Մըչու դիմաց,
Տեսա դըռներ կիսաբաց,
Մըտա կ'առնենք թաժե հաց,
Անտեր չունեն մընացած,
Բերան բացեց դիս խածներ.
Ընձի ի՞նչ խածել պիտեր,
Ընձի դիրկը ծոցը պիտեր:
(Սասուն)

ԲՆԴ 122

Սարեն իջա, եկա ցած,
Կըտա վերցի թաժա հաց,
Անտրի չուն դիս եխած.
Ընձի ի՞նչ խածել պիտեր,
Ընձի դիրկ ու ծոց պիտեր:
(Բուլանուխ)

ԱՆ 72

***

... Գացի, գացի, դըռնիկ բաց,
Մըտա՝ առնենք թաժա հաց,
Անտրի թուլեն դիս իխած:
(Ալաշկերտ: Հայրենի մնացորդ
այս խաղը):

ՀԺԻ 138 հտ.

Տես՝ Գիշեր խաղդա, դուս ելա:
Տես՝ Գացի, դռնիկ կիսաբաց:
Տես՝ Գացի հըր Մչու դիմաց:

1626

Կյըտըյեր կարմունջ քյըցած,
Մըննամեջը վարթավ լըցած.
Ֆյեցեք ըսեցեք նամարդ յարին,
Ֆու յարն ա դարդով լըցած:
ԱԺԲ 27

[Գետնիվեր կամուրջ դըցած,
Մատնամեջը վարդով լըցած.
Դնացեք, ասեք նամարդ յարին,
Ֆու յարն ա դարդով լըցած:]

1627

Շատ մի՛ անի բանձր ու ցած,
Ցես քեզ վազուց եմ տեսած.
Մենք իրարու նըման ենք,
Մեկ խընձոր երկու կիսած:
ՏԽ 171

1. Շատ մի՛ անի վեր ու ցած:
ԲՍ 123

1628

Հերիք աննես բարձր ու ցած,
Ցերկնքից անձրեվ կաթաց.
Ինձի ումուդ մի՛ անի,—
Ֆիսիդ բերանը լեն բաց:
ՏԽ 151

1629

Ես սարերում ծնեբակ,
Շողակոլոլ արեգակ,
Արեգակին տեր աղբեր:
Շաքար մադեմ՝ կե՛ր, աղբեր:

2. Շաղաթաթախ արեգակ:
3. Արեվին ընկեր աղբեր:
123. Ես ձորն ի վեր ծնեվակ,
Շողակոլոլ արեգակ,
Արեգնակին թեվ աղբեր:
ԱԺԱ. 53

***

Ձալեն ի վեր ծնեվակ,
Շողակոլոլ արեգակ.
Արագակին թեվ աղբեր,
Շաքար կոտրեմ՝ կե՛ր, աղբեր:
ԱԴ 176

3. Արեգնակին թեր աղբեր:
ԱԺԱ. 56

www.naregatsi.org

***

Արեգակին տեր աղբեր,
Ա՛յ չաղաթաթախ աղբեր.
Շաքար մաղեմ՝ կե՛ր, աղբեր,
Ջանըս քեզ մատաղ, աղբեր:
ԺԽ 62

4. Ջանըս մատաղ քեզ, աղբեր:
ԱՋ 379

***

Արեգակի թեվ աղբեր,
Շաքար մաղեմ կեր, աղբեր.
Շաքարը մաղած պիտի,
Ղանդով չաղաճած պիտի:
ՀԺԵ 117

1630

Ես ձորն ի վեր ծնեբակ,
Դու նըմանիս արեգակ.
Արեգակը դուս գալուս
Մեկտեղ երթանք դարիդուս:
ՌՄ 99. ԱԴ 165

Հմմտ. Նոր և բացվել բարի լուս:

1631

Վիճակ, վիճակ, վարդ վիճակ,
Ցես (ու) դուն մըտաննք մի փըչակ.
Ըզվել լիսը քըչփըչանք,
Լիսեն յեղը կըշկըշանք:
ԱԺԱ 61

***

Գյուլում, գյուլում, գյուլ չէ՛չակ,
Ցես դու մըտաննք մին դոշակ.
Մինչեվ ի լուս քըչփըչանք,
Լուսեն յետո կըրկըշանք:
ՔՀ 165

4. Լուսեն յետո կըշկըշանք:
ԱԴ 170

1632

Վիճակ, վիճակ, խաս վիճակ,
Յաստծու տարին գաս, վիճակ.
Վիճակ հանող աղջկերանց,
Մուրազներուն տաս, վիճակ:
ԱԺԱ 61

(«Վիճակ բանալիս՝ ամենից առաջ ասում են այս տունը»):

1633

Կանդնել ես մեր տան քամակ,
Խոսքըդ դարձըրել դանակ.
Աղջի՛, սուս կաց, բանըդ տես,
Հանաք կըդառնա չանաք:

1634

Ծառի տակի ծանդըրմակ,
Ոխկե մ՝ կուդեր քո դրմակ՝
Ծառի տակի ծանդըրմակ,
Ոխկե մ՝ կուդեր քո դրմակ.
ՎՄՔ 58

***

Ծառի տըկի ծանաըրմակ,
Իմ յար կասկե Թուր դանակ.
Ծառի տըկիներն ճըլպըտուն,
Իմ յար չանց քոն խըտվըտուն:
ՊՎ 97

1635

Քո գըրկանոցն ոսկի սենյակ,
Ա՛խ, մի՛ Թողներ դու ձիկ մենակ.
Ով ձիկ ասի որբևվերի,
Երթա ընկնի աչմու դերի:
ՎՄՔ 42

23. Ա՛խ, մի՛ Թող տար դու ձի մենակ.
Վոր ձի ասի՝ որբևվերցի:
ՊՎ 96

1636

Ցես ի՞նչ կ՝անեմ հայլի, դանակ,
Մի յար չունիմ՝ անեմ հանաք.
Ցես չեմ ուզի քամար, վղնոց,
Երիկ կ՝ուզեմ՝ ցրվի իմ խոց:
ՀՄԽԲ 31

Ի՞նչ ենիմ հայլի, դանակ,
Մարդ կ՝ուզիմ, ենիմ հանաք.
Ի՞նչ ենիմ վիզ ու վղնոց,
Մարդ կ՝ուզիմ, պատիմ ի ծոց:
ՀԺԵ 61

www.naregatsi.org

1—4. Ի՞նչ եմ անում հայլի,
դանակ,
Եչ ըմ առնեմ, երթամ չանակ.
Ցար մի չունիմ, ենեմ հանաք:
Ած 205

Տես՝ Իրիկուն ա, ճրագկալոց:

1637

Դու կըգիլես կաքվանանակ,
Ջըմ դիյալը, չա՞տ մարդ կուգիս,
Թե գի՞կ մենակ.
Աղջի, ալնավլը, դու պղտիկ իր,
յես քի սիրիցի,
Քու քաղցրիկ անուն վար իմ
բաղկին գրիցի.
Ծվ 36

Համո. Ախչի տիւ պըղտիկ իր,
իս քի սիրըցի:

1638

Տանեն ելավ մենակ մինակ,
Ուչիկ քելը, քաց կաքըվնակ.
Զաչխարհ սիրիմ, քաց քի մինակ.
ԲՆԳ 650

1639

Մե(ր) տան պընակ, ձե(ր) տան
պընակ,
Մանջ հազամուն Զուլոն մենակ:
ՀԺԵ 56

1640

Կանանչ ու կարմիր աղեղնակ,
Ինձ համար արեվ ու լուսնակ,
Ախաոս արի Ջիվան Ջանիս,
Մի՛ դառնա գըժոխքի կըրակ:
Տի 160

1641

Դու կըրակ ես, յես թիթեռնակ,
Ցես կարմիր վարդ, դու ել սոխակ.
Հերիք մընանք մուրազչըր,
Ա՛խ, յե՞րբ կ'ըլնենք մենք
բախտավոր:
Տի 218

1642

Մեռնիմ քըզի, պըղտիկ լուսնակ,
Հորի՞ն կ'երթաս մինակ մինակ.
Ծառ մ'եմ տընկեր քե նըմանակ,
Բըռներ խաղող սեվ ու սիպտակ,
Երթանք, ժողվենք կողովներով,
Բերենք, բըռնենք կարասներով,
Նունուչն ուտա իր թոռներով:
Ած 189

Բարակ մանած, երկեն խինած.
Մանեմ, մանեմ, կըտրավ մանած:
Գարուն երե, խինած չըկա,
Ցես քո սիրուն վառա մըրկա:

Տակ մ'ել կըտրեմ, քուռ մ'ել փընջեմ,
Ազաթ լաճուն սեր որոխեմ:
Տո՛ աղաթ լաճ, տո՛ Մոկացի,
Վայ Մոկացի, թավ Մուկացի,
Հինդ եճ ունիմ, յոթ ուխն ուլով.
Կաթ կըկըթեմ դոմչու տըկով:
Եգի մ'ունիմ քե նըմանակ,
Պըտուղ բըռներ նեցուկն ի տակ.
Երթամ, քաղեմ կողովներով,
Բերեմ, լըցնեմ կարասներով:
ՀՀ 306

1643

Ա՛յ տղա, տղա մեր մըչակ,
Իմ անուն ի Մանուչակ,
Աբի քաղենք մանուչակ,
Բերենք, զարկենք մեր դուշակ:
Ծվ 63

1—4. Ծո՛ տղա տղա մեր մըչակ.
Աբի քաղենք մանուչակ:
(Կրկնակ)
Վ.ԺԵ 13

1644

Ծառիս տակը մանիշակ,
Իմ յարը քանց քեզ չիշակ.
Ութ Թումանիցն անց կենամ,

www.naregatsi.org

Քեզ կ'անեմ յարխա մըչակ։
ԿՀ 158· ՌՄ 108·
ՏԽ 203· ԲՄ 123

3 4· Ոխտը Թումանից անց կենամ,
Քըզ բըռնեմ յարխա մըչակ։
ԿՀ 180

Ծառի տակին մանիշակ,
Իմ յարն ա գարնան չիշակ·
Ցոթը Թուման ծախս կ'անեմ,
Քեզ բըռնեմ յարխա մըչակ։

Ծառիս տակին մանիշակ,
Նըմանիս գարնան չիշակ·
Ցոթը Թուման պարտք անեմ,
Կըղըրկեմ յարխս մըչակ։
ՀԺԵ 116

1645

Բարձիս տակին մանիշակ,
Աղբերըս Գյանջու չիշակ·
Արի հոտ կալ, իմ աղբեր,
Ըրցել եմ գարըդ դուշակ։
ԱԺԱ 51

Աղբերս ա փունջ մանիշակ,
Տես՝ Ալ ոդա, անուշդ Ասուշան։

***

Դարի տակի մանուշակ,
Քո յարն իմ յարոջ մըչակ։
ՎՍԲ 58

1646

Հարս ու փեսին փունջ մանուշակ,
Ասլաս լըհնի վերեն, տակ դուշակ·
Թող խորովեր սըրտիս կըրակ,
Վար չիրիցեր ենոնց պըրակ։
ՎՍԲ 46

1647

Ջեռիս ա մածնի քրտակ,
Եանիցըս նկաք հառաք·
Են որին մառաղ ընեմ,
Ցես դու ղընանք դե պըտակ։
ԱՋ 374

1648

Մըսրա դոմեշ լըծի տակ,
Թող դըլորի պըղտիկ ակ։
(Դուխանի յերդերից)
ՀՄԽԲ 3

1649

Լուսնակ մըտավ ամպի տակ,
Քու չորս բոլոր դըցեց բակ·
Դու յես իմ բարի արեգակ։
ՏԽ 165

1650

Ցես հավք մ'ելա, եկա Թառա
ծառի տակ,
Հայու աղջիկ չուռ-մուռ կուզեր
վարդի տակ·
Ցես հավք մ'ելա, եկա Թառա
պատի տակ,
Հայու աղջիկ անուշ քըներ
ծառի տակ։
ՎՍԱ 54

1651

Մանուկ պառկե ծառի տակ,
Ծառ ճրղնեբովըն երկտակ·
Մալ ծալ ոսկին բարձի տակ,
Մանո՛ւկ, ելի վեր, չուրն իրե տակա։
ՎՍԱ 92
Հմմտ. Մանուկ ծառի տակ պառկե
քուն։

***

Մանուկ քընե ծառի տակ,
Մալ ծալ ոսկին բարձի տակ·
Չեն տուր՝ կըտրիճ վեր ելնի,
Չուր չերթա քո մարդու տակ։
(Վիճակի)
ՍՄ 298

***

Ջաղլի փողնի ուռի տակ,
Տես՝ ... ուռի ծառ։

www.naregatsi.org

1652

Ձկվն ելավ ասրի տակ,
Լուսնի բոլոր բըռնեց բակ:

1653

Ծըխկյաղու ճամբանըն երկտակ,
Ջիմիչն իակեց ծալ ու մեռակ,
Ջընաց պառկավ հով ծառի տակ:
ՎՍՍ. 44

1654

Կըգըրնիմ չոլը վաստակ,
Ճա հոր քա մորն ըս մաշնակ.
Թոխալը առաչըս կըտրեց,
Մըննացե բոյիդ հասրաթ:
ԱԺԼ 27

[Կը գընամ չոլը վաստակ,
Ճո հոր քո մորն ես մինչնակ
Թուխալը առաչըս կըտրեց,
Մըննացի բոյիդ հասրաթ:]

1655

Իմ յարիս մեչքը բարակ,
Կերածն ա մեղը ու կարագ.
Երնեկ կուտամ են ավուր,
Վար կ'ըլնիմ քեղ բոմբալակ:
Հմմտ. Դու ելել ես, կ'երթաս մարագ:

1656

Երկինքն ամպել է, իրնչ անուչ երակ,
Ծրրախս մեչ լըցավ ախ բուռը կըրակ,
ՀՄՆՍ. 10

***

Ցերկինք ամպել է, իրնչ անուչ երակ,
Ես չարխաթ դըլխիդ Թուխ յաշմակ բարակ.
Ծա՛ր, քու ալված դարդերը ես ինչըղ բան է,
Դարամբյար ընքնեդ, իլամ աչքերդ:
(«Աչուդ Ակտինի ասածներից»):
ՆՀՋ 85

***

Երկինքը ամպել եր, իրնչ անուչ երակ,
Ես չարդատ դըլխուդ, դյուլ յաշմակ բարակ.
Սըրտիս մեչ լըցավ մե բուռ ըմ կըրակ,

Ցար եղ քու դարդերըդ,
Իլայի մազերըդ:
(«Սեֆիլ Կարապետից»)
ԱՀ 209

1657

Սիրտըս լըցվել ա կըրակ,
Ինձ ազատեք, Թե կարաք.
Թե չե՝ եղուց ես ցավից
Ցես կըմեռնիմ անդանակ:
ՀՄԽԲ 27

3—4. Թե չե՝ եղուց կըմեռնիմ
Ցես անխանչալ, անդանակ:
ԲՍ 157

1658

Հալել, մաշել եմ, տուն յեկ,
Ֆամըդ քաշել եմ, տուն յեկ.
Բոլոր լուսնակին նըման
Հալել մաշել եմ, տուն յեկ:

Տես՝ ԱԺԼ 28 նույնը վարանդայի բարբառով:

1659

Որով յեկ, հա՛ որով յեկ,
Ջերըդ լիքը մորով յեկ.
Ես Թաղըս դալմաղալ ա,
Շուռ տուր, են Թաղով յեկ:
ԱԴ 115

Դընացել ես, որով յեկ,
Ցաղլուխըդ խիարով յեկ.
Մեր դուռը դալմաղալ ա,
Շուռ տու, աղբըրով յեկ:
ԱԴ 265· ԲՍ 148
Հմմտ. Ախ աղա, բաղումն արի:

www.naregatsi.org

1660

Մի չահին խուրմի, արի թաք
կապեկ,
են աբդին կ'առնեմ, անունը Արեք։

1661

Լուսնակըն ինձի ցերեկ,
Շիրվանու քաթխան բերեք.
Աղլուխըս մուժուտա կու տամ,
Ցարիցըս խարար բերեք։
ՌՄ 123. Տհ 150

1. Լուսնակը ինձի ցորեկ։
ԱԴ 169

123. Լխինյակը ցերեկ ցերեկ,
Շաքար կոտրեմ, տարեք կերեք.
Աղլուխըս կաշուք կրտամ։
ԱԺԱ 54

123. Աստղներ ցերեկ ցերեկ,
Գյումբուց նուբար բերեք.
Լայլուխըս տամ մուշտուլուխ։
ՀԺԵ 123

234. Կամարեն խարար բերեք
Ցայլուխըս (վ. իմ յայլուխ)
ձեզ մուշտուլուղ.
Իմ յարր ձեզ հետ բերեք։

***

Լուսնակ երեկ ու ցերեկ,
Կաղրզվանու նուռ բերեք.
Ցեղուխըս մուժուտա կիտամ
Իմ յարոջ խարար բերեք։
ԱՀ 441

Լուսնակը ցերեկ ցերեկ,
Գյամբրու խարար բերեք.
Ալլուխըս տամ մուշտուլուխ,
Ցարիցըս նուբար բերեք։
ՀԺԵ 133

Լուսնակն եր որեկ ցորեկ,
Շիրմայի սելեր (վ. սոլեր) բերեք.
Ալլուխ կրտամ մուշտուլուղ,
Իմ յարոջ (վ. յարոջիցս) խարար
բերեք։

1662

... կանչեմ դիշեր, կանչեմ ցերեկ,
Եսոր աղեկ եմ քանց երեկ.
Սբրտիս ուզած Ջեյրան բերեք,
Թայլա բերեք, ել ըմ տարեք։
ՎՄՓ 34

2—4. Եսոր աղեկ եր քան զերեկ,
Իմ սրտի ուզած յարն ձիկ բերեք.
Բերեք տեսնեմ, ել ըմ տարեք։
ՀԺԵ 43

1663

Անձեղ նրսատ ձեր երդիկ,
Ջե կ'իրիշկեն չատ մարդիկ.
Ջեռս տի թալեմ քու յախեն,
Որ իմնամ սաղ սաղ քերթիք։
Տհ 235

1664

Կանչեմ՝ յա՛ր, արե, մի՛ աներ
նաղիկ,
Դըռնից մի՛ իրիշկիր, մի՛ անի
ճիկ–վիկ.
Կանչեմ՝ ղո՛սթ, արե, լըսիր իմ
ձէնիկ,
Բանն աստված գիտե, սիրեր եմ
քեղիկ։
ՎՄՓ 41

1665

Անտոնենց բաղչի ծաղիկ,
Աչխեն կըլմաներ ձընծաղիկ.

Խորտա եր Աչխենը,
Կոյտա եր Աչխենը։
Տհ 184

1666

Սարերի ալվան ծաղիկ,
Կարմիր ու դեղին ծաղիկ,
Ցարիս ձեր մեջը առեք,
Վըրեն դուք մի ծիծաղիք։
Տհ 197

www.naregatsi.org

1667

Ա՛յ որոն որոն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.
Հարսն ու աղջիկ եմ կ'ինել,
Գան քեզի դովան, ծաղիկ:

3 4. Տարենը մի հետ կըգաս,
Գամ քեզ որոն, ա՛յ ծաղիկ:
ՔՀ 162. ՌՄ 108.
ՏԽ 203. ԲՍ 140

1 3 4. Հա՛յ որոն որոն
ծաղիկ, ...
Ալվալա խալխ եմ կ'ինել,
Են ել քեզ որոն ծաղիկ:
ՔՀ 161. ՌՄ 108.
ՏԽ 203. ԲՍ 136

3 4. Խալխին չես մեջըս կ'անեմ,
Ու քի մեջին կըդովեմ:
ԱԺԱ. 50

3 4. Հարսն ու աղջիկ մեծրել եմ,
Վոր դան ու քաղեն, ծաղիկ:
ՔՀ 166. ԱԴ 172

3 4. Ալվալա խալխ եմ կ'ինել,
Ձես գամ քեզ, որոն ծաղիկ:
ԱԺԱ. 50

Ա՛յ որուն որուն ծաղիկ,
Կարմիր ու թոռուն ծաղիկ.
Ջահիլ աղջիկ եմ կ'ինել,
Գամ քեզ դովալու, ծաղիկ:
ԱՔ 337

***

Ա՛յ որան որան ծաղիկ,
Կարմիր ու տորան ծաղիկ,
Տարեն մի հետ ես գալըմ,
Գամ քեզի դովամ, ծաղիկ:
ՀԺԵ 121

1668

Հավա՛ր, Զաշմիկ, մադա՛թ,
Զաշմիկ,
Պըտակաբերան, խորոտ Զաշմիկ:
(Կրկնակ)
ՔՄՎ 38

1669

Թըռի՛, Թըռի Եղվընիկ,
Ամազանի ծիծեռնիկ,
Ես–պատուհան կուտ կ'երե,
Ամազանի ջուր խըմե:
(Որոր)
ԱԵ 185. ԲՍ 144

1670

Ուշիկ ուշիկ, կըլոր թուշիկ,
Կլոր թուշիկ, պադդ անուշիկ,
Ձերմըկուկ ես դեղ ս'անուշիկ,

Աղվոր, նանոյ, նանոյ, նանոյ
Ձես կուսիրեմ քեզ ամեն որ:
ՀՄ. 121. 456

1671

Ուստի՛ կուգաս ուշիկ ուշիկ,
Վոտքերդ խըթիվ կակուղ
փուշիկ.
Կարմիր երես, պադդ անուշիկ,
Տուր վոր կըծեմ կակուղ թըշիկ:

Հեյրանդ կ'ելնեմ յա՛ր, յա՛ր,
Ջանիդ կուրբան իմ, յար:
ՎՍՔ 53. ՏԽ 90

***

Ուստի՛ց կուգաս ուշիկ ուշիկ,
Ոտվիդ խըրվիլ մանդըր փուշիկ,
Դու ըրընաիկ ես, պադդ անուշիկ,
Քեզի՛, քեզի՛, բոյիդ ղուրբան:
ՋՔ 20

***

Ուսկո՛ւ կուգաս ուշիկ ուշիկ,
Վոտքըդ մըտեր վարդի փուշիկ,
Կըլոր թըշիկ, պադդ անուշիկ:

Ամա՛ն, ես ալկիկ Աչխենը,
Պադեր եմ ծոցուն մըչինը,
Մեկալն ալ մըտքիս մըչինը:
ԲՆԱ. 332

www.naregatsi.org

1672

Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Աչքերըդ չալ չալ աղջիկ,
Դու մեր տանը հարս պիտեր,
Իմ քուրը քեզ տալ, աղջիկ:

3· Դու մեր տանը հարս պըտեր,
ԲՀ 162

Աղջիկ, աղջիկ, ա՛յ աղջիկ,
Քու երեսդ ադկեկ աղջիկ,
Դուն մեր տունը հարս եկո՛,
Քորըս քեզի տալ, աղջիկ:
ԲՆԴ 519

***

Աղջի, աղջի, ալ աղջի,
Աչքերը չալ չալ աղջի,
Ցա դու իմ նշանած պիտիր,
Ցա իմ քուր քե տալ, աղջի:
ԱԻ 113

1 3 4· Ըստեղան ալ աղջիկ,...
Ցա իմ քենին քուր պիտեր,
Ցա իմ քեր քե տալ, աղջիկ:
ՄՋ 379

***

Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Երեսդ կա խալ աղջիկ,
Երննիկ են որին կըլնի,
Իմ քեռը քեզ տալ, աղջիկ:
ԲՀ 180

2 4· Երեսդ խալ խալ աղջիկ...
.. Իմ քուրը քեզ տալ, աղջիկ·
ԱԴ 173

Աղջի, աղջի, ալ աղջի,
Աչքերդ չալ չալ աղջի,
Երննիկ են որին կըտամ,
Դու մեր տանը տալ, աղջի:
ՄԺՄ 49

1673

Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Մազերդ ի սըրմա աղջիկ,
Ունքերդ կալամքաշ աղջիկ,
Իմ սիրուն սեր, ջան աղջիկ:
ՎՍՄ 53· ԺԻ 92

1674

Մորուս–մորուս ա՛յ աղջիկ,
Աչքերըդ խումար աղջիկ,
Ինձի մի՛ տա գնտնովը,
Մուրազատուր, լավ աղջիկ:
ՏԻ 213

1675

Նազ մի՛ անի, նազ մի՛ անի,
Ջան աղջիկ,
Մինթանովդ թող մի՛ անի,
Ջան աղջիկ·
կանաչել ա արտերըս,
Շատացել ա ղարղերըս·
Նազ մի՛ անի, նազ մի՛ անի,
Նազ աղջիկ·
Ել ձեռ մի՛ տա, ել ձեռ մի՛ տա,
Թոռոմել ա վարդերըս·
Մինթանովդ թող մի՛ անի,
Ջան աղջիկ:
ԿԺԵ 64

1676

Աղջիկ, աղջիկ, ջան աղջիկ,
Աչքերըդ ֆընջան աղջիկ,
Դու յես մեր տան հարսնացուն,
Ցես եմ ձեր տան փեսացուն:
2 4· Աչքերդ չալ–մալ աղջիկ...
Իմ աղբեր ձեր տան փեսացուն:
ՎՍՄ 96

1677

Ա՛յ ալին, ալին աղջիկ,
Ծամերը դալին աղջիկ,
Ցես քեզ վո՞րտեղ սիրեցի,—
Քու հերանց կալին, աղջիկ:
ՄՋ 372

***

Ա՛յ արղա, ալին արղա,
Ֆյաքուլըդ դալին տղա,
Ցես քե վո՞րդե սիրեցի,—
Հերանցըս կալին, տրղա:
ՄՖ 340· ՄՂ 141·
ՀԺԵ 124

www.naregatsi.org

***

Նարին, նարին տըղա,
Ֆանքյուլըդ նարին տըղա,
Ճես քի վո՞րդէ սիրեցի,—
Իմ հերանց կալին, տըղա։
ԱԺՍ 58

1678

Ա՛յ աղջիկ, սիրուն աղջիկ,
Սիրտըս ծով արուն աղջիկ,
Ինձ բեմուրաղ մի՛ Թողնի,
Սըրտիս բեր դարուն, աղջիկ։

Հմմտ. Ա՛յ աղջիկ, համով աղջիկ։

1679

Պուճուր աղջիկ, լավ աղջիկ,
Դու ինձ համար ցավ աղջիկ,
Ճես քեզ Թաքուն սիրեցի,
Ես ո՞վ արավ հետ, աղջիկ։
ԱԺՍ 59

***

Պըտիտ աղջիկ, լավ աղջիկ,
Ունիս մեծ համբավ, աղջիկ,
Իմ քեզ ծածուկ սիրելըս
Ինչո՞ւ ելավ չավ, աղջիկ,
ՊՎՍ 109

1680

Տո՛, յաման, ամա՛ն,
Մաչիկով աղջիկ,
Կոչիկով աղջիկ,
Ֆո գեյրեն կարճ է,
Շեկ տըղի խարճ է։
(Կրկնակ)
ՀՄԽԲ 29

1681

Ա՛յ աղջիկ, ծամով աղջիկ,
Շաքարից համով աղջիկ,
Ունքերըդ խելըս տարան,
Թուխ աչքերըդ ծով, աղջիկ։

Ընջավոր, վրընջավոր, ա՛յ,
Ծամո՛վ աղջիկ,
Կարճըլիկ, կուրճըլիկ, վա՛յ,
Համո՛վ աղջիկ։
ՀՄԽԲ 15· ԿԺԵ (Ճիայն առաջին յերկու տողը)։

1682

Ա՛յ աղջիկ, համով աղջիկ,
Դարդըս արընծով, աղջիկ,
Ինձ բեմուրաղ մի՛ Թողնի,
Սիրտըս մաչելով, աղջիկ։
Հմմտ. Ա՛յ աղջիկ, սիրուն աղջիկ։

1683

Նըխչուն միղարով աղջիկ,
Ֆու սեր հաղարով, աղջիկ·
Նըխչուն միղար, ալ բընդեր,
Զիսէ վառեց քու դընդեր·
Նըխչուն միղար խըրմըղի,
Պատռիս չըմ առնի քըղի։
Գինդ մի դընիմ, դինով աղջիկ,
Քընց բըլբուլներ ձենով աղջիկ։
ՀԺԵ 90
Տես՝ կարմիր միղար խըրմըղի։
Տես՝ կես դիշերին չուր ի մըկա։

***

Կարմիր մեղարով աղջիկ,
Գինըդ հաղարով աղջիկ·
Նախչուն մեղար դըրմըղի,
Պատռիս չեմ առնի քըղի։
ԱԵ 195· ԲՍ 139

Կարմիր մըղարով աղջիկ,
Գինդ ե հաղարով աղջիկ,
Կարմիր մըղար դըրմըղի,
Դարկդի նշանածիս,
Պատռիս, չըմ առնի քեղի։
ՋԲ 40

1684

Կապոտ մեղարով աղջիկ,
Ֆո մորն ասա՝ քե տա ձիկ·
Թե՛ դու կ՚ասիր՝ քե կառնեմ,

www.naregatsi.org

Վոր ձիկ չառնես՝ կը մեռնեմ։
— Իմ մեր ձիկ Թանգ է պախե,
Դայմա մարդու չի ծախե։
ՎՍՍ 49

1685

Կարմիր մեղարով աղջիկ,
Շիլա չափկավոր աղջիկ,
Խընդիրք ունեմ ասելու,
Քո մորն ասա՝ քեզ տա ձիկ։

Դելիլո, դելիլո, սեյրանո,
Ջեմալ քաժիդ հեյրանո.
Դելիլո, դելիլո Չանըման,
Ցար չեմ տեսեր քեզ նըման։
ՎՍԲ 57

1686

Կարմիր չալվարով տըղա,
Սեվ սեվ ունքերով տըղա,
Դյո նոր անցավ ըստեղեն,
Գաղիկ մ՝ չառի յես մընեն։
Դելիլո, և այլն։
ՎՍԲ 57

1687

Դեղին դոզնոցով աղջիկ,
Քո հորն ասա՝ քե տա ձիկ։
— Ծո՛ տղա, տղա խեճալով,
Իմ հեր քե աղջիկ չի տա,
Իմ հեր դի Թանգ է պախե,
Վանա խովին է պախե։
ԱԺԹ 105

1688

Քել մ՝ա քելի՛, քելքով աղջիկ,
Բաղի բըլբուլ ձենով աղջիկ...
Քել մ՝ա քելի՛, քելքով աղջիկ,
Քանց քու մերը խելքով աղջիկ։
4. Քանց քու մերը սիրուն աղջիկ,
ՆՀՋ 108

***

Քելե՛, քելե՛, քելքով աղջիկ,
Քանց քու մերը խելքով աղջիկ։

1689

Ցորեն եմ ցանե, կըքաղեմ բըռիկ,
Թորիկեր եմ Սոնեն, կըսիրեմ մեըիկ։
ՎՍՍ 47
Ցանեցի ցորեն, քաղեցի բռիկ,
Սիրեցի Սինամ, Թորիկեցի կըռիկ։
ՀԺԵ 51

1690

Չաղացի դուռը պաուիկ,
Երեսըդ նըռան հատիկ.
Ամեն քեղի տեսնելիս՝
Չամ համբարձում, համ զատիկ։
1 2 4. Չաղացըս պաուիկ պաուիկ,
Աչքերըդ նըռան հատիկ։
(4. Կանեմ իշտահով զատիկ։
ՏԽ 241)
ՏԽ 241. ՌՄ 126.
ԲՍ 125

***

Ա՛յ տըղաս տաւիկ–մատիկ,
Երեսդ է նըռան հատիկ.
Սիրել ենք, իրար կ՝տանենք,
Կամ համբարձում, կամ զատիկ։
4. Դու համբարձում, յես զատիկ։

Ա՛յ տղա (դու) հատիկ–մատիկ,
Աչքերըդ (երեսդ) նըռան հատիկ.
Ինչ վախտ յես քեզ կու տեսնեմ,
(են որեն ինչ քեզ տեսնում եմ),
Չամ համբարձում (է), համ զատիկ։
ՔՀ 179. ԱԴ 174

***

Կայներ ես պատի տակիկ,
Երեսդ նըռան հատիկ.
Ցարիդ երես որ տեսնես,
Չամ համբարձում, համ զատիկ։

1691

Կայներ ես պատիկ պատիկ,
Աչքերըդ նըռան հատիկ.
Համբարձըվա պիշերը
Ցես վարթեվոր, դու զատիկ։
ԱՋ 389

www.naregatsi.org

1692

Ներսաւել ես հատիկ պատիկ,
Երեսդ է նըռան հատիկ.
Ցես դու մի(ն) բաղում պտղաք,
Ցես վըրդեվոր, դու զատիկ:
2. Ունքերըդ նըռան հատիկ:
ԱՋ 375

1693

Նանիկ ասա, մեր պըզտիկ,
Ջամիչ բերեմ, կե՛ր, պըզտիկ,
Ծառի տակին ճնեբակ,
Բաղեմ, եփեմ, կե՛ր, պըզտիկ:
ԱՐ 101

1694

Խորտիկ, տակի դընտիկ,
Դու զաղջիկ իտաս ինձիկ:
ԲՆԴ 121

1695

Հացը հասել ա դռտիկ,
Համբարձման տոնն ա մոտիկ.
Ես էլ թե ինձնից թըռավ,
Պըտի մընանք մենծ զատիկ:
ՏԽ 177

1696

Կապել ես փրման դռտիկ,
Մարդ չես թողնում քեզ մոտիկ.
Տեսքով ես, համով հոտով,
Ֆան ըղծադիկ խորոտիկ:
ՀՄԽԲ 15

3. Համ տեսքով ես, համ հոտով:
ՏԽ 192. ԲՄ 126

1697

Կապել ես փրման դռտիկ,
Աբի մեր տանը մոտիկ,
Իրար սիրենք, յար ըլնենք,
Սիրուն աղջիկ խորոտիկ:
ՏԽ 212

1 2. Կանդնել ես դըռան մոտիկ,
Երեսդ է նըռան հատիկ:
Հմմտ. Մեր տուն ձեր տանը մոտիկ:

1698

Ջյուն եկավ, ելավ գոտիկ,
Ալագյազ սարին մոտիկ.
Աղջիկ, դուն ինչ խորոտիկ,
Ջեռըս քրցի գու գոտիկ:
ԱԴ 165

1699

Կարմիր խընձորն իր դռտիկ,
Իմ յարն եկավ դես մոտիկ.
Ջեռըս ի տարա թե բըռնեմ,
Բալքի իմ մուրազն առնեմ:
ՏԽ 201

1700

Աբի՛ երթանք հորթիկա խոտիկ,
Դիլբար, երթանք հորթիկա խոտիկ,
Տեսնենք վի՞ր յարն ա խորոտիկ:
ԲՄՎ 31. ԺԽ 66

1701

Խոտորջուրին ջուրն ա մոտիկ,
Հարսներ կուգան մանըատոտիկ.
Աղջի՛, վար արի, վար արի,
Վար արի, մեկի հետ պար արի:
ՏԽ 106

1702

Ես տուն ձեր տունը մոտիկ,
Կապել ես չալե գոտիկ,
Ես վանքի ուխտավորից
Մենակ դու յես խորոտիկ:
ԲՄ 124
Հմմտ. Մեր տուն ձեր տուն մոտիկ
մոտիկ:

1703

Ելանք սարերը մոտիկ,
Ջունը եկել ա (է) գոտիկ.
Ցա՛ր, դու չատ մի՛ մրտիկ տա,
Աբի՛ մեր տանը մոտիկ:
ԲՄ 101. ՏԽ 172.
ԲՄ 155

www.naregatsi.org

***

Մանըր սարևրը մոտիկ,
Ջունը ելել և դոտիկ·
Աղջի դու ի՛նչ խորոտիկ,
Արի՛ մեր դըռան մոտիկ:

2 3· Ջունն ելել և ի դոտիկ,
Աղջի(կ) իմա՞լ խորոտիկ:
Տես՝ Ճերմակ սարը մոտիկ և:

1704

Մեր տուն ձեր տուն մոտիկ մոտիկ,
Դու կապել ես կարմիր դոտիկ·
Երթանք, քաղենք կանանչ խոտիկ,
Տեսնենք վի՞ր յարն և խորոտիկ:
ՌՄ 25·87· ԺԹ 94
4· Տեսնուենք՝ վիր յարն և
խորոտիկ:
ՓՀ 177

***

1—4· Մեր տուն ձեր տուն
մոտիկ· մոտիկ,
Տեսնենք՝ վոր յարն և խորոտիկ:
ԿԺԻ 10
ՀՄՄ· Մեր տուն ձեր տունը
մոտիկ:

***

Մեր տուն ձեր տուն մոտիկ մոտիկ,
Երթանք, քաղենք հորթիկան խոտիկ·
Տեսնանք, վի՞ր յարն ա խորոտիկ:
Կանչեմ՝ յա՛ր, արի՛, չուտ արի:
ՌՄ 98· ՏԻ 233

3 4· Բերենք, ըղնենք մուրբին
մոտիկ,
Տեսնենք՝ վի՞ր յարն ա խորոտիկ:
ԱՀ 443· ԺԹ 67

***

Մեր տուն ձերուն մոտիկ մոտիկ,
Իջնենք բաղչան, քաղենք խոտիկ,
Տանենք ըղնենք մսրա մոտիկ:
ԲՆԳ 65

***

Մեր տունը ձեր մոտիկ մոտիկ,
Երթանք, քաղենք հորթուն խոտիկ·
Իմ յար քանց քում էլ խորոտիկ:
ԲՆԱ 740

Մեր տուն մոտիկ, ձեր տուն մոտիկ,
Երթանք քաղենք որթիկան խոտիկ·
Իմ յարն քան քոն չատ խորոտիկ:
ՊՎ 97

1705

Մեր տուն ձեր տուն մոտիկ մոտիկ,
Երթանք, քաղենք հորթիկա խոտիկ,
Բերենք, ըղնենք մըսրա մոտիկ,
Տեսնենք՝ վի՞ր յարն ա խորոտիկ:
Իմ յար քանց քումն էլ խորոտիկ:

Ճարի՛կ, յարի՛կ, իմ վարդանիկ,
Բեղերդ ի կակուղ՝ կըմանիկ
ղըզիլիկ:
ՀԺԵ 79

1706

Մեր տուն մոտիկ, ձեր տուն մոտիկ,
Երթանք, քաղենք որթիկան խոտիկ·
Իմ յար քանց քոն չատ խորոտիկ·
Ճարոջս մեռնիմ, անուն Վարդիկ:

Վարդիկ սիրուն ի վարդի նըման,
Բիւլբիւլներ վերեն հեչրան ելան·
Վարդ վոր պըտկեր, ծաղիկ կըտաբ,
Վարդիկիս հոտը մեջեն կուտաբ:
ՎՄԲ 43· ԺԹ 67

1707

Աղջիկ, դու քելի, յես կ'անեմ վոտիկ,
Երկուսս դիրկը ծոց մեջ վարսախտին·
Մեր երկուսի սիրտ թե վոր մեկ ելնի,
Ըսկուն կ'իմանանք մեջ նըխչուն ոդի:
ՎՍՍ. 39
1 4· Աղջիկ դու քելի, յես անեմ
վոտիկ·
Ձես պահիմ քո ծոց մեջ
նըխչուն ոդին:
ՆՀՋ 102

www.naregatsi.org

***

1—4· Աղջի, դու քելից, յես
կանեմ վատին,
Երկուս դիրկ ու ծոց մեջ
փալախոտին:
ՀԺԵ 46

1708

Բոբիկ մի՛ քեռե, վուշ կ'ելնի ոտիկ,
Աբծրթեն դոտիկ, դուն ես խորոտիկ,
կարմիր խընճորիկ:
ԲՆԱ 583
Հմմտ. Նախշուն բոբիկ արտուտիկ:

***

Բոբիկ մի՛ քեռե, Լալուխան,
Փուշ կ'ելնի ոտիկ, Լալուխան.
Առնենք ջուխտ ըմ սոլ, Լալուխան,
Հաղնենք դորե դոր, Լալուխան,
և այլն...
ՎԺԵԱ 9
Տես՝ Երթանք լատամբոլ:

***

Շորոր ու մորոր դու կանես ոտիկ,
Տես՝ Վզիկդ եր երկեն, բոչամդ ոլոր:
(ՎԱՐ 51)

1709

Իրեք քոր ունեմ խորոտիկ,
Թալե լաչիկ, Թալե կոտիկ,
Չիամ Սրվարտուն վազե բոբիկ:
ՎԱԱ. 44 Հա.

1710

Իմ յարն ե չատ խորոտիկ,
Երեսը նըռան հատիկ.
Աստված սիրես, իմ յար ջա՛ն,
Աբի՛ ձեր դըռանը մոտիկ:

2—4· Աչքերը նըռան հատիկ.
Աստված սիրեք աղրըրտիք,
Ինձ Թողեք յարիս մոտիկ:
ՏՀ 229
Հմմտ. Ջաղացի դուռը պատիկ...

1711

Հագեր եմ լատտիկ,
կայներ եմ ոտատիկ,
Թատ բոյիդ մատաղ,
Ներչանլու աղջիկ:
ԱԲ 337

Տես՝ Հագեր եմ ջուխդան:

1712

Նախշուն բոբիկ արտուտիկ,
Իգամ ձեր տուն դողտատիկ,
Կապիմ քու բարակ դոտիկ:
Կարմիր տոտիկ արտուտիկ,
Մի՛ քելի բոբիկ, խորոտիկ,
Փուշ կ'ելնա ոտիկ, արտուտիկ:
ՀԺԵ 93

Հմմտ. Բոբիկ մի՛ քելե, վուշ
կըլնի ոտիկ.

1713

Կռվալ իրիկ,
Կռվալ կնիկ.
Փաթթվան իրար,
Թափվան Թոնդրիկ:
ՀՀ 332

1714

Լո՛րիկ, զարնան քարեր դու վարդ
արեր, լորիկ,
Նման եր կարմիր խնճոր լորիկ:
(Կրկնակ)
ՀՄԽԱ 37

***

Ջիխ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Գարնան քարեր վարդ արեր, լուրիկ:
ՋԲ 21

***

Ա՛խ, լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ:
ՋԲ 22

www.naregatsi.org

***

Բուրիկ Մայրամ, բուրիկ Մայրամ,
Բուրիկ Մայրամ, բուրիկ Մայրամ,
բուրիկ:
ՎՍԲ 29

Լուրիկ, լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Բարեհամ լուրիկ, լուրիկ, լուրիկ:
Տխ 164

1715

Սեվ է աչքերդ, կռունկ,
ճերմակ է սիրտդ, կռունկ.
Ջուխտ գացիր, մենակ կուգաս,
Ո՞ւր է ընկերդ, կռունկ:
ՍՋ 385

1716

Ես յանը պոպակ,
Են յանը պոպակ,
Գագաթըդուն կ'առնեմ,
Հագինն ա սապակ:

1717

Ծառիկը քաղի տասներկու պոպակ,
Ճարին եմ ղուրբան, անունը Ակոբ:

1718

Մեր դըռան առաջ ծառ մի պընդուկ,
Ձեր դըռան առաջ ծառ մի պընդուկ,
Առնեմ քեզի, մըտնեմ սրնդուկ:
ՍԸ 443
Մեր տան յետեվ արտ իմ պընդուկ,
Ձեր տան յետեվ արտ իմ պընդուկ,
Ջուխն առնեմ, մըտնեմ սրնդուկ:
ԳՀ 177· ԺԹ 75

1719

Վերեվ մեր տան ծառ կեր (կար)
պընդուկ,
Ներքեվ ձեր տան ծառ կեր (կար)
պընդուկ.
Դյալաչն իկե, մորուս կընդուկ:
ՀԺԵ 55 հա.
Չմմա. Վերեվ մեր տան արտ
կար չամամ:

1720

Քո ծոց ձիկ սալվի սընդուկ,
Ցես տ'ելնի կարմիր ճընճղուկ.
Վոր կոտրեր են սալվի սընդուկ,
Թրռներ են կարմիր ճընճղուկ:
ՎՍԱ 64· ԺԹ 97
Տես՝ Սրտիկ սինի սնդուկ եր:

1721

Բոստան եմ ցանե բազուկ,
Շան սըղի խոսքը նազուկ:
ՀԺԵ 113

1722

Բոստաններըը կ'ըլլի բազուկ,
Թեվերըդ չինի բիլազուկ,
Բոյըդ երկար, մեջըդ նազուկ:
ՋԲ 20

1723

Բոստան եմ ցանած բազուկ,
Իմ յարն եր քեղմեն նազուկ.
Թե վոր ենոր չեք ճանչե,
Թեվին ունի բիլազուկ:
ԱԸ 133

1724

Անտոնի դռչի դռչլուկ,
Աչքեն կ'ուզեն բոլուկ բոլուկ:
Տխ 184

1725

Վարագա սար բուսե բըրինձ,
Իմ սիրտ ու քյոն բրանե կըռինջ.
Վարագա սար բացվե կակաչ,
Ամուսած պահեր Թումադի յաճ,
Ջուխեն երկեն, կապեն եր կարճ:
ՀԺԵ 48

1726

Արտ եմ ցանե, հըմեն բըրինձ,
Իմ սիրտ քո սիրտ ելան խըռինձ.
Իմ աչք դըրվի են մեկ կընկան,
Աչխար հըմեն խառվի ըրկան:
ՎԺԵԲ 3

www.naregatsi.org

1727

Բաղչեքին ըսպանի ոճ,
Գըլուխըս զարկի քորոց.
Ջահիլին սարսաք ըլնող,
Զըտեսնաս ջուխտ որորոց:

1728

Ինձի տար քու հերանց բաղ,
Ձեր վարդերին ղրկէ չաղ.
Հերդ ինձի ուղե քեղի,
Ասըծուն կ'անեմ մատաղ:
ԱԴ 165· ՌՄ 106·
ԲՍ 148

3· Թե հերդ ինձի քեղ ուզի:
ՏԽ 172

1729

Ոչխարն քաշվել և յայլաղ,
Ալուր բիթուն ա չարմաղ.
Մի յար ունիմ խորոտիկ,
Գաղքի քու չումն ա զարաղ:
ԲՍ 128

1730

Գամին փրչում ա պաղ պաղ,
Լերդ ու թոքըս անում ա դաղ.
Ցա՛ր, ինձ բեմուրադ արիր,
Սերըդ ինձնե զատ արիր:
ՀՄԽՍ. 32

1731

Գրնա, գընալիդ մատաղ,
Մեկդիդ քամարին մատաղ:
Տանեն նրգարան չունես,
Աննըգարան Ջանիդ մատաղ:
ԱՋ 376

1732

Բող ձի՛, քու նալիդ մատաղ,
Ծամի պես յալիդ մատաղ.
Ինձի թեղ իմ յարին հասցրու,
Քու սիրուն յալիդ մատաղ:

1733

Կյանքիդ, արեվիդ մատաղ,
Կանանչ տերեվիդ մատաղ.
Նամակով հիշել եյիր,
Ղըրկած բարեվիդ մատաղ:
ՌՄ 115· ՏԽ 208
ԲՍ 150

***

Զուլեն մրասեն մատաղ,
Տես՝ Հանդիդ հարսին մեռնեմ:

1734

Ծաղիկ, ծաղիկ, ծաղկաքաղ,
Լիս ու արեվ ոսկե մաղ.
Աբի գընանք, սիյր անենք,
Դու ինձ բըլբուլ, յես քե բաղ:
ԱԺՍ. 54

1735

Եսմար ելե, կ'ներթա ի դեղ,
Ջուխտակ աչքեր քաշեր ա դեղ,
Գամար ընքներ բըռներ ա դեղ:
ՀԺԵ 99

1736

Երթամ Պըսաի դեղ,
Առնեմ նուկի մ' եղ,
Իմ յարի համար
Անեմ ձըվածեղ.
Տանեմ հովըվուն,
Չի չըղընի մեղ:
ՀՄԽԲ 22

***

1—6· Երթանք Պըսաի դեղ,
Առնենք նուկ մը յեղ,
Ենենք ձըվածեղ,
Տաննենք հովըվուն.
Հովիվ խրատվավ,
Ոչխար մոլորավ,
Կրթոց ղըրկվավ,
Գերվոր չիվարավ:
ՓՄՎ. 22

www.naregatsi.org

1—6· Եհանք Պըսախ դեղ,
Առնենք նուկի մ'եղ,
Անենք ձըվազեղ,
Տանենք հովըվուն.
Հովիվն խըռռվե,
Ոչխար մալուվե,
Կըթոց գըլըրվե,
Իմ յար խըռռվե:
ՊՎ 122
Տես՝ Ճարսխ խըռռվավ:

***

1—6· Իմնեմ Պըսախ դեղ,
Առնեմ նուկի մ'յեղ,
Շինեմ ձըվածեղ,
Որդկեմ յարոջ.
Իմ յար խըռռվե,
Շամամ թռռոմե:
ՎՍԱ 87 հա.

***

1—6· Երթանք Մոլի դեղ,
Գընինք նուկի մ'եղ,
Շինինք ձըվածեղ,
Տանուանք հովիվին.
Հովիվն եր հիվանդ,
Ոչխար մալուլավ,
Պերվոր չիվարավ:
ԲՆԳ 122

***

1—6· Երթանք Պըսախ դեղ,
Առնենք նուկի մ'եղ,
Անենք ձըվածեղ,
Գընենք վեր յեղան,
Երթանք Թևխ գոդան:
ՀԺԵ 86

***

1—6· Երթանք Պըսախ դեղ,
Առնինք նուկի մ'եղ.
Շինինք ձըվածեղ,—
Մեր վորին յայըդ:
ԲՆՄ 583

1737

Մերըս արավ ձըվածեղ,
Վըրեն լըցրեց լիքը յեղ.
Տեսավ՝ վեսեն տուն չեկավ,
Կատուն կերավ վեսի տեղ:
ԱԲ 347

1738

Սարի խոտը ծեղվեծեղ,
Աղբեր, երթանք միատեղ,
Վոր հարսմին վըրա տա,
Գըլուխըս տասֆ գըլխիդ տեղ:
ՓՀ 160· ՌՄ 138·
ՏԽ 139
1 2· Սարի խոտը ծեղվածեղ,
Աղբեր, գընանք միատեղ:
ԱԺՍ 60

Սարին խոտը ծեղ ծեղ,
Աղբեր, գընանք մինատեղ,
Վոր դողերը վըրա տան,
Գըլուխըս գընեմ գըլխիդ տեղ:
ԱԳ 262· ԲՍ 135

***

Սարերի խոտը ցեղվըցեղ,
Աղբեր, յեկ գընանք մինատեղ.
Ով քու ջանին դատա կըտա,
Իմը կըտամ քունին տեղ:
ԱՋ 382

***

Ենտու կաքավ ան ծեխրակեխ,
Աղբեր, երթանք միատեղ:
ՀԺԵ 132

1739

Ընկերներով միատեղ
Ման ես գալի(ս) ամեն տեղ.
Թե վոր հետըս սեր ունիս,
Արի երթանք հերանց դեղ:
ԱԴ 168

4· Արի գընանք հերանց դեղ:
ՏԽ 168

www.naregatsi.org

1740

Ման զալով ամեն լավ տեղ,
Քաղենք ծաղիկ միատեղ.
Փընջեր կապենք միասին,
Ինչ ասելով տանենք զեղ:
3· Փընջեր կապենք մեր մեջտեղ:
ԱՂ· 176

1741

Ցեխմ ալըգա, ոտար աղջիկ,
Աբե ձիկ առ, ըլնենք տուն–տեղ.
Մեր հոր աչխարհ գառա տեղ:
ՀԺԵ 52

1742

Իմ դոչին ա ֆիչանըղղ,
Ցես ի՞նչ երսով էլնեմ դեղ,
Սարիը, քու բալեն մեռնի,
Կըտրավ իմ երեսառեղ:
ՀԺԵ 113

1743

Սելերն եկան դողեդող,
Հասած են մեր բաղի կող·
Ա՛յ հեր, քու փափախըդ հող,
Գիշերն աղջկանդ եկան դող:

1744

Բոստան եմ ցանե խաս արտի կող,
Աստված անիծեր գեղմալ հող·
Մեկ ճմերուկ չեղավ, ոտանք՝
կարեր դող:
ՆՀՋ 91 հտ·

***

1—3· *Բոստան եմ ցաներ*
անտեր դարի կող,
Աստված անիծեր իդմալ արտու
հող:
ՀԺԵ 78
Հմմտ· Բոստան եմ ցանե վըր ինա
դարին:

1745

Բոստան գըրի դարի կող,
Գըրկե՛ր եղ Մատաբի հող·
Երկու բեքասա քուր ունեյի,
Կասեր՝ գընա յարիդ թող:
ՀԺԵ 114

1746

Ցար կ՚որոդկեմ սարեր կող,
Փոսի մաքին կիցկեմ դող:
ՀԺԵ 49

1747

Թե ժուռ, թե հասուն, յես եմ քո
քաղող,
Թե թանդ, թե եժան, յես եմ քո
գընող·
Վոր դու յես իմ հոր սիրուն
հարսնացուն,
Վոր յես էլ քո մոր սըրտի
փեսացուն:
ՎՍՄ· 39

1748

Մեկ արեգակ երկու չող,
Ցարուկ պագե, եվլեմ թող:
ԲՆԳ· 471

կայնել եմ, գալ չեմ կարող,
Տես՝ կայնել եմ, գալ չեմ կընա:

1749

Բոստան եմ ցանե, ելե ճղե ճուղ,
Ջարկե զղուլպանկին, թորկե
ջուխտակ պուխ·
Քու գարդեն թորկենք, երթենք
Բուլանուխ,
Բուլանուխ չըկեր, երթենք
ճապաղջուր,
ճապաղջուր չըկեր, երթենք
Բըլաթուխ·
ՆՀՋ 92

www.naregatsi.org

1750

Ֆու թելվեր դուլաճ դուլաճ,
Մեղնե մի՛ ընկնի դոլաճ,
Որ քե չառնի ոսկի լաճ։
ՏՒ 165

***

Տո տղա, տղա, խորտա լաճ,
Տես՝ Իրիկվորե չուր մըկա։

1751

Ծառի տակի ծանըր կոճ,
Իմ յար քանց քոն սըպըլպոչ։
Դարի տակի մանուշակ,
Ֆո յարն իմ յարոջ մըչակ։
ՎՍՔ 58

Մ։

1752

կաքավ եմ, սար ման կըզամ,
Ըլըռուլ եմ, բաղ ման կըզամ։
Հաղար ու մի դարդ ունեմ,
Հենց դիտաս սա՞ղ ման կըզամ։

1753

Դե՛հ գընա, կիզամ, չուտ կիզամ,
Ախտ քու չըքին յես կիզամ։
Փարչիկ կըընամ ու կիզամ։
Շան տըղին քընցում ու կիզամ,
Կարմիր սոլեր հագնեմ ու գամ,
չուտ կիզամ։
ԱԴ 191։ 192

Ամրողջ իրրև մեկ յերդ,
Տես՝ ՏՒ 167 հմ։ «Դե գնա,
կիզամ, վայ գընա, կիզամ,
չուտ կիզամ»։

1754

Կայնի՛, յարըս, կայնի՛, գամ,
Կայնի՛, եղնինք բարեկամ։
Կայնի՛, յարըս, գալիս եմ,
Գըրտընել եմ, լալիս եմ։
ԱՆ 175

1755

Ճամբա տըվեք, առաջ գամ,
Սիրած յարիս գարեվ տամ։
Ուխտ եմ արել, վոր առնեմ,
Թող տեանի աչխարհ ալամ։
ՀՄՆԱ. 31
4։ Թող տեանի աչխարք ալամ։
ՏՒ 220

1756

Գընա՛, գընա՛, քեզ հետ գամ,
Հետ քու չուչի ճենին (վ. ճենիպ)
գամ։
Փարչիկ ընիմ ու ջուր տամ,
Գաղիկ առնեմ ու յետ գամ։
3 4։ Փարչ ըմ եղնիմ ու ջուր տամ,
Գաղըմ առնեմ ու յետ գամ։
ԱԴ 175

4։ Գաղիկ մ՚առնեմ ու յետ գամ։
ՌՄ 119

Գնա, գնա, իրտ քե գամ,
Ախտ քու չուչի ճենին գամ։
Փարչիկն ընամ ու քե տամ,
Բարեվ առնիմ ու յետ գամ։
ՏՒ 235

2 3 4։ Ախտ քու դուչի ճենին
գամ,
Փարչիկ ընամ ու քե տամ։
Գաղիկն առնեմ ու յետ գամ։
ԲՅ 154

1757

Գիր մի գըրեմ նախչուն կալամ,
Անունդ կուտա աչխարհ ալամ։
Դու քաֆուր վարդ, յես ել բըլբուլ,
Գիչեր ցերեկ սիրուդ կուլամ։
ՎՍՔ 68

***

Թուղթ ըմ գրեմ կիւրճի կալամ,
Վոր պըտոտեմ աչխարհ ալամ։
Քի կ՚որոնեմ դուա–սալամ։
ՀԺԵ 44

www.naregatsi.org

***

Թուղթ կը գրեմ դիւրջի կալմով,
Քեզ կ'ողորկեմ կուչի թեվով.
Դու քյաֆուր վարդ, յես եղ բիւլբիւլ,
Դիշեր ցերեկ մընամ ահ ու զարթով:

Քեզ կ'ողորկեմ դուղա, սալամ,
Թող իմանա աչխարհ ալամ.
Թե չատ մընաս, թե քիչ մընաս,
Ա՛խ, կարիբ յար, սիրուդ կուլամ:
ՎՄԲ 61· ԺՅ 21

1758

Բոստան եմ դրբել քալամ
Դու դրիխի ես, յես դալամ.
Սիրել ենք, իրար կ'առնենք.
Իմացավ աչխարհ ալամ:

***

Մեր դուան առալ թախըմի քալամ,
Ֆես՝ Մեր տան հաեվ արա կորընկան:

1759

Յոյա սերկեվիլ, Պեհտառա չամամ,
Բեմուրադ կենամ, թե փինե դառնամ:
ՀԺԵ 46

1760

Վերեվ մեր տան արա կար չամամ,
Ներքեվ մեր տան արա կար չամամ,
Գյալաչն իկե մորուս թամամ:
ՀԺԵ 56

Համա. Վերեվ մեր տան ծառ
կեր պրնդուկ:

1761

Սիրարս տուփրա չի՝ բանամ,
Ցես ո՞ր ցավին դիմանամ.
Ինձ կրրակին կեր կրտամ,
Թե դեչ խոսքըդ իմանամ:
Տ№ 214

***

Սիրտըս տուփրա չե վոր բանամ,
Ըես վո՞ր մեկ դարդին դիմանամ.
Բեբախտ ընկիդ նոր կ'իմանամ:
Կայնի՛, մի՛ դընալ, մի՛ դընալ:
(Կրկնակ)
Տ№ 99

1762

Գիշերը քուն չունիմ, պառկիմ,
քընանամ,
Թըղթիկ մը չես դըրկը, դերդըդ
իմանամ.
Ցես աս ցավերուն ընտո՞ր դիմանամ:
ԲՆԲ 680

2 3· Աղաս, յես քու դարդիդ
ինտո՞ր դիմանամ,
Ամբողջ թըղթիկ մը, որ
դարդերդ իմանամ:
ԲՆԱ 776

1763

Գրնամ, դընամ հետանամ,
Մեջքըս կոտրած, վոնց կուանամ.
Մեռնիմ, դերեզման մտնիմ,
Բալի դարդերս մոռանամ:
ԱԺԹ 89

1764

Երթալու յեմ, պիտի ճանապարհ
դընամ,
Արի քեղի տեսնեմ, կարոտ չմնամ,
Խանում Ցեվա Ջան, դու մնացիր
բարով,
Ցես կ'երթամ լալով, լալով
վողբալով:
ԿԺԵ 43

1765

Արի, քեղի տեսնամ, կարոտ
չմռնամ,
Իսկր պետք է ճանապարհ դրնամ:
Դուն դընա, յես կըմընամ լալով:
ՀԺԵ 63

www.naregatsi.org

1766

Զեռիզ փունջ կա, Անթառամ,
Մինն ել յես տամ, Անթառամ.
Յես դու իրար հետ ապրինք,
Միշտ անբաժանաբ, Անթառամ:
ԽՏ 138· ԲՍ 155

1767

Ա. ազա, յես քեզ յէրխա տամ,
Ղըլղանը տիւս կյամ, զէրխ ա տամ.
Ամեն մին յարը տըրանալավ
Ըռանդյ ըռանդյ փոխ ա տամ:
ԱԺԼ 42

[Ա. ազա, յեկ քեզ յորխա տամ.
Ղըլղանը դուրս ե գալի, զորխ ե տալի,
Ամեն մի յարին տեսնելիս՝
Ռանդ ռանդ փոխ ե տալի:]

***

123· Կրակը թիժ չի, ծուխ ա տամ,
Ըրաերեն ղըլղանը զէրխ ա տամ.
Ամեն յարը յարեն տրանալավ:
ԱԺԼ 27

[Կրակը թեժ չի, ծուխ ե տալիս.
Արաերի ղըլղանը զորխ ե տալիս.
Ամեն յարը յարին տեսնելով:]

1768

Կաղին հատիկը թի կըտամ,
Կյոկ ճիւն գարի կըտամ.
Հու վոր ասի՝ են յարը կյամ ա,
Վորթը տակին մեր կըտամ:
ԱԴ 114

[3 4· Ով վոր ասի՝ են յարը գալիս ե,
Հորթը տակին մայր կըտամ:]

***

Տանըս տակին զալ կըտամ,
Մեչքովըս քաթան կըտամ.
Ով իմ յարը ինձ կըտա,
Հորթը տակին կով կըտամ:
ԱՋ 382

***

Լոռվա միչին դով կըտամ,
Քաթանս իմ գըլխով կըտամ.
Ով որ կ՚ասի՝ յարըդ նկավ,
Ծորթը տակին կով կըտամ:
ԱԺԱ 54

***

Հա տով կըտամ, տով կըտամ,
Գըլխովըս կըտամ կըտամ.
Ով իմ սիրածն ինձ կըտա,
Ծորթը տակին կով կըտամ:
ԱԺԱ 56

***

Կըլխովըս կըտամ կըտամ,
Շուշվա գըլխն գավի կըտամ.
Հու կյա, իմ յարես տըղին ասե,
Վ.ըրթը հրեսան մի կով կըտամ:
ԱԺՔ 26

[Գլխովս կտամ կըտամ,
Շուշա գալին գավի կըտամ.
Ով գա, մի յարես տեղն ասի,
Հորթը հետը մի կով կըտամ:]

***

Բուխարիս վազ կըտամ,
Կըլխովըս կըտամ կըտամ,
Հու կյա, ասե՝ յարըդ կյամ ա
Դանան տակին մին կով կըտամ:
ԱԺԼ 44

234· Փեչկերքըս թաւի կըտամ.
Հու վըեր ասե՝ յարըդ կյամ ա,
Ըսուռծու երեսն բյեր փաք
կըտամ:
ԱԺԼ 44

[Բուխարուս փայտ կըտամ,
Գըլխովս կըտամ կըտամ.
Ով գա, ասե՝ յարըդ գալիս ե,
Հորթը տակին մի կով կըտամ:]

[2—4· Փեչերըս թաւի կըտամ.
Ով վոր ասե՝ յարըդ գալիս ե,
Ասուռծու երեսն ի վեր փաք
կըտամ:]

www.naregatsi.org

1769

Ջուխա գուխան ասիլ կըտամ,
Փաս արաը վարիլ կըտամ.
Կորի գընա, չան աղջիկ,
Ձէքերըդ հանիլ կըտամ:
ԱՋ 387

2 3· Սեվ արաը վարիլ կըտամ.
Շատ մի՛ խոսա, չան ուղղա:

1770

Գուխանըը տանիլ կըտամ,
Իըդերըը մանիլ կըտամ.
Ձոռքիդ դըլուխն իմացիր,
Ձո ջանը հանիլ կըտամ:

1771

Գյանջու տակին չոր կըտամ,
Թէրմա չալը թառ կըտամ.
Ով իմ սիրածըն ինձ տա,
Իմ ջանը մատաղ կըտամ:
4· Իմ ջանը զուրբան կըտամ:
ԱՋ 378

1772

Գլուխա թուխուն դեմ կըտամ,
Թուխուն չեվերը յեր կըտամ.
Հով վեր սերը սիրածան հանիլ,
Ճըրտին քարփաթուն յեր կըտամ:
ԱԳ 266

[Գլուխա թխենուն դեմ կըտամ,
Թխենու չեվերը վեր կըտամ.
Ով վոր սերը սիրածեն հանիլ,
Սըրտին քարփաթին վեր կըտամ:]

***

Ըսկվա, ըսկվա, պատին տամ,
Տես՝ Սկվա, սկվա, պատին տուր:

1773

Ձափարով չուռ կըտամ,
Ոսկե դուլըս թառ կըտամ.
Ձեռ ես պիծիլ տեղովըը՝
Ներքով քեզ խըրատ կըտամ:
ԱՋ 381

1774

Սիպտակ ձիին ջուր կըտամ,
Դալյանին թուխուն կըտամ.
Ամեն մի յարս միտս գալու՝
Սըրտիս քյալփաթուն կըտամ:
ԱԳ 268

123· Սիպտակ ձիյիդ ջուր
կըտամ,
Կեռ գալյանիդ թուխուն կըտամ.
Ամեն յարս միտս ընկնելով:
ԱԺԹ 87

1775

Փող ես ուզում, քեզ փող տամ,
Վսակի տամ, վոչ թե հոգ տամ.
Թե դըրան էլ հավան չես,
Հոդիս հանեմ, քեզ փոխ տամ:
ՀՄԻԲ 17

3· Թե դըրան էլ դալիլ չես:
ՏԻ 156

1776

Ենար աչուն լ, Մայրամ,
Ցաղմեն նըխչուն լ, Մայրամ,
Իմ ջան քյո ջանին հայրան:
(Մայրամի յերդ) ՔՄՎ 27·
Վարիանտը ՎԺԵԲ 16

1777

Հա՛ դնա, դընա, հեռըդ եմ,
Ձուտա ու չաքմա վոտիդ եմ,
Մահ աղուխ թաթիդ եմ,
Փունջ մանուշակ ծոցիդ եմ:
ԱԺՍ. 56

1778

Գընա, դընա, հեռիդ եմ,
Կարմիր խընձոր դառիդ եմ.
Դու ինձ եսաեղ չես Թոդնի,
Վորտեղ երթաս՝ մոտիդ եմ:
ՀՄԻՍ. 16

www.naregatsi.org

234· Ալ խընձոր եմ, դուխդ եմ.
Ինձի եստեղ չըթողնես,
Ուրտեղ երթաս՝ մտովդ եմ:
Ա.Ղ 134 հա.

Ժ֊ 23· 60· Ա.Ղ 439 միայն առա-
ջին յերկյակը:
Տես՝ Ծաղկեվանքու ձորեն եմ:

1779

Քու սերովդ ձեռից հիվանդ եմ,
Ջեր դըռանը կապած բանդ եմ.
Թե վոր քեղ ինձանից կ'ուզեն,
Իմացիր՝ աշխարհք կըքանդեմ:
Տ֊ 237

1780

Դու իմ սրտին դուր եկար:

2999

Ձիթ մինթանես թարզու կար,
Ժիր տղա յես, արի տա՛ր.
Թե վոր կ'ըլնես ինձի յար,
Գնա թալին, արի տար:

1 2· Ձիթ արխալուղ թարզու կար,
Լավ տղա յես, արի տար:

1 2· Ձիթ մինթանես մանդր կար,
Թե սիրել իր, արի տա՛ր:

3000

Ասուած կ'անի մեղ երկու ճար,
Նչան կուտան երկու հազար.
Վոչ հազարն պիտեր, վոչ երկու հազար,
Սրտով սիրածին մարդ էլ չի խաբար:
ՎՍՒ 48

3001

Երթանք Աղթամար,
Առնենք սախթ, քամար,
Քո մեջաց համար:
ԲՆԱ. 583

3002

Աչքերդ թուխ, ունքդ կամար,
Դու ծնվել ես ինձի համար,
Մեջդ ունես ոսկե քամար:
Տհ 167

3003

Ինչպես երկնքի կամար՝
Կապել ես ոսկե քամար.
Ոխտը ռանդ դուշն ունես,
Վո՞ր մեկն ե ինձի համար:
Տհ 245

3004

Երկինքն ե կապել կամար,
Դու ունես ոսկե քամար.
Հախ սիրոջ կամեցածն ե,
Դու դրված ես ինձ համար:
Տհ 190

3005

Ամպել ա կամար, կամար,
Կապել ես ոսկե քամար.
Դու ուրիշ մեկը մի՛ անի,
Մի ջան ունեմ քեզ (վ. իր) համար:
ՀՄՆԱ. 23

3—4· Ոսկե քամարիդ մեռնեմ,
Ասուած պահե քեզ ինձ համար:
1—4· Ամպել ա կամար կամար,
Ցես կըմեռնեմ քեզի համար:
ԿԺԵ 37

3006

Արեվը կամար-կամար,
Կապել ես ոսկե քամար.
Հիսուն որ պաս եմ պահե(լ)
Իմ աղբոր ճամբի համար:
ՔՀ 160

4· Ցարիս ճամփի համար:
ԱԳ 92

4· Քու ազիզ խաթեր համար:
Տհ 248

4· Իմ յարի ճամփի համար:
ԱԳ 260

***

Արեգակը կամար-կամար,
Մեջըտմդ ոսկի քամար,
Ցես մեռնիմ աչք-ունքիդ խամար.
Հիցցուն որ պաս եմ պահե
Քո ազիզ ջանիդ խամար:
ՀԺԵ 133

Աստղներ կամար-կամար,
Մեջքս կա ոսկի քամար.
Իցցուն որ պաս եմ պահեր
Քու ջահիլ ջանի խամար:
ՀԺԵ 124

www.naregatsi.org

***

Լուսնիակ կամար-կամար,
Ցես նստած եմ քեզ համար.
Հիսուն որ պաս եմ պահե
Քու ազիզ խաթեր համար:
ԹՄԿ 121

3007

Արեվը կամար-կամար,
կապել ես ոսկե քամար.
Ոսկիդ ինձի չի խարի,
Մնացել եմ յարիս համար:
ԲՍ 131
4· *Մնում եմ յարիս համար:*

***

1—4· *Արեվն ելե կամար-կաբար,*
Մեջդ ես կապե ոսկե քամար:
ՎԺԵՔ 17

3008

Լուսնիակը կամար-կամար,
Քեզի կ'ուղեմ ինձի համար,
Բարակ մեջքիդ ոսկի քամար:
ՋՔ 20

3009

Լուսնիակ կամար-կամար,
Ցես մեռնիմ քեզի համար.
Սիրականս ինձի չեն տար,
Ատուծու խաթերն համար:
ԱԳ 94

3010

Լուսունկան կամար-կամար,
Ցես կուլամ քեզի համար.
Բլըվիր, յեսիդ նայիր,
Ատուծու խաթերն համար:
ԲՆՄ. 624

***

Լուսնկան կապեր կամար,
Ցես կուլամ քեզի համար.
Մեկիկ մի սիլա եկու՛ր,
Ատուծու սիրուն համար:
ՀՄ. 462
3 4· *Ոլըվիր, յեսիդ նայիր,*
Ջիգարիդ խաթերն համար:
ԲՆԳ 677

3011

Ժամ չինին կամար-կամար,
Սավդա յեմ քեզի համար.
Աղչի, ատավածդ սիրես,
Քե պահա ինձի համար:
Ա.Ե 196· ԲՍ 157

3012

Արեվն ելավ կամար-կամար,
Ջուլոն կապեց ոսկե քամար,
Ցես կը մեռնիմ քեզի համար,
ԺԺ 25· ՀՄԽՄ. 38
3· *Քեզի բերեմ Ջանիս համար:*
ՔՀ 173

***

Արեվ ղարկեր կամար-կամար,
Մեջդ կապիր ոսկե քամար,
Քեզի սիրի Ջանիս համար:
Ա.Ք 442
1—3· *Արեվն առեց ամար-կաբար,*
Քեզ պահեր եմ Ջանիս համար:
ՀԺԵ 44

***

Արեվն առեց կամար-կամար,
Քո մեջք կապիր ոսկե քամար.
Արեվն առեց կամար-կամար,
Քեզ սիրեցի Ջանիս համար:
ՀԺԵ 53

3013

Արեվն ելավ կամար-կամար,
Ես լուրն ելավ մեկի համար.
Ել մենք չունինք միխթարանք,
Երկնուց պետին ընկանք, կորանք:
ՌՄ 56· ՏԽ 95

www.naregatsi.org

3014

Սեվ ունքեր կամար-կամար,
Ցեղ կ'ապրիմ քեզի համար.
Ոխտը տարի սեվ հագա,
Ջու ալիզ խաթիեր համար:
ՏԽ 252· ԲՍ 127

3015

Արեվը կելա ու կամար,
Ցես կը մեռնիմ քեզ համար.
Ցոթը (վ. ոխտը) տարի դիմացա,
Մենակ քու խաթիեր համար:
ԱԴ 175· ՌՄ 129·
ԲՍ 136
2· Դու մի սար ինձի համար:

3016

Լուսնակն եր կելա ու կամար,
Ջուր մեռներ աղբոր համար.
Ոխտն որ ծոմ ու պաս պահեմ
Ղարիբ ճամբորդիս համար:
ՆՀՋ 87

2 3 4· Ջիրը մեռնի աղբոր համար,
Հիսուն որ պաս եմ պահել
Իմ յարի ճամփի համար:
ԱԺՄ 54

3017

Ակռքերդ. դամար-դամար,
Կապել ես ոսկե քամար.
Ասալած Ջող քեզի պահե
Տրորված ջանիս համար:
ՏԽ 246

***

1—4· Կապել ես ոսկի քամար,
Ասալած Ջող տա քե խազար:
ԾՎ 52

3018

Բարակ մեջքիդ զարկեր ես քամար,
Կոտնցիր սրտիս ի հար:
ՀԺԵ 62

3019

Ցարս կապեր եր քամար,
Սավդա յեմ քեզի համար.
Իմ յոթ տարվան աշխատանք
Կըխարջեմ քեզի համար:
ԱԵ 196

3020

Ա՛յ ուրմա, ուրմա յար,
Ֆյաքյուլդ բուրմա յար.
Գնացել ես այանը, յեկել,
Ակռաթակդ լիքը խուրմա, յա՛ր:
ԱԴ 115
4· Փեչերդ լիքը խուրմա, յա՛ր:

3021

Աղջի, անունդ Նիգյար,
Սիրածդ ա խառազ դուրդյար.
Ով վոր մեզի բամբասա,
Գյուլլենը դիպի ջիգյար:

3022

Ջառկին ասել եմ քեզ «յար»,
Բերել եմ ոսկե քամար.
Ջու աղբոր հերն անիծած,
Ջեզ կ'ուղե յադի համար:
ԲՍ 139

3023

Սոնա յար, սոնա յար,
Սոնա սիրուն, սոնա յար:
(Կրկնակ)
ՀՄԽՄ. 40· Վ.ԺԵ 14

3024

Կանչում եմ՝ յա՛ր, արի՛, յար,
արի, յա՛ր,
Սեվա՛վոր, մուշն ընկավ, տուն
արի, յա՛ր:
ԿԺԵ 33

***

Ցար, արի՛, յար, արի,
յարալու յար.

www.naregatsi.org

Մութն ընկավ, տուն արի,
անջիկյար. յար։
(Կրկնակ)
ԱԴ 161

1· Կանչում եմ, կանչում եմ՝
յար, արի, յա՛ր։
ՀՄԽԲ 9

***

Տուն արի՛, տուն արի՛, տուն
արի, յար,
Մթնել ա, տուն արի՛,
անջիկյար յար,
Կանչում՝ յար, արի՛, յարալու յար։
(Կրկնակ)
ՌՄ 102· ՏԽ 212

3025

Վառա, դնացի յա՛ր,
Կարոտս մնացի, յար։
(Կրկնակ)
ՏԽ 217

3026

Ա՛յ սար ու սեյրան յար,
Մարալ ու ջեյրան յար։
(Կրկնակ)
ՌՄ 127· ԱԴ 168·
ՏԽ 182

3027

Նանան յար, դյուլում Նանան յար,
Ես ի՞նչ նազլի Ջանան յար։
(Կրկնակ)
ՏԽ 218

***

Նանան յար, հա՛յ, Նանան յար,
Ես ի՞նչ սիրուն Ջանան յար։
(Կրկնակ)
ՏԽ 259

3028

Ցամա՛ն, յամա՛ն, յար,
Նարրմ, նարրմ յար,
Ֆյոհնա յարրմ յար·
Նշանլու յեմ յես,
Սավդալու յեմ յես,
Սալդըցու յեմ յես։
(Կրկնակ)
ՏԽ 115

3029

Ո՛յ, ո՛յ, իմ անուշ յար,
Ձիս երեցիր դաբեղար։
(Կրկնակ)
ՏԽ 201

3030

Ցար, յար, յար, յա՛ր,
Ընկել եմ սար, սար,
Ինչպես խելագար։
(Կրկնակ)
ՀՄԽԲ 10

3031

Աղջի՛, անունդ Ձինար,
Մախ անեն սինին ա՛ռ.
Հորեդ մորեդ լզին առար,
Ձեռքդ բռնեմ, ելլեմ սար։
ԱՋ 387

1 3 4· Աղջի, անումդ Ելիզար···
Հորն ու մորեդ լզին ա՛ռ,
Ձեռք ձեռքի տանք, ելնենք սար։

3032

Ա՛յ բալա Հեղնար,
Շատ կերար, դեղնար,
Ինձանից լեղվար,
Գյուլ Հեղնար Ջան։
ՋԲ 39· ԺԽ 20

***

Արի, յար, արի· խոռվ մի՛ մնար,
Տես՝ Արի, յար, արի, խոռվ մի՛
մնա։

www.naregatsi.org

3033

Հա՛յ առար, առար Մանուչար,
Սեվ հավի կառար Մանուչար.
Թե ինձանե ձեռ չքաշես,
Ցորդան–դոշակ վոչ մաշես։

3034

Ոչ չծոնա, պիտա պար,
Ոտներ կոտրի քիանա քար,
Կարի ընտրա ճար ու վար։
ՄՋ 72

3035

Ռեսի կալ բոլըրպար,
Սավկուլա ի մեջ կուխադար.
Ծամեր թալուկ իր յետեվ,
Կու թռվռեր չատ թևեվ։
ՏԽ 202

***

1—4. Հաչոնց կալը բոլորպար,
Կումար մեջը կըխադար։
ՀՄԽԲ 28

3036

Համբարձումին մոնենք պար,
Ցես քեզ, դու ինձ ասենք «յար».
Ցես չան ասեմ, դու՝ դյուլում,
Ուրախանանք միասար։
ԲՍ 158

3037

... Ինչո՞ւ ինձ սիրեցիր, խաբեցիր,
չատար,
Մեթե յես քեզի մոտ չեղա
ընդունակ.
Ինչո՞ւ ինձ սիրեցիր, խաբեցիր
չատար,
Մի քուռը դցիր, սիրտս վառեցար։
ՍԲ 335 հա.

3038

Բարեվ տվի, ինչո՞ւ չառար,
Ինձի տեսար, չուտ յեղ դառար,
Իմ սրտով սիրած յարըս,
Ջանից թեղարած յարըս։
ՏԽ 181

3039

Գյուղում, գյուղում Գիլասար,
Բուրդ եմ մանել հավասար.
Երնեկ կըտամ են որին,
Վոր եկար, հետս խոսար։
ՍՀ 142

3040

Գյուղըմ, գյուղըմ Գյուլասար,
Բուրդ կըմանեմ հավասար.
Ես չենումը երկու հարս կա,
Մինը քանց մինը յասար։
ՍԳ 270· ԲՍ 143

3041

Գյուղում, գյուղում Գյուլասար,
Գուլք եմ մանել հավասար.
Ցես մի չեղլիկ յար ունեմ,
Մի աչքը թեքն ա, մինը յասար է
ՍԺՍ. 51

3042

Գիտեմ, ասուլած, դու տեսար,
Աղաչեցի՝ խմացար.
Ցես վոր փեշեդ կախվեցա,
Ինչի՞ դու չգիացար։
ՍՋ 385

3043

Ընկել եմ, ա՛խ, սարե սար,
Դարման չունիմ, վոչ մեկ (վ. մի) ճար.
Ուզում եմ դամ քո վոտը,
Առաչս ծով և սարե սար։
ՍՆ 202

3· Ուզում եմ դալ քու վոտքը։
ԲՍ 142

www.naregatsi.org

3044

Գնա եղի՛ դեմի սար,
Սեր ու սավդես հետդ տար.
Քեզի եդտեղ գցողը,
Բալքի ըլնի դարբեդար:
ՏԽ 254

3045

Ցել ու երթանք կռընկու սար,
Քոչկ մի չինենք, մտնենք հիսար.
Թող գա վըր մե չահն Խոնդքար,
Ուզե հարյուր, կուտամ հազար,
Բազե՛, քո թուխ աչքիդ համար:
ՀՀ 327

***

Ալի երթանք կռընկու սար,
Բերդ մի չինենք, մտնանք խսար.
Հարուր (վ. հարիր) կ'ուղեն,
կիտամ հազար,
Թուխ աչքերուդ խաթրու համար:
ՌՄ 98. ՏԽ 233 հմ.
2 3 4. Կուզես հարուր, կիտամ
հազար
Թուխ աչքերուդ խաթրու համար:
Շեկ ունքերու խաթրի համար:
ԱԸ 442. ԺԽ 73

***

Ելեք Երթանք Կռունկու սար,
Շինենք քյոշք մը, մտնենք հիսար.
Ճավպելիքի խաթրի համար,
Հարիր ուղե, հազար կիտամ:
ԲՆԱ 740
1—4. Քոչկ ըմ (չինենք), մտնենք
խսար,
Կուզեն խարիր, կուտամ խազար:
ՔՄՎ 23
Տես՝ Դու ո՞ւստա կը դաս են Ըընըսա,

3046

Երկանքս կ'աղա ճավար,
Դուշման, քո աչքը խավար.
Ցես սիրել եմ, յես կ'առնեմ,
Ջանամ թե չունի տավար:

***

Ջաղացս կ'անի ճավար,
Դուշման քու աչքը խավար.
Սիրել ենք, իրար կ'առնենք,
Թող տանեն յոթը (վ. ոխտը)
տավար:
ՌՄ 126. ՏԽ 241.
ԲՍ 155

***

Ջաղացս կ'աղա ճավար,
Դուշմնիս աչքը խավար.
Ցարեն վոր կ'առնենք խաբար,
Թող տանեն ոխտը տավար:
ԱԳ 96

3047

Ես դիշեր կ'անցնի դժվար,
Կ'երթա բարակ ու երկար.
Իմս վոր տի ու վախով
Քոնդ լ՞նչպես կ'անցնի, յար:
ՀՄԽԱ. 9

1 2 4. Ես դիշեր դժվար անցավ,
Բարակ ու երկար անցավ...
Քուկդ լ՞նչպես, յա՛ր, անցավ:

Տես՝ Ես դիշեր մթնեց, գնաց:

3048

Ալի գառը սարը տա՛ր,
Մի որ եվ դո՛ւ չորան գառ.
Տված խոսքդ կատարի,
Ինձ մի՛ անի դարբեդար:
ՏԽ 171

3049

Շահ–սանամ (վ. Ա՛խ) ոտար,
ոտար, ոտար,
Շեկ (վ. չան) ապի դարդին
վարամոտար:
(Կրկնակ)
ԱԴ 161. ՏԽ 219

www.naregatsi.org

***

Ոտար, ոտար, ոտար, ոտար
Ցես քու դարդեն, վարամոտար,
ԿԺԵ 50

3050

Վարդն է բացվե Վանա քաղքի
եղեստար,
Աստված սիրես, մեկն որսկվի,
ձիկը տա՛ր։
Ի՛յա նազերով, ջյա խորոտիկ,
դու վի՞րն ես,—
Աչխար դիտի ալամ դիտի՝
դու իմն ես։
ՎՍՍ. 41· ԺԽ 32

***

Վարդ մի բացվե Վանա խորոտ
եղեստար,
Աստված սիրես, մեյ մ'ել որսկվի,
ձիկ ել տար։
Իրիցա յես, էլ դո չկա ձիկ ել ճար,
Ծո՛ խորոտիկ, ծո՛ ժուռ ծձեր, դու
վի՞րն ես,—
Աչխար կ'ասեր, ալամ դիտեր՝
դու իմն ես։
ՆՀԳ 48

3051

Ի՛յամբախ Ստամբոլ, ավեր
Սքանչտար,
Տարավ իմ կարիբ, չիբե մեյ
խաբար։
Գեթմա, կարի՛բ, գեթմա։
ՀԺԵ 50

***

Ի՛յամբախ Բեյողլի, պլե՛ր
Իսկիւտար,
Վար չաներ իմ յար վեր ձիկ
դարբեղար։
ՎՍՍ. 61· ՏԽ 132

***

Ի՛յամբախ Բուլանուխ, վլե՛ր
Իսկիւտար,
Իմ կարիբ չերթեր, ձիկ աներ
դերբեղար։
ՀԺԵ 45

Տես՝ Պզտուր ջուր կուգեր
սարերաց Թեվեն։

3052

Ա՛յ Արազ, ջուրդ վարար,
Ցարաբ յարիս չտեսա՞ր։
Ցես չհասա մուրազիս,
Ցարաբ կարոտս առար։
ԲՍ 126

3053

Ա՛խ, Արազն է չատ վարար,
Դուրս ելնելու չունիմ ճար։
Ցա՛ր, ոսկի ծամդ բաց Թող,
Ֆաչե՛, ինձի քեզ մոտ տար։
ՀՄԽՍ. 35

2· Քեզ մոտ գալու չունիմ ճար։
Տես՝ Արազ գետ մեջ ձիկ,
մեջ քեզ։

3054

Արար–վարար, չատարար,
Սարին Թող կիպա վարար։
Եդ տեղով դո՞րն ես գնում,
Ցետ դառ յի՛կ, ուչս տարար։
ՍՋ 377

3055

Աղջի՛, բոլ է նեղացար,
Գյուլգազ երեսդ բացար։
Ես խոսքերն վոր յես ասի,
Դու զլում իր, դիմացար։

3056

Ասճապ ինչի՞ հեռացար,
Խելքդ գլխիդ մոռացար։
Խելքդ գլխեդ կորել եր,
Ցարդ քեզնեն ճորել եր։
ՀԺԵ 117

www.naregatsi.org

3057

Մեր դռանը ագի քար,
Ցես լալիս եմ քո համար.
Սիրածս ուրիշն առավ,
Մութ և աչխարհն ինձ համար,

3058

Տեղ եմ գցել գլամքար,
Մեջն եմ գրել քալանթար.
Ցես մի բուռը լեզակ եմ,
Բաղերդյանի տեզակ եմ:
ՓՀ 158· ՏԽ 248
2 3 4· *Մեջն քնողը քալանթար.*
Ցես մի պուճուր լեզակ եմ,
Քալանթարի տեզակ եմ:
ՍՓ 346

3059

Ձեր դռանը կըլնիմ նոքար,
Թաք ինձ մի՛ պցի քարևքար.
Վաղա կասե՛, մոռա արի,
կամ թե ինձ էլ քու մոդ տար,
ՏԽ 81

3060

Ադրբի ղլուխ մարմար քար,
Ինձի արա քեզի յար.
Ադրբի՛, ինձի վառեցիր,
Ինձ մի՛ թողնի մինուճար:
ԿԺԲ 27

3061

Ժամի տակի մարմար քար,
Ցես չեմ առնի զարիբ յար.
Թե վոր առնեմ զարիբ յար,
Ոսկին զարկեմ սարև սար:
ՀԺԲ 126

3062

Լուս պերնզման մարմար քար,
Ցես չեմ առնի զարիբ յար.
Զարիբ յարն ինձի վուչ է,
Գեղի մեջինն անուչ է:
ՀԺԲ 120

1 3 4· *Ժամի դուռը մարմար քար...*
Զարիբությունը վուչ ա,
Սրտով սիրածն անուչ ա:

Ջուրըն առա, ելա ասր,
Ցես չի առնեմ զարիբ յար.
Զարիբ յար աչքին վուչ եր,
Գեղի մեջին անուչ եր:
Չես՝ Ա՛յ նանի, քու մերուքեն:

3063

Ժամի դուռը մարմար քար,
Ցես չեմ առնի զարիբ յար.
Թևվերես բերանն ոյա,
Ցարս Թամադի սոյ ա:
ՍՓ 343· ԲՍ 144

3064

Ժամի դռան կարմիր քար,
Ինչ եմ անում զարիբ յար.
Ժամի դռան արևվը,
Ձեմ ուզում քո բարևվը:

***

Բարձր կաուր մանդր քար,
Տես՝ Տան քով անցա, ճրագն եր վառ:

3065

Դու կայներ ես Տիրամոր քար,
Կ'ելլես կ'երթաս, մանես կաքավ:
ՀԺԲ 49

3066

Դուն ելել ես, կ'երթաս ի բեր,
Վոչ բերն եղնի, վոչ բերատեր.
Ինձ չտեսնի քո հերն ու մեր,
Ինձի չտներ ես զարդին տեր:
ՍՓ 135

Դու ելեր եր, կ'երթեր ի բեր,
Վոչ բեր եղնի, վոչ բերատեր.
Ինձ չտեսներ քու հերն ու մեր,
Ձիս ի չեներ ես զարդի տեր:
ՀԺԲ 94

www.naregatsi.org

Դու ելեր ես, կ'երթաս ի բեր,
Ինձ չտեսներ քու հերն ու մեր.
Վոչ բերն եղներ, վոչ բերի տեր,
Վոր պիս չեներ ես դարդին տեր:
ԱՀ 443

***

Ամար ելե՝ կ'երթա ի բեր,
Վոչ բեր եղներ, վոչ բերատեր.
Սեվ մի կապեն քու հերն ու մեր,
Ընձի չենեն ես դարդի տեր:
ՀԺԵ 77

Ամանեն ելեր՝ կ'երթա ի բեր,
Վոչ բերն եղներ, վոչ բերի տեր,
Վոր պիս չեներ ես դարդին տեր:
ԱԵ 194

Եամար ելե՝ կ'երթա ի բեր,
Դիլբար ելե՝ կ'երթա ի բեր,
Ձիս ի չեներ ես դարդի տեր:
ՀԺԵ 99

Նաներ, նաներ, նաներ Զուլո,
Վոչ բեր եղներ, վոչ բերի տեր,
Ընձի չեներ ես դարդի տեր:
ՀԺԵ 97

Տանեն ելավ, կ'երթեր ի բեր,
Ինձ չտեսներ, իւր հեր ու մեր,
Ձեներ դիսիկ սավդա անտեր,
ԲՆԳ 650

***

Դու(ն) ելել ես, կ'երթաս ի բեր,
Վոչ բերն ընկնի, վոչ բերատեր,
Ինձի թողիր խեղճ ու անտեր:
ՌՄ 50· ՏԽ 86·
ԲՆԲ 364

***

Արի երթանք են բերն, են բեր,
Վոչ բերն եղներ, վոչ բերի տեր,
Ձես ալ տղա յեմ սիրո տեր:
ՊՎ 96

***

Դու ելել ես, կ'երթաս ի բեր,
Վոչ բերն ընկնի, վոչ բերատեր.
Տո՛ պատիկ հարս, նոր սիրո տեր,
Ադրի քու հեր, ջուխտակ աղբեր:
ՌՄ 67 հա.

Դու ելել ես կ'երթաս ի բեր,
Վոչ բերն ընկնի, վոչ բերատեր,
Տո՛ պատիկ հարս, նոր սիրո տեր:
ՔՀ 175

1 3 4· Տնեն ելար, կ'երթաս ի բեր...
Դու պատիկ հարս, նոր սիրուտեր.
Ինձի թողիր խեղճ ու անտեր:

3067

Արի երթանք են սարն ի բեր,
Վոչ բերն եղներ, վոչ բերի տեր.
Ձես եմ մենակ քո սիրու տեր,
Մենակ յես դու մոռնանք մեր հեր:
ՎՄԲ 42

***

Աղբեր, աղբեր, ջան աղբեր,
Տես՝ Գինի, գինի, գինատան:

***

Հանես աղբեր, ջան աղբեր,
Տես՝ Տո՛, ողա, ատ՛ ջան ողա:

3068

Աղջի՛, ապրի քու աղբեր,
Ինձի դու սաղ ջուղար բեր.
Քե համար գարիբ դուչ եմ,
Տնե, տեղե բնավեր:
ՏԽ 235

3069

Գալիս հետդ խիար բեր,
Քեզ պահել եմ կաթի տեր.

www.naregatsi.org

Դարլու վլալ եմ եկել,
Աբի ինձ հետ մի տեղ կեր:
ՏԺ 211

3070

Դուբան դաշտեր զարկեր բեր,
Ջաղջիկն իման մաքուռ տեր:
ԲՆԳ 122

3071

Ջաղջի առուն ջուր կիզեր,
Աղջիկ ապին դուր կիզեր.
Ջաղջի քարը տաշուկ եր,
Աղջիկ ապին մաշուկ եր:
ՀԺԵ 80

3072

Հարսավ քամին չնկընդեր,
Լուծն ու սամին սարևն կիզեր:
Վերցե՛ք խուրջին, երթանք քարճին,
Դիլբար մենք Վանա կիւրջին:
Դիլբար նոտե մուխաու ցրվքին.
Երթանք մրա խադի մուֆթին,
Իդան կարին դիլբարի դին,
Դիլբարի դին՝ երկու մաքին:
ՀԺԵ 93 հա.

Լուծն ու սամին սարևն կիզա,
Վերցե՛ք խուրջին, երթանք քարճին:
Դիլբար նոտե մուխաու ցրվքին,
Դիլբար մենք Վանա դիւրջին:
Աբնք երթանք մրա դադի մուֆթին,
Իդան կարևն դիլբարի դին,
Դիլբարի դին՝ երկու մաքին:
Երկու մաքին խավուրմա,
Ուտա դիլբար, խալմնա,
Պադ մի խոտա, կշտանա:
ՀԺԵ 76

3073

Ետոր թող ձյուն դըներ,
Վեր ձյան կարկուտ դըներ,
Իմ յար թող տուն դըներ,
Ձիկ անուշ քյուն դըներ:
ՎՍՍ. 61

Տես՝ Փչեցեք, հովեր, սարեր
ձուն բերեք:
Համառ. Ամպել ա, ձուն չի գալի:

3074

Դարի տըկեն մուխ կու դըներ,
Աղջիկ լաճուն հյուր կու դըներ.
Սերած սերածին դյուր կու դըներ,
Ցարոջ աչիչ ջուր կու դըներ:
ՎՍԲ 44

3075

Բարձի տըկեն խոտ (հոտ) կու դըներ,
Տեղն խակիցի (ձրեցի) փոնթ կու
դըներ:
Կաքըվնե՛ր, կաքըվնե՛ր,
Ելեք երթանք ջաղցրներ:
ՎՍՍ. 45· ԺՀ 87
Տես՝ Տեղը քցեմ, փոնթ կըղա...

***

Ժամի դռնեն դուս կու դըներ,
Տես՝ Ժամի դռնեն դուս կը գաս:

***

Ջաղցի առուն ջուր կու դըներ,
Տես՝ Բարձր սարևն ջուր կուգա:

***

Ներխուն միզար, ալ բնդեր,
Տես՝ Ներխուն միզարով աղջիկ,
Տես՝ Ղոչավանքի դչերը:

3076

Ի՞մալ ենիմ ծանրիկ դարդեր,
Ջուն ա դրեր աշնան արտեր...
Ի՞մալ ենիմ ծանրիկ դարդեր,
Մկներ կերան աշնան արտեր.
Ի՞մալ ենիմ ծանրիկ դարդեր,
Ջուն ա դրեր բանձրիկ սարեր.
Ի՞մալ ենիմ ծանրիկ դարդեր,
Հալեր թափեր մարմար քարեր:
ՀԺԵ 102

www.naregatsi.org

***

Ես մեր Նիգյարի դարդեր,
Կարկուտ տարավ մեր արտեր:

3077

Ջուրն ա ընկեր եղ կորդեր
(քորթեր),
Աստված պահե եղ խորդեր.
Ջուրն ա ընկեր չաղցըներ,
Աստված վերցնե աղջրկներ.
Ջուրն ա ընկեր առվրներ,
Աստված ափե պառվրներ:
ՆՀՋ 96

Տես՝ Ջուրն և ելի առվրներ:

3078

Յես սարեն կու գայի, չարակս
բուրդ եր,
Լեզուդ ընձի համար վառած
քուքուրթ եր,
Բոյըդ գարդու գամիչ, երեսդ
թուղթ եր:
ՏԽ 96

2 3· Ա տունը մի՛ մտներ, չատ
դուլում մուխ եր,
Բոյն եր գարդու գամուչ, աչքերը
թուխ եր:
ՋԲ 21

3079

Ախուչի ծառ, գիլազ եր,
Գիշեր անքուն երազ եր,
Տաչին մարալու, տաչին մարալու:
ԾՎ 51

3080

Երկնուց ընցան կազեր,
Աչըդ չալեց ուր սազեր,
Ձեմ կանա քաչե նազեր:
ԾՎ 52

3081

Մեր դռան սուրբ գազեր,
Իմ յարոջ չեկիկ մազեր.
Իմ յարոջ գոչի ալը,
Ի՞նչ կ՚անեմ գունդի մալը:
ՍՀ 137

3082

Շեկ չեկ քու մազեր,
Քաչեմ քու նազեր.
Ջամիչ եմ բերի,
Արի նամի՛, կե՛ր:
ՀԺԵ 88

3083

Աղջի, անուչիկ նազեր,
Խելքս տարավ քու մազեր:
ՀՄԽՄ. 42
1 2· Աղջի՛, անունըդ եր Նազեր,
Խելքս տարավ եղ քու մազեր:

3084

Ջաղցի առուն ավազ եր,
Աղջիկ լաճուն կավազ եր:
ՎՄՄ. 46
2· Աղջիկ լաճուն այվազ եր,
ԾՎ 4

***

Սարերն խլին ավազ եր,
Իմ յար փաչին գավազ եր:
ՀԺԵ 44

***

Անտեր առուն ավազ է,
Աղջիկ խորթին մարազ է:
ԲՆԳ 122

3085

Մուտս մանուկ ջհել եր,
Ինչ որ հագեր՝ կը վիլեր.
Հագ լո լո լո քոչարի,
Հագ լո լո լո քոչարի:

www.naregatsi.org

Թևերմէլ արջ լե բաշ եր,
Կայնե սարին կ'իշկիեր.
Հապ լո լո լո...
Պառավ ճնճղներ քշեր,
Կ'ըսեր գըդըլ անուշ եր.
Հապ լո լո լո...
Անարի թուլեն քաղցել,
Պաոի թուղթիր, իրիցի,
Պոշն եր կեռի հակ ընձի:
Մսից պնենք վեր կոճին,
Կարենք ճամբենք ժամկոչին:
Հապ լո լո լո քոչարի:
ՀԺԵ 88

3086

Վավիլեր Զուլո, վավիլեր.
Քո տանողի տուն ավիրեր,
Շեկ ծամեր տախտան կ'ավիլեր:
ՀԺԵ 55

3087

Հագեր ե կարմիր սոլեր,
Ընկե անվերի չոլեր.
Քանց բալու մեղր անուշ ա,
Ման կը գա քոչա–քոչա:
ՏԻ 202

3087

Աստավամեան բարի լուսուն կ'լսե եր,
Կարմիր խնձոր կանաչ թաֆլեն
կախ(ած) եր.
Աստված իմ սրտի ուզած յար
պահեր:
ՎՍՍ. 45

3088

Հարս մի բերինք, չախ եր,
Դուռ ու պրկից ուրախ եր,
Հարսի հոյ տուն քամբախ եր,
Զորնք դիմաց ճամբախ եր:
ՀԺԵ 78

3089

Տանեն եյավ, ձյուն կըլորևեր,
Իմ յարն ու գըռամ յես չեմ վոխեր:
Ինչ խորոտիկ, ինչ սիրուն,
Հազար երնեկ քու տիրուն:
ԲՆԳ 650

***

Զուն թալի, սարեր լորևի,
Զիմ յարն ու գռամ չեմ վոխի.
Յարոջ սենջին չեմ կոխի:
ԱՋ 72 հա.

***

Զուն եկի, սարեր լորևի,
Շուն յարուկ գամալ վոխի:
ԲՆԳ 123

3090

Մայրամ Թոնիր վառեր, տներըը
մուխ եր,
Աչվին ծարուր քաշեր, ընքուներ
թուխ եր.
Մայրամ, մի՛ լար, աչվիդ
կ'ավերվի,
Քեղի տանողին անիկն ավրվի:
ՀՀ 330

3091

Կոպքա սարը վրած եր,
Շուշաբանդով չարած եր.
Ի՞նչ անեմ շուշաբանդը,
Հերը վորդուց հանած եր:

3092

Զաղչի դոներ տաշած եր,
Յարիկս սրտիս խաստած եր.
Զաղչի տուն ջուր կու գըներ,
Աղջիկ լաճուն դուր կու գըներ:
ՀԺԵ 44

Տես՝ Բարձր սարեն ջուր կուգա:
Դարի տըկեն մուխ կու գըներ:

3093

Զաղչի դոներ տաշած եր,
Դուռն վրեն ներկով նախշած եր,
Յարիս անուն վրեն գրած եր:
ՀԺԵ 81

www.naregatsi.org

Տես՝ Ջաղացիս դուռը տաշած։
Ջաղացիս դուռը տաշած է։
Ժամի պատը տաշած է։
Ջաղցի դռներ տաշուկ եր։

3094

Սիա փուչին դրած եր,
Ղուշնի բարձը դրած եր.
Ֆյաթամ երեք, ապաներ,
Յարս ինձնեն ջրած եր։
ԱԳ 97

3095

Երկնուց երեսը լուսունկան բակ եր,
Ձերմակ ծոցուդ միջեն ծծերը խակ եր,
Ունեյիր աչվի, ընքվի, համրը կը քակեր.
Տերը նասիբ ըներ՝ յես քեզ առնեյի,
Ցոքին որ, յոքին ղիշեր քուդ պատկեյի,
Ճաշուն հիվանդ, որաբարկին մեռնեյի։
ԲՆՍ. 776

3096

Ղոի քարը տափակ եր,
Եզ չան գյադեն քափակ եր.
Մեր ու քուբ, մի՛ մեղբերք,
Աղջկութենն վափագ եր։
ՀԺԵ 113

3097

Աղջկան աչք խետ ինձիկ եր,
Ինձի խնձոր կ'որոխկեր.
Բալքի յես տանիս պատկի,
Բալքի յես ջիւղա կ'ծախի։
ՎԺԵՒ 10

3098

Մատաղ եմ արել, արի կեր,
Սրտով սիրածիս հետդ քեր.
Առանց ներան կերած հացըս
Կուլ չի գնում իմ բկես վեր։
Տի 223

3099

Կաքնով եկիր, արի կե՛ր,
Լիքը աղուխ հետդ բեր.
Լուսադեմին իրար հետ
Ուռնք թազա կաթի սեր։
Տի 193

3100

Գեղին վերեվ հերկեր–մերկեր,
Շապիկդ սուրմայով ներկեր,
Սիրեր եմ, չեմ կրնա թարկեր։
Արի խոսանք, ջրած Նազլու,
Ք'ընց բիւլբիւլն ել ձենով Նազլու։
ՋՔ 22

Գեղի վերեվ հերկեր–մերկեր,
Շապիկդ կաբմիր ես ներկեր,
Սիրեր եմ, չեմ կրնա թարկեր։
Արի խոսանք, խորոտ Նազլու,
Դու ք'ընց բլբուլ ձենով Նազլու։
Տի 89

Մեր սան վերեվ հերկեր–մերկեր,
Աչվրնեն սիրմելի ներկեր,
Սիրել եմ, չեմ կրնե թերկել։
Աղջկե Մանան, ո՞ւմ տանեն ես։
ԲՆԲ 525

Գեղին վերեվ, հերկին ներքեվ,
Շապկիկս սիրմեն իմ ներկեր,
Սիրեր իմ, չեմ կրնար թարկեր։
Աղվոր նանոյ, նանոյ, նանոյ,
Ցես կուսիրեմ քեզ ամեն որ։
ՀՍ. 457

3101

Սրտիկ սիրեն անդուկ եր,
Կոտրավ են սիրեն անդուկ,
Թռավ են կարկեր ճնճղուկ,
Թռավ, բանձր տար երավ։
ՔՄվ 31· ԺԹ 96
Տես՝ Քո ծոց ձիկ տալվի անդուկ։

3102

Ջաղցի դռներ տաշուկ եր,
Կալամ վերեն քաշուկ եր.
Կալամ քաշողին մեռնեմ,
Կալամ քաշող իմ յարն եր։
ԾՎ 47
Տես՝ Ջաղջի դռներ տաշած եր։

www.naregatsi.org

***

Ջաղջի քարը տաշուկ եր,
Աղջիկ տալին մաշուկ եր:
ՀԺԵ 80

***

Ջաղջի դռները տաշուկ եր,
Աղջիկ լաճուն (վ. տալին)
բաշխուկ եր:
ԱԺԹ 105· ԾՎ. 46

***

Սիբուն հարսը ալիը մաղեր·
Տես՝ Լիանյակ պիշիը, տասիակ
կառուր:

***

Մչու գաչա, կ'ասին, հինդ հարիը
դեղ եր,
Տես՝ Ասին՝ Ալաչկերտ խինդ
խաղար տուն եր:

3103

Սևուկը իլին յեղ եր,
Իմ յար Թուխաչք, Թուխթեղ եր:
ՎՍՍ. 46
2· Աղջիկ լաճուն լայեղ եր:
ԺԽ 87
Ճ՞ոխդ ուլունք ասեղ եր,
Ջանս ջանիդ լայեղ եր:
ԺԽ 88
Տես՝ Ճախս հլունը հաղեղ է:

***

Յարերն իլին ասեղ եր,
Իմ յար նորաճասեր եր:
ՎՍՍ. 46· ՀԺԵ 44

3104

Գյամբախ Բուլանըղ, լ'ինչ անուչ
տեղ եր,
Մեջ գյո երկու ծոց գլընելու
տեղ եր·
Աբե լ'ես պադիչ՝ անխալել
մեղը եր,
Սրտիկս կըխորովեր, իմ դարդիս
դեղ եր:

Աբե', յա'ր, աբե', քե բան չեմ ասե,
Վալլահ կըմեռնեմ, խոցերս ի խասե:
ՎՍՍ. 61

1—6· Գյամբախ Բալըխլի, լ'ինչ
անուչ տեղ եր,
Մեջ գո երկու ծոց քնելու տեղ եր:

Աբե', յա'ր, աբե', մալուլ մի' մնա,
Կուրբաթն ես ինկե, աբե', մի' մնա:
ՏԻ 133

***

Աղջի'կ, դու քելի', գո ճամբաս
նեղ է,
Երկու ծծվերացդ մեջ քնու տեղ է·
Աբի լ'ես պադի՝ անխալել մեղը եր,
Վոր են մեղը խալեր, իմ դարդին
դեղ եր:
ՆՀՋ 102

Աղջի', դու քելի', փողանը նեղ է,
Մեջ գյո երկու ծիծ քնելու տեղ է·
Աբի քե պադնեմ, անխալել մեղը է,
Են մեղրն որ խալի, իմ խոցիս
դեղ է:
ՀԺԵ 45

***

1—6· Մուչ ու Բուլանուղ լ'ինչ
անուչ տեղ եր,
Աղջիկ, գո խաբրիկ (վ. խաբար)
իմ դարդին դեղ եր:
ՎՍԲ 40· ՏԻ 121

3105

Ա'յ բալա Շողեր,
Անկջվիդ ողեր,
Ինձի յես Թողեր,
Գյուլ Շողեր Ջան:
ՋԲ 39

www.naregatsi.org

***

Ա՛յ բալա Շողեր,
Կ՚առնեմ քեզ ոզեր,
Կ՚անչեմ կը տագեր:
Գյուլ Շողեր Ջան:
ՋԲ 39

3106

Աբեզակը մեքամեր,
Հալալ արեք, հեր ու մեր.
Եկել ա վոր տանում ա,
Ընկերմիջից հանում ա:
ԱԴ 115

3 4. Վոր առել ա՝ կը տանե,
Ընկերմիջե կը հանե:
ԱԺԼ 47

Աբեզակը մեքեմեր ա,
Նշանածը նշանածի սիրատեր ա.
Ցեկել ա, պիտի տանի,
Ցերկիրմիջից կը հանի:
ԱԺԼ 47
[Ընիքնյակը մըրըմար ա, և այլն]:

3107

Դու ելեր ես, կ՚երթաս դամեր,
Ինչ քո քուչեք, ինչ քո մամեր,
Սիրեր եմ, չեմ կարնա դամեր:
ՔՄՎ 29

***

Դու ելեր ես, կ՚երթաս դամեր,
Մաաքեր (ն)մանի վառվառ մամեր:
ՏՒ 244

3108

Աչխարհ ալան թալան եր,
Իմ յար քեղնից ալայ եր:
Բարաի ծառեր բանձր եր,
Սիրած յարը քաղցր եր:
ՎԺԵԱ 3, 13

3109

Իմ յարը դուռ կը դներ,
Գոտիկը նուռ կը դներ.
Ցես կը մեռնեմ են յարին,
Փափախը ծուռ կը դներ:
ՌՄ 135· ՏՒ 152·
ԲՄ 153

3110

Ոլոր–մոլոր ճամփաներ,
Մեջքակոտոր ապրներ.
Կանանչ կենան աղջկներ,
Ձևկան տարան վիճակներ:
(Վիճակի)
ՀԺԵ 123

3111

Արտաչարա կնոկներ,
Կարթան խանին պիւնկրներ.
Տարան, ավին տան աներ,
Ջարկին տարան կոկրներ:
Վա՛յ, Մայրամ, Մայրամ, Մայրամ,
Իմ Ջան քո Ջանին հայրան:
ՔՄՎ 27

***

Ջուրը լցվավ ջաղչներ,
Տես՝ Ջուրը լցվավ ոզնքը:

3112

Ջուրն և ելի տավրներ,
Գրոզ տանի պտավրներ.
Ջուրն և ելի ջաղցրներ,
Աստված պահի պաղչկրներ.
Ջուրն և ելի կորզեր,
Աստված պահե գնորդեր.
կանաչ վարոց տզեկներ,
կարմիր խնձոր աղջիկներ,
Թաս ու թեփսիք կնկրսիք,
Բառիք–չուառիք՝ կրտվրսիք:
ԱՋ 72
Տես՝ Ջուրը լցվավ ոզնքը:
Տես՝ Ջուրն ա ընկեր եղ կորզեր:

***

Ջուրը կապել եմ տավրներ,
Գրոզ տանի պտավրներ.

www.naregatsi.org

Դրանք ի՞նչ բանի պետք են,
Աստված պահի աղջիկները:
ԱՂ 135

***

1—4· Ջուրը լցված առվակներ,
Աստված պահի պատվականներ:

***

1—4· Ջուրն եկավ առվակներ,
Աստված խեղդի պատվականներ:

***

Պառիկ, պառիկ առվակներ,
Դրագ տանի պատվականներ.
Ձոր կնձռներ պատվականներ,
Կանաչ վարոց ագեկներ,
Վարդ մանուշակ աղջիկներ:
ՀԺԵ 87
Տես՝ 1855· Ղարանֆիլ եմ, տալ չունեմ,

***

Փոչու չափուղ պատվականներ,
Թրքի կողով հալվորներ,
Կարմիր խնձոր աղջկներ,
Նոր կըճմըրտվեն հարսներ:
ԱԵ 206

3113

Ջուրն ի ընկե առվակներ,
Հո՛յ, ջան, լայնն եր.
Սերն ի ընկե պատվականներ,
Հո՛յ, ջան, ջան, լայնն եր,
Հո՛յ, փառասով լայնն եր:
ՎԺԵՐ 12

3114

Եկո՛, ծով ծով աչեր, իս մի՛
լացըներ,
Իս չատ են լացուցած, դուն մի՛
լացըներ,
Ցես ճամբու դալով եմ, յետ մի՛
դարձըներ:
ԲՆԱ 776

3115

Կաթվընե՛ր, կաթվընե՛ր,
Շիլա չապիկ ծալ արեք,
Կարմիր իրես խալ արեք,
Ձեր պապ ձիկ խալալ արեք:
ՎՍՍ 46

3116

Ջաղցի դոներ սարին եր,
Աղջիկ լաճուն բարին եր:
ԾՎ 47

3117

Իմ յար Թող խորտա ըլներ,
Մեկ վոտ Թող կաղիկ ըլներ.
Խորտաը խորտանն պիտեր,
Գնչերաց տերն աստված եր:
ՎՍԲ 58

3118

Սանդխտյանի աղջիկներ
Եկան, լցվան մեր տներ.
Թոռան, կպան տաքներ,
Ցես ի՞նչ անեմ խիր կընեմ(?):
ՎԺԵՐ 3

3119

Երկինքն ամպել եր, իրնչ անուշ
Թոն եր,
Կայնա, մայիլ եղա, ջանանս հոն եր.
Այրվա, կրակվա, ես ի՞նչիս բան եր,
Ցար, եղ քու դարդերդ, իմայի
աչքերդ:
ԱԵ 209

Երկինքն ամպեր է, իրնչ անուշ
Թոն եր,
Կայնա, մայիլ եղա, ջան աղջիկս
հոն եր.
Երևցա, խորվեցա, ես ի՞նչդ բան եր,
Սի՛րուն, աստված սիրես, դիս մի՛
լացներ:
ՆՀՋ 85

www.naregatsi.org

1—4· Երկինքն ամպել, ի՛նչ անուշ թոռն է,
Գամ դռնեն անցնեմ, հոպեակս հոռն է:
ՀՄԽՍ. 13

***

Կաղվան ձորու մեջն եր,
Տես՝ Երևան ձորամիջին:

3120

Կայնել ես էլի դռներ,
Տար արածե՛ մեր գառներ.
Ջյաֆիբր, ինձի թողել ես,
Գնչի յախեն ես բռնել:
ՏԽ 247· ԲՍ 131

3121

Աչխեների ծոցի նռներ,
Աղաստն թորկից էլու դռներ:
ՏԽ 184

3122

Եղ կոկած, մոլած աներ,
Կիվամ ու նախշուն աներ.
Եկան ազատ ազիկներ,
Կը (ն)մանին կատղուկ չներ:
ՍՀ 446· ԲՍ 142

***

Կապուտ քիրտաճած աներ,
Մեջը կա ոսկի աներ.
Սարեն թափան ազիկներ,
Կըմանեին կատղած չներ:
ՍԳ 99

3123

Ես աներ, ծնոված (վ. պուճուր) աներ,
Մէջին կա(ր) վոսկի (վ. ոսկե) աներ.
Սուն ու դերան պար (վ. բար) պիտեր,
Սրտով սիրած յար պիտեր:
ՍԳ 163· ԲՍ 90· 107· ՏԽ 146

3 4· Սրտով սիրած յար պիտեր,
Սուն ու դերան բար պիտեր:
ԲՍ 150
Տես՝ Լեռն տուն ու բոլոր երկեն:

***

1—4· Ես աներ, մանդր աներ,
Մէջին կա վոսկե աներ:
ԿԺԵ 42

***

Ես աներ, կամար աներ,
Մէջին եր ոսկե աներ.
Ոսկե աներ վարդ պիտեր,
Սրտով սիրած յար պիտեր:
ՀԺԵ 125
Տես՝ Ինձ մի պուճուր տուն ունեմ.

3124

Ադրոր բողչան կանէ ուներ,
Գրոջ բողչան վարդ ուներ:
ՀՀ 327

3125

Աբին՝ Ալաչկերտ խինդ խազար տուն եր,
Գացինք, տեսանք՝ մե խավքու բուն եր:

***

Մշու դաշտ, կ'ասեն, հինդ հարիր դեղ եր,
Գացինք ու տեսանք՝ մեկ հավքու բուն եր:
ՍԳ 438

3126

Սարերն իլին ալաշ եր,
Իմ յարը ալաշ կալաշ եր:
ՎՍՍ. 46

www.naregatsi.org

***

Ջաղջի տանիս ալաչ եր,
Իմ յար քանց քոն գյալաչ եր:
ՀԺԵ 59

3127

Արևմն ասե Ամկու փիշեր,
Արի պաղնեմ յես քո Թշեր.
Քանց խնճորի կարմիր ի քո երեսդ,
Տուր վոր պաղնեմ քո Թուխ
ընքվերդ,
ՎՍԲ 39

***

1—4· Արեվմն ասե Ամկու փիշեր,
Տուր վոր պաղնեմ կարմիր Թշերդ,
ՊՎ 98

3128

Ծոքն որ, յոթ դիշեր,
Շաղկամն ի դռտիս Թռռմշեր,
Ցար մեղիկ դռնեն չիլներ,
Փշուր մի սիրտ մեղիկ հումներ.
Վա՛յ-լո, վա՛յ-լո, վա՛յ-լո:
ՀՄԽԲ 21
3—5· Ցար մըղիկ դռնեն դուրս
չիլնա,
Փշուր մի սիրտ մրղիկ խումնա.
Վա՛յլե, վա՛յլե վա՛յլե:
ՌՄ 58
4· Փշուր մի սիրտ մըր խումնա:
ՏԽ 97

3129

Ես ա կոխեց մուխ դիշեր,
Ձենը կարել են դշեր.
Ով ինչ կ'ուզե՝ Թող ասե,
Ցես կը պաչեմ քո Թշեր:
ԲՍ 138

3130

Ես դիշեր, լուսն(յ)ակ դիշեր,
Ձ(յ)ունն ևկեր, գեսին նախշեր.
Աչքդ դեմ արա՝ պաչեմ,
Կես ունքեր, կարմիր Թշեր.
ՀՄԽԱ. 28· ԺԽ 11
3· Դոշդ դեմ արա՝ պաչեմ:
ՊԱՎ 109· ՌՄ 100·
ՏԽ 179
Համա. Գիշեր խալդա, դուս ելա:

3131

Ես դիշեր, լուսնյակ դիշեր,
Կես ընքեր, կարմիր Թշեր.
Աղջիկ, ասուածդ սիրես,
Բայ դուրը՝ դամ ես դիշեր:
ԱԴ 162

***

Լուսնիակ երկան դիշեր,
Կես ունքվի, կարմիր Թշեր.
Աղջի՛, ապրորդ արեվը սիրես,
Դասատուր տուր՝ դամ ես դիշեր:
ԱԴ 94· ԲՍ 145
123· Ա՛ս դիշեր, լուսնյակ դիշեր,
Սեվ աչքեր, կարմիր Թշեր.
Աղջիկ, ապրի ապրերդ:
ԱՀ 136
123· Ես դիշեր, լուսնակ դիշեր,
Կես ընքեր, կարմիր Թշեր.
Ասուած պահա քո ապրեր:
ՀԺԵ 123
3· Աղջի, քո ապրերն ապրի:
3· Աղջի, ապրի քուռ ապրեր:
3 4· Ապրորդ արեվը սիրես,
Թող տուր՝ դամ ես դիշեր:

3132

Ինչան կարճ որ, երկեն դիշեր,
Ջուամ լուս պատկիմ, ձիկ քուն չի
դրեր:
ՀՀ 305

3133

Ես դիշեր, սիրուն դիշեր,
Աղջի՛, պաչեմ քո Թշեր.
Սերդ սիրտս ծակել ա
Ինչպես վարդի սուր փշեր:

www.naregatsi.org

3134

Լուսնիակ երկար դիշեր,
Դեռ ունքվի, կարմիր թշեր.
Աստար եկեք իմ յարին,
Չկենա, գա ես դիշեր:
ԱԴ 95

3135

Լուսնակ ու երկար դիշեր,
Թուխ ունքեր, կարմիր թշեր.
Իմ սիրածին ինձ տվեք,
Ձեզ խեր ու բարի դիշեր:

***

Լուսնակը անդին դիշեր,
Սև աչք ը կարմիր թշեր.
Իմ յարը ընձի տվեք,
Ձեր խեր ը բարի դիշեր:
ՀԺԵ 133

***

Լուսնկա երկան դիշեր,
Կեռ ունքեր, կարմիր թշեր.
Ցես գնում եմ մեր տունը,
Ինչ խեր ու բարի դիշեր:

3136

Ամառնի դռան դշեր,
Ձմեռնին տարան ես դիշեր:
ՏՒ 185

3137

Ծառի վրեն սեվ դշեր,
Դեռ չեն հասել մեր նշեր.
Աղջի՛, հալին վե կալ, տես,
Կարմրեր ա քո թշեր:

Ծառի դլխին սեվ դշեր,
Դեռ չի հասել մեր նշեր.
Աղջի՛, հալին ա՛ռ, իշկա,
Ի՞նչ կարմիր ա քո թշեր:
ԱՔ 345 հտ. ԲՄ 141

Ծառի վրի սեվ դշեր,
Ձի հասեր ա մեր նշեր.
Աղջի՛, հալին վի՛րց, նայի,
Շատ կարմիր ա քո թշեր:

3138

Ձրին ենղին խամիչ եր,
Վրան թուղու յեմիչ եր.
Սա յարն ինձի յար չեղավ,
Տարեք ըրեք բիլդուրմիչ:
ԲՆԱ 776

***

Բոսաններ հըմեն գամիչ եր,
Տես՝ Բաղչի բոլոր գամիչ ա:

3139

Ջաղցի բոլոր գամիչ եր,
Մինչի մեղրը անուշ եր.
Իմ յար ինձի բանկլա դուշ եր,
Մերն աչքերուց բայդուշ եր:
ՆՀՋ 87

3140

Մշու գաշաեր մշուշ եր,
Ուր (իր) հող ու ջուր անուշ եր.
Աղջի՛, քու պաղն անուշ եր:
ՀԺԵ 90

***

Մշու սարեր մշուշ եր,
Մշու խոտ–ջուր անուշ եր.
Մշու մարդը դոշաղ եր,
Մշու կռունկ երկնավիզ, և այլն:
ՔՄՎ 44

3141

Բարձր Մարաթիկի խաչեր,
Շուրջ բոլոր կանաչ եր.
Աչխարք, երկիր կ'ապաչեր,
Մըտմեջ ըներ սեվ աչեր:
ԲՆԳ 12 հտ.

3142

Գարուն վոր գըեր, վերեն վարագ կանաչ եր,
Շատ երանեկ են յար, վոր ձեզ ճանաչ եր.
Պաղեց մ' կ'ուզեմ, են էլ կիսեր խանաք եր:

www.naregatsi.org

Ծո՛ խորոտիկ, ծո՛ պտորկիկ,
դու վի՞րն ես,
Աչխարհ կ՚ասես, ալամ դիտես՝
դու իմն ես:
ՆՀԳ 48

3143

Ջաղցի աւուն կանաչ ես,
Աղջիկը լաճուն ճանաչ ես:
ՎՍՍ. 45· ԺԹ 87
Ջաղցի աւանիս կանանչ ես,
Աղջիկ լաճուն ճանանչ ես:
ՊՎ 97
1· Ջաղցի դանես կանաչ ես:
ԾՎ 47
Ջաղջի դանես կանանչ ես,
Աղջիկ տղին ճանանչ ես:
ՀԺԵ 128

***

Արջակու դաչտ կանաչ ես,
Տես՝ Արջակու դաչտ սխտոր ես:

3143

Եսա խինեն ալ խինա չեր,
Խինա դյացող իմ ասած չեր·
Երթանք դենաք, կ՚առնեմ խինա,
Դնեմ ձեռքեր, թո՛ կարմրնա:
ՀԺԵ 51

3144

Մարը սարի նման չեր,
Ջարը քարի նման չեր·
Աչքերս ման տվի,
Մեկն իմ յարի նման չեր:

3145

Ծառի միջին կանանչ ես,
Աղջիկին ինձի կը կանչես՝
Ձեն մի՛ հանաք, մարդիկ կան·
Աղջիկ հոգից կ՚ամանչես:
ԱՆ 192· ԲՍ 155
1 2 4· Ծառի տակը կանանչ ես,
Տղեն ինձի կը կանչես...
Աղջիկ մարդուց կ՚ամանչես:

***

Սևեն ի՞նչ ես, սավդեն ի՞նչ ես,
Տես՝ Սևեն ի՞նչ ե, սավդեն ի՞նչ ե:

3146

Մատնիքը մատովս չես (վ· չի),
Սիրածը սրտովս չես (չի)·
Դերձի՛կ, մատներդ կոտրի,
Մինթանեն բոյովս չես (չի):

3 4· Ջարդյար, թևերդ կոտրի,
Ջամարը մեջքովս չես (չի):

3 4· Սիրածի հերը մեռնի,
Սիրածը սրտովս չես (չի):
ՀՄԽՍ. 18

***

1—4· Եսա մատնիք իմ մատով չես,
Լավո՛ Ջան,
Եսա սիրած իմ սրտով չես,
Լավո Ջան:
ԾՎ 49

***

Մատնիքը մատովըս ա,
Սիրածը սրտովըս ա·
Դերձիկի բաշեն ապրի,
Շորիըը բոյովըս ա:

***

Մատնիքը մատովս չի,
Ճան տղեն սրտովս չի·
Մխաք կ՚անի, վոր փախցնի,
Ել ու դյուռը քովս չի:

***

Մատնիքը մատովս չի,
Սիրածս սրտովս չի·
Սարիր, քո բաշեն մեռնի,
Ձես ընդու լայեղին չի:
ՀԺԵ 123

www.naregatsi.org

3147

Ղռաճի վերեվ ամպ եր,
Աղջկա դինը չաո թանկ եր:
ԱՀ 440

3148

Իմ ծոցի կուճինը թուջ եր,
Իմ յարոջ երեսը պուճ եր:
ՎՍՄ 46· ԺԽ 87

3149

Աչխարհ եսեն՝ քո յար ծուռ եր,
Ալամ եսեն՝ քո յար ծուռ եր.—
Խազար ծուռ եր, մեջ իմ սրտին
լալ ու դուր եր.
Զիկ կը կալեր, յես քե դներ:
ՀՀ 305 հտ.

***

Գեղով ըսին՝ քու յար ծուռ եր,
Թաղով ըսին՝ քու յար ծուռ եր,—
Խարիր ծուռ եր, խազար ծուռ եր,
Մեջ իմ սրտին լալ ու դուռ եր:
ՇՎ 37

***

1—4· Աչխար ասին՝ քյո յար ծուռ ի,
Թաղով ասին՝ քո յար ծուռ ի.—
Մեջ իմ սրտին լալ ու դուր ի:
ՀԺԵ 46

***

1—4· Հասամ ապեն, դու ծուռ խո՝
(չխո ծուռ ի).
Խազար Աչխեն կ'ըսի ծուռ ի.
Մալ իմ սրտին լալ ու դիւռ ի:
ՀԺԵ 58
Համատ. Փիչեր ասին՝ քո յար եկավ:

***

1—4· Ջազգի բոլոր լմեն ուռ եր,
Աչխարհն ասեր՝ Ջուլոն ծուռ եր.—
Մեջ իմ սրտին լալ ու դուր եր:
ՔՀ 174

2· Աչխար կ'ասեր՝ Ջուլոն ծուռ եր.
ՏԽ 243

3150

Ծծկերդ եր ուռե, յես ասի՝ նուռ եր,
Մրի՝ ձեռս պարզեմ, դու ասիր՝
ժուռ եր.
Թե ժուռ, թե հասուն՝ մոտ ձիկ
կարուլ եր:
ՊՎ 124· ՏԽ 121·
ՎՍՔ 40
ՎՍՔ 40· կա ճառև 4–րդ տող՝
Թե թանկ, թե եժան՝ մոտ ինձ
մագրուլ եր:

***

Ծծկերդ ի ուռեր, յես ասի՝ նուռ եր,
Ասի՝ քաղեմ, ղըլ հալա ժուռ եր.
Թե ժուռ, թե խասուն՝ ընձի
կարուլ եր:
ՀԺԵ 49

***

Ծծվերդ կողնճե, յես ասի՝ նուռ եր,
Խորած վարդապետ կ'ասեր, թե
ժուռ եր.
Թե ժուռ, թե խասուն՝ մո ձիկ
կարիւլ եր:
ՆՀՋ 103

3151

Աղջի'կ, քու անունդ ե Խասեր,
Եկուր երթանք, Թուրն ե հասեր.
Պադիկ մ'ալ ուր, մորդ մ'ըսեր:
ՀՍ 457

***

Մուղնըվա զարը վոս եր,
Տես՝ Մուղնըվա Ջուրը սառն ա:

3152

Տո՛ Ջաղջաղան, քո տուն ավեր,
Ջուրն ա ընկեր քո Ջաղջղներ.
Պետեր տարեր, մանդրեր Խորկեր.

www.naregatsi.org

Տո՛ Ջաղջպան, քո տուն ավեր։
Տուն մ'եմ չիքն վըր քարերուն,
Փանջարեն բացեր եմ հարավ քամուն։
Իմալ ենեմ, իմալ չենեմ,
Դարդերս շատ ա, չիմարեր իմ։
ՀԺԵ 61

3153

Հով կըփչէ սարն ի վեր,
Արտուտ կ'երնե զարն ի վեր։
ՀՄԽՍ. 42

3153

Բաղչէի պտաներ քարով եր,
Իմ սեր, քու սեր տարով եր։

3154

Որ մը աղեկ, որ մը վատ եր,
Կանանչ-ղուրթ չոլի բաղ եր,
Ելի խոսքով պիս կու տաեր։
ՓՀ 174

3155

Աղու մը եկավ, յես գիցա՝ գետ եր,
Քարվան մը եկավ, իմ յարս ի հետ եր.
Իրիկի տանջ, խընճ ըմեն յետ եր։
ՍԸ 438
Աղու տեսա, խընց գետ մ'եր,
Քարվան եկավ, իմ յար խետն եր.
Իշկեցի, իմ յար խընց ըմեն յետն եր։
Աբի, յար, արի՛, խոով մի՛ կենա.
Դիւռնի մալ քեզի չի մնա։
ՀԺԵ 127 հա.

3156

Են տառումը մին կալ պիտեր,
Իմ չհենին ալ պիտեր.
Ալ չհենին ինչ անեմ,
Մի ջանդանջդյար յար պիտեր։
ՍՋ 373

3157

Ձի խավք ծիծեռնակ պիտեր,
Գի քյո երդիս բոն դնէ.
Ցերեկ յիլ ու մռաս անէ,
Գիշերը քյո ծոց ծվարի։
ՎՍՍ. 64

***

Ձիկ հավք մի ծիծեռնակ պիտեր,
Ցերեկ դար, իմ ոդեն յել-մռաս աներ,
Գիշերն ել դար իմ ծոց ծվարեր,
Սրտես զարդերն ցրեր, խորովեր։
Աբե՛, Մարութիա բարձր
աստվածածին,
Մեր վիճակին կատարե բարին.
Հարս, հան վիճակին ի բարին,
Հասնես քո սրտի մուրազին։
ՎՍԲ 68

3158

Մեր տուն, ձեր տուն պատ պիտեր,
Իրար սիրենք, մարդ չդիտեր։
ՀԺԵ 57

3159

Տուն ու դերան բար պիտեր,
Սրտով, սիրով յար պիտեր.
Թուխ վուշին վզես կապող
Շեկ ու կարմիր յար պիտեր։
ՍԸ 135 հա.
Տես՝ ինձ մի պուճուր տուն ունեմ,
Տես՝ Լեն տուն ու բոլոր երկեն։
Տես՝ ես տաներ, ծեփած տաներ։

3160

Եսոր ծառզարդար պիտեր,
Իմ յարը սիրացու պիտեր.
Ամեն բեմբը ելլելուն
Բուրվառը ձեռքը պիտեր։
ՍՋ 390
1 2 4· Տիրացուն իմ յար պիտեր...
Ձեռքը բուրվառ պիտեր։

***

Եսոր ծառզարդար պիտի,
Իմ աղբեր կարդար պիտի.
Ամեն բեմբն ելնելուց
Մոմ հալած արդար պիտի։

www.naregatsi.org

3161

Իմ յարին լավ յար պիտեր,
Գլխին կոշիաւար պիտեր.
Են չոքած, քրտնած վախտը
Մի կանաչ խիար պիտեր:
ԱԺՄ 54

3162

Սուն·ու վերան, քար պիտեր (պիտի),
Ինձի պյորա յար պիտեր (պիտի).
Ի՞նչ անեմ հաճիւճ–մաճիւճ,
Բոյիս պյորա յար պիտի:
ԱՋ 390

3163

Դե՛հ Պաեր, նա՛ նա՛ Պաեր
Ձոռվեր, տուն չմաեր:
(Կրկնակ)
ԱԵ 190

3164

Աբի երթանք Վանա դաշտեր,
Ասեմած քեզի ինձի տվեր.
Թե ինչ կայաս–պլաս ունեմ՝
Ասա՛, ինձնից մի՛ ամաչեր:
ՎՄԲ 42 հա.

3165

Գոլի բոլոր կանաչ արտ եր,
Աբչակը մոր սրտին դարդ եր:
ՋԲ 23

3166

Ջաղցի դոներ բիբար եր,
Աղջիկ լաճուն նուբար եր:
ԾՎ 47

3167

Բոլոլիկ վերեվ դար եր,
Ջուրս բոլոր հարորվար եր,
Ըմենոց քաղցր իմ յար եր:
ԱԵ 194

3168

Բարձր Մարաթկի սարեր,
Ամուր կուլեն իր քարեր,
Ծոմեթ եներ իր յարեր:
ԲՆԳ 121

3169

Վեր աչեցիր, բանձր սար եր,
Երկնուց ընկավ մանգր քարեր:
Շորորա՛, Ալաթ, չորորա՛...
ՋԲ 23

3170

Գյուլիչի քարեր,
Սինաքա սարեր,
Արուն ա դառեր:

3171

Մոկաց սարեր, պեա պեա քարեր,
Դել չեր լուացեր, արեվն առեր...
... Ծաղիուն ավել, ծակ ծակ քարեր,
Կես պիչերուն լուանակն առեր.
Երկու պտիկ դուստ եմ ճարեր,
Ֆամին ելլեր, պեն մեկ տարեր:
Են մեկ տը տամ չար Գրողին,
Թորկեմ երթամ խետ սիրողին:
Սիրող պառկեր մեջ խոռանոցին,
Ձեռնիկ ծոցին աչն երեսին:
Խարար տարեք մեր դռքընչին,
Աղջիկ դնաց խետ կտըրճին:
ՀՀ 305 հա.

Տես՝ Մոկաց սարերն են քարերով:
Տես՝ Մաճկալը կայնե մաճին:
Տես՝ Տղեն կայնե կարմնջին:

***

1—12· Մչու սարեր, Մոկանց քարեր,
Դեռ չլուսցի, արեվն առեր.
Երկու չամամ յար եմ ճարեր,
Հարամն ելի գմեկիկ տարեր,
Մեկելի ձեռն եմ չխմարեր:
ՆՀՋ 92

www.naregatsi.org

***

1—12· Մոկանց սարեր, պետ պետ քարեր,
Դրա չլուսցն, արեվ առեր·
Երկու պզտիկ յար եմ ճարեր,
Մեկը գարիկեր, չար Գրողը տարեր,
են մեկելի գարդն եմ ընկեր:
Ալե խանոր, խանանոր:
ՀԺԵ 82

Տես՝ Մոկանց սարերն են քարերով:

***

1— 12· Խանխմո Ջան, խանխմո,
Ծագիկ ավել, ծակ-ծակ քարեր,
Դրա չլուսցի, արեվն առեր·
Երկու պզտիկ յար եմ ճարեր,
Գամին եյավ, պեն մեկ տարավ,
են մեկել լե տամ չար Գրողին,
Ելնեմ երթամ հրա սիրողին:
ՀԺԵ 77

***

1—12· Մոկաց սարեր, պետ պետ, քարեր,
Դալ չի լուսցեր, արեվն առեր:
Ծաղիկուն ավել, ծակ-ծակ քարեր,
Դալ չի լուսցեր, արեվն առեր:

են ի՞նչ դեղ ը, են ի՞նչ տեղ ը,
Կարմիր սոլեր ոտաց նեղ ը·
Սեվասարեր կաքվու տեղ ը,
Բեստա սարեր մաքու տեղ ը:
ԾՎ 61 հա·

***

1—12· Դրա չի լուսցիը, արեվ առեր,
Մոկաց սարեր, պետ պետ քարեր:
ՀԺԵ 60

***

Լուսնակն ի բակ իջեր եր,
Տես՝ Լուսնակն ի բակն եր իջեր:

3172

Ինարար տարեք, սարեր ձորեր,
Հազել եմ սալըբաի չորեր,
Լաց եղնելեն ընցում որեր:
ՏԽ 115

3173

Երնեկ են որեր,
Վոր կ'ելնենք սարեր:
(Կրկնակ)
ՀՄԽՍ. 4

3174

Որեր, որեր, որեր,
Դուք ուր եք կորեր:
(Կրկնակ)
ՏԽ 88

***

Որեր, դարնան անուշ որեր,
Ա՛խ, ո՞ւր եք կորեր:
(Կրկնակ)
ՀՄԽՍ. 48

***

Արջակու դաչտ սխտոր եր,
Իմ յարոջ սիրտ պղտոր եր:
Արջակու դաչտ կանաչ եր,
Յարոջս առջընեկ լաճ եր:
ՎՄԲ 58

3175

Բաղչի մեջ դոլ դոլ ջրեր,
Լուսնակ ի մեջն եր դրեր·
Յարուկ ջրի մեջ կ'ուչքեր,
Սիրտը լուսնակն եր ընկեր:
ԲՆԲ 237

3176

Սարեր, ձորեր, դաշտեր ու ջրեր,
Մարմանդ մարմանդ վազող
աղբյուրներ,

www.naregatsi.org

Մի վե՛ր կացեք, իմացեք,
Տեսեք իմ սրտի ցավերը:
ՀՄԽՄ. 1

***

Սարեր, ձորեր ու ջրեր,
Մարմանդ վազող աղբուրներ,
Մեկ վե՛ր կեցեք ու իմացեք,
Տեսեք, թե ով է եկեր:
ՍՋ 385

3177

Թուխ պատեհը ծալ չըլլիր,
Ելին տգան յար չըլլիր.
Ֆարազա խուրթաթ կ'երթան,
Ա խըղըը կենալ չըլլիր:
ԲՆՄ. 624

3178

Մազերդ սեվ, թուշդ կարմիր,
Շաքար լեզուդ բերանս դիր.
Զննովդ լինձի յեսիր արիր,
Փարե ղլուխս ծիծիկիդ դիր:
ՍԳ 96

3179

Երկնքի կանանչ կարմիր,
Ա՛յ սիրուն կանանչ կարմիր,
Լերդ ու թոքս չորցել է,
Սար ու ձոր կանանչ կարմիր:
ՍԵ 203. ԲՄ 145

3180

Ցա՛ր, դու լինձի չատ պետք
կը գայիր,
Բանիս բանավոր արըընկէ կ'ելնիր.
Ատուած ավիրեր կամազ մարդու
տուն,
Զգեր, չտաներ իմ քաղցրիկ քուն:
ՎՍԲ 51 հտ.

Տես՝ երկինքն ի ամպեր, կու գար
մարմար ձուն:

3181

Եամար եւե կ'երթա ի չայիր,
Ցես քո բաժին եղա գայիլ:
ՀԺԵ 99

3182

Սիպտակ բալուլ չըլնեյիր,
Մորդ փորին մեռնեյիր,
Վոր չըլնեյիր, վառեյիր,
Ջանիս կրակ ըլնեյիր:

3183

Աղջի՛, մազերդ հյուսեյիր,
Թուշդ երեսիս քսեյիր.
Ելլեյիր բարձիս վրա,
Բլբուլի պես խոսեյիր:
ՖՀ 164. 74

3. Ես դիշեր բարձիս վրա:
3. Նիլնեյիր բարձիս վրա:
3. Նստեյիր բարձիս վերան:
3. Ելլեյիր վարդի ծառին:
ՍԳ 91. ԲՄ 152

123. Աղջի՛կ, մազդ հյուսեյիր,
Դունչիդ ուհան քսեյիր.
Ելլայիր վարդի ծառին:
ՀՀ 323. ԺԽ 92

***

Աղջի, մազերդ հուսեի,
Թուշդ երեսիս քսեի.
Երթաի աներանցս,
Բլբուլի պես խոսեի:
ԹՄԿ 58

Աղջի՛կ, ծամերդ հյուսեյի,
Թուշդ իրիսիս քսեյի.
Գլոխս թեվքերացդ վրա՝
Բիւլբիւլի պես խոսեյի:
ՎՍՍ. 53

1 3. Աղջիկ, մազդ հուսեյի...
Ելլայի վարդին ծառը...
ՍԹ 167

www.naregatsi.org

***

Չուխա դուխան գաչա կը բանիր,
Տես՝ Մեր Չուխա դուխան գաչա
կու բանի։

***

Ես բակը բակ կըլմանիր,
Տես՝ Մեր բակը բակ կըլմանի։

3184

Նոր տարուն ինձ խոսք ավիր,
Սիրտս կրակով լցրիր։
Ասա՝ տեսնեմ, ո՞վ արեց,
Վոր ինձ հալես քցեցիր։
ԲՄ 128

3185

Սարիցը վեր եկամ, դուռը բաց
արիր,
Ձևըդ քցիր վզովս, Թուչդ
համբուրիմ։
ՀԺԵ 63

3186

Ցես ի՞նչ անեմ, դու արիր,
Ջոռով սիրու տեր արիր։
Երեցիր, վառեցիր մեզի,
Մի Ջան ա, ղուրբան քեզի։

3187

Ալան, ալան, դու արիր,
Ըռանդ ըռանդ ձու արիր։
Ենքան գնալ-գալ արիր,
Ուժով սիրու տեր արիր,
ԱԺԼ 42

3188

Եկար, անցար ու յադ երիր,
Ձևըդ երեսիդ պատ երիր,
Դու(ն) սիրեցիր, դու(ն) յադ երիր։
Ալի խոսինք, Ջորած (վ. խորոտ)
նաղլու,
Քընց բլուբլուն կլ ձենով նաղլու։
ՋԲ 22· ՏԻ 89

3189

Ինձի բևմուրադ երիր,
Սերս քեզմե զատ երիր։
Ե՞սպես եր քու երդումդ,
Ասործու հետ ուխտ արիր։
ԱՋ 385

1—4· Ցար, ի՛նձ բևմուրադ արիր,
Սերդ ինձնե գատ արիր։
ՀՄԽՄ. 32

3190

Ադջիկ, դուն երիր, դուն երիր,
Խարեցիր, ծոցդ քուն երիր։
ԲՆԲ 525

3191

Մայրիկ, դուն ըրիր, դուն ըրիր,
Ինձիս զարդիլ տուն ըրիր։
Ցես փոքրիկ հարս մ'եյի,
Գիչ մարդու մը կեր ըրիր։
ԲՆՄ. 671

3192

Ցես տարեն կու գայի, դուն
դուռը բացիր,
Ձեռդ ծոցդ տարար, ա՛խ արիր,
լացիր։
Ցես մի պինդ պաղ եյի, դու
մրմուռ լացիր,
Քո հրեղեն արցունքով ինձի
հալեցիր։
Ցես մի չոր ծառ եյի, դու
զարնան արեվ,
Քո սիրով ծաղկեցավ իմ ճյուղն
ու տերեվ։
Թե ինձ չեյիր առնի, ինչո՞ւ
սիրեցիր,
Մի բուռ կրակ եղար, սիրտս
երեցիր։
ՀՄԽՄ. 32

www.naregatsi.org

***

1—8· Ցես սաբեն կ'իջնեյի,
Դու դանիկդ բացիր,
Ձեռնիկդ ի ծոցիկդ տարար,
Ա՛խ ըրիր, լացիր·
Ցես պաղի կտոր մ'եյի,
Հալեցար քո հրեղեն արտասունքով:
Ասի՝ դու ինս կըսիրես,
կանչըցար քո եչիի կրակով:
Թե դու ինս չեյիր առներ,
Ինչո՞ւ լացիր, խաբեցիր·
Թ'ընձի յար չեյիր եղներ,
Ինչո՞ւ դուռդ իմ առջեվ բացիր:
ՀՀ 309

***

1—8· Ցես վարեն կուգայի, դուն
դուռը բացիր,
Ձեռքդ ծոցդ տարար, ա՛խ ըրիր,
լացիր·
Թե որ չեյիր առներ, ինչի՞
սիրեցիր,
Գնը՛, դապլի խայտին, յար չեղար
մեղի:
ՋԲ 21

***

1—8· Ցես կալեն կուգայի, դու
դուռը բացիր,
Ձեռքդ երեսիդ դրիր, ա՛խ ըրիր,
լացիր·
Ջունքի չեյիր առներ, ինչի՞
սիրեցիր,
Բուռ մը կրակ եղար, սիրտս
դոլեցիր,
ՆՀՋ 85

1—8· Ցես վերեն կուգայի, դուն
դուռը բացիր,
Ձեռքդ ծոցդ տարար, ա՛խ ըրիր
լացիր·
Ցես ել քեզի չառա, տունը մնացիր
Գնա՛, դապլի խայտին, յար չեղար
ինձի:
ՏԽ 96

Տես՝ Ցես վերեն կուգայի,
նատիր իս կուլաս:
Տես նաև ԱԵ 208·

3193

Ազջի՛, դու խակ մնացիր,
Պատերու տակ մնացիր·
Ո՞ւր ե, հոգիս, ընկերըդ,
Ինչի՞ մենակ մնացիր:
ԱՋ 385

***

Ազջի՛, ինչի՞ գնացիր,
Պատերի տակ մնացիր·
Ո՞ւր ե հոգուդ ընկերը,
Ինչո՞ւ մենակ մնացիր:

3194

Ջրի եկար (ու) գնացիր,
Սիրուն երեսդ (չ)բացիր·
Սեվ աչքերով, վառ թշով,
Ինձ երեցիր, վառեցիր:
ԱՀ 133

3195

Ազջի՛, տունը լվացիր,
Ցարդ մեռավ, չլացիր·
Թաժա յարդ տուն եկավ,
Ձերմակ գլաքդ դու բացիր:
ԱԳ 101· ԲՍ 139

3196

Մայրո՛, հորի՞ն դես խաբեցիր,
Գինովդ դես սարխոշցուցիր·
Գիշերս յես դուրս ելա,
Ճո սիրուն հելանդ եղա:
ՀՀ 312

***

Ելար դուռը աշեցիր,
Տես՝ ձախս հլունը հազեզ ե:

3197

Կովն ու հորթը կապեցիր,
Նստար տակը, կթեցիր·

www.naregatsi.org

Կաթն ու կարագը մեղրած,
Ցարիս փեչքիչ ղրկեցիր:
ԲՍ 156

3198

Տնեն ելար, ալ կապեցիր,
Բարակ մէջացդ չալ կապեցիր,
Աչքով, ունքով պիս խարեցիր:
ՆՀԳ 46

3199

Կամար ունքդ դովեցիր,
Սիրել էյիր, առեցիր.
Ինձ պես ուժով կարճին,
Դու անդանակ մորթեցիր:
ՀՄԽՍ. 25

1. Կամար ունքերդ դովեցիր:
ՍՋ 384

3200

Ցամա՞ն, ա՛ղե, դուն արեցիր,
Ես քոռ դյադին ո՞ւստա ճարեցիր.
Թամահ արիր հարյուրնոցին,
Ինձի տվիր ղրկանոցին:
Իմա՞լ եղեմ, իմա՞լ եղեմ, և այլն:
ՀՄԽԲ 31
3—4. Թամահ երին հարիւրնոցին,
Ինձի տվին ղրկանոցին:

3201

Սիրտս արնով լցրեցիր,
Կրակով խորովեցիր.
Աչքդ դու(ր)ս պա, ա՛յ աքլոր,
Ի՞նչ չուտ ձենդ դցեցիր:
ՀՄԽՍ. 14· ՏԽ 175·
ԲՍ 153

3202

Աչքերդ բիլոր-բոլոր,
Ման կըգաս իմ չորս բոլոր.
Բիլոր աչքերիդ մեռնեմ,
Մի՛ աչի խոլոր-մոլոր:
ՏԽ 197· ԲՍ 146

3203

Գայլ արաեր՝ բանի լոր,
Աղջիկ տեսա յայլի ձոր,
Նման եր կարմիր խնձոր:
ՀՄԽՍ. 37· ԿԺԵ 13

2 3· Գլի տեսա յայլի ձոր,
Կարմիր իր, (ն)մանիր խնձոր:
ՌՄ 86· ՏԽ 164·
ԺԽ 23

2 3· Աղջիկ տեհա լայլի ձոր,
Կըմաներ կարմիր խնձոր:
ՀԺԵ 122

3204

Երեվանա ճամբեն ոլոր,
Մեր Աչխենի երես բոլոր:
Խորոտ եր մեր Աչխեն,
Կոլոտ եր մեր Աչխեն,
Սիրուն եր մեր Աչխեն:
ԲՆՍ. 566

3205

Ճամբեքը ոլոր-մոլոր,
Տիղրադիս դնաց կոլոր.
Ով դաել է՝ Թող չետ տա,
Հինդ Թուման իրեն մուժտա:

3206

Լուսնակն եկավ ոլոր-մոլոր,
Համ խորոտիկ, համ բոլոր.
Հարս ելավ կայնավ դուռ,
Կապեն խադեր եր,
Կես եր կարմիր, կեսն եր դեղին...
ԾՎ 38

(Մի մեծ յերդ է, ազատ վոտանավոր: Շարունակությունն՝ «Ետոր քո ապով ընցկուն ասիեր են»):

***

Լուսինն եր բակին ոլոր,
Համ խորոտիկ, համ բոլոր.

www.naregatsi.org

Լուսնիակ կամաց–կամաց,
Ցես մեռնիմ քեզի համաց:
ԱՀ 136

***

Լուսնակն եր սարի ոլոր,
Իմ խորոտիկ, իմ բոլոր:

***

Լուսնակն եր սարուն ոլոր,
Ի՞նչ խորոտիկ, ի՞նչ բոլոր:
ԲՆԳ 471

***

Լուսնիակը ոսոխ ոլոր,
Համ խորոտիկ, համ բոլոր:
ՋԲ 18
Տես՝ Լուսնակն ի բակն եր իջեր:

3207

Աբի երթանք յայլի ձոր,
Դուզախ դնենք, բռնենք լոր·
Լորի խորփածն անուշ եր,
Դու կը նմանիս կարմիր խնձոր:
ՎՍԲ 30

3208

Աղվոր, նանոյ, նանոյ, նանոյ,
Ցես կուսիրեմ քեզ ամեն որ:
(Կրկնակ)
ՀՍ 456

3209

Բաղ եմ քցել նոր ի նոր,
Հասցրել եմ մի խնձոր·
Ցարիս խլեցին տարան,
Քանի՞ ընկնեմ սար ու ձոր:

3· *Ցարիս տեսնելու համար:*
ԲՄ 126

3210

Կանանչ տափ ա, կարմիր ձոր,
Բաղչեն բլբիլն ալ խնձոր·
Բաղը յես եմ, բարը դու,
Իմ սիրելի յարը դու:
ԱՋ 373
1—2· *Կանանչ փիսա, կարմիր չոր,*
Բաղը բլբուն ալ խնձոր:

3211

Ա՛յ տղա ուրաղավոր,
Ուրաղն ա մեջքիդ սավոր·
Ջեմ անի ինձի քավոր,
Կ՚անեմ հորս թագավոր:

3212

Սարեն կըգա ձիավոր,
Մեր տունը չարդախավոր·
Հրես եկավ իմ ապրեր,
Իրեք որվան թագավոր:
ՔՀ 160· ԲՄ 138
1 2 4· *Սարից եկավ ձիավոր,*
Հորս դուռը չարդախավոր...
Իրեք տարվան թագավոր:
2· *Տուն ունիմ չարդախավոր:*

***

1 3 4· *Սարեն կու գա ձիավոր,..*
Ջիրը մեռնի ապրորը,
Իրեք որեն թագավոր:
ԱԺՍ 60

3213

Սարեն եկավ ձիավոր,
Սաղմոսը ծոցին սավոր·
Սաղմոսը դյուլ ա դառել,
Լեզուն բլբիլ ա դառել:
ՍԲ 344
234· *Սաղմոսը ծոցին սավոր·*
Սաղմոսը դյուլ եր դառե,
Լեզուդ բիլբուլ եր դառե:
ՀԺԵ 118

***

Ա՛յ տղա սեվ չուխավոր,
Նարևկը ծոցիդ սավոր·
Նարևկը դյուլ ա դառել,
Լեզուդ բիլբիլ ա դառել:
ԱԵ 201

www.naregatsi.org

3214

Սարեն իջավ ձիավոր,
Սաղմոսն էր ծոցին սավոր.
Յերբ որ չեղավ ինձի յար,
Նաչբցավ, եղավ քավոր:
ՆՀՋ 88

***

Սիրել եմ սեվ չուխավոր,
Դու յես պյալչու սավոր.
Սիրեցինք, իրար չառանք,
Նաչարցանք, արինք քավոր:
ՆՀՋ 109

***

Սիրել եմ սեվ չուխավոր,
Յես եմ պյալչու սավոր.
Սիրի, սիրաս չիպավ,
Նաչարդան արի քավոր:
ԱՖ 344

2· Ինքն էր պյալչու սավոր:
3 4· Դու չեղար ինձ թագավոր,
Աղբերս կայնավ քավոր:

3215

Յարս եղավ յայլավոր,
Յես էլ եղա ձիավոր:
(Կրկնակ)
ԱԵ 204

3216

Զարգարն ա բոլ չուխավոր,
Քաթանն գոչին սավոր.
Հալա մին քամար կ'ուզեմ,
Փակընեն Թոփուզավոր:
ԱՋ 373

3217

Ա՛յ տղա, սեվ չուխավոր,
Նարևկը (վ· սաղմոսը) ծոցիդ սավոր.
Երնեկ կըտամ են որը,
Մեր տունը դաս թագավոր:
ՌՄ 137· ՌՍ 156

3 4· Դուրբան ընեմ են ավուր,
Աղբերս կայնի թագավոր:

4· Վոր դաս մեր տուն թագավոր:
ՏՒ 144

***

Ա՛յ տղա, դու սեվ չուխավոր,
Սաղմոսը ծոցիդ սավոր.
Երնեկ կըտամ են որը,
Տունս կը դաս թագավոր:
ՔՀ 163

1 3 4· Ա՛յ տղա, դու բոզ ձիավոր...
Երնեկ կուտամ են որը,
Դաս մեր տունը թագավոր:
ՔՀ 180

Ա՛յ տղա, դուն ալ կապավոր,
Տուն ունես չարդախավոր.
Են որին երնեկ կուտամ,
Իմ տուն՝ տուն դաս թագավոր:
ՔՀ 164

24· Ուրաքը դատկիդ սավոր...
Դուն դաս մեր տուն թաքսավոր,
ԹՄԿ 59

***

1—4· Ծո՛ տղա, դու ալ կաբավոր,
Սաղմոսն ի ծոցդ պատավոր:
ՎՍՍ 43

3218

Ա՛յ տղա, ալ կապավոր,
Ախ՛ չելար կարդացավոր.
Ինչի՞ սիրիր ու չառար,
Դատաստանիս պարտավոր:
ՀԺԵ 111

3 4· Են քան սիրի, յար չելար,
Նաչարցա, կ'անեմ քավոր:

3219

Աղջի՛, դու յես մեղավոր,
Քեզի կու դան ուղավոր.

www.naregatsi.org

Ձեղնի՝ երթաս հեռու տեղ,
Պատվիս, կ՚ելնիս հըրապիլ (?):
ՍՋ 387

3220

Մակաբ ունավոր,
Դեղին չնաշխոր,
Յեղկին կարդաս,
Ինձ անես քաւոր:
ԺԽ 20

3221

Ղուշ մի՛ գառնա թեւավոր,
Դու խաղ կանչի ձեւավոր
(վ. ձենավոր).
Յարաբ կ՚ըլնի՞ են որը,
Վոր դաս մեր տուն թագավոր:
ՀՄԽՄ. 13· ԺԽ 4
123· Խաղ ես կանչում ձենավոր,
Ղուշ ես դառել թեւավոր.
Յարաբ են որը կ՚ըլնի՞:
ՏԽ 200
12· Դու խաղ կանչի ձենավոր,
Ղուշ մի՛ դառնա թեւավոր:

3222

Պուճուր աղջիկ սեվավոր,
Հազարի դուռն սավոր.
Գնա՛, մերդ կանչում է,
Ինձի չանի մեղավոր:
ԺԽ 8

3 4· Գնա՛, նանդ կանչում ա,
Վոր մեզ չանի մեղավոր:
3· Գնա՛, քու մորն ասա:

2 4· Խալխի (վ. հալղի) դոնները
սավոր...
Թող ինձ չանե (վ. չանի) մեղավոր:
ՍԴ 169· ՌՄ 116·
ՏԽ 215· ԲՍ 124

***

Պուճուր աղջի սեվավոր,
Խալխի դոներին սավոր,
Իլի՛, մերդ կանչըմ ա,
Ինձ էլ չանես մեղավոր:
ՍԲ 347

3 4· Գնա, մայրդ կանչում ա,
Թող ինձ չանի մեղավոր:
ՎԺԵՍ. 3

***

Պտուկ աղջի սեվավոր,
Խալխի դռներին սավոր,
Գնա, նանիդ խարցրա՛,
Ինձի չանա՛ մեղավոր:
ՀԺԵ 124

***

Պուճուր աղջիկ սեվավոր,
Մեր մայլին իր դու սավոր.
Ա՛խ, չեթիր, քո մորն ասիր,
Ինձի անիր մեղավոր:

3223

Տղա՛, սեվ ես սեվավոր,
Դու չես մեր մայլին սավոր:
ՀԺԵ 119

3224

Աղջի Գյուլի բախտավոր,
Յարդ հենց ա թագավոր.
Բարով մուրազի հասնեք,
Ձեր վարդիվորը չնհավոր:
ՍՋ 377

3225

Վըրըը, վըրըը, վըրավոր,
Տեր խոր մերուք վըռավոր.
Ազո՛, խաքի նոր չուխա,
Ինձի կ՚ըլլես դու քավոր:
ԲՍ 155

3226

Սարի տըկի պտըտոր,
Իմ յար քան քե խավըտոր:
ՀԺԵ 87

www.naregatsi.org

Ծառի տակի պտըտուր,
Իմ յար քանց քոն խոմբոտուր:
ՎՍԲ 58

3227

Ծովուն հավք մի կեր, անունն եր արոր,
Ճակին եր կարմիր, սրտիկ՝ սեվավոր.
Կապեմ բեչարեն, երթամ հետ ինոր,
Են իմ դարդ դիտեր, կյս ել դո ինոր:
ԺԽ 31

1. Ծովուն խավք մի կեր, անուն եր ուրուր:
ՀՀ 328

***

Ծովուն հավք մ'կեր, անունն եր արոր,
Վղիկն եր երկեն, սրտիկն սեվավոր.
Կապեմ բեչարեն, երթամ հետ ինոր,
Են իմ դարդ դիտեր, կյս կյո ինոր:
ՆՀԳ 44. ՊՎ 86.
ՌՄ 65

1 4. Խավք մ'վեր ծովուն, անուն եր արոր...
... են իմ դարդ դիտե, դյո կյս ել ինոր:
ՎՍԱ 37

***

1—4. Բոլում խավք եկավ, անուն վիրավոր,
Վղիկ հերկեն, սրտիկ սեվավոր.
Թաշեմ բեչարեն, երթամ հետ ինոր,
Են իմ դարդն եր դիցե, կյս՝ ինոր:
Աբե՛, յար, աբե՛, և այլն:
ՀԺԵ 42

***

1—4. Խավքիկ վեր ծովուն, անուն եր արոր,
Վղիկն եր երկեն, սեվավոր,
Գլուխ կարմրվոր.
Կապեմ բենչարեն, եչնեմ վեր ծովուն,
Են դոր կ'երթա, կյս ել հետ ինոր.
Են իմ դարդ դինա, կյո կյս ել ինոր:
Աղչի, աբե՛ նազերով, և այլն:
ՀԺԵ 45

***

1—4. Խավքուկ վրը ծովուն, անուն եր արվոր,
Վղիկն եր հերկեն, սրտիկ սեվավոր.
Աբե՛, յար, աբե, խատր մի՛ կենար,
Ատավորի մալ մեկի չի մնար:
ՀԺԵ 47

***

1—4. Խավկունք վրը ծովուն, անուն արոր եր,
Սրտիկ սեվավոր, գլխիկ կարմրվոր.
Կապեմ բեչարեն, երթամ հետ ինոր,
Որ դիմ դարդ դիտեր, որ դենու դետոր:
ՀԺԵ 56

***

1—4. Խավքուկ վրը ծովուն, անուն արոր եր,
Անուն արոր եր,
Ատավոր կանաչ տերեվավոր.
Կարմիր գլուխ, սրտիկ սեվավոր:
ՀԺԵ 127

***

1—4. Հավքունք վեր ծովուն, անուն արոր եր,
Գլխիկ կարմրվոր, սրտիկ սեվավոր.
Կապենք բեչարեն, երթանք հետ ետոր,
Ո՞ն դիմ դարդ դինա, ո՞ն դիմն ու դետոր:
ԱՀ 439

